

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա  
Վ.Հ. Համբարձումյանի անվ. Բյուրականի աստղադիտարան

## «Աստղագիտական ժառանգությունն ազգային մշակույթում»

պատմա-աստղագիտական գիտաժողով՝  
նվիրված Անանիա Շիրակացու ծննդյան 1400-ամյակին

Հայկական աստղագիտական ընկերության  
XI տարեկան համաժողով

*25-26 սեպտեմբերի 2012թ.  
Բյուրականի աստղադիտարան*

### Խմբագիրներ

Հ. Ա. Հարությունյան, Ա. Մ. Միքայելյան, Է. Ս. Պարսամյան

### Երևան

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» հրատարակչություն  
2014

**National Academy of Sciences of the Republic of Armenia  
V.A. Ambartsumian Byurakan Astrophysical Observatory**

***“Astronomical Heritage  
in the National Culture”***

Archaeoastronomical Meeting  
Dedicated to Anania Shirakatsi's 1400<sup>th</sup> Birthday Anniversary

XI Annual Meeting of the  
Armenian Astronomical Society

*25-26 September 2012  
Byurakan, Astrophysical Observatory, Armenia*

**Editors**

H.A. Harutyunian, A.M. Mickaelian, E.S. Parsamian

**Yerevan**  
NAS RA “GITUTYUN” Publishing House  
**2014**

ՀՏ 52:06

ԳՄԴ 22.6

Ա 761

Հ. Ա. Հարությունյան, Ա. Մ. Միքայելյան, Է. Ս. Պարսամյան (խմբագիրներ) – Աստղագիտական ժառանգությունն ազգային մշակույթում (Անանիա Շիրակացու ծննդյան 1400-ամյակին նվիրված պատմա-աստղագիտական գիտա-ժողովի և Հայկական աստղագիտական ընկերության XI տարեկան համա-ժողովի նյութերի ժողովածու) // Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2014թ., 220 էջ:

Ժողովածուն ընդգրկում է Անանիա Շիրակացու 1400-ամյակին նվիրված «Աստղագիտական ժառանգությունն ազգային մշակույթում» թեմայով պատմա-աստղագիտական գիտաժողովի և Հայկական աստղագիտական ընկերության XI տարեկան համաժողովի գեկուցումների նյութերը: Այն բարկացած է 3 հիմնական բաժնից. «Աստղագիտական ժառանգություն», «Անանիա Շիրակացի» և «Ժամանակակից աստղագիտություն», ինչպես նաև ներառված է Անանիա Շիրակացու վերաբերյալ գրականություն: Ժողովածուն կարող է հետաքրքրել աստղագետներին, պատմաբաններին, հնագետներին, լեզվաբաններին, ուսանողներին և այլ ընթերցողների:

ISBN 978-5-8080-1115-1

© ՀՀ ԳԱԱ Բյուրականի աստղադիտարան 2014

© Հայկական աստղագիտական ընկերություն 2014

**H.A. Harutyunian, A.M. Mickaelian, E.S. Parsamian (Editors) – Astronomical Heritage in the National Culture** (Proceedings of Archaeoastronomical Meeting Dedicated to Anania Shirakatsi's 1400<sup>th</sup> Birthday Anniversary and XI Annual Meeting of the Armenian Astronomical Society) // Yerevan, NAS RA “Gitutyun” Publishing House, 2014, 220 p.

The book contains Proceedings of the Archaeoastronomical Meeting “*Astronomical Heritage in the National Culture*” Dedicated to Anania Shirakatsi's 1400<sup>th</sup> Anniversary and XI Annual Meeting of the Armenian Astronomical Society. It consists of 3 main sections: “*Astronomical Heritage*”, “*Anania Shirakatsi*” and “*Modern Astronomy*”, as well as Literature about Anania Shirakatsi is included. The book may be interesting for astronomers, historians, archaeologists, linguists, students and other readers.

ISBN 978-5-8080-1115-1

© Byurakan Astrophysical Observatory 2014

© Armenian Astronomical Society 2014

# Բովանդակություն

Նախաբան .....	6
<b>1. Աստղագիտական ժառանգություն</b>	
Էլմա Պարսամյան – Հնագույն աստղագիտությունը Հայաստանում .....	12
Հայկ Հարությունյան – Հայկական Վահագն աստղածք՝ Տիեզերքի չորս տարրերի ծնունդ	23
Անի Տեր-Գուլանյան – Հայկական լեռնաշխարհի հնագույն աստղագիտական նշանագրերը և նրանց արձագանքը ճարտարապետական կառույցներում	29
Սոնա Ֆարմանյան, Արեգ Միքայելյան – Արեգ և Արեկի պաշտամունքը տարրեր մշակույթներում	36
Արեգ Միքայելյան – Հայաստանի աստղագիտական ժառանգությունը .....	44
<b>2. Անանիա Շիրակացի</b>	
Լիլիթ Նազարյան – Անանիա Շիրակացու կյանքը և գործունեությունը .....	58
Սեն Արեշշատյան – Անանիա Շիրակացու բնափիլիսոփայական հայացքները .....	68
Էդուարդ Դանիելյան – Անանիա Շիրակացու տիեզերագիտական և բնափիլիսոփայական հայացքները	76
Հայկ Հարությունյան, Արեգ Միքայելյան – Անանիա Շիրակացու տիեզերագիտական և գիտական աշխատությունները և բնագիտության մեթոդաբանությունը	87
Զուլիետա Էնարքյան – Անանիա Շիրակացու վերադիրների համակարգը .....	98
Կարեն Թոխմաջյան – Ժայռապատկերաբանության և օրացույցի ակունքները Հայաստանում և Անանիա Շիրակացին	107
Գոհար Վարդումյան – Շիրակացին և «Հեթանոս» գիտնականները .....	134
Նորա Երգնևյան – Կրոնապատմական ենթատեքստերը Անանիա Շիրակացու աշխատություններում	142
Տաթևիկ Շախիկովյան – Անանիա Շիրակացի երաժիշտը .....	149
Գոհար Հարությունյան – Շիրակացու անվան խառնարան Լուսնի վրա .....	158
Արեգ Միքայելյան, Գոռ Միքայելյան – Անանիա Շիրակացու համացանցային կայրէջը	160
<b>3. Ժամանակակից աստղագիտություն</b>	
Արեգ Միքայելյան – Հանրամատչելի աստղագիտությունն աշխարհում և Հայաստանում	168
Մարիետա Գյուլզայյան – Հայաստանի դպրոցականները միջազգային օլիմպիադաներում	185
Ավետիք Գրիգորյան – Աստղագիտության դասավանդումը Հայաստանի արտադպրոցական խմբակներում	190
Արեգ Միքայելյան – Հայ աստղագիտության նվաճումները և Հայկական աստղագիտական ընկերության ներկայիս գործունեությունը	198
Հավելված. Անանիա Շիրակացու վերաբերյալ գրականություն .....	213
Հեղինակացույց .....	219

## Contents


Preface .....	6
<b>1. Astronomical Heritage</b>	
Elma Parsamian – <i>Archaeoastronomy in Armenia</i> .....	12
Haik Harutyunian – <i>Armenian Vahagn God as birth of four Cosmic elements</i> .....	23
Ani Ter-Gulanyan – <i>Ancient Astronomical Hieroglyphs of the Armenian Highland and their Echo in Architectural Structures</i>	29
Sona Farmanyan, Areg Mickaelian – <i>Sun and Sun Worship in Different Cultures</i> .....	36
Areg Mickaelian – <i>Armenian Astronomical Heritage</i> .....	44
<b>2. Anania Shirakatsi</b>	
Lilit Nazaryan – <i>Anania Shirakatsi's Life and Activities</i> .....	58
Sen Arevshatyan – <i>Anania Shirakatsi's Natural Philosophical Views</i> .....	68
Eduard Danielyan – <i>Anania Shirakatsi's Cosmographical and Natural Philosophical Views</i>	76
Haik Harutyunian, Areg Mickaelian – <i>Anania Shirakatsi's Cosmographical Works and the Methodology of his Natural Science</i>	87
Julieta Eynatyanyan – <i>Anania Shirakatsi's Overheads System</i> .....	98
Karen Tokhatyan – <i>Origins Rock Art and Calendar in Armenia and Anania Shirakatsi</i> .....	107
Gohar Vardumyan – <i>Anania Shirakatsi and "Pagan" Scientists</i> .....	134
Nora Yerznkyan – <i>Religious-Historical Sublayers in Anania Shirakatsi's Works</i> .....	142
Tatevik Shakhkulyan – <i>Anania Shirakatsi Musician</i> .....	149
Gohar Harutyunyan – <i>Shirakatsi Crater on the Moon</i> .....	158
Areg Mickaelian, Gor Mikayelyan – <i>Anania Shirakatsi's Webpage</i> .....	160
<b>3. Modern Astronomy</b>	
Areg Mickaelian – <i>Popular Astronomy in the World and in Armenia</i> .....	168
Marietta Gyulzadyan – <i>Armenian Pupils in the International Olympiads</i> .....	185
Avetik Grigoryan – <i>"From the Deep of Ages to the Universe" Popular Science Book</i> .....	190
Areg Mickaelian – <i>Achievements of the Armenian Astronomy and the Present Activities of the Armenian Astronomical Society</i>	198
Appendix: Literature about Anania Shirakatsi .....	213
Author Index .....	219

## **«Աստղագիտական ժառանգությունը ազգային մշակույթում»**

պատմա-աստղագիտական գիտաժողով՝  
նվիրված Անանիա Շիրակացու 1400-ամյակին և  
Հայկական աստղագիտական ընկերության  
XI տարեկան համաժողով



25-26 սեպտեմբերի 2012թ.  
Բյուրականի աստղադիտարան



## **Նախարան**

Անանիա Շիրակացու 1400-ամյա հոբելյանին նվիրված «Աստղագիտական ժառանգությունն ազգային մշակույթում» թեմայով պատմա-աստղագիտական գիտաժողովը տեղի ունեցավ 2012թ. սեպտեմբերի 25-26-ին ՀՀ ԳԱԱ Բյուրականի աստղադիտարանում: Գիտաժողովն առաջին լուրջ քայլն էր աստղագետների, պատմաբանների, հնագետների, ազգագրագետների և այլ մասնագետների համատեղ ջանքերով ի մի քերել և քննարկել պատմա-աստղագիտական և աստղագիտական ժառանգության մյուս ոլորտների հիմնախնդիրները:

Գիտաժողովը բաղկացած էր երեք հիմնական նստաշրջաններից, որոնք համապատասխանաբար նվիրված էին Հայաստանի աստղագիտական ժառանգությանը, Անանիա Շիրակացու կյանքին և գիտական ժառանգությունը և հայ ժամանակակից աստղագիտությանը: Շոշափվող թեմաներն էին հայկական ժայռապատկերները, հնագույն օրացույցները, աստղագիտական եղրաբանությունը, հնագույն աստղադիտարանները և աստղագիտական գործիքները, ինչն հայերի կողմից աստղագիտական երևույթների արձանագրությունները, Անանիա Շիրակացու գիտական ժառանգությունը, ինչպես նաև աստղագիտության ներկայիս վիճակն՝ ուղղված որպես ազգային հարստություն դրա պահպանմանը: Ներկայացվեցին գեկուցումներ, տեղի ունեցան քննարկումներ,

մասնավորապես քննարկվեց հետազայում Հայաստանում պատմա-աստղագիտական հարցերի կազմակերպումը:

Անանիա Շիրակացին (612-685) միջնադարի խոշորագույն հայ գիտնականն էր. փիլիսոփա, մաթեմատիկոս, աստղագետ, աշխարհագրագետ, տոմարագետ, ճշգրիտ և բնական գիտությունների հիմնադիրը Հայաստանում: Նա ըստ Էության նաև Հայաստանում աստղագիտության հիմնադիրն էր: Նա սատարել է Երկրի մասին ոլորտային վարկածը, առաջարկել է Ծիր կաթնի ձիշտ մեկնաբանում, բացատրել է Արեգակի և Լուսնի խավարումները: Շիրակացին թողել է մի շարք տոմարագիտական աշխատություններ՝ տոմարագիտական հաշվարկներ, աղյուսակներ (բոլորակներ), գրել է տոմարին վերաբերող մի քանի գիրք: Համաստեղությունների և աստղերի ներկայումս կիրառվող հայկական անվանումների մեջ մասը նույնպես գալիս է Շիրակացու աշխատություններից:

ՅՈՒՆԵՍԿՕ-ն Անանիա Շիրակացու 1400-ամյակը ներառեց 2012թ. կարենրագույն տարեդարձների ցանկում, իսկ Հայաստանում հոբեյանի տոնակատարության կազմակերպման համար ստեղծվեց կառավարական հանձնաժողով, որը մշակեց հոբեյանական միջոցառումների ցանկ: Բացի գիտաժողովից, տեղի ունեցավ միջազգային ամառային դպրոց Երիտասարդ աստղագետների համար, իրատարակվեցին Անանիա Շիրակացու վերաբերյալ գրքեր, ՀՀ ԳԱԱ «Գիտության աշխարհում» ամսագրի 2012թ. 3-րդ համարն ամբողջովին նվիրվեց Անանիա Շիրակացուն, ստեղծվեցին Անանիա Շիրակացու թվային տվյալների շտեմարան և համացանցային կայքեց, տեղի ունեցան հանդիպումներ դպրոցներում ու համալսարաններում, հեռուստատեսային և ռադիո հաղորդումներ, իրականացվեցին տպագիր և էլեկտրոնային իրապարակումներ զանգվածային լրատվամիջոցներում՝ Շիրակացու ժառանգությունը հանրությանը ներկայացնելու նպատակով:

Ժողովածուում տեղ են գտել գիտաժողովի գեկուցումները, թեմային առնչվող մի շարք այլ հոդվածներ, Անանիա Շիրակացու վերաբերյալ տեղեկատվական նյութեր: Ժողովածուն կարող է հետաքրքրել ընթերցողների լայն զանգվածին:

## **Գիտաժողովի կազմակերպիչները**

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա (ՀՀ ԳԱԱ)  
ՀՀ ԳԱԱ Բյուրականի աստղադիտարան (ԲԱԴ)  
ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ  
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ  
Մատենադարան Ս. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական  
ինստիտուտ  
Հայկական աստղագիտական ընկերություն (ՀԱՀ)

## **Գիտական կազմկոմիտե**

Էլմա Պարսամյան, ՀՀ ԳԱԱ Բյուրականի աստղադիտարան (նախագահ)  
Պավել Ավետիսյան, ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ  
Գրիգոր Բրուտյան, ՀՀ ԳԱԱ Բյուրականի աստղադիտարան  
Էդուարդ Դանիելյան, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ  
Զուլիկետա Էյնարժյան, Մատենադարան  
Հրայր Թամրազյան, Մատենադարան  
Կարեն Թոնիարյան, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ  
Հայկ Հարությունյան, ՀՀ ԳԱԱ Բյուրականի աստղադիտարան  
Աշոտ Մելքոնյան, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ  
Արեգ Միքայելյան, ՀՀ ԳԱԱ Բյուրականի աստղադիտարան

## **Տեղական կազմկոմիտե**

Հայկ Հարությունյան (ՀՀ ԳԱԱ ԲԱ և ՀԱՀ, համանախագահ)  
Արեգ Միքայելյան (ՀՀ ԳԱԱ ԲԱ և ՀԱՀ, համանախագահ)  
Ելենա Նիկողոսյան (ՀՀ ԳԱԱ ԲԱ և ՀԱՀ, քարտուղար)

## Preface

The Archaeoastronomical meeting “*Astronomical Heritage in the National Culture*” dedicated to Anania Shirakatsi’s 1400<sup>th</sup> anniversary took place on September 25-26, 2012 in Byurakan Astrophysical Observatory (BAO) of the National Academy of Sciences of the Republic of Armenia (NAS RA). The conference was the first major step of jointly efforts of astronomers, historians, archaeologists, ethnographers and other experts to sum up and discuss the problems of archaeoastronomy and other fields of astronomical heritage.

The meeting consisted of 3 main sessions, which were accordingly dedicated to the Astronomical heritage, Anania Shirakatsi’s life and scientific heritage and Modern astronomy. The considered subjects were: the Armenian rock art, ancient calendars, astronomical terminology, ancient observatories and astronomical instruments, records of astronomical events by ancient Armenians, Anania Shirakatsi’s scientific heritage, as well as current state of astronomy as a national treasure and its preservation. Talks were given, discussions were held, including the discussion of further organization of archaeoastronomical matters in Armenia.

Anania Shirakatsi (612-685) was the greatest Armenian scientist of the Middle Ages: philosopher, mathematician, astronomer, geographer, chronologist, the founder of the exact and natural sciences in Armenia. He was in fact the founder of astronomy in Armenia. He supported the spherical hypothesis of the Earth, suggested a correct interpretation of the Milky Way, and explained the Solar and Lunar eclipses. Shirakatsi left a number of chronological works: chronological calculations, tables (“*boloraks*”), he wrote several books related to chronology. Most of the Armenian names of the constellations and stars used nowadays also come from Shirakatsi’s works.

UNESCO included Anania Shirakatsi’s 1400<sup>th</sup> anniversary in its list of important dates of 2012, and in Armenia a governmental committee was created to organize the jubilee celebrations, which developed a list of jubilee events. Beside the Meeting, international summer school for young astronomers was held, books related to Anania Shirakatsi were published, 2012 3<sup>rd</sup> issue of NAS RA journal “*In the World of Science*” was entirely dedicated to Anania Shirakatsi, Anania Shirakatsi’s digital database and webpage were created, meetings at schools and universities were held, TV and radio programs were broadcasted, printed and Internet mass media publications to present Shirakatsi’s heritage to the society were released.

The Proceedings includes the talks of the meeting, a number of topic-related articles, and information materials about Anania Shirakatsi. The book may be in the interest of broad masses of readers.

## **Organizers of the Meeting**

National Academy of Sciences of the Republic of Armenia (NAS RA)  
NAS RA Byurakan Astrophysical Observatory (BAO)  
NAS RA Institute of History  
NAS RA Institute of Archaeology and Ethnology  
Matenadaran, Mesrop Mashtots Research Institute of Ancient Manuscripts  
Armenian Astronomical Society (ArAS)

## **Scientific Organizing Committee (SOC)**

Elma Parsamian (NAS RA, Byurakan Astrophysical Observatory, Chair)  
Pavel Avetisyan (Institute of Archaeology and Ethnology)  
Grigor Brutian (NAS RA, Byurakan Astrophysical Observatory)  
Eduard Danielyan (NAS RA, Institute of History)  
Julieta Eynatyan (Matenadaran, Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts)  
Haik Harutyunian (NAS RA, Byurakan Astrophysical Observatory)  
Ashot Melkonyan (NAS RA, Institute of History)  
Areg Mickaelian (NAS RA, Byurakan Astrophysical Observatory)  
Hrach Tamrazyan (Matenadaran, Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts)  
Karen Tokhatyan (NAS RA, Institute of History)

## **Local Organizing Committee (LOC)**

Haik Harutyunian (NAS RA BAO and ArAS, Co-Chair)  
Areg Mickaelian (NAS RA BAO and ArAS, Co-Chair)  
Elena Nikoghosyan (NAS RA BAO and ArAS, Secretary)

# 1. Աստղագիտական ժառանգություն

Էլմա Պարսամյան – Հնագույն աստղագիտությունը Հայաստանում

Հայկ Հարությունյան – Հայկական Վահագն աստվածը՝ Տիեզերքի չորս  
տարրերի ծնունդ

Անի Տեր-Գուլանյան – Հայկական լեռնաշխարհի հնագույն աստղագիտական  
նշանագրերը և նրանց արձագանքը ճարտարապետական  
կառույցներում

Սոնա Ֆարմանյան, Արեգ Միքայելյան – Արևը և Արևի պաշտամունքը  
տարրեր մշակույթներում

Արեգ Միքայելյան – Հայաստանի աստղագիտական ժառանգությունը



## 1. Astronomical Heritage

Elma Parsamian – *Archaeoastronomy in Armenia*

Haik Harutyunian – *Armenian Vahagn God as birth of four Cosmic elements*

Ani Ter-Gulanyan – *Ancient Astronomical Hieroglyphs of the Armenian Highland and  
their Echo in Architectural Structures*

Sona Farmanyan, Areg Mickaelian – *Sun and Sun Worship in Different Cultures*

Areg Mickaelian – *Armenian Astronomical Heritage*

# Հնագույն աստղագիտությունը Հայաստանում

## Էլմա ՊԱՐՍԱՍՅԱՆ ՀՀ ԳԱԱ Բյուրականի աստղադիտարան

Աստղագիտությունը, իրավամբ, համարվում է հնագույն գիտություն: Նրա ծագումը, սաղմնավորումն առնչվում են մարդկային հասարակության զարգացման վաղ փուլերին: Դժվար չէ պատկերացնել, թե ինչ ազդեցություն են ունեցել նախամարդու վրա գիշերվա անցումը ցերեկվա, երկնակամարում Արեգակի դիրքի փոփոխությունը, Լուսնի փուլերը և այլն:

Որսորդության, անասնապահության և առևտի զարգացումը, ինչպես և տեղաշարժերի անհրաժեշտությունը տեղում կողմնորոշվելու պահանջ էին առաջացնում: Նախնադարյան հասարակարգի զարգացման վաղ փուլերում կողմնորոշման միջոցները կոպիտ և պարզունակ էին: Հետազայում մարդկանց անհրաժեշտ էր լինում ճիշտ կողմնորոշվել ոչ միայն ցերեկը, այլև գիշերը: Այսպիսով, աստղագիտությունն իր զարգացման ամենավաղ փուլերում առաջացել է մարդու կողմից տարածության և ժամանակի մեջ կողմնորոշվելու անհրաժեշտությունից:

Դժվար է ասել, թե մարդիկ ե՞րբ սովորեցին կողմնորոշվել և ինչպիսի՞ն էին օգտագործվող ամենահասարակ միջոցները. դա անշուշտ վերաբերում է խոր անցյալին: Հավանաբար, դեռ այն ժամանակ նկատվել է, որ Արեգակն արևելքում և արևմուտքում տարին երկու անգամ ծագում և մայր է մտնում որոշակի կետերում, իսկ աստղերը գիշերվա ընթացքում պտույտ են գործում Բնենային աստղի շուրջը: Տարբեր ժողովորդներ կողմնորոշման տարբեր միջոցներ են կիրառել, որոնք հասուն ուսումնասիրության առարկա կարող են դառնալ:

Պարբերական երեսությները՝ ցերեկվա և գիշերվա հերթափոխը, Լուսնի փուլերը, վառ լուսատուի որոշակի ժամին երևալը ժամանակի մեջ ճիշտ կողմնորոշվելու հնարավորություն են տվել և օրացույցի ստեղծման հիմք ծառայել: Հեռավոր անցյալում աստղագիտությունն ու աստղագուշակությունն քրմերի մենաշնորհն էին: Նրանք էին բարդատում և կարգավորում օրացույցները, որը բոլոր դարաշրջաններում կարևոր նշանակություն է ունեցել երկրի տնտեսական, կրոնական և քաղաքական կյանքում: Հիշենք եզիդիտական օրացույցը, որով տարվա սկիզբը Նեղոսի հորդացման հետ էր կապված:

Գործիքները, որոնցով կատարվում էին դիտումները, շատ պարզունակ էին: Նշանավոր աստղագետ Լոկյերի կարծիքով, իին ժամանակներում միակ «զործիքը» հորիզոնն էր, որը շատ հարմար էր ամենահասարակ չափումների համար: Այսպիսով, դիտումների համար առաջին գործիքը հենց բնությունն էր շնորհել:

Օրմերը աստղագիտական դիտումներ կատարում էին պաշտամունքային արարողությունների նպատակով կառուցված տաճարներում, որոնք այն ժամանակվա համար վատ աստղագիտարաններ չեին: Աստղագիտարան բարի տակ պետք է հասկանալ մի կառույց, որտեղից անզեն աշքով կարելի էր դիտել լուսատունները:

Դիտումների վերաբերյալ եղած տվյալներում, ամենաարժեքավորն, իհարկե, գրավոր աղբյուրներն են: Եգիպտոսում, Ուրում, Բարելոնում կատարված պեղումների շնորհիվ հայտնաբերված մաթեմատիկական և աստղագիտական բնույթի գրավոր տվյալները հնարավորություն ընձեռեցին որոշելու մաթեմատիկայի և աստղագիտության զարգացման մակարդակը ինչպես այդ, այնպես էլ դրանց սահմանակից երկրներում:

Աստղագիտությունը մ.թ.ա. 2-րդ հազարամյակում որոշակի զարգացման էր հասել Եգիպտոսում և Բարելոնում (մենք չենք շոշափում աստղագիտության զարգացման հարցերը Չինաստանում և Հնդկաստանում): Հին աշխարհի աստղագիտության և մաթեմատիկայի պատմության խոչորագույն գիտակ Օ. Նոյգեբառները (Heinrich Gobert, 1968) աստղագիտության զարգացումը Եգիպտոսում հետևյալ կերպ է բնութագրվում:

«Ծուրջ երեքհազարամյա եգիպտական գրերից միայն հելլենական և հոռնեական ժամանակաշրջաններն են մեզ բողել աստղագիտական երևոյթների թվային գնահատականների հետ կապված գրավոր տվյալներ: Աստղագիտական ավելի վաղ տեղեկությունները մաթեմատիկական տարրեր չեն պարունակում: Դրանք դիտումների պարզունակ սինենաներ են, որոնք մասամբ կրոնական, մասամբ գործնական նշանակություն են ունեցել: Հին գիտությունը շատ սահմանափակ թվով մարդկանց գործունեության արդյունքն էր և նրանք միայն եզիստացիներ չեին»:

Եգիպտացիները հիշատակում են, որ աստղագիտության իրենց ուսուցիչները եղել են քաղդեացիները: Եգիպտացիների հիմնական ձեռքբերումներն այդ ասպարեզում՝ արեգակնային օրացույցն էր և օրվա բաժանումը 24 ժամի:

Հայկական լեռնաշխարհը, աշխարհագրական առումով մոտ էր Բարելոնին, այդ իսկ պատճառով, մեզ համար հատուկ հետաքրքրություն էր ներկայացնում աստղագիտության զարգացումը իին Բարելոնում: Վան-դեր-Վերդենի (Van der Waerden, 1968) վկայությամբ մենք Ծումերի բնակիչների աստղագիտությանն ու աստղագուշակությանը վերաբերող հետաքրքրությունների մասին տվյալներ չունենք: Դժբախտաբար, մեզ հասած աստղագիտության գրավոր տվյալները վերաբերում են իին բարելոնյան շրջանին: Մ.թ.ա. 1800–400 թվականներին ընկած ժամանակահատվածը անվանվում է բարելոնական աստղագիտության «նախապատմական շրջան»: Մեզ հասած գրավոր հուշարձանների շնորհիվ կարելի է թվարկել բարելոնական աստղագիտության հիմնական նվաճումները:

«Դա Կենդանակերպն է, կազմված 12 մասերից, յուրաքանչյուր մասը՝ 30°, ֆիբոնա-արեգակնային օրացույցը, էմպիրիկ ներթափանցումը հիմնական մոլորակային և լուսնային երևույթների հաջորդականության մեջ և ցերեկվա ու գիշերվա հերթափոխը, թվաբանական պրոգրեսիայի օգտագործումը պարբերաբար փոփոխվող մեծությունների նկարագրության համար»:

Հայտնի է, որ աստղագիտության զարգացումը Բարեկոնում սկսվել է մինչկասիտյան (1800 տարի մ.թ.ա.) շրջանում: Այդ են վկայում նաև զիկուրատները, որոնցից հնագույնը Ուրում հայտնի էր դեռևս մ. թ. ա. 3-րդ հազարամյակից: Այն, որ զիկուրատները, ինչպես և բուրգերը, դիրքորոշված են եղել ըստ աշխարհի կողմերի կամ որոշակի պայծառ աստղի, նշում են շատ հեղինակներ:

Զիկուրատների ձեզ նրա կառուցողներին հիշեցնում էին հարազատ լեռները, որտեղից նրանք եկել էին: Շատ զիկուրատներ այնպես էին կառուցված, որ որոշակի ժամին կարելի էր դիտել այն աստղը, որին նվիրված էր այդ տաճարը: Օրինակ՝ Իգիսի տաճարը Դենիերայում հավանաբար կողմնորոշված է ըստ Սիրիոսի ծագման, իսկ Կառնակի փոքր տաճարը՝ ըստ Կանոպուսի (Երկնքի երկրորդ պայծառ աստղն է): Կալախում Աշուրնասիրպայի տաճարը հստակ կողմնորոշված էր Երկրի կողմերով: Մարդուկի տաճարը նվիրված էր Արկտուրին: Հաշվումների միջոցով ստացված տվյալները հիմք են տվել Ի.Ի. Վեսելյովսկուն Մարդուկի տաճարի հիմնադրումը համարել մ.թ.ա. 650 թվականը (Վեսելովսկի, 1960):

Այդ տեսակետից որոշ հետաքրքրություն են ներկայացնում Սլոռնիենցի մեզալիքյան կառուցները (Անգլիա), որոնք մոտ 100 տարի վիճաբանության տեղիք են տվել հնագետների և աստղագետների միջև:

Տ. Լույյերի (Lockyer 1906) և ապա մեր ժամանակներում Ջ. Հոուկինսի (Hawkins, 1966) ուսումնասիրություններն ապացուցեցին, որ Ստորև նենշը հնագույն աստղադիտարան է (մ.թ.ա. 1800թ.), որը հարմարեցված է Լուսնի և Արեգակի խավարումները հաշվելուն: Բերված օրինակները վկայում են, որ աստղագիտության զարգացման ուղին, զուտ դիտողականից մինչև ֆիզիկամաթեմատիկական գիտությունը, երկար է եղել:

Աստղագիտության պատմության շատ հետազոտողներ, առանց փաստերի, սակայն տրամաբանորեն եզրակացրել են, որ Հայկական լեռնաշխարհի հին բնակիչները ոչ միայն ծանոթ են եղել աստղագիտությանը, այլև մասնակցել են նրա ստեղծմանը: Պետք է նշել, որ Եգիպտոսի, Միջազգետքի և Ասորեստանի հոգևոր մշակույթը լավ է ուսումնասիրված, իսկ Հայկական լեռնաշխարհն այդ տեսակետից դեռևս հետազոտման երկար ուղի պետք է անցնի: Վերջին տասնամյակները մեր գիտելիքները հարստացրին նոր հայտնագործություններով, որոնք անմիջական կապ ունեն հնագույն աստղագիտության հետ: Հայաստանի լեռնաշխարհում գտնվեց բրոնզի դարի գոտի–օրացույց, մ.թ.ա. 11-րդ դարի երկրակենտրոն համակարգի մոդելը,

համաստեղություններ, մոլորակներ ներկայացնող ժայռապատկերներ, որոնք վկայում են, որ հնագույն մարդը փորձել է ժայռերի վրա փորագրել իր պարզագույն պատկերացումը՝ Տիեզերքի վերաբերյալ:

Նշված փաստերը մեզ հայտնի դարձան Բ. Թումանյանի, Հ. Մնացականյանի, Ս. Պետրոսյանի, Հ. Մարտիրոսյանի աշխատանքների շնորհիվ (Թումանյան, Մնացականյան 1965; Թումանյան, Պետրոսյան 1970; Մարտիրոսյան 1973):

Սակայն, միայն այս առանձին պատկերները չեն, որ թողել են մեզ Հայկական լեռնաշխարհի հնագույն բնակչութերը:

Ինչպես ցույց տվեցին Սեծամորի փորք բլրի դեռևս 1966 թվականին կատարված ուսումնասիրությունները (Parsamian, Mkrtchian, 1967; Պարսամյան, Մկրտչյան, 1969; Պարսամյան, 1973) Հայաստանի այս մասում պահպանվել է դիտողական հարթակների մի համալիր, որը հնագույն «աստղադիտարան» է, և որի նմանը դեռևս հայտնաբերված չեն այլ երկրներում:

Անցյալ դարի վերջին ծագել է, այսպես կոչված, «կողմնորոշման տեսությունը», որը թույլ է տալիս մոտավոր ճշտությանք թվագրել կառուցվածքը:



Նկար 1

Աստղագիտության տեսակետից կարենոր նշանակություն ունի Սեծամորի փորք բլուրը: Սեծամորի միջնաբերդից մոտ 200մ դեպի հյուսիս գտնվում է ժայռերի մի խումբ, որոնցից մեկի վրա 1964 թվականին Կ. Սկրտչյանը նկատել է աստղի նշանները: 1966 թվականին ժայռի մակերևույթի ուսումնասիրությունները ապացուցեցին, որ մենք գործ ունենք ժայռակերտ կառուցվածքների համալիրի հետ, որոնք հնում դիտահարթակների դեր են կատարել որը (Parsamian, Mkrtchian, 1967; Պարսամյան, Մկրտչյան, 1969; Պարսամյան, 1973): Փոքր բլուրն անփոփում է մի

շարք ժայռահարթակներ, որոնցից հատկապես լավ են պահպանվել երեքը: Առաջինը եռանկյունաձև է (նկար 1), սուր անկյունով ուղղված դեպի հարավ: Այդ անկյան կիսորդը համընկնում է հյուսիս-հարավ ուղղության հետ ( $-1^{\circ}$ -ից  $-2^{\circ}$  ճշտությամբ): Եռանկյան արևելյան կողմում, ժայռի մեջ փորված է սեղան, որի ներսում պատկերված են չորս աստղեր: Բացի այդ, ամբողջ հարթակը ծածկված է հավանաբար լուսատումերի պաշտամունքի հետ առնչվող նշաններով, որոնցից աչքի են ընկնում հատկապես շրջանաձև դասավորված 7 և 12 փոսիկներով պատկերները: Երկրորդ հարթակը առաջինից 2.5մ բարձր է, այն նույնպես եռանկյունաձև է և կողմնորոշված միջօրեականի երկայնքով, այսինքն, գտնվում է հյուսիս-հարավ ուղղությամբ անցնող հարթությունում: Երրորդ հարթակը տարբերվում է առաջին երկուսից: Նրա մակերեսը նույնպես ծածկված է տարատեսակ պատկերներով, որոնց մեջ դարձյալ հեշտությամբ զատվում են շրջանաձև դասավորված փոսիկները: Հյուսիս-հարավ ուղղությամբ ժայռում փորված յոթ աստիճանները տանում են դեպի հարթակը: Այդ աստիճանները նույնպես գտնվում են միջօրեականի հարթության մեջ (նկար 2): Դեպի գագարը աստիճանների լայնությունը նվազում է: Վերջին աստիճանի վրա հայտնաբերվեց փորագրված հյուսիս-հարավ-արևելք նշանը, այսինքն կողմնորոշչիչը, որը ամենապարզ աստղագիտական դիտումներ կատարելու հնարավորություն է տալիս (նկար 3):



Նկար 2



Նկար 3

Այսպիսով, մենք ունենք միջօրեականում կողմնորոշված երեք հարթակ: Այժմ անցնենք առաջին հարթակի վերծանմանը: Ինչպես նշեցինք, արևելյան կողմում, մոտ 55×40 սմ չափեր ունեցող սեղանի վրա փորագրված են աստղի չորս պատկերներ, որոնցից երեքը լավ են պահպանվել: Սեղանը հարավարևելյան ուղղությամբ սեղմում է: “Պատահակա”ն է արդյոք այդ ընտրությունը: Ամենայն հավանականությամբ՝ ոչ: Նշանների փորագրման համար տեղի պատահական ընտրության դեպքում, ավելի հարմար էր հարթակի միջին մասը, քան թե եզրը, ինտևաբար, այդ նշանները արևելյան կողմում փորագրելը որոշակի նպատակ է

հետապնդել, և սեղանի ուղղվածությունը կարող է բանալի ծառայել նրա վերծաննան համար: Այն փաստը, որ աստղերի պատկերներով սեղանը գտնվում է արևելյան կողմում՝ լուսատոի կամ Արեգակի ծագման ուղղությունն են հուչում: Արեգակը հնում իր բնորոշ խորհրդանիշն է ունեցել, հետևաբար, սա չեր կարող վերաբերել Արեգակի ծագմանը:

Մտովի շարունակենք սեղանի բարձրությունը մինչև հորիզոն և տեսնենք, թե ո՞ր լուսատուների ծագման հետ է կապվում տվյալ ուղղությունը: Այդ նպատակով կողմնացույցի օգնությամբ շափենք սեղանի բարձրության ազիմուտը և որոշ հաշվումներ կատարենք: A-ով նշենք սեղանի բարձրության արևելյան ազիմուտը, որը սեղանը կիսում է: Բարձրության գիծը չնայած պահպանված է, սակայն այն բարձր ճշտությամբ չի տարված, այդ իսկ պատճառով հաշվումների ժամանակ  $1^{\circ}-2^{\circ}$  սխալն անխուսափելի է: Զափելով ազիմուտը և նկատի առնելով Մեծամորի լայնության համար՝ մագնիսական թևերի ուղղությունը ( $4^{\circ}$ ), գտնում ենք  $A=298^{\circ}$ : Օգտագործելով սֆերիկ աստղաբաշխության բանաձևերը, ունենալով ազիմուտը, կարելի է հաշվել այդ ուղղությամբ ծագող լուսատուի հասարակածային կոորդինատները՝ ուղղակի ծագումը և հակումը: Հակումի համար ստացվում է  $-21^{\circ}$ : Քանի որ ամենահավանական հակումը  $-21^{\circ}$  է, կարելի է որոշել, թե ե՞րբ և ո՞ր պայծառ աստղերն են ունեցել նման հակում: Այդ նպատակով օգտագործվել է պայծառ աստղերի կատալոգը, որտեղ բերված են աստղերի կոորդինատները 5000 տարի առաջ (Hawkins, Rosenthal, 1967):

Աստղերից իրենց պայծառությամբ միայն չորսն են ուշաբրության արժանի (աղյուսակ 1): Դրանցից ամենապայծառը Սիրիոսն է: Մեզ թվում է, որ ամենահավանական լուսատուն, որը դիտել և որին երկրպագել են Մեծամորի հնագույն բնակիչները՝ Սիրիոսն է:

## Աղյուսակ 1

Աստղ	Աստղային մեծություն	Դարաշրջան
Sirius	-1.58 <sup>m</sup>	2600 մ.թ.ա.
Rigel	0.34 <sup>m</sup>	2100 մ.թ.ա.
β CMa	1.99 <sup>m</sup>	1000 մ.թ.ա.
Antares	1.22 <sup>m</sup>	400 մ.թ.

Մ.թ.ա. 2800-2600 թթ. ամառային արևադարձի օրերին Սիրիոսը կարելի էր դիտել լուսաբացին, ծագող արևի շողերում: Այն փաստը, որ այդ դարաշրջանում Սիրիոսը ամառային երկնքի աստղ էր (այժմ նա երևում է ուշ աշնանն ու

հաստկապես երկարատև ձմռանը), հաստատում է, որ այն կարող էր Մեծամորի բնակչութերի պաշտամունքի առարկան լինել: Դրա համար բավական է պատկերացնել պարզ երկնքը և այնտեղ երևացող պայծառ աստղը: Բացառված չէ, որ տարվա մեջ Սիրիոսի առաջին անգամ երևալը, մեծամորցիները եզրակացների նման կարող էին կապել տարվա սկզբի հետ: Աղյուսակ 2-ում բերված են Սիրիոսի ծագման պահերը Մեծամորում ամառային արևադարձի օրը երեք տարրեր դարաշրջանների համար:

Այսպիսով, առաջին ժայռահարթակը վկայում է այն մասին, որ հայկական լեռնաշխարհի բնակչութերը քաջ ծանոթ էին աստղալից երկնքին և կարող էին լուսատուի պարբերաբար երևալը օգտագործել ժամանակը հաշվելու համար:

## Աղյուսակ 2


Ազիմուտ	Հակում	Տեղական ժամանակ	Դարաշրջան
300°	-22°20'	4 <sup>h</sup> 39 <sup>m</sup>	2800 մ.թ.ա.
298°	-22°55'	4 <sup>h</sup> 43 <sup>m</sup>	2600 մ.թ.ա.
296°	-19°00'	5 <sup>h</sup> 03 <sup>m</sup>	1900 մ.թ.ա.

Սեղբերված վերոհիշյալ տարեթիվը (մ.թ.ա. 28-26-րդ դ.դ.) մեզ հիշեցնում է հայկական տոմարագիտության մեջ հանդիպող ավանդական մ.թ.ա. 2492 թվականը՝ բուն թվականն Հայոց:

Հատուկ հետաքրքրություն է ներկայացնում երրորդ հարթակը: Կարո՞ղ ենք արդյոք պնդել, թե այն որևէ կապ ունի դիտումների հետ, եթե աստիճանները պատահական ուղղություն ունենային, իհարկե ոչ: Եթե աստիճանները ուղղված լինեին արևելք-արևմուտք գծով, համարձակ կարելի էր պնդել, որ տվյալ դեպքում մենք գործ ունենք զուտ պաշտամունքային կառուցվածքի հետ: Աստիճանների հյուսիս-հարավ ուղղվածությունը, ամենաբարենպաստն է աստղագիտական դիտումների համար, թեկուզ և ամենապարզունակը՝ անգեն աշքով դիտելու համար:

Աստղագիտական դիտումների համար պետք է ամբողջ հարավային հորիզոնը արևելքից-արևմուտք քաց լինի, սա առաջին պայմանն է և Մեծամորում այն առկա է: Ենթադրենք, որ աստիճաններն ունեն հակառակ ուղղություն, այսինքն հարավից-հյուսիս, այդ դեպքում մենք չենք կարող դիտել մոլորակները, Լուսինը, Կենդանակերպի համաստեղությունները և աստղերի մեծ մասը: Տեսանելի կլիններ երկնակամարի միայն ոչ մեծ քենուամերձ մասը: Որպեսզի, իրոք

դիտումներ կատարվեն, հարկավոր է դեմքով դեպի հարավ կանգնել: Նոյն սկզբունքով են կառուցված նաև ժամանակակից աստղադիտարանները: Ահա թե ինչու երրորդ հարթակի դիրքը, մոտավորապես միջօրեականի հարթությունում, ինչպես և վերջին աստիճանի կողմնորոշիչը թելադրում են, որ աստիճանների ուղղությունը պատահականորեն չի ընտրված, իսկ քանի որ աստիճանները միջօրեականով ճիշտ չեն դասավորված (հարավ-հյուսիս-զենիթ գծով անցնող հարթություններում), այդ իսկ պատճառով լրացնուիչ փորված է կողմնորոշիչը: Այսինքն՝ աստիճանները նոյնպես դիտման հարթակ են ծառայել: Մենք չենք քննարկում, որ այստեղ կարող էին և պաշտամունքային արարողությունները կատարվել և, որ փոքր բլաշարքի շատ նշաններ պայմանավորված են դրանով. դա ինքնըստինքյան հասկանալի է:



#### Նկար 4

Եթք Օլկոտը և Մաունդերը (Maunder 1906; Olcott 1914) գրում էին Հայկական լեռնաշխարհի հին բնակիչների աստղագիտական գիտելիքները ունենալու հնարավորության մասին, դեռևս չկար դա հաստատող որևէ փաստ: Այժմ մենք կարող ենք պնդել, որ Հայկական լեռնաշխարհի բնակիչները աստղագիտությանը ծանոթ էին դեռևս մ.թ.ա. 3-րդ հազարամյակում: Մեծամորի կապակցությամբ Զ.Ս. Հոռոկինը Վ.Հ. Համբարձումյանին ուղված նամակում (նամակի պատճենը բերված է նկար 4-ում) գրում է. «Ես համոզված եմ, որ

Ստորև նենջը միակը չէ և պետք է ակնկալել այդպիսի վաղ աստղագիտական մշակույթ Հայաստանում»:

Չնայած Հայկական լեռնաշխարհում, սկսած մ.թ.ա. 3-րդ հազարամյակից մինչև Շիրակացին, աստղագիտության անընդմեջ զարգացումն ապացուցող դեռևս սակավաբիվ փաստեր ունենք, սակայն դա չի նշանակում, որ նրա զարգացումը շարունակական չի եղել: Անընդմեջ շրթան վերականգնելու համար թերևս պետք կլինի գիտնականների շատ սերունդների աշխատանք: Եթե մինչև այսօր մենք չունենք տվյալներ շատ դարաշրջանների համար, դա չի նշանակում, թե դրանք գոյություն չունեն, դա նշանակում է միայն, որ հարկավոր է հաստատակամորեն և համբերատար փնտրել դրանք:

Այսպիսով, Մեծամորի փոքր բլրաշարքի առաջին իսկ հետազոտությունները ապացուցեցին, որ բացի պաշտամունքային նշանակությունից այն ունի նաև աստղագիտական նշանակություն՝ կապված երկնային լուսատուների սովորական դիտումների հետ:

Բլրի հարթակների վրա, ըստ Սիրիոսի, կողմնորոշումը վկայակոչում է մ.թ.ա. 2800-2600 թվականները: Հնագիտության տվյալներով Մեծամորը բնակատեղի է եղել մ.թ.ա. 3-րդ հազարամյակի սկզբից: Մեծամորի փոքր բլրաշարքն ապացուցում է, որ Հայկական լեռնաշխարհի բնակիչները դեռևս խոր անցյալում ծանոթ էին աստղագիտությանը, որն իր հերթին Արարատյան դաշտավայրի բարձր մշակույթի ապացույցն է:

## Զորաց քարեր

Հայաստանի հնագույն հուշարձանների մեջ կա մի մեգալիթային հուշարձան, որը հավանաբար կապված է աստղագիտության հետ: Երևանից 250կմ դեպի հարավ-արևելք գտնվում է Զորաց քարեր կառույցը, որը թվագրվում է մ.թ.ա. II հազարամյակով: Ուղղահայաց քարեր սյուները, որոնց զգալի մասը ունի ավելի քան երկու մետր բարձրություն, կազմում են քարե օղակ՝ նման Մեծ Բրիտանիայում և Բրետանում հանդիպող քարե հնագույն հուշարձաններին՝ հենցերին (նկար 5; Պարսամյան 1984; Ծինենիշի 1984; Պարսամյան, Բարսեցյան 1987; Parsamian 1999; Yoshida 2014):

Զորաց քարի հիմնական օղակի տրամագիծը ավելի քան 30մ է և հատկանշական է, որ արևելյան մասում գտնվող որոշ քարերի վրա կան լսվ



հղկված կլոր անցքեր, որոնք կարող էին օգտագործվել զիշերահավասարների և արևադարձերի ժամանակաշրջանում Արեգակի դիտումների համար: Հիմնական օրակը հարավ-արևելք ուղղությամբ մեզայիթներով կապված է երկու մեզայիթներից (որոնց միջև հեռավորությունը և քարերի չափանիկ մեծ են, քան մյուս հարեան քարերի միջև հեռավորությունը և չափանիկ) քաղկացած դարպասի հետ: Արևածագի առաջին դիտումները արևադարձի ժամանակ ցույց տվեցին, որ դարպասի միջին գիծը համընկնում է արևելք-արևմուտք ուղղության հետ: Դարպասից դեպի հյուսիս-արևելք ուղղության վրա գտնվում են ինը մեզայիթներ: 1985թ. հունիսի 22-ին արևածագի դիտումները ցույց տվեցին, որ արևածագի պահին Արեգակը երևում է դարպասի կողմից ամենաբարձր մեզայիթի գագարին: Նույն պահին հնարավոր է դիտել Արեգակը համար 39 և 44 մեզայիթների վրա գտնվող անցքերով: Համարակալումը սկսվում է հյուսիս-հարավ ուղղությամբ դեպի հիմնական օրակը տանող քարուղու հյուսիսային ծայրում:

1985թ. սեպտեմբերի 21-ին, աշնանային զիշերահավասարի օրը կատարված դիտումները ցույց տվեցին, որ Արեգակը ծագեց դարպասի մեջտեղի ուղղությամբ, քանի որ դարպասը ուղղորդված է արևելքից դեպի արևմուտք: Արեգակի առաջին հայտնվելը զիշերահավասարի օրը կարող էր օգտագործվել արևելքի ուղղության որոշման համար և դարպասը կարող էր ծառայել այդ նպատակին: Այսպիսով Զորաց քարը կառուցողները հնարավորություն ունեին որոշել արևելքի և, հետևաբար նաև արևմուտքի ուղղությունը: Կարճ ժամանակ անց Արեգակը հնարավոր էր դիտել դարպասի կողմից առաջին մեզայիթի վրա գտնվող անցքով:

Նույն օրը, արևածագի դիտումների ժամանակ, մինչ Արեգակի հայտնվելը, դարպասի մեջտեղում դիտվեց Վեներա մոլորակը: Կարելի է ենթադրել, որ դարպասի տեղը ընտրված է պարբերական երևույթները դիտելու համար (Պարսامյան, 1985, Պարսամյան, Եարցեցյան, 1987):

Նույն տարածաշրջանում, Զորաց քարից 40կմ հեռավորության վրա գտնվում է Քարահունջ գյուղը, ինչ որոշ մտորումների առիթ է տալիս: Քարահունջ քառը քարդ քառ է, քաղկացած քար և հունջ արմատներից, որոնցից վերջինը ենթադրաբար ունի փունջ իմաստը: Հետաքրքիր է որոշակի նմանությունը հայտնի Սթոունհենջի հետ (stone – քար, henge – կախված), մասնավորապես՝ երկրորդ արմատների համահնչյունությունը: Պետք է նշել, որ մինչ այժմ հուշարձանը քիչ թե շատ վստահաբար թվագրված է միայն հնագիտական եղանակով (մ.թ.ա. II հազարամյակ): Հաշվի առնելով, որ տարածքը գտնվում է սեյսմիկ ակտիվ գոտում, ինչը մեծ հավանականությամբ կարող էր բերել քարերի դիրքի և նրանցով որոշված ուղղությունների էական տեղաշարժի, պետք է նշել, որ այն եղանակը, որը կիրառվել էր մեր կողմից Մեծամորի հուշարձանը թվագրելու համար պիտանի չէ: Զորաց քարերի դեպքում: Այն կարող է բերել մեծ սխալների:

## Գրականություն

- Թումանյան Բ.Ե., Մնացականյան Ա.Օ., Բրոնզե դարի գրտի օրացույց, Միտք, 1965  
Թումանյան Բ.Ե., Պետրոսյան Ս.Բ., ԵՊՀ գիտ. Տեղեկատու, 1,16, 1970  
Մարտիրոսյան Հ.Ա., Հայաստանի նախնադարյան նշանագրերը, ՀՍՍՀ ԳԱ, 1973  
Պարսամյան Է.Ս., Մեծամոր, ՀՍՍՀ ԳԱ իրատ., Երևան, 1973, էջ. 142-149  
Վեսеловский И.И, XXV международный конгресс востоковедов, М., 1960  
Нейгебауэр О., Точные науки в древности, М., 1968  
Парсамян Э.С., г. «Коммунист», 1984  
Парсамян Э.С., Сообщ. Бюраканской обс., 57, 101, 1985  
Парсамян Э.С., Mkrtchyan K.A., Историко-Астрономические Исследования, т. 10, 35, 1969,  
Москва  
Парсамян Э.С., Барсегян А.Ж, Некоторые вопросы экспериментальной физики, Научные  
труды Армпединститута, с. 58, 1987  
Ӧ՛ է՛է՛յ Օ.Ս. “Ի ծ՛ի և ս օ քանի ի ն՛ն Ած՛ի ա՛ է՛”, 1984  
Hawkins G.S., Astro-archeology, Research in Space Science, Spatial Report, No. 226, 1966,  
Cambridge  
Hawkins G.S., Rosenthal S.K., Smithsonian contributions to Astrophysics, v. 10, no. 2, 1967  
Lockyer J.N., Stonehenge and Other British Stone Monuments Astronomically Considered, 1906  
Maunder E., Astronomy without telescopes, London, 1906  
Olcott W., Legends of Stellar Universe, Petersburg, 1914  
Parsamian E.S., Mkrtchian K.A., Sky and Telescope, 1967  
Parsamian E.S., Oxford VI and SEAC 99, p. 77, 1999  
Van der Waerden B.L., Die Anfänge der Astronomie, Basel, 1968. p. 532  
Yoshida B., Moon viewing: megaliths by moonlight, Marquand Books: Seattle, 2014

## Archaeoastronomy in Armenia

**Elma PARSAMIAN**

*Byurakan Astrophysical Observatory, NAS RA*

A review of Archaeoastronomy in Armenian is given, especially emphasizing on ancient observatories. The author was the first to study such archaeoastronomical sights, as ancient observatories Metsamor, Zorats Karer, etc. Some calculations on observations of planets and definite stars from these sights are given.

# Հայկական Վահագն աստվածը՝ Տիեզերքի չորս տարրերի ծնունդ

**Հայկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**  
*ՀՀ ԳԱԱ Բյուրականի աստղադիտարան*

## 1. Ներածություն

Տարբեր հին փիլիսոփայական ուսմունքների նույնիսկ մակերեսային համեմատությունը ցույց է տալիս, որ աշխարհի արարմանը վերաբերող այդ ուսմունքներում բազմաթիվ նմանություններ կան: Գրեթե բոլոր ուսմունքներում ընդունվում է, որ աշխարհի հիմքում ընկած են չորս կամ հինգ տարրեր, որոնք են հոռը (Երկիրը), ջուրը (ծովը), օդը (Երկինքը) և կրակը (հորը): Հին փիլիսոփաների աշխատություններում հաճախ հայտնվում է նաև հինգերորդ տարրը: Եվրոպական գիտության համար այդ վերջին տարրը հայտնի է Արիստոտելի կողմից հունական փիլիսոփայություն բերված եթեր անունով:

Որքան հայտնի է, աշխարհի հիմք հանդիսացող այդ տարրերի մասին առաջին գրավոր վկայությունը գտվել են Բարելոնյան դիցարանության մեջ: Այն հիշատակվում է 3600-3800 տարեկան Էնումա Էլիսի մեջ [1], որը հանդիսանում է բարելոնյան արարման ուսմունքը: Բոլոր չորս հիմնական տարրերն արդեն թվարկված են այնտեղ, իսկ քամին նշվում է, որպես հինգերորդ տարր:

Դասական հունական փիլիսոփայության մեջ սահմանված և Եվրոպայում տարածում գտած տարրերը գործածության մեջ են դրվել շատ ավելի ուշ: Համարվում է, որ դա արել է Սիցիլիայում ապրող փիլիսոփա Էմիկեդոկլեսը ՔԱ հինգերորդ դարում: Սակայն տեսակետ կա, որ դրանք միավորող «արմատ» կամ հունարեն ծրագրային տերմինը «տարր»-ով կամ սուօշեանով է փոխարինել Պլատոնը [2]:

Տիեզերքի կառուցվածքի վերաբերյալ տարբեր դասական ուսմունքների համարքումն ու համեմատումը հանգեցնում է այն համոզմունքին, որ գոյություն ունի հիմնական տարրերի մասին տեսակետի ընդհանուր արմատ: Իրականում այդ տարրերը նույնական են հնագույն բոլոր մշակույթների համար: Ավելին, երբեմն այդ տարրերի անվանումների նույնական հնչյունային կառուցվածք կարելի է հայտնաբերել նաև միևնույն

ընտանիքին պատկանող տարբեր լեզուների մեջ: Օրինակ, բոլոր հինգ տարբեր մենք հայտնաբերում ենք Հինդուիստական ուսմունքի մեջ հետևյալ անուններով *kshiti* կամ *bhumi* (հող), *ap* կամ *jala* (ջուր), *tejas* կամ *agni* (կրակ), *marut* կամ *ravan* (օդ կամ քամի) և, վերջապես, *vyom* կամ *shunya* կամ *akash* (եթեր կամ դատարկություն): Հայերենում մինչև օրս օգտագործվում են սանսկրիտով տրված այդ տերմինների մի մասը: Հայաստանի որոշ մասերում, օրինակ, փոքր գետակները կամ առուները տեղի բառբառով կոչվում են «Ճալա»: Հետաքրքիր է նաև, որ հայերենում «ափ» բառն առավել հաճախ օգտագործվում է ջրային և հողային մակերեսների սահմանային տարածքների անվանման նպատակով՝ ծովափ, գետափ և այլն: Հայերեն «քեծ» բառը գրեթե միշտ կապված է կրակի, տաքության առկայության հետ, շատ հաճախ օգտագործվում է «քեծ կրակ» բառակապակցությունը:

Կասկած լինել չի կարող, որ համեմատական լեզվաբանությունը բազմաթիվ տեղեկություններ է պարունակում ոչ միայն տարբեր ազգերի լեզվական կապերի մասին, այլ կարող է նաև այլ տիպի տվյալների վերհանման հզոր և արդյունավետ աղբյուր հանդիսանալ:

## 2. Վահագնի ծնունդը

Հայկական հնագույն բանահյուսության Տիեզերքի և նյութի կառուցվածքին վերաբերող տեղեկությունները չափազանց քիչ են, և որոնումները միայն անուղղակի պատառիկներ են հայտաբերում: Չափազանց զարմանալի կլիներ, եթե լեզվական զարգացման հինգհազարամյա պատմության ընթացքում ստեղծված կամ հայեցի դարձված չլինեին տիեզերաբանական ուսմունքի տարրերը: Մեր կարծիքով այս բնագավառը մնում է դեռևս քիչ հետազոտված:

Այս տեսակետից հատկապես հետաքրքիր են թվում հայկական դիցարանի Վահագն աստծուն վերաբերող պատմությունների պատառիկները, որոնք հասել են մինչև մեր օրերը: Միակ գրավոր աղբյուրը, որ մեզ է հասցել Վահագնին նվիրված դյուցազներգությունից, Մովսես Խորենացու «Հայոց պատմությունն է»: Խորենացու վկայությամբ նույնիսկ հինգերորդ դարում հայ ժողովուրդը պահպանել էր Վահագնին նվիրված ձռների մեծ մասը, և փառական նվազակցությամբ գուսանները երգում էին նրա դիցարանական ձռնն ու պատմում նրա բազմաթիվ սխրագործությունների մասին:

Վահագն անվան տարբեր մեկնաբանություններ կան: Որոշ հեղինակներ այն կարծիքին են, որ անունը բաղկացած է Սանսկրիտյան երկու բառերից, որոնք են, «վահ», որը նշանակում է «մեկը, որը բերում է», և «ազնի», որը նշանակում է կրակ: Այսինքն, այս մեկնաբանմամբ Վահագն անունը նշանակում է «կրակ բերող»: Մյուս կողմից, այլ հետազոտողներ այն տեսակետին են, որ այդ անունը հնդեվրոպական «Բահազին»-ի ձևափոխված տարբերակն է, որ նշանակում է Աստված: Ամեն դեպքում, երկուսն էլ թվում են իրականությանը բավականին մոտ, եթե հաշվի առնենք, որ հայկական դիցարանում քաջության, ռազմի և հաղթության գերազույն աստվածն է, որը երբեմն ներկայացվում է նաև որպես Արեգակային աստված:

Խորենացին մեզ է հասցրել նաև երգը, որը նվիրված է Վահագնի ծնունդին, ինչը պարզորոշ բացահայտում է, որ նա հնագույն ուսմունքներում հայտնի աշխարհաստեղծ չորս տարրերի ծնունդ է.

Երկնում էր երկինքը, երկնում էր երկիքը,  
Երկնում էր և ծովը ծիրանի,  
Երկունքը բռնել էր ծովում  
Նաև կարմրիկ եղեգնիկին:  
Եղեգնի փողով ծուխ էր ելնում,  
Եղեգնի փողով բոց էր ելնում  
Եվ բոցից դուրս էր վազում  
Մի խարտեաշ պատանեկիկ:  
Նա հուր մազեր ուներ, (ապա թե՝)  
Բոց մորուք ուներ,  
Եվ աշքերն էին արեգակներ:

Ինչպես վկայում են վերոշարադրյալ ձռնի առաջին երեք տողերը երկունքի մեջ էին երկինքը (օղը), երկիքը (հողը) և ծովը (ջուրը), որոնց եղեգնի փողով միանում է նաև բոցը (կրակը): Այստեղ բոլոր չորս տարրերն են, որոնց միասնությունից էլ ծնվում է Վահագնը, հայկական դիցարանի այն աստվածը, որին նվիրված ձռներում, ամենայն հավանականությամբ, շարադրված էին հին հայկական պատկերացումներն աշխարհի կառուցվածքի մասին: Այդպիսի եզրակացության է հանգեցնում նաև այն փաստը, որ Վահագնի մասին դյուցազներգությունից մեզ հասած մյուս պատառիկը ևս կապված է տիեզերական արարչազործության հետ:

### **3. Հարդագողի ճանապարհ**

Ծիր Կաթին անվանումը, ինչպես հայտնի է, հունական ծագում ունի և կապված է հունական դիցարանի հերոսների հետ: Ըստ դիցարանության, Հերակլեսը Զևսի որդին էր, որ ծնվել էր մահկանացու կնոջից: Հերան ամեն կերպ խոշոնդոտում էր Հերակլեսի աստվածային շնորհներով օժտելուն: Հերակլեսի հովանավոր Աթենասը խաբեությամբ Հերային ստիպում է կրծքով կերակրել Հերակլեսին: Նորածինը աստվածուհուն ցավ է պատճառում և աստվածուհին երախային պոկում է իր կրծքից: Ժայթքած կաթի շիթը վերածվում է Ծիր Կաթինի:

Հետաքրքիր է, որ հայկական դիցարանության մեջ Ծիր Կաթինի առաջացումը կապվում է Վահագնի անվան հետ, որը հաճախ նույնացվում է Հերակլեսի հետ: Սակայն հայկական առասպելը էապես այլ բովանդակություն ունի և առնչվում է Վահագնի ոչ թե մանկության, այլ երիտասարդության ժամանակաշրջանին: Առասպելի գրավոր շարադրանքը հանդիպում է Մովսես Խորենացու մոտ: Իսկ հետագայում Անանիա Շիրակացին, կրկնում է, թե ինչպես է մի ցուրտ ձմռան զիշեր Վահագնը գողացել ասորական աստված Բարշամին պատկանող հարդը և բերել այն Հայաստան: Հենց այդ հարդի մի մասն էլ թափել է ճանապարհին ու առաջացրել այն աղոտ լրւահետքը, որը մենք տեսնում ենք պարզ ամառային երկնքում և որին անվանում ենք Հարդագողի ճանապարհ: Ճիշտ է, Շիրակացին այդ պատմությունը պատմում է որպես ոչ արժանահավատ մի բան, քանի որ համոզված էր, որ Հարդագողի ճանապարհն իրականում կազմված է անթիվ-անհամար աստղերից, որոնք այդպիսի միաձույլ շերտի տպավորություն են թողնում իրենց հսկա հեռավորության պատճառով միայն: Այսպիսով, Վահագնի մասին դյուցազներգության մեզ հասած երկու պատարիկներից երկրորդը նույնպես կապված է հնագույն տիեզերաբանական պատկերացումների հետ: Եվ հենց այդ պատճառով կարելի է ենթադրել, որ այդ դյուցազներգությունը, այդ թվում նաև մեզ հասած վերապատմումները վիշապների հետ նրա կոիվների մասին կարող էին շատ ավելի սերտորեն կապված լինել աշխարհի կառուցվածքի վերաբերյալ հնագույն հայկական ուսմունքների հետ:

Այստեղ իմաստ ունի անդրադառնալ Հարդագողի ճանապարհ անվանն առնչվող ևս մեկ խնդրի: Բանն այն է, որ Ծիր Կաթինի անունը հարդի հետ կապված է ոչ միայն հայերի մոտ: Հարդի հետ կապված անուններ կարելի են գտնել բավականին մեծ տարածքում, որը հյուսիսից հարավ ձգվում է

Դանուբից մինչև Եթովպիա, իսկ արևելքից դեպի արևմուտք՝ Գորի անապատից մինչև Աքրիկայի արևմտյան ափերը: Այս հանգամանքը որոշ հետազոտողների հիմք է տվել ենթադրելու, որ անվանումն ունի արաբական ծագում: Փաստարկներն այն են, որ արաբական ցեղերը քոչվոր էին, իսկ նրանց կյանքն ու անվտանգությունը կապված էին ձիերի և հարդի անհրաժեշտ առկայության հետ: Հենց այդ պատճառով է, քատ այդ հեղինակների, նրանք կարող էին երկնքում տեղակայել այդպիսի կարևորություն ներկայացնող հարդը [3]:

Սակայն, եթե հաշվի առնենք, որ հայկական Հարդագողի ճանապարհ անվանումը կապված է Վահագն աստծոն ոյուցազներգության հետ, որը ամենայն հավանականությամբ ծնունդ է առել ՔԱ առնվազն VII-VI դարերում, ապա այս բացատրությունը ոչ մի կերպ չի կարող վերաբերել հայկական անվանը: Բանն այն է, որ արաբները Արաբական թերակղզու հարավից դուրս գալով, իրենց նվաճումներով Հայաստան հասան միայն յոթերորդ դարում, Վահագնի մասին առասպելների ստեղծումից ավելի քան տասներկու հարյուրամյակ հետո: Բացի դրանից, Ծիր Կաթինի բուն արաբական անվանումը կապված է ոչ թե հարդի, այլ շատ տրված այլուրի հետ:

Եվ այնուամենայնիվ, անվանման տարածման մեջ արաբները կարող էին էական դեր կատարել: Նման եզրակացության համար հիմք են ծառայում հետևյալ երեք կարևոր պատմական փաստերը: Առաջինն այն է, որ վերևում հիշատակված տարածքը բավականի լավ համընկնում է արբական երբեմնի հզոր խալիֆայության տարածքի հետ: Երկրորդ, Հայաստանը ութերորդ դարի սկզբից Արմինիա անվամբ մի քանի հարյուրամյակ խալիֆայության մաս էր կազմում: Եվ երրորդ, արաբները, ի տարբերություն այլ նվաճողների, չեին ոչնչացնում նվաճված ազգերի մշակութային արժեքները: Աստղագիտության մեջ հայտնի է, որ իին հունական աստղագիտության խոշորագույն նվաճումների մեծ մասն այսօր ոչնչացած կլիներ, եթե արաբները մեծ խնամքով դրանք թարգմանած և պահպանած չինեին մարդկության համար: Բուն հայկական Հարդագողի ճանապարհ անվանումը նույնպես կարող էր տարածում գտնել խալիֆայության տարածքում և տեղայնացվել այլ ազգերի կողմից:

#### **4. Եզրակացություն**

Վահագն աստծո վերաբերյալ հայկական դիցաբանության մեջ հասած երկու պատառիկները կապված են արարման հետ: Դրանցից առաջինը՝ Վահագնի ծնունդը պարզորոշ ցույց է տալիս, որ նա ստեղծվել է հին աշխարհում լայնորեն ընդունված չորս հիմնական տարրերից՝ հողից, օդից, ջրից և կրակից: Երկրորդը կապված Ծիր Կաթինի կամ Հարդազողի ձանապարհի առաջացման հետ: Դա հիմք է տալիս ենթադրել, որ Վահագնի մասին առասպելը հանդիսացել է հայկական հնագույն ուսմունքը Տիեզերքի առաջացման վերաբերյալ:

#### **Գրականություն**

1. G. Smith, "The Chaldean Account of Genesis" (London, 1876). Տես նաև «Enûma Eliš» հոդվածը Wikipedia-ում:
2. Plato, *Timaeus*: Տես նաև «Classic elements» հոդվածը Wikipedia-ում:

## **Armenian God Vahagn – Created of Four Primary Cosmic Elements**

**Haik HARUTYUNIAN**

*Byurakan Astrophysical Observatory, NAS RA*

The survived two snatches of the mythological history about Vahagn – the Armenian god of the Sun and Fire is analyzed to find fingerprints of ancient cosmology. In the first fragment known as “Birth of Vahagn” all the four primary elements are mentioned as travailing ones which brought the god into life. The second fragment devoted to the ancient conception on the formation of the Milky Way named in Armenian mythology “Straw Thief’s Way”. The fact that both survived fragments concern the structure of the Universe might be explained easily if the ode glorifying Vahagn was based on the ancient Armenian cosmological views.

# Հայկական լեռնաշխարհի հնագույն աստղագիտական նշանագրերը և նրանց արձագանքը

## Ճարտարապետական կառույցներում

### Անի ՏԵՐ-ԳՈՒԼԱՆՅԱՆ

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան

**Առանձքային բառեր:** Հայկական լեռնաշխարհ, աստղային կենդանակերպի նշաներ, ժայռապատկերներ, աստղագիտական նշանագրեր, խորհրդապաշտական սիմվոլներ

**Ամփոփում:** Հայկական լեռնաշխարհում աստղագիտական գիտելիքների, տիեզերածանաչողության արդյունքում ծևավորված հավատամքային հոգևոր կառույցը իր խորհրդապաշտական սիմվոլներով, որոնք, ըստ մեզ, մասնավորապես արտահայտնվել են աստեղային կենդանակերպի նշանագրերով, իրենց պաշտամունքային և հոգևոր մտահայեցողական արձագանքն են ունեցել ինչպես ճարտարապետության, այնպես էլ մշակույթի տարրեր ճյուղերում, հատկապես՝ սիմվոլիկ զարդարվեստում: Աստեղային համաստեղությունների հերթափոխի և քաղաքակրթության զարգացման փուլերի միջև տեսանելի կապ է նկատվում: Հնագիտական աղբյուրների բացահայտումը հիմք են տալիս եզրակացնելու, որ Հայաստանի տարածքը եղել է աստղագիտության կենտրոններից մեկը: Աստղաբաշխական նշանները ունենալով տեղական ծագում, ձևավորելով հնագույն աստղագիտական-պաշտամունքային, հոգևոր-հավատամքային կառույց՝ իր զարգացումների արձագանքն են գտնել՝ իր ուրույն դրսորումներով նաև այլ կենսամիջավայրերում, ինչպես հիմն հեթանոսական, այնպես էլ քրիստոնեական եկեղեցու ճարտարապետության մեջ և որպես ծավալածե, և որպես հոգևոր զարաֆարախոսություն՝ իր հավատամքային խարհադապաշտական սիմվոլներով:

Աստեղային կենդանակերպի նշանները խորհրդանշող գծապատկերները հայտնի են մարդկությանը նախնադարից. այդ են վկայում հատկապես Հայաստանի տարածքում հայտնաբերված ժայռապատկերները: Դիտելով աստղային երկինքը՝ նախնադարյան մարդը ստեղծել է տիեզերքի քարտեզներ, որն, անկասկած, հնագույն տիեզերագիտության դրսորումներից է: Այդ քարտեզներն ունեին ոչ միայն ճանաչողական, այլև ուրույն խորհրդաբանական և պաշտամունքային բնույթ, որի հետքերը պահպանվել են հազարամյակների խորքից մեզ հասած աստղագուշակության մեջ: Կենդանակերպի համաստեղություններն ամենահին պատահական չեն նմանեցվել որոշակի կենդանիների կամ մարդկանց: Արեգակի շուրջը երկրի շրջապտույտի

ճանապարհին հաջորդաբար հայտնվող աստղերի խմբերն ունեն խորը նախնադարից եկող դիցարանական և ծիսական բովանդակություն: Այդ բովանդակությանը համապատասխան կառուցվում էր ողջ Երկրային կյանքը, մեկը մյուսին փոխարիմելու էին գալիս քաղաքակրթություններ, կառուցվում հսկայական խորհրդապաշտական շինություններ և այլն: Երկրի պտտման առանցքի դանդաղ առաջնադաշտումը հայտնի է իրեն պրեցեսիայի երևույթ: Պրեցեսիայի հետևանքով գարնանային գիշերի ավագանությունը մյուսը՝ ամբողջ կենդանաշրջանով շրջապտույտ գործելով 25920 տարվա ժամանակահատվածում: Պրեցեսիայի երևույթը, հնում, առեղծվածային և գերբնական ընկալվելով հասարակության կողմից, պատճառ է դարձել մարդկության պատմության խոչըն քաղաքակրթական տեղաշարժերի: Անհանար է շնկատել, թե ինչպիսի ահոելի ազդեցություն են ունեցել տիեզերածանաչողական, աստղագիտական գիտելիքները, և այդ ամենի հանդեպ մարդու ներաշխարհում ձևավորված հավատամքային կառույցը ճարտարապետության վրա: Շրջակա միջավայրի տարաբնույթ և տարատեսակ գործոնները, ատղային երկնակամարի անընդհատ փոփոխող տեսքը և այդ ամենի հանդեպ նաև, հոգևոր իմաստով՝ ներսի ու դրսի, մարդու սաղմնային պաշտպանվածության գօացողությունը, չեին կարող չստեղծել հավատամքային խորհրդապաշտական միջավայր՝ թե ճարտարապետական կառույցի ներսում, թե արտաքին ամբողջականության մեջ: Աշխարհի առաջնա հնչյունային գրեթ անգամ՝ սինայական, ինչպես և փյունիկյան տառերի այրենական կարգը որոշ դեպքերում ոչ միայն համապատասխանում են մոլորակներին ու կենդանակերպերին, այլև առնչվում են դրանց 2000-ամյա պտույտի պարերականության հետ:

Համաստեղությունների հերթափոխի և քաղաքակրթության զարգացման փուլերի միջև տեսանելի կապ է նկատվում. հնդեվրոպական ժողովուրդների առասպելաբանության մեջ ամենատարածված առասպելներից են, այսպես, կոչված Երկվորյակային առասպելները, որոնց խորհրդաբանությունը, թերևս, կապված է Երկվորյակներ համաստեղության հետ, ուր գարնանային գիշերահավասարի կետը գտնվել է մ.թ.ա. 6-4 հազարամյակներում, երբ հնդեվրոպական ընդհանրությունը դեռևս տրոհված չէր: Եզիստական քաղաքակրթության ամենատարածված խորհրդանիշը՝ Յուլն է, համանուն համաստեղության մեջ գտնվում էր գարնանային գիշերահավասարի կետը իին Եզիստոսի զարգացման և ծաղկման դարաշրջանում՝ մ.թ.ա. 3-րդ հազարամյակում, հելլենիստական քաղաքակրթության ստեղծմանն ու տարածմանը, որը համապատասխանում է գարնանային գիշերահավասարի գտնվելուն Խոյ համաստեղության մեջ է՝ մ.թ.ա. 2000 – մ.թ. 0: Եվ հենց այս ժամանակաշրջանի կենդանակերպն է գործածում արևմտյան աստղաբաշխությունը: Մեր թվարկության սկզբում գարնանային գիշերահավասարի կետը տեղափոխվեց Զկներ համաստեղության մեջ, և առաջին

քրիստոնյաների խորհրդանշից ձուկը երկնային այդ փաստի դրսերումներից մեկն է: Այս դարաշրջանում ծնվել և զարգացել է քրիստոնեությունը՝ իր ճարտարապետական գաղափարական խորհրդաբանությամբ: Աստղաբաշխական ավանդության համաձայն կենդանակերպի նշանների դասավորությունը բույլ է տալիս նկարագրել ցանկացած գործընթաց՝ նրա ծագումը, զարգացումն ու անկումը: Առավել ցայտուն այն արտահայտվում է տարվա եղանակների հերթափոխության մեջ: Հայտնի է, որ 12 նշանանց կենդանակերպը զարգացել է հայկական լեռնաշխարհում, մասնավորապես՝ շումերական աստղաբաշխությունն է զարգացրել, որը ժառանգելով դասական աստղագուշակությունը, հասցրել է այն մինչև մեր օրերը: Կենդանակերպի համատեղությունների շարքը հնուց ի վեր առանձնացել և պաշտամունքի ու երկյուղածության առարկա է եղել, քանի որ համարվել է, թե նրանք են հսկում Արեգակի տարեկան շրջապտույտը և ազդում Երկրագնդի կյանքի վրա: Ունենալով ընդհանուր ծագում աստղագուշակության հետ՝ աստղագիտությունն ավանդաբար օգտագործում է կենդանակերպը՝ երկնորոշում Արեգակի և մոլորակների դիրքի կոորդինատները որոշելու համար:

Հնագիտական նորանոր աղբյուրների բացահայտումը, Սիսիանից, Մեծամորից Վարդենիսից, Ծղուկից, Ուղուասարից գտնված ժայռապատկերային նշաննագրերը իմանք են տալիս եղրակացմելու, որ Հայաստանի տարածքը եղել է աստղագիտության կենտրոններից մեկը՝ հետևաբար աստղաբաշխական նշանները ևս պետք է տեղական ծագում ունենային: Այդ մասին են վկայում նաև, ինչպես վերը նշեցինք, հնդեվրոպական ժողովուրդների առասպելաբանության մեջ երկվորյակային առասպելները, որոնց խորհրդաբանությունը կապված է Երկվորյակների համատեղության հետ, որը գարնանային գիշերահավասարի կետը գտնվել է մ.թ.ա. 6-4 հազարամյակներում, երբ հայկական լեռնաշխարհում հնդեվրոպական ընդհանրությունը դեռևս տրոհված չէ: Բնականաբար պետք է, որ այդ ընդհանրության յուրաքանչյուր տարրը իր հիշողության մեջ ունենար երկվորյակների նախատեղծ առասպելական կերպարը: Պատահական չէ, որ կենդանակերպերի սյունաշարում երկվորյակի նշանը լինելով օդի նշան, խորհրդանշում է միտքն ու շունչը: Այսինքն թե՝ աստվածային մարդաստեղծ ոգին: Աստված մարդուն ստեղծեց իր կերպարով՝ ինչպես կատարյալ Աստված վերեկց ներքև, այդպես էլ անկատար մարդը ներքևից վերև պիտի, որ մարդեղանար: Հավանաբար, հնագոյն աստղագիտությունը տիեզերքի կատարյալ կողը, պատկերը, մոդելը տեսել է երկվորյակի համատեղության խորհրդի մեջ, որն իր արտացոլումն է գտել ժայռապատկերներում, զարդարվեստում, ճարտարապետության մեջ և արվեստի բոլոր դրսերումներում: Հիմնականում դա սիմետրիայի՝ համաշափության զգացողությունն է, որը մենք արդեն, որպես կայացած ճշմարտություն տեսնում ենք հազարամյակներով:

Հետաքրքրական է այն փաստը, որ համարյա բոլոր հնդեվրոպական հավատամքային պատումները սկսվում են հերոս-աստծո կողմից վիշապի կամ վիշապների «սպանության» մոտիվներով: Վիշապ-օձն էական կարևորություն

ունի բոլոր պատումներում, և նրա «սպանվելուց» հետո, տիեզերքը լցվում է քաղցրահամ ջրերով և սկսվում է կյանքը: Հարվարդի համալսարանի պրոֆեսոր Կ. Վարչկինսի «How to kill Dragon» [Oxford, 2001, 471, 460-463 թ.] աշխատությունը, արարչության մասին հնդեվրոպական պատումներում վիշապ-քառսի և երկնքի կայծակ-ամպրոպ աստվածության պայքարի մասին քննություն է: Նշենք, որ Հայկական լեռնաշխարհում հայտնաբերված նշանագրերը մեծամասամբ վիշապի, մարդու, մարդ-կենաց ծառի և այծի պատկերներ են:

Հետաքրքրական է, եթք ուշադիր դիտում ես 12 նշանանց կենդանակերպի շրջանագիծը: «Ակսեալ ի խոյեն լուծքն ընդ իրար սէր ունեն և կերպն ընդ իրահ, բայց յոթերթրդն ոչ է սէր, այլ ներհակ»: Այսինքն՝ տարրա վեց ամիսները միմյանց հետ սեր ունեն և ներդաշնակ են, և ընդհակառակը, յոթերորդ ամիսն այլս դիտվում է որպես ներհակ ամիսների պարագլուխ: Ըստ որում՝ աշնան-ձմեռային ամիսներ ցույց են տրվում, որպես առաջինների ախոյաններ՝ հատուկ կարգով՝ Խոյ և Կշեռք, Ցուլ և Կարիճ, Երկվորյակ և Աղենավոր, Խեցգետին և Այծեղյուր, Առյուծ և Զքիս,



Կույս և Զուկ. «... որոնք են ՇՁ աստիճանաւ /-180/ հեռի ի միմյանց» [Ճեռագիր համար 8973 թերթ 33թ]: Հետևապես մի կենդանակերպը հանդիսանում է սկզբը, կազմելով իր եռանկյունին, պրոյեկցիան երկրի վրա և մյուսի մահը՝ որպես հակառակ հայելային եռանկյունի կամ շարջան. այսինքն՝ պրոյեկտվածը քայրայվում է՝ կազմելով հակամարտ լինելու գաղափարը՝ սկզբի և վերջի, ծնունդի և մահվան, փակ մի գաղափար, որը իր ներհակության մեջ ներառնում է նաև վերածննդի գաղափարը: Դիտենք Հայաստանի տարածքում հայտնաբերած մի ժայռապատկեր ճ. դոկտոր Ս. Մ. Շահինյանի արխիվային նկարադարանից: Ժայռապատկերում ծիսական արարողություն է, որտեղ երկնքի և երկրի կենտրոնում կանգնած մարդը, որը հայացքով ուղղված է դեպի Ցուլ համաստեղությունը, որի թիկունքում Կարիճի կամ Օձակիր կոչվող համաստեղությունն է: Այսինքն թե՝ սկսվող և ծնվող երևութը, որը իր կողքին ունի նաև իր վախճանը: Ըստ վերը նշված տեսության՝ Ցուլ համաստեղության հակագլոր համաստեղությունը կարիճի համաստեղությունն է: Գուցե թե սրանք աստեղային համաստեղությունների սիմվոլները պատկերող առաջին հիշատակումն են: Մարդը ափերով իրաժեշտ է տալիս Երկվորյակի համաստեղության հազարամյակը և ողջունում է ցուլ համաստեղության մուտքը: «Վեցերորդ օրը, վեցերորդ արարումով Աստված ստեղծեց Մարդու՝ իր

պատկերով» [Ծննդոց 27, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1994թ.՝] երկրաչափական տեսանկյունից, եթե մեր խոսքը փորձենք վերածել զրի կամ պատկերագրի, ստացվում է մի որևէ պատկերի՝ շրջան, քառակուսի, կետ, հայելային պատերումը նախորդի կողքին, որը և երկվորյակի գաղափարն է: Հիմա դիտենք ժայռապատկերին փորագրված «8» նշանը, որն ազուրվում է ցույլ պատկերի հետ՝ ստեղծելով շրջայական հաշորդականության զգացողություն: Առավել դիպուկ է Խեցգետին և Այծեղյուր համաստեղային գույզը, որը գարնանային գիշերահավասարի կետը գտնվել է մ.թ.ա. 8-6 հազարամյակներում, որոնց նշանագրային պակերները առավել հաճախ են հանդիպում տեղական ժայռապատկերներում (ընդ որում ժայռապատկերները ունեն նշված հազարամյակների ժամանակագրություն): Խեցգետին կենդանակերպը, որը աղերսվում է ջուր տարերքի հետ, պատկերված է հիմնականում երկու վիշապների՝ դեպի վեր և վար դիրքով՝ 69: Չուրը՝ որպես կյանքի առաջին և հիմնական ատրիբուտ, անհունի, վիշապի բնույթն է: Հավատամքային բոլոր պատումներում հերոս աստվածությունը, սպանելով վիշապին, ջրի հորդման հարուցիչն է դառնում, և որից առաջանում են վեց գլխավոր վեց գույզ աստվածությունները՝ արական և իգական: Այսօրվա գիտատեխնիկական հնարավորությունները բացահայտում են, որ ջրի մոլեկուլային կառուցվացքը, երբ սառեցնում ենք, ստեղծում է վեցանկյուն հեքսագոն: Հնագոյն հավատամքներում առաջին աստվածությունը միշտ աղերսվում է ջրի հետ և ունի 6 կամ 60 թվի համարժեքը, իսկ հակառակ դիրքով վիշապը կամ վեց թիվը՝ 9, փակում և ամրողացնում է գաղափարական ողջը՝ ստեղծելով և իր մեջ խտացնելով 12 աստեղատներով խորհրդապաշտական երկնային անիվ: Այս աստեղատան արական կողմն աղերսվում է հուր ատրիբուտի կամ տարերքի հետ, որը հրաշալի կերպավորում է լուսաբեր կամ կայծ արձակող, լուսաբեր այծը, և, ահա, իրի և ջրի միությունից արտահայտվում են երկվորյակները, որն էլ հենց հազարամյա պտույտում հաջորդում է խեցգետին կենդանակերպին: Պատահական չէ, որ իին հույնների մոտ տիեզերական շրջափուլը ամրողանում է, երբ բոլոր աստերը հավաքվում են խեցգետնի 30 % կամ այս աստեղատանը նախորդող առյուծի 1%-ում: Հայկական լեռնաշխարհում ձևավորված հնդեվրոպական հավատամքային բոլոր պատումներում տիեզերական անհունից՝ ներունակությունից առաջացած ափերան՝ սֆերան, տիեզերական խավար-անդունդն է՝ վիշապ սիմվոլով, որը սպանվում է Աստծո կողմից շանթարձակ լուսով, որի արդյունքում գոյանում են տիեզերական առաջին փորմանները: Հավատամքային այս սիմվոլիկ պատմության հիմքում առկա է տիեզերական արարչության մասին հավատամքային կառույց՝ կյանքի և գոյության մասին աշխարհահայացք, և տիեզերական արարչություն իրականացնող գլխավոր աստվածությունները դարձել են միֆական հերոսները՝ հետագայում նաև՝ աստղագիտական նշաներ: Օրինակ՝ Սիջագետքյան պատկերագրության մեջ Հայ Աստվածը Այծեղյուր

համաստեղության նշանն է [Համլետ Ս. Մարտիրոսյան, «Հայոց հնագույն պատմության էջերից», Երևան, 2011թ. 56 էջ]:

Հայկական լեռնաշխարհում ծևավորված հնագույն աստղագիտական, հոգևոր-հավատամքային կառույցի զարգացումների արձագանքն արտահայտվել է ինչպես հին հեթանոսական, այպես էլ քրիստոնեական եկեղեցու ճարտարապետության մեջ՝ և որպես ծավալաձև և որպես հոգևոր զաղափարախոսություն՝ իր հավատամքային խարիրադապաշտական սիմվոլներով:

## **Եզրակացություն**

1. Հայաստանի տարածքը եղել է աստղագիտության կենտրոններից մեկը՝ հետևաբար աստղաբաշխական նշանները և համակարգը ևս պետք է տեղական ծագում ունենային: Եթե այդպես է, ապա նույն միջավայրի կենցաղով և գաղափարներով սնված բնիկները, պետք է որ իրենց հետ տարածեին նաև հոգևոր խորիրդապաշտական սիմվոլները, որոնց արձագանքը դրսեռուվել է ճարտարապետական կառույցներում:
2. Կենդանակերպի համաստեղությունների շրջագիծը, որը, ասես թե, դիտում ենք միայն որպես աստղագուշակության սիմվոլներ, հավանաբար առավել են, քան աստղագուշակությունը: Սա աստղագիտության հիմքն է, որի զարգացման արդյունքում մարդկության պատմության մեջ տեղի են ունեցել խոշոր քաղաքակրթական տեղաշարժեր, կառուցվել են խորիրդապաշտական կառույցներ: Եզրակացությունը հիմնավորելու համար կարելի դիտարկրել 0-2011 ընկած հազարամյակը, որը Զուկ համաստեղության փուլն է: Զուկը, որը քրիստոնյաների խորիրդանիշն է, երկնային այդ փաստի դրսեռումներից մեկն է: Զկան հակազդող Կույս համաստեղությունը նույնպես մեր նշած տեսության սահմաններում է՝ Սուրբ Կույսի, գրեթե 2000-ամյա պաշտամունքը:
3. Համաշափությունը, որը մեր իրականության նախահիմն է արվեստում, ճարտարապետության մեջ, գեղեցիկի ընկալման և այլն, թերևս կապված է աստղագիտական նշանագրերի հետ: Խեցգետին և Երկվորյակներ համաստեղությունները, որոնցում զարնանային գիշերահավասարի կետը գտնվել է, համապատասխանաբար, մոտ մ.թ.ա. 8-6 և մ.թ.ա. 6-4 հազարամյակներում, իրենց զաղափարական մարմնավորումն են գտել ճարտարապետական կառույցներում և խորիրդապաշտական միջավայրի ստեղման իմաստով:

## **Գրականություն**

«Հայկական Սովետական Հանրագիտարան (ՀՍՀ). Երևան 1979, 1983; հատոր 5, էջ 365, հատոր 9, էջ 42

Хелена Патерсон. Кельтская астрология. М.-К.: Relif-book, Ваклер, 1996., 20-31  
Մելքոնյան Գ.Ա., Համաշխարհային և հայ մշակույթի տեսություն և պատմություն, 1997թ.,  
230 էջ  
«Աստվածաշունչ», Ծննդոց 27, Մայր Աբոն Սուրբ Էջմիածին, 1994թ.  
Ավետիսյան Կ., «Արարում և երկրային արարավածքներ», 1995թ. 128 էջ  
Մովսես Խորենացի «Հայոց Պատմություն», Երևան, 1981թ. 541 էջ  
Անանիա Շիրակացի, Մատենագրություն, Երևան, 1979թ. էջ 91  
Հովհաննես Պլուզ Երգնական բնափիլխոփայական հայացքները, / Հայկազյան  
հայագիտական հանդես/ հ. դ. Բեյրութ, 1973, էջ 135,136  
Համլետ Ս. Մարտիրոսյան, «Հայոց հնագույն պատմության էջերից», Երևան, 2011թ. 56 էջ  
Արքուր Արմին, «Հնագույն հեթանոսական աստվածաշունչ՝ «Սասնա ծռեր» էպուր»,  
«Սփյուռք», Լու-Անցելես, 2007թ., 494 էջ, հասոր առաջին:  
Վարկինսի Կ., «How to kill Dragon», Oxford, 2001, 471, 460-463 թ.  
Շահինյան Ս.Ս., Տիեզերքի եռամասնական կառուցվածքի՝ երկինք, երկիր, ծով [ջրեր],  
հայկական առասպեկտաբանական համակարգը և ճարտարապետությունը,  
Տեղեկագիր, համար 3, 2010թ.

## Ancient Astronomical Hieroglyphs of the Armenian Highland and their Echo in Architectural Structures

Ani TER-GULANYAN

National University of Architecture and Construction of Armenia

**Keywords:** Armenian Highland, horoscope signs, petroglyphs, astronomical hieroglyphs, symbolistic signs

**Summary:** The credo-spiritual structure formed as a result of astronomical knowledge in the Armenian Highland and recognition of the universe, with its symbolistic signs – which, in our opinion, were expressed in particular by astronomic horoscope hieroglyphs - have had their worship and spiritual speculative feedback both in architecture and in different other arts, especially in symbolic jewelry. A visible link is noticed between the shift of constellations and the civilization development phases. Identification of archeological sources gives the ground to conclude that Armenia has been one of the centers of astronomy. The astronomical signs, having a local origin and having formed ancient astronomical-worship, spiritual-credo structure, have found the feedback of its developments also in other biospheres with respective unique manifestations, in both ancient pagan church architecture and the Christian church architecture, both as a volume form and as a spiritual ideology, with its credo-symbolistic signs.

# Արև և Արևի պաշտամունքը տարբեր մշակույթներում

## Սոնա ՖԱՐՄԱՆՅԱՆ<sup>1</sup>, Արեգ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ<sup>2</sup>

1 – ԵՊՀ Ռումանագերմանական բանասիրության ֆակուլտետ,

2 –ՀՀ ԳԱԱ Բյուրականի աստղադիտարան

Երկնային մարմինները և երևույթները մեծ չափով ազդել են հնագույն մարդու գիտակցության վրա, և աստղագիտական անվանումները շատ հաճախ արտացոլվել են տարբեր ազգերի մշակույթներում՝ կրոնական պատկերացումներից մինչև բանահյուսություն և արվեստի տարբեր տեսակներ:

Մարդկության գոյության վաղ ժամանակներից քաղաքակրթությունները հիմնել են կրոնական համոզմունքներ, որոնք զգալի չափով ներառում են Արևի նշանակությունը: Արևի խորհրդանիշը կարելի է գտնել գրեթե բոլոր մշակույթներում նրանց ողջ պատմության ընթացքում: Քանի որ նոր քաղաքակրթությունների զարգացման բազմաթիվ հոգևոր համոզմունքներ անցյալ մշակույթի հիմքն ունեն, տեղի է ունեցել Արևի նշանակության էվոլյուցիա ամբողջ մշակութային զարգացման ընթացքում: Ուստի մասիրելով հնագույն մշակույթները՝ տեսնում ենք, որ կրոնական համոզմունքները վաղ քաղաքակրթություններում ամենակին էլ Արևակենտրոն չեն (մասնավորապես, օրացույցներն ավելի հաճախ լուսնային էին), ինչպես օրինակ շումերականն է, վաղ շրջանում նրանց մշակույթը Արևակենտրոն չէր, բայց ունեին Արևի աստված: Դարերի ընթացքում շումերական Արևի աստծո ազդեցությունն աճել է, իսկ այլ աստծվածներինը՝ նվազել. սա կապված է օրացույցների հետ: Իսկ Հին Եգիպտոսում երկրպագել են Արևի աստծուն՝ Ռային, առավել, քան մյուս աստվածներին: Արևի երկրպագությունը հատկապես դրսնորվել է ացտեկների և մայաների քաղաքակրթություններում, իսկ ինկերի մշակույթն ամբողջությամբ կազմված է արևապաշտության տարրերից:

Վաղնշենական ժամանակներից հնդեվրոպացիների նախահայրենիքում՝ Հայկական լեռնաշխարհում, ապրող ցեղի ուղղակի ժառանգորդը՝ հայ Ճողովուրդը, հազարամյակներ շարունակ ապրել և երկրպագել է իր առաջին աստծուն՝ Արևի աստված **Ար-Արային**: Ար աստծո պաշտամունքը տարածված էր նաև հարևան երկրներում: Հին Եգիպտոսում

տարածված էր **Ուա** աստծո պաշտամունքը, ըստ Լ. Քինգ և Վ. Ֆիլիներսի Ուա անվանումն ու աստծո պաշտամունքը մուտք էր գործել Ասորեստանից՝ այժմյան Սիրիայի կողմերից, որն էլ հարևան էր Հայաստանին: Իսկ Խեթական պետությունում պաշտում էին **Արա** աստծուն, Ասորեստանում՝ **Աարա**, Բաբելոնում՝ **Արիա**, Վրաստանում՝ **Արալի**, Լիդիայում՝ **Արմաս** եւ այն: Ուշագրավ է, որ չինարեն **孫** (**ՈՒ**) բառը, որը վերցնում է նույն եզիստական հիերոգլիֆային ձևը, իին չինարենում նույնպես կազմված է շրջանից և ներսում կետից (Θ), որը չինարենում նույնպես նշանակում է «արև» (աստղագիտության մեջ այդ նշանն օգտագործվում է որպես Արեգակի նշան): Անգլերեն Ray (ռեյ) բառը, որը նշանակում է ճառագայթ, ծագել է լատիներեն Rayon (ռեյոն) բառից, որը շատ մոտ է արև բառին: Այսպիսով կարելի է ենթադրել, որ անգլերեն Ray (ճառագայթ) բառն առաջացել է եզիստական Ուա արեփի աստծո անվանումից: Հայտնի է, որ լատինական Ra նախածանցով կազմված բառերը (ռադիոն, ռադիա, ռադիացիա և այլն) առաջացել են լատիներեն Rayon բառից, որն էլ եզիստական Ուայից և վերջինս էլ ծագել է հայկական Ար աստծո անունից (լեզվաբանության մեջ հայտնի է տառերի փոխատեղումը): Արաբական բարբառներից՝ Եմիներենում **Ուա** (Յ) բառը նշանակում է տեսնել, որը կրկին խորհրդանշական կապ ունի **Արև** բարի հետ, քանի որ լեզվի ձևավակորման ընթացքում՝ հազարավոր տարիներ առաջ, չեն եղել լույսի այլ աղբյուրներ, և առանց արեփի լույսի մարդիկ չեն կարողացել տեսնել որևէ բան: Արեփի աստվածը նույն խորհրդանիշն է ունեցել նաև հումական դիցաբանությունում: Հելիոսը դիսվել է նաև կույրերի ամոքիչ և կուրությամբ պատժող աստված: Ուա բառը, բացի դրական իմաստից, միևնույն ժամանակ ունի նաև բացասական նշանակություն, ինչպես օրինակ արաբական Հադրամուտ բարբառում այն ունի մահ և չար իմաստները, այստեղ խորհրդանշական կապը նույնպես ենթադրելի է, քանի որ Արաբստանում միշտ շոգ է եղել, մարդիկ գտնվելով անապատում առանց ջրի՝ անիծել են արևն ու շոգը:

Արև բառը հազարամյակներ առաջ ունեցել է աստված, կյանք, լույս, տղամարդկային ուժ, պտղաբերություն և աչք խորհրդանիշները: Մեր օրերում պահպանվել է միայն լույս նշանակությունը: Հին մշակույթներում Արևը համարվել է Տիեզերքի աչք և հենց **Արեգակ** բառում (որն աստղագիտության



մեջ գործածվում է որպես այդ երկնային մարմնի անվանում) **ակ-ը** ոչ թե փոքրացնող վերջածանց է, այլ գրաբարյան **ակն** (աչք) բառն է: Ինչպես Աճառյանն է նշում իր հայերեն արմատական բառարանում, նման մոտեցում միայն հայերը չէ, որ ունեին, նույն ունեին նաև այլ ազգեր, ինչպես պարսիկները համարում են Արամազդի աչք, եզիստացիները՝ Տիմուրդոսի աջ աչք, հույները՝ Դիոսի աչք, Հին գերմանները՝ Վուտդանի աչք, իսկ Հյուսիսային Գերմանիայի բնիկներն Արևին «Երկնքի զոհար» էին անվանում:

Հյակերնում Արևին հոմանիշ է նաև **Արփիի** բառը, ըստ իին պատկերացումների Արփին երկնային լուսեղեն գոտի է, որի մեջ գտնվում է Արեգակը: Ըստ Վանական Վարդապետի, Ղևոնդ Ալիշանի, Հրաշյա Աճառյանի՝ Արեգ է կրչվել յուրաքանչյուր ամսվա առաջին օրը: Որոշ տոմարագետների դա հիմք է տալիս տարեգլուխը համարելու Արեգամսվա առաջին օրը, որը համապատասխանում է մարտի 21-ին (Արեգը միակ անվանումն է, որ առկա է հայկական թե՛ ամսանունների և թե՛ օրանունների մեջ): Հին Հյաստանում ամենատարածվածը եղել է Արեգակի պաշտամունքը: Արևապաշտներն իրենց համարել են արևորդիներ, իսկ իրենց առաջնորդներին՝ Հազրպետներ: Պատմաբան Անժելա Տերյանն իր «ԱՐ աստծո պաշտամունքը Հյաստանում» (Երևան, 1995թ.) աշխատության մեջ գրում է: «Արիվան, Էրիվան, Երեւան անունները եւս կապված են ԱՐ աստծո անվան հետ»:

**Աղյուսակ** 1-ում բերված է Արևի անվանումը 66 լեզվով, ընդ որում լեզուները դասավորված են ոչ թե լեզվաբնտանիքներով, լեզվախմբերով և ձյուղերով, այլ Արևի անվանման ձևերով, որի շնորհիվ հնարավոր է դառնում հետևել և հասկանալ անցումները և զարգացումները: Բերված են օրիգինալ գրություններ և արտասանություններ: Թերևս զերակշռում է «սոլ» անվանումը, որը կարող է նույնացվել «Միակ», «զլիսավոր» իմաստների հետ (բացառված չէ, որ անգլերեն soul՝ հոգի, բառի արմատը նույնպես «սոլ»-ն է): Մյուս կողմից «սոլ» բառը նույնանում է «որդի» իմաստի հետ, ինչը հավանաբար նույնպես պատահական չէ, քանի որ սկանդինավյան դիցարանությունում կա նաև *արկի* պաշտանմունք, որը խորհրդանիշն է մահվան, մայրություն և ծննդաբերության: Հնարավոր է նաև «սուն» և «կուն» անվանումների անցումը մեկից մյուսը: Աղյուսակ 1-ում բերված Արևի 66 անվանումներից 42-ն ունեն սոլ կամ սուննա արմատները: Ինչպես նշված է Աղյուսակ 2-ում սոլը սկանդինավյան դիցարանության արևի աստվածն է, որն իրենից ներկայացնում է զերմանական և սկանդինավյան ցեղերի ունեցած հեթանոսական հավատալիքները:

### **Աղյուսակ 1: Արևի անվանումը 66 լեզուներով**

**Աղյուսակ 1** (շարունակություն): Արևի անվանումը 66 լեզուներով

**Աղյուսակ 2-ում** բերված են այն 21 լեզուներն ու Արևի անվանումները, որոնցում առկա է Արևի աստծոն պաշտանմունքը (որպես կանոն՝ հենց զիսավոր աստված): Շատ լեզուներում արև բառը ծագել է հենց Արևի աստծոն անվանումից, դիցաբանական Արևն անցնելով մեկ լեզվից մյուսին՝ հաճախ իմաստափոխվել է և տառադարձվել, հաճախ էլ պահպանել է իր անվանումը և չի ենթարկվել փոփոխությունների: Հելիոսն եղել է արևի աստվածը հին հունական դիցաբանությունում, համարվել է տիտանոս Հիպերիոնի և Թեյայի որդին, Սելենեի (Լուսի) և Էսոսի (Արշալուսի) եղբայրը: Ինչպես նշված է աղյուսակ 1-ում արդի հունարենում Արև բառը կոչվում է հելիոս՝ Հելիոս աստծոն անունով, և դարերի ընթացքում բառը չի ենթարկվել փոփոխությունների: Արաքերեն շամբառը առաջացել է աքարտական (քարելա-ասորական) դիցաբանության Շամաշ արև-աստծոն անունից, ով սեմական ցեղերի կողմից պաշտված է իբրև արդարության աստված:

**Աղյուսակ 2:** Արևի անվանումները 21 լեզուներով, որոնցում առկա է Արևի աստծոն պաշտանմունքը

Անվանում	Դիցաբանություն	Աստված / Աստվածուհի
Ուխտձիլոպոչուի	Ացտեկական	Աստված
Տոնատիու	Ացտեկական	Աստված
Արիննա	Աստրական	Աստվածուհի
Լիզա	Արևմտաաֆրիկյան	Աստված
Ռա	Եգիպտական	Աստված
Բնտի	Ինկական	Աստված
Հվար Կշախտա	Իրանական	Աստված
Միհրաս	Իրանական	Աստված
Հեպա	Խեթական	Աստված
Լու	Կելտական	Աստված
Ար	Հայկական	Աստված
Գարուդա	Հնդկական	Աստված
Մուրյա	Հնդկական	Աստվածուհի
Հելիոս	Հունական	Աստված
Ապոլո	Հունական, Հռոմեական	Աստվածուհի
Սոլ Ինվիկտուս	Հռոմեական	Աստվածուհի
Ամատերասու	Ճապոնական	Աստվածուհի
Ուտու, Շամաշ	Միջագետքի	Աստված
Ֆրեյր	Սկանդինավյան	Աստված
Սոլ (Սուննա)	Սկանդինավյան	Աստվածուհի
Շեմեց	Ուզական	Աստվածուհի



Արևը մարդուն հետաքրքրել է նաև նրանով, որ ամեն օր մեռնում ու հարություն է առնում: Արևի մեռնելը, անհետանալն անվանել են մայրամուտ, իսկ նորից ծագելը՝ հարություն առնել, և նույնիսկ այս երևույթը փոխանցվել է Քրիստոնեությանը. չէ որ Քրիստոսն էլ ծնվեց և հարություն առավ: Աստվածների եռյակը կամ երրորդությունը բարելոնյան կրոնի զլսավոր բաղադրիչներից է եղել: Եռյակը կազմված էր երկնային մարմիններից. Մին (լուսնի աստված), Շամաշ (արևի աստված) և Խշտար (պտղաբերության և պատերազմի աստվածուի): Քրիստոնեական աշխարհն էլ իր եռաստվածությունն ունի՝ Սուրբ Երրորդությունը: Հայոց աշխարհում մարդը նկատում էր, որ ինչպես արևն է մեռնում ու հարություն առնում, այնպես էլ տարին է ձմռանը մահանում ու մահից հետո գարնանը հարություն առնում: Անտարբեր չմնալով այս գաղափարին՝ հայն իր զլսավոր աստծուն օժտել էր նաև մեռնող և հառնող հատկությամբ: Ար աստվածը մեռնող և հառնող բնության աստվածն էր՝ հետազայում ձեռք բերելով նաև ուազմի և քաջության աստվածության նկարագիր:

## Գրականություն

1. Տերյան Ա., «Ար աստծո պաշտամունքը Հայաստանում », Երեւան, 1995թ.
2. Արդի Հայերենի Բացատրական Բառարան: Էդուարդ Բագրատի Աղայան: «Հայաստան» Հրատարակչություն, Երեւան, 1976թ.
3. Հայերէն Արմատական Բառարան, Հրայր Աճառէան, 1926թ.
4. Մնացականյան Հ., Արեւապաշտության հետքերը հին Հայաստանում, Երեւան, 1948թ.

## Sun and Sun Worship in Different Cultures

Sona FARMANYAN<sup>1</sup>, Areg MICKAELIAN<sup>2</sup>

1 – YSU Faculty of Romance and Germanic Philology,

2 – Byurakan Astrophysical Observatory, NAS RA

**Abstract.** The Sun symbol is found in many cultures throughout history, it has played an important role in shaping our life on Earth since the dawn of time. Since the beginning of human existence, civilisations have established religious beliefs that involved the Sun's significance to some extent. As new civilisations and religions developed, many spiritual beliefs were based on those from the past so that there has been an evolution of the Sun's significance throughout cultural development. For comparing and finding the origin of the Sun we made a table of 66 languages and compared the roots of the words. For finding out from where these roots came from, we also made a table of 21 Sun Gods and Goddesses and proved the direct crossing of language and mythology.

# Հայաստանի աստղագիտական ժառանգությունը

## Արեգ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Բյուրականի աստղադիտարան

Հայաստանը հնագույն գիտության և մասնավորապես՝ աստղագիտության, օրբաններից է. ինը ժամանակներից Հայաստանում զարգացած էին Արեգակի, Լուսնի, մոլորակների, աստղերի և երկնային երևույթների մասին գիտելիքները: Հին հայերը, ինչպես և այլ քաղաքակրթությունները, նայել և հետևել են երկնային իրադարձություններին, գրառումներ կատարել Արեգակի և Լուսնի խավարումների, գիսավորների մասին, ժայռապատկերների տեսքով երկնքի և Տիեզերքի մասին իրենց պատկերացումները թողել հաջորդ սերունդներին, կառուցել աստղադիտարաններ, ստեղծել օրացույց: Չնայած իր փոքր տարածքին և համեմատաբար փոքր բնակչությանը, Հայաստանը բավականին մեծ ներդրում ունի համաշխարհային աստղագիտական ժառանգության մեջ: Հայաստանում աստղագիտությունը հայտնի է վաղ ժամանակներից. առկա են մի քանի հազար տարի առաջ արված աստղագիտական դիտումների նշաններ: Հայաստանի տարածքում իրենց հետքը թողած աստղագիտական գործունեության նշանների թվին են դասվում. **Ժայռապատկերները** (աստղագիտական բովանդակության բազմաթիվ քարագրություններ), **հնագույն աստղադիտարանների ավերակները** (հատկապես հայտնի են նրանցից երկուսը՝ Քարահունջն ու Մեծամորը, այդ թվում Քարահունջը Սրունինհենջի հայկական նմանակն է և նույնիսկ ավելի հին է համարվում), **հայկական հնագույն օրացույցը**, մ.թ.ա. II-I հազարամյակներից ի վեր հայերեն լեզվում օգտագործվող աստղագիտական եզրույթները և անվանումները, միջին դարերից մնացած աստղագիտական տվյալներ պարունակող Մատենադարանում և այլ վայրերում գտնվող **ձեռագրերը** և **աստղալից երկնքի քարտեզները**, ինչպես նաև ներկայումս տարածաշրջանի ամենամեծ ժամանակակից աստղադիտարաններից մեկը՝ **Բյուրականի աստղադիտարանն** (ԲՈ) իր 2.6մ և Շմիդտի համակարգի 1մ աստղադիտակներով:

## Հայաստանի հնագույն աստղագիտությունը

Հայաստանի հնագույն աստղագիտությունը դիտարկելիս այն կարելի է բաժանել հետևյալ մի քանի ուղղությունների:

**Համաստեղություններ:** Կարծիք կա, որ առաջին անգամ երկնքի բաժանումը համաստեղությունների կատարվել է մի քանի հազար տարի առաջ Հայկական բարձրավանդակում:

Ըստ ամերիկացի աստղագետ և գիտության պատմության մասնագետ Ուիլյամ Օլքոտի, Կենդանակերպի նշանները պարունակում են այնպիսի կենդանիներ, որոնք հազարավոր տարիներ առաջ ապրել են Հայաստանում և նրա շրջակա տարածքներում (հիշենք, որ հին Հայաստանում նաև առուծներ կային): Տրամաբանական է ենթադրել, որ հին մարդիկ համաստեղությունները կոչել են հենց այն կենդանիների

անուններով, որոնք ապրել են իրենց տարածաշրջանում, ոչ թե այլ երկրներում: Ավելին, շատ համաստեղություններ ունեցել են իրենց ուրույն հայկական անվանումները, որոնք տարբերվում էին հունականներից, սակայն նրանցից շատերը իմաստով համապատասխանում են իրար: Համաստեղությունների հին հայկական անվանումների մասին հիշատակություններ կան Սովոր Խորենացու, Անանիա Շիրակացու և այլոց մետ: Յավոք, դրանց մի մասն էլ չի պահպանվել:

**Ժայռապատկերներ:** Արդի և պատմական Հայաստանի տարածքում առկա հայկական քարարվեստի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հայերը հետաքրքրվում էին երկնային մարմիններով ու երևույթներով: Երկրագունդը, Արեգակը, Լուսինը, մոլորակները, զիսաստղերը, Ծիր Կարթինը, աստղերը, համաստեղությունները արտացոլված են Սևանա լճի շուրջ գտնվող լեռների, Արագածի և Հայաստանի այլ վայրերում ժայռերին պատկերված նկարներում: Այս պատկերներն ուսումնասիրվում են մի շարք պատմաբանների, հնագետների և աստղագետների կողմից: Այնուամենայնիվ, բավարար պետական վերաբերմունք չի ցուցաբերվում լայնածավալ ուսումնասիրություններ կազմակերպելու կամ առնվազն փորձելու այս հնագույն գանձերը ցուցակագրելու և պահպանելու համար: Հայկական



Ժայռապատկերների մանրակրկիտ ուսումնասիրություններ է կատարել և կատարում պատմաբան-աստղագետ Կարեն Թոխայիանը: Քարարվեստի վերաբերյալ ամբողջական տվյալներ կարելի է գտնել Սարդարյանի գրքում (2011) և հետևյալ համացանցային կայք-էջում՝ <http://www.iatp.am/ara/library/index.html>:



**Հայկական օրացույցը:** Հ. Ս. Բադալյանի (1970), Բ. Ե. Թումանյանի (1985) և Գ. Հ. Բրուտյանի (1997) կողմից արված հետազոտությունների համաձայն հայկական օրացույցն աշխարհում ամենահին օրացույցներից մեկն է և միգուցե՛ նույնիսկ ամենահինը: Հայերն օգտագործել են լուսնային, այնուհետև լուսնա-արեգակնային օրացույց, իսկ մ.թ.ա. 1-ին հազարամյակի կեսերից անցել են արեգակնային օրացույցի, որը պարունակում էր 365 օր (30-ական օրից բաղկացած 12 ամիս և 5 օրից բաղկացած 1 հավելյալ ամիս): Նոր տարին սկսում էր Նավասարդին (որը համապատասխանում էր օգոստոսի 11-ին), երբ սկսվում էր խաղողի բերքահավաքը, և Օրիոն (հայերի մոտ՝ Հայկ) համաստեղությունը տեսանելի էր դաշնում զիշերային երկնքում: Ամսանունների հետ մեկտեղ (Նավասարդ, Հոռի, Սահմի, Տրե, Քաղոց, Արաց, Մեհեկան, Արեգ, Ահեկան, Մարերի, Մարգաց, Հրոտից և Ավելյաց), յուրաքանչյուր ամսվա բոլոր օրերը և օրվա ժամերը նույնպես ունեին հատուկ անուններ (Արեգ, Հրանտ, Արամ, Մարգար, Ահրանը, Մազդեղ, Աստղիկ, Միհր և այլ օրերը և Այգ, Ծայգ, Զայրացյալ, Ճառագայթյալ, Շառավիղյալ, Երկրատես և այլ ժամերը): Հայ հնագույն օրացույցի՝ Հայոց Բուն թվականի սկիզբն է համարվում մ.թ.ա. 2492թ. (Հայկի և Բելի մենամարտի տարեթիվը): Այնուհետև մ.թ. 552թ. ներմուծվեց Հայոց Մեծ թվականը (օրացույցը) և վերահաշվարկվեց հույյան օրացույցի հետ տարբերությունը: Կա նաև Հայոց Փոքր թվական

(օրացույց), որը ներմուծվել է 1084թ.: Հայերեն առաջին տպագիր օրացույցը կոչվել է «Պարզատումար» և տպագրվել է 1513 թ.-ին Վենետիկում՝ Հակոբ Մեղապարտի սարքավորած առաջին տպարանում: Ուշագրավ է, որ Վենետիկի Միփարյանները հայկական և համաշխարհային օրացույցների ամենավաղ հրատարակիչներն են (1775 թ.-ից): Հայոց տոմարը հարատել է մինչև XX դ.: 1920-ին Հայաստանում ընդունվել է Գրիգորյան տոմարը, որը Հայ եկեղեցին պաշտոնապես ընդունել է 1923-ին:

**Հնագույն աստղադիտարաններ:** Հայաստանում ամենագրավիչ աստղագիտական պատմական կառույցը **Զորաց քարերն** են կամ **Քարահունջը**, որին երեմն անվանում են Հայկական Սթոռնհենց: Այն մեզալիթյան համալիր է Երևանից 200 կմ, իսկ Միսիանից՝ 3 կմ հեռավորության վրա, գտնվում է ծովի մակարդակից 1770 մ բարձրության վրա, ճշգրիտ աշխարհագրական կոորդինատներն են հյուսիսային լայնության  $39^{\circ}34'$  և արևելյան երկայնության  $46^{\circ}01'$ : Այն բազմաթիվ քարերի համալիր է՝ տեղադրված շրջանի և դրանից սկսվող մի քանի թների տեսքով: Կարծիք կար, որ Քարահունջը նմանատիպ շատ այլ կառույցների պես կրոնական համալիր է: Այնուահանդերձ, միայն 1980-ական թթ. կեսերին Քարահունջը մեկնաբանվեց որպես հնագույն աստղագիտական հուշարձան և ուսումնասիրվեց Էլմա Պարսամյանի (1985թ., 1999), իսկ այնուհետև նաև Պարիս Հերունու (1998) կողմից: Քարահունջի տարիքի գնահատականները բավական տարբեր են և ընկած են 7700-ից մինչև 4000 տարի միջակայքում: Քարահունջում հաշվվում են 250 մետր երկարությամբ ձգվող 222 քարեր, այդ թվում 84-ը 4-5 սմ տրամագիծ ունեցող անցքերով են: Այստեղ կարելի է գտնել 30 աղեղնային վայրկյան ճշտությամբ տասնյակ աստղագիտական քարե գործիքներ: 40 քարեր կազմում են  $45 \times 36$  մ չափով կենտրոնական էլիպսը, որի կենտրոնում կա ավերակ քարե կույտ: Դեպի հյուսիս-արևելք ձգվում է 8 մ լայնությամբ 8 քարերի մի ճանապարհ: Քարերից մի քանիսն օգտագործվել են որոշակի աստղերի ուղղությունները գտնելու համար: Ըստ որոշ գնահատականների (որոշակի աստղերի դիտումների) աստղադիտարանն օգտագործվել է մ.թ.ա. 7700-2200 թթ. ընթացքում, մոտ 5500 տարի շարունակ: Համաձայն զանազան հեղինակների (օրինակ Բոչկարյով և Բոչկարյով 2005), հուշարձանի ներկայիս և հարյուր տարի առաջ եղած վիճակի համեմատությունը ցույց է տալիս, որ այն զգալիորեն քայլավել է: Այսպիսով, Քարահունջը հրատապ պաշտպանության կարիք ունի: Հուշարձանը եղակի է իր տեսակի մեջ համենայն դեպք Անդրկովկասի շրջանում և նույնիսկ կարող է լինել աշխարհում պահպանված աստղադիտարաններից ամենահինը: Եթե

Քարահունչի գնահատված տարիքը հաստատվի հնագիտական մեթոդներով, ապա այն անպայմանորեն պետք է ներառվի մեր մոլորակի ամենակարևոր մշակութային հուշարձանների ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության ցանկի մեջ:



**Մեծամորք** Հայաստանի մյուս հնագույն աստղադիտարանն է: Այն գտնվել է Մեծամոր գետի մոտ հին քաղաքի սահմաններում, Երևանից 35 կմ հեռավորության վրա, ներկայիս Արմավիրի շրջանում: Մ.թ.ա. 5-րդ հազարամյակից սկսած այն բնակելի է եղել: 1960-ական թթ. կեսերին Էլմա Պարսամյանի կողմից այն առաջին անգամ մեկնաբանվել է որպես հնագույն աստղագիտական հուշարձան (1985ա): Ամրոցից դուրս աստղադիտարանն է: Աստղադիտարանի ամենահավանական տարիքը գնահատվում է մոտ 4600 տարի: Քարահունչի նման Մեծամորք նույնպես ավելի լավ ուսումնասիրության և հատուկ վերաբերմունքի կարիք ունի թե Հայաստանի կառավարության և թե աշխարհի հնագույն աստղագիտության հանրության կողմից: Հայաստանի հնագույն աստղագիտական վայրերի թվին են պատկանում նաև **Անգեղակորթի** դոլմենները (Պարսամյան, 1985թ): Ինչպես Քարահունչը, այս վայրը նույնպես Սիսիանի շրջանում է գտնվում, Սիսիան քաղաքից 13 կմ հեռավորության վրա: Դոլմենները նեռլիթյան (նոր քարեղարյան) և բրոնզե դարաշրջաններից են: Հայաստանում կան ևս մի քանի այլ վայրեր, որոնք առնչվում են մեր հնաբնակների աստղագիտական գործունեության հետ:

**Աստղագիտական իրադարձությունների արձանագրություններ:** Հայ պատմագրության մեջ հայտնի են հին հայերի կողմից կատարված աստղագիտական իրադարձությունների մի շարք արձանագրություններ՝ աստղագիտական բնույթի հիշատակություններ, ձեռագրեր, դրամներ,




պատկերներ և այլն: Օրինակ, հայոց թագավոր Տիգրան Բ Մեծի (մ.թ.ա. 95-55թթ.) մետաղադրամների (արծաթե և պղնձաբրոնզե տետրադրամներ և դրախմներ) վրա պարզորեն պատկերված է գիսաստղ՝ պոչը թագավորական խույրի վրա, ինչը կարող է առնչվել մ.թ.ա. 87թ. Հալլեյի գիսավորի անցման հետ: Նման դեպքերում աստղագիտական իրադարձությունները կարող են օգտակար լինել պատմական ժամանակագրության հարցերի պարզաբանման համար: Բացի այդ, սա կարող է լինել Հալլեյի գիսավորի շատ ավելի վաղ գրանցում, քան նախկինում հայտնի էր ժամանակագրություններից, ինչպես նաև Հալլեյի գիսավորի ամենավաղ պատկերներից մեկը:

**Երկնային մարմինների անվանումները:** Ինչպես և Հունաստանում և հին աշխարհի այլ երկրներում, հնագույն Հայաստանում էլ անգեն աշքով երևացող մոլորակներն ունեցել են իրենց անվանումները: Ներկայումս լայնորեն կիրառվում են մոլորակների հենց հունա-հռոմեական դիցաբանական անունները՝ Մերկուրի, Վեներա, Սարս, Յուպիտեր և Սատուրն (հունարեն՝ Զերմես, Ափրոդիտե, Արես, Զես և Քրոնոս, իսկ Ուրանը և Նեպունն անգեն աշքով չեն երևում և հայտնաբերվել են ավելի ուշ, 18-րդ և 19-րդ դարերում): Սակայն հին Հունաստանում կիրառվել են այլ անվանումներ՝ Ստիլբոն, Ֆոսֆորոս, Պիրոխ, Փաետոն և Փախնոն: Զետաքրքրական է, որ հայերը հնում օգտագործել են համապատասխան իմաստով անվանումներ՝ Փայլածու, Արուայակ կամ Լուսաբեր, Հրատ, Լուսնթագ և Երևակ, որոնք ի դեպք ներկայումս էլ դեռ կիրառվում են: Համաստեղությունների հին հայկական անվանումներից ներկայումս պահպանվել են Հայկը (Օրիոն) և Վահագնը (Հերկուլես): Ըստ Հայկ Հարությունյանի (2003) Ծիր Կաթնի հայկական անվանումը (Հարդագողի ճանապարհ) գոյություն է ունեցել մ.թ.ա. 6-րդ դարում և այնուհետև, արաբների կողմից Հայաստանի նվաճումից հետո, արաբների կողմից տարածվել է ամբողջ աշխարհում:

## Հայ աստղագիտությունը միջին դարերում


Միջին դարերի ամենաականավոր գիտնականներից մեկը **Անանիա Շիրակացին** էր (612-685թթ.), ով այդ ժամանակների համար ուներ բավականին առաջադիմ աստղագիտական գաղափարներ: Նա հայ ժողովրդի պատմության մեջ ամենակարևոր գիտնականն է, քանի որ նա փիլիսոփա էր, մաթեմատիկոս, աշխարհագրագետ, աստղագետ, տոմարագետ և այլն: Նա թողել է մի շարք գրքեր և գրություններ, որոնք պահպանվել են մինչ օրս: Դրանցից շատերը պահպում են մեր հին ձեռագրերի՝ թանգարանում՝ Մատենադարանում: Անանիա Շիրակացին գիտեր Երկրագնդի զնուածն տեսքի մասին, նա ընդունել է, որ Ծիր Կաթինը բաղկացած է բազմաթիվ թույլ աստղերից, կարողանում էր ճշտորեն մեկնարանել Լուսնի և Արեգակի խավարումները և այդ ժամանակաշրջանի համար ուներ մի շարք այլ առաջադիմ աստղագիտական հայացքներ: Անանիան կազմել է ժամանակագրական աղյուսակներ, աստղագիտական դասագրքեր և այլն: Արժե նշել, որ այդ դարաշրջանում եվրոպական աստղագիտությունն անկում էր ապրել և աստղագիտական գիտելիքների պահպանման համար մեծ ջանքեր էին անհրաժեշտ: Անանիա Շիրակացու աշխատանքները հիմնական աղբյուր են հանդիսանում ինչ հայկական աստղագիտական եզրաբանությունը վերականգնելու գործում, այդ թվում՝ համաստեղությունների և աստղերի անվանումները:



Հստ ոուս աստղագետ Յուրի Պակովսկու,  
**1054 Գերնոր աստղն** առաջին անգամ տեսել և արձանագրել են Հայաստանում 1054թ. մայիսին (և միայն ավելի ուշ՝ նույն տարվա հուլիսին Չինաստանում): Հետաքրքրական է, որ դրա մնացորդը՝ հայտնի Խեցեսնաձև միգամածությունը, մանրամասն ուսումնասիրվել է Բյուրականի աստղադիտարանում և եղել է աստղադիտարանի ուսումնասիրության ամենահայտնի օբյեկտներից մեկը:

Այս միզամածությունը բնական լաբորատորիա է հանդիսացել մի շարք աստղաֆիզիկական ուսումնասիրությունների համար Էլեկտրամագնիսական սպեկտրի ամենատարբեր տիրույթներում:

**Դուկաս Վանանդեցին** (XVII-XVIII դարեր) և **Միխար Սեբաստացին** (1676-1749) ապրել և աշխատել են Եվրոպայում 17-18-րդ դարերում և հայտնի են Երկնքի իրենց մանրամասն քարտեզներով: Դուկաս Վանանդեցին պատրաստել է աստղագիտական գործիքներ, 18-րդ դարի սկզբում Ամստերդամում հրատարակել է հայկական անուններով համաստեղությունների առաջին Երկնային քարտեզը: Միխար Սեբաստացին նույնպես աստղալից Երկնքի քարտեզ է պատրաստել: Նա հիմնարել է հայկական կաթոլիկ Եկեղեցու խորհուրդը Վենետիկի մոտ գտնվող Սուրբ Ղազարոս կղզում, որը հայտնի է հին ձեռագրերի իր թանգարանով և այսօր բազմաթիվ այցելուների համար զբոսաշրջության վայր է հանդիսանում:



Միխար Սեբաստացու «Աստղալից Երկինքը»


Դարերի ընթացքում անկախության բացակայության պատճառով Հայաստանը միջին դարերում չի ունեցել բավականաչափ բարձրակարգ գիտություն, սակայն հետաքրքրությունը բնության և հիացմունքը Երկնային մարմինների հանդեպ հայերի մեջ ապրել է վաղ ժամանակներից ի վեր, ինչն արդի հայ աստղագիտության զարգացման համար հիմք հանդիսացավ:

## Հայ աստղագիտությունը մեր օրերում

Հայաստանում աստղագիտությունը վերածնվեց 1930-ական թթ., երբ Հայկ Բարձայանը, Բենիամին Մարգարյանը և ուրիշներ փոքր աստղադիտակներով սկսեցին դիտումներ կատարել և թեև ոչ մեծ նշանակության, բայց արդեն գիտական արդյունքներ ստանալ: Երևանում սկսեց գործել Երևանի աստղագիտարանը, որը մինչ օրս էլ գոյություն ունի որպես ԵՊՀ աստղագիտարան և ներկայումս կրում է Վիկտոր Համբարձումյանի անունը: Սակայն աստղագիտության մեջ իսկական վերելք տեղի ունեցավ հենց Վիկտոր Համբարձումյանի (1908-1996) Հայաստան գալուց և 1946թ. Բյուրականի աստղագիտարանի (ԲԱԳ) հիմնադրումից հետո: Հենց առաջին տարիներին Համբարձումյանի և նրա աշխատակիցների կողմից տեղի ունեցան կարևոր հայտնագործություններ՝ աստղասփյուռները, դրանց ընդարձակման ապացույցը, զալակտիկաների ակտիվությունը և այլն: Այնուհետև դրանց գումարվեցին գերիսիտ նյութի վարկածը, բռնկվող և այլ անկայուն աստղերի ուսումնասիրությունները, մի շարք Գերնորերի հայտնաբերումը, Բյուրականի առաջին (Մարգարյանի) և երկրորդ շրջահայությունները, Առաքելյանի և Ղազարյանի զալակտիկաները, Շահբազյանի զալակտիկաների կոմպակտ խմբերը, Պարսամյանի գիսավորած միզամածությունները, ճառագայթման տեղափոխման տեսության կարևոր աշխատանքները, Մարգարյանի զալակտիկաների ուսումնասիրությունները և այլն: Բյուրականի աստղագիտարանը հիրավի դարձավ աշխարհի կարևորագույն աստղագիտարաններից մեկը և մեր տարածաշրջանում ներկայումս էլ հանդիսանում է զյուսակոր աստղագիտական կենտրոնը: Աստղագիտական ժառանգության կարևորագույն մաս է կազմում Մարգարյանի շրջահայությունը, որի լուսաթիթեղները թվայնացվել են և մտել ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Աշխարհի հիշողություն» միջազգային գրանցամատյանի մեջ: Աստղագիտարանի կարևորագույն գործիքներն են 2.6մ դասական և Շմիդտի համակարգի 1մ հայելու տրամագծով աստղագիտակները:

2001թ. ստեղծվեց Հայկական աստղագիտական ընկերությունը (ՀԱԳ), որի զյուսակոր նպատակներից մեկն է Հայաստանում աստղագիտական գիտելիքների տարածումը և Հայաստանի աստղագիտական ժառանգության համակարգումն ու մասսայականացումը: 2005-ին ստեղծվել է նաև Հայկական վիրտուալ աստղագիտարան (ՀՎԱ), որը ներառում է Բյուրականում ստացված դիտողական նյութը և մտնում է Վիրտուալ աստղագիտարանների

միջազգային ալյանսի մեջ: Հայաստանում աստղագիտությունն ակտիվ է նաև ԵՊՀ-ում, Երևանի ֆիզիկայի ինստիտուտում (Ա. Ալիխանյանի անվան ազգային լաբորատորիայում), գործում են Իսահակ Նյուտոնի անվան միջազգային ինստիտուտի և Ռեյանալիքատուական աստղաֆիզիկայի միջազգային կենտրոնի հայկական մասնաճյուղերը: Հայաստանն անդամակցում է միջազգային աստղագիտական բոլոր կարևոր կառույցներին, իսկ հայ աստղագետներից շատերը հանդիսանում են Միջազգային աստղագիտական միության (ՄԱՄ), Եվրոպական (ԵԱԸ) և Եվրասիական (ԵԱԱԸ) աստղագիտական ընկերությունների անդամ: Աստղագիտական միջազգային օլիմպիադաների հետո առաջին տարիներից հայ պատանիները փայլուն հաջողությունների են հասնում՝ բարձր պահելով հայ աստղագիտության վարկանիշը:



#### *Բյուրականի աստղադիտարանի զլիավոր շենքն երկու փոքր աստղադիտակներով և 2.6մ տրամագծով խոշորագույն աստղադիտակը*

Վերջին տարիներին ԲԱ աստղագետների նախաձեռնությամբ պատմա-աստղագիտական հարցերի շուրջ համագործակցություն է սկսվել ՀՀԱԱ Պատմության, ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտների, ինչպես նաև Մատենադարանի հետ: Հիմնական առիթը հանդիսացավ ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից 2009թ. հոչակված Աստղագիտության միջազգային տարվա «Աստղագիտությունը և համաշխարհային ժառանգությունը» նախագիծը և 2012թ. միջնադարի մեր մեծ գիտնական Անանիա Շիրակացու 1400-ամյա հոբելյանը: Ներկայումս աշխարհում այս հարցերին մեծ նշանակություն է տրվում, գործում են մի շարք կառույցներ, որոնք նպաստում են աստղագիտական ժառանգության հավաքագրմանը, պահպանմանը և ուսումնասիրությանը: Դրանք են ՅՈՒՆԵՍԿՕ-ի

«Աստղագիտությունը և համաշխարհային ժառանգությունը» ծրագիրը, ՄԱՍ-ի թիվ 41 «Աստղագիտության պատմություն» հանձնաժողովի «Աստղագիտությունը և համաշխարհային ժառանգությունը» աշխատանքային խումբը, Հուշարձանների և տեսարժան վայրերի միջազգային խորհուրդը (ICOMOS), Աստղագիտությունը մշակույթում եվրոպական ընկերությունը (SEAC), գիշերային երկնքի և աստղագիտական վայրերի պահպանման «Աստղալույս» (*"Starlight"*) նախաձեռնությունը:

**Աստղագիտական ժառանգությունը** մեր ազգային մշակույթի բաղկացուցիչ մասն է: Ավելին, այն մեծ դեր կարող է խաղալ մի շարք գիտությունների, արվեստների և մեր նախնիների գործունեության այլ ոլորտներում պահպանված արժեքների ուսումնասիրության և ընկալման, ինչպես նաև նոր արժեքներ բացահայտելու համար:

## Գրականություն

Բարյայան Հ.Ս., Հայոց տոմարի պատմություն, Երևան 1976

Բարյայան Հ.Ս., Օրացույցի պատմություն, Հայկ. ԽՍՀ ԳԱ հրատ. Երևան 1970

Բրուտեան Գ.Հ., Օրացույց հայոց, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Էջմիածին, 560 էջ, 1997

Թումանյան Բ.Ե., Հայ աստղագիտության պատմություն, հ. 1, Երևան 1964, հ. 2, Երևան

1968

Թումանյան Բ.Ե., Տոմարի պատմություն, ԳԱ հրատ., Երևան 1972

Թումանյան Բ.Ե., Հայ աստղագիտության պատմությունից, ԵՊՀ հրատ., Երևան, 286 էջ,  
1985

Թումանյան Բ.Ե., Անանիա Շիրակացի, Երևան, 1991

Թումանյան Բ.Ե., Օրվա մասերի բաժանումը հին և միջնադարյան Հայաստանում, ԵՊՀ  
հրատ., Երևան, 37 էջ, 1990

Միքայելյան Ա.Ս., Բյուրականի աստղադիտարան, Երևան, Էղիս Փրինթ, 64 էջ, 2011

Սարդարյան Ս., Ժայռապատկերներ, Երևան, ԵՊՀ հրատ., 2011

Կօսմօգրաֆիա, թարգմ. պատմություն, Երևան, 1962  
Կօսմօգրաֆիա, թարգմ. պատմություն, Երևան, 1962

Bochkarev N.G., Bochkarev Yu.N., Armenian Archaeoastronomical Monuments Carahunge (Zorakarer) and Metsamor: Review and Personal Impressions, Proc. SEAC 10<sup>th</sup> Annual Conference: Cosmic Catastrophes, held in Tartu, Estonia, 2002, eds. Mare Koiva, Izold Pustylnik & Liisa Vesik, Tartu, p. 27-54, 2005

Gurzadyan V.G., Vardanyan R., Halley's comet of 87 B.C. on the coins of Armenian king

Tigranes? Astronomy & Geophysics, Vol. 45, No. 4, p. 4.06, 2004

Harutyunian H.A., The Armenian name of the Milky Way, ArASNews #6, 2003

- Herouni P.M., Carahunge-Carenish, a Prehistoric Stone Observatory, Proc. National Academy of Sciences of Armenia, Vol. 98, 4, p. 307-328, 1998
- Parsamian E.S., On Astronomical Meaning of the Small Hill of Metsamor, Commun. BAO, Vol. 57, p. 92-100, 1985
- Parsamian E.S., On Possible Astronomical Significance of Megalithic Rings of Angelacot. Commun. BAO, Vol. 57, p. 101-103, 1985
- Parsamian E.S., On Ancient Astronomy in Armenia, Proc. International Conf. Oxford VI and SEAC 1999, ed. J.A. Belmonte, La Laguna, p. 77-81, 1999

## Armenian Astronomical Heritage

**Areg MICKAELIAN**

*Byurakan Astrophysical Observatory, NAS RA*

A review is given on the Armenian Astronomical Heritage from ancient times to nowadays. Armenian ancient astronomy includes the division of the skies into constellations, rock art, ancient Armenian calendar, ancient observatories (such as Metsamor and Karahunge), records of astronomical events (such as Halley's Comet recorded on Tigranes the Great's coin), ancient names of celestial bodies (planets, stars, constellations), etc. The Medieval Armenian astronomy includes two more calendars, Anania Shirakatsi's scientific heritage, the record of 1054 Supernova, sky maps by Luca Vanandetsi and Mkhitar Sebastatsi, etc. Modern Armenian astronomical heritage first of all consists of the famous Byurakan Astrophysical Observatory founded in 1946 by Viktor Ambartsumian, as well as Yerevan Astronomical Observatory, Armenian Astronomical Society, Armenian Virtual Observatory, Yerevan State University Department of Astrophysics, Astrofizika journal, and brilliant young students who systematically win high positions at International Astronomical Olympiads.

## 2. Անանիա Շիրակացի

Լիլիթ Նազարյան - Անանիա Շիրակացու կյանքը և գործունեությունը

Մեն Արևշատյան - Անանիա Շիրակացու բնափիլիսոփայական հայացքները

Էղուարդ Դանիելյան - Անանիա Շիրակացու տիեզերագիտական և

բնափիլիսոփայական հայացքները

Հայկ Հարությունյան, Արեգ Միքայելյան - Անանիա Շիրակացու

տիեզերագիտական աշխատությունները և բնագիտության

մեթոդաբանությունը

Զուլիետա Էյնարյան - Անանիա Շիրակացու վերադիրների համակարգը

Կարեն Թռիսարյան - Ժայռապատկերաբանության և օրացույցի ակունքները

Հայաստանում և Անանիա Շիրակացին

Գոհար Վարդումյան - Շիրակացին և «Հեթանոս» գիտնականները

Նորա Երզնկյան - Կրոնապատմական ենթատերստերը Անանիա Շիրակացու


աշխատություններում

Տաթևիկ Շախվոլյան - Անանիա Շիրակացի երաժիշտը

Գոհար Հարությունյան - Շիրակացու անվան խառնարան Լուսնի վրա

Արեգ Միքայելյան, Գոռ Միքայելյան - Անանիա Շիրակացու համացանցային

կայք-էջը



## 2. Anania Shirakatsi

**Lilit Nazaryan** – *Anania Shirakatsi's Life and Activities*

**Sen Arevshatyan** – *Anania Shirakatsi's Natural Philosophical Views*

**Eduard Danielyan** – *Anania Shirakatsi's Cosmographical and Natural Philosophical Views*

**Haik Harutyunian, Areg Mickaelian** – *Anania Shirakatsi's Cosmographical Works and the Methodology of his Natural Science*

**Julieta Eynatyanyan** – *Anania Shirakatsi's Overheads System*

**Karen Tokhatyan** – *Origins Rock Art and Calendar in Armenia and Anania Shirakatsi*


**Gohar Vardumyan** – *Anania Shirakatsi and “Pagan” Scientists*

**Nora Yerznkyan** – *Religious-Historical Sublayers in Anania Shirakatsi's Works*

**Tatevik Shakhkulyan** – *Anania Shirakatsi Musician*

**Gohar Harutyunyan** – *Shirakatsi Crater on the Moon*

**Areg Mickaelian, Gor Mikayelyan** – *Anania Shirakatsi's Webpage*



# Անանիա Շիրակացու կյանքը և գործունեությունը

## Լիլիթ ՆԱԶԱՐՅԱՆ

Երևանի Անանիա Շիրակացու անվան ճեմարան

Միջնադարյան հայ մատենագրության մեջ իր ուրույն տեղն ու դերն ունի 7-րդ դարի հանձարեղ գիտնական և իմաստասեր Անանիա Շիրակացին։ Նա օժտված էր բնության երևույթները գիտականորեն ընկալելու և վերլուծելու բացառիկ տաղանդով։ Իր իմաստափրական երկերում նա անդրադառնում է գիտության գրեթե բոլոր բնագավառներին՝ մաթեմատիկային, տիեզերագիտությանը, տոմարագիտությանը, չափերին ու կշիռներին, աշխարհագրությանը, օդերևութաբանությանը, պատմագիտությանը և այլն, սակայն նախապատվությունը տալիս է բնական գիտություններին։

Շիրակացու կյանքի և գործունեության վերաբերյալ արժեքավոր տվյալներ է տալիս նրա ինքնակենսագրությունը «Անանիա Շիրակունիոյ երից» երանեալ վարդապետի վասն որպիսութեան կենաց իւրոց» վերնագրով, որը մանրամասն գրել և մեզ է թողել հենց ինքը՝ հեղինակը։

Վերջինս ճշմարտացի տվյալներ է պարունակում հեղինակի անձի, նրա կյանքի և գործունեության վերաբերյալ։ Այն մեզ է հասել տասը ձեռագիր ընդօրինակություններով, որոնցից հինգը Մաշտոցի անվան Մատենադարանում են, իսկ մյուսները մեկական ձեռագրով՝ Բրիտանական թանգարանում, Վենետիկի Միխթարյանների մատենադարանում, Վիեննայի Միխթարյանների մատենադարանում, Պոլսի ազգային մատենադարանում և նախկին Մարաշի հայկական ձեռագրական հավաքածուի մեջ (տես «Անանիա Շիրակացու մատենագրությունը», էջ 31-32 և Հ. Անասյանի «Հայլական մատենագրություն», հ. Ա., էջ 734-735):

Շիրակացու ինքնակենսագրության տեքստը մեզ հասել է երկու՝ համառոտ և ընդարձակ խմբագրություններով, որոնցից նախնականը և լավագույնը ընդարձակ խմբագրությունն է։ Վերջինիս բնագիրը 1895թ. հրատարակել է Հ. Տաշյանը Վիեննայի Միխթարյանների ձեռագրաց ցուցակում (էջ 174-176), իսկ համառոտ խմբագրության բնագիրը հրատարակել են պարոֆ. Ք. Պատկանյանը՝ 1877թ. Պետերբուրգում, «Անանիա Շիրակունոյ մնացորդք բանից» աշխատության մեջ (էջ 1-4) և Ղ. Ալիշանը՝ 1901թ. «Հայապատումի» մեջ (էջ 232-233)։ Ինքնակենսագրականի բնագիրը

Մաշտոցի անվան Մատենադարանի թիվ 699 ձեռագրի ընդօրինակության հիման վրա 1944թ. հրատարակել է Ա. Աբրահամյանը «Անանիա Շիրակացու մատենագրությունը» աշխատության մեջ (էջ 206-209):

Շիրակացու ինքնակենսագրությունը աշխարհաբար թարգմանությամբ հրատարակվել է 1877թ. «Փորձ» ամսագրում (թիվ 4, էջ 322-325), իսկ հետագայում՝ 1979թ. «Անանիա Շիրակացու մատենագրությունը» աշխատության մեջ (էջ 25-29): Շիրակացու ինքնակենսագրությունը թարգմանվել է ոռուերեն, անգլերեն, ֆրանսերեն և գերմաներեն: 1877թ. ոռուերեն թարգմանել և հրատարակել է Ք. Պատկանյանը՝ Պետերբուրգում, «Ածի յի ուժաց աճի ածածոց ՎII աճեա, ի ծեւ ուժացածաց և ի ուժաց Օ՛ծաւ ուժի օ» աշխատության ներածության մեջ (էջ 94-96), 1897թ. անգլերեն թարգմանել և հրատարակել է Ֆ. Կոնիբերը «Byzantinische Zeitschrift»-ի մեջ (հ. 4, էջ 572-574), 1927թ. գերմաներեն թարգմանել և հրատարակել են Հ. Մարկվարտը և Ա. Բոուերը Լայցախում, «Hippolytus Vierter Band» ժողովածուում (էջ 436-441), 1964թ. ֆրանսերեն թարգմանել և հրատարակել է բանասեր Ա. Բերբերյանը «Revue des Etudes Armeniennes» ամսագրում (թիվ 1, էջ 189-202):

Անանիա Շիրակացու մեզ հասած բնագրերի ընդօրինակություններում և պատմիչների երկերում Անանիայի անվան վերաբերյալ տարակածություն չկա, իսկ նրա ազգանունը հանդիպում է տարբեր ձևերով. Շիրակացի, Շիրակունի, Շիրակային, Շիրակվանցի, Շիրականի, Անեցի և այլն: Վերը նշվածներից ավելի գործածական և ընդունված ձևեր են Շիրակացի և Շիրակունի տարբերակները:

Շիրակացու ինքնակենսագրությունից երևում է, որ նա ծնվել է Շիրակի շրջանի Անեանք գյուղում: Նրա հոր անունը եղել է Հովհաննես:

Անանիա Շիրակացու ծննդյան և մահվան տարեթվերի վերաբերյալ կան տարածայնություններ: Գիտնականների մի խումբ գտնում է, որ նա ծնվել է 6-րդ դարի վերջերին, մյուսները՝ 7-րդ դարի սկզբներին կամ 605-610-ական թվականներին (Հ. Աճառյան, Ա. Աբրահամյան, Հ. Անայան, Ռ. Աբրահամյան, Բ. Թումանյան, Ստ. Մելիք-Բախչյան, Գ. Պետրոսյան և այլք), Ֆ. Կոնիբերը՝ 600թ., Յ. Մարկվարտը՝ 620թ., Ռ. Վարդանյանը և Գ. Վարախիսյանը՝ 626 թ. և այլն [1]: Մենք առավել հավանական ենք համարում 605-610 թվականները: Հարկ է նշել, որ Անանիա Շիրակացու ծննդյան և մահվան թվականների որոշման համար հիմք են ծառայում նրա ինքնակենսագրության մեջ եղած տեղեկությունները իր ուսուցչի՝ Տյուքիկոսի մասին, նրա թվաբանության դասագրքում առկա թվականները, Անաստաս կաթողիկոսի հանձնարարությամբ նրա կազմած տոմարի

փաստը, ինչպես նաև նրա ժամանակագրության վերջին տարիների տվյալները:

Անանիա Շիրակացու «Արուեստ համարողութեան» հիշատակարանու նշված է հետևյալը. «Եւ սկիզբն քանիանութեան բերման թուիս, յորժամ լցեալ էր ՈԿԸ (668) ամի կուսական յարգանդէ Աստուածն քանի, եւ ի մետասաներորդի (11) շրջագայութեանն, եւ ի ԺԹ (19) ամի Կոստանդիանոսի: Ես Անանիէ Շիրակացի (Գ) եղօէ Անենից» [2]: Կոստանդիանոս Բ-ն գահ է բարձրացել 642թ.-ին, ուրեմն նրա 19-րդ տարին կլինի 661 թվականը: Ա. Աբրահամյանի կարծիքով, նախնական տեքստում եղել է ՈԿՍ (661), իսկ գրիշները հետագայում «Ա»-ն աղավաղել են «Ը»-ի [3]: Իսկ 11-րդ շրջագայությունը, ըստ նրա, ոչ թե վերաբերում է Շիրակացու ուսման գնալու և շրջագայելու տարիներին, այլ տումարի ԺԱ (11) երիկին [4]:

Շիրակացու ժամանակի որոշման հարցում հատկապես կարևոր նշանակություն ունի նրա ուսուցչի՝ Տյուքիկոսի ժամանակի որոշումը: Շիրակացու ինքնակենսագրության մեջ նշվում է, որ Տյուքիկոսն իր երիտասարդ հասակում ծառայել է Տիբերիոս կայսեր զորավար Հովհաննի մոտ և այնտեղ մնացել է շատ տարիներ՝ մինչև Մորիկ թագավորի ժամանակները (582-602 թթ.): Տիբերիոս կայսրը գահակալել է 578-582թթ.: Եթե հաշվի առնենք, որ Տյուքիկոսը Տիբերիոս կայսեր ժամանակ զինվոր է եղել երիտասարդ հասակում (մոտ 18-25 տարեկանում), ապա կարելի է ենթադրել, որ նա ծնվել է 6-րդ դարի 60-ական թվականների սկզբին: Իսկ Շիրակացին պետք է իր ուսուցչին հանդիպած լիներ ամենաուշը նրա 60-65 տարեկան հասակում, այսինքն, մոտավորապես 625-630թթ.: Եթե ընդունենք, որ Շիրակացին սովորելու է մեկնել 20-25 տարեկանում, ապա նրա ծննդյան թվականն ընկած կլինի 605-610 թթ. միջակայքում:

Շիրակացու ապրած ժամանակի որոշման կարևոր հանգամանքը Անաստաս կաթողիկոսի կողմից նրան հանձնարարած տումարի կազմումն է: Անաստասի կաթողիկոսության տարիներն են 661-667 թթ.: Պետք է ենթադրել, որ 7-րդ դարի 60-ական թվականներին Շիրակացին արդեն եղել է Ճանաչված գիտնական և բազմահմուտ ուսուցչապետ, ուստի, այդ ժամանակ նա արդեն հասուն տարիքում պետք է լիներ (գոնե 50-55 տարեկան), այլապես Անաստաս կաթողիկոսը նրան չէր հանձնարարի տումար կազմելու դժվարին ու պատասխանատու գործը: Այս փաստը ևս թույլ է տալիս պնդել, որ նրա ծննդյան թվականը պետք է գտնվի 605-610 թթ. միջակայքում:

Ենթադրվում է, որ Շիրակացին նախնական կրթությունը ստացել է Դպրեվանքի դպրոցում, որն այն ժամանակ եղել է մշակույթի նշանավոր կենտրոն:

Դեռևս պատանի հասակից նա մեծ հետաքրքրություն է ցուցաբերել զիտության նկատմամբ՝ առաջնորդվելով աստվածաշնչյան՝ իմաստունների՝ հետևյալ խոսքերով. «Ստացիր իմաստություն և առավել պարսավիր տգիտությունը՝ իբրև խավարի ծնունդ»: Եվ ապա՝ «Դու զիտությունը մերժեցիր, ես ել քեզ կմերժեմ»:

Ուսումնառության տարիներին Շիրակացին աշքի էր ընկնում բնական զիտությունների նկատմամբ առանձնահատուկ հետաքրքրությամբ, իսկ մաթեմատիկան համարում էր մյուս բոլոր զիտությունների մայրը. «Հովժ սիրելով համարողության արվեստը, գրում է նա, - խորհեցի, թե առանց թվերի ոչինչ չի հիմնավորվում, ուստի մայր համարեցի այն բոլոր ուսմանց» [5]: Չքավարարվելով տեղի վարժարանում ստացած զիտելիքներով և ցանկանալով դրանք ավելի խորացնել Շիրակացին ուղևորվում է դեպի Արևմտյան Հայաստան: Հասնելով Թեոդոսիոլիս (Կարին), նա հանդիպում է Եղիազարոս անունով «Քանիմաց» մեկին, որը հմուտ էր եկեղեցական գործերին: Վերջինս նրան խորհուրդ է տալիս գնալ Չորրորդ Հայք և սովորել այնտեղ մեծ հոչչակ վայելող Քրիստոսատուր անունով մաթեմատիկոսի դպրոցում:

Ընդունելով Եղիազարոսի խորհուրդը՝ Շիրակացին առանց հապաղելու մեկնում է Չորրորդ Հայք, գտնում է Քրիստոսատուրին և վեց ամիս աշակերտում նրան: Սակայն, շուտով համոզվում է, որ իր ուսուցիչը «սպառիչ չի տիրապետում համարողական արվեստին» և, թողնելով ուսումը, հեռանում է Չորրորդ Հայքից ու շարունակում իր որոնումները այլ վայրերում: Ակզրում նա ուղևորվում է դեպի Կոստանդնուպոլիս, սակայն դեռ քաղաք չհասած հանդիպում է իր ծանոթներին, որոնք նրան հայտնում են, որ Տրավիզոնում ապրում է Տյուքիկոս անունով մի հույն, որը «լի է իմաստությամբ, զիտակ է հայերեն դպրությանն ու լեզվին ու մեծ ճանաչում ունի թագավորների կողմից», և խորհուրդ են տալիս գնալ նրա մոտ սովորելու:

Հետևելով իր ծանոթների խորհուրդներին, Շիրակացին ուղևորվում է Տրավիզոն, այնտեղ գտնում է Տյուքիկոսին և նրան հայտնում իր ով լինելն ու գալու նպատակը:

Շիրակացու վկայությամբ, Տյուքիկոսը մեծ ուրախությամբ ու սիրով է ընդունում իրեն, հատկապես այն պատճառով, որ նա եկել է Հայոց երկրից: Իր ինքնակենսագրության մեջ Շիրակացին բերում է Տյուքիկոսի՝ իրեն

ուղղված խոսքերը. «Գոհություն Աստծուն, որ քեզ ուղարկել է գիտության նպատակով, որպեսզի տանես այն սուրբ Գրիգորի երկիրը: Եվ առավել ուրախ եմ, որ ինձ աշակերտում է այդ երկիրը, քանզի իմ երիտասարդության տարիներին շատ ժամանակ մնացել եմ բարեսիրության մեջ Հայոց երկրում, և ուրախանում եմ գիտությունս այնտեղ տալու համար» [6]:

Տյուքիկոսը սիրում է հայ երիտասարդին իր որդու նման և այնպիսի ջանասիրությամբ է պարապում նրա հետ, որ դա շարժում է նրա բոլոր աշակերտակից ընկերների նախանձը. «Նա սիրեց ինձ որդու նման, - գրում է Շիրակացին, - և պարապեց ինձ հետ իր ողջ իմացությամբ, այնպես, որ նախանձել սկսեցին իմ բոլոր աշակերտակիցները, որոնք արքունիքից են» [7]:

Շիրակացին մեծ հիացմունքով է խոսում հատկապես Տյուքիկոսի հարուստ գրադարանի մասին. «Ամեն տեսակի գրքեր կային նրա մոտ, - գրում է նա, - հայտնի և զաղտնի, արտաքին (հեթանոսական), գիտական և պատմական գրքեր, թշշկարաններ, ժամանակագրություններ. ի՞նչ թվարկեմ մեկ առ մեկ, քանի որ չկար այնպիսի գիրք, որ նրա մոտ չգտնվեր» [8]:

Բացի այդ, ըստ Շիրակացու, Տյուքիկոսը արտակարգ տիրապետել է հայերենին. «...երբ նա ցանկանում էր հունարեն գրված գիրքը թարգմանել, - գրում է նա, - թարգմանիչների պես չէր դեզերտում, այլ հունարենն այնպես էր հայերեն կարդում, որ կարծես հայերեն գրված լիներ» [9]:

Ութ տարի Տյուքիկոսի մոտ գիտելիքները խորացնելուց հետո, Շիրակացին հիմնովին տիրապետում է մաթեմատիկային, տիեզերագիտությանը, տոմարագիտությանը, աշխարհագրությանը և գիտական մեծ պաշարով վերադառնում հայրենիք: Իր հարուստ և համակարգված գիտելիքները հայոց ազգի երիտասարդներին փոխանցելու նպատակով նա հիմնում է իր բարձրագույն դպրոցը և ծավալում գիտական ու մանկավարժական գործունեություն:

Կարճ ժամանակում Շիրակացու դպրոցը լայն ճանաչում է ստանում. Հայաստանի տարբեր վայրերից նրա մոտ են զայիս բազմաթիվ հայ պատանիներ և զինվորներ իրենց ուսուցի հաղորդած գիտելիքներով:

Նրանցից շատերը, վերադառնալով իրենց ծննդավայրերը, բացում են իրենց դպրոցները և տարածում Շիրակացուց սովորածը: Շիրակացու գործունեությունը չի սահմանափակվում միայն մանկավարժական աշխատանքներով: Դրան զուգընթաց նա զբաղվում է նաև գիտական և գիտահետազոտական գործունեությամբ: Նրա ստեղծագործական

գործունեությունն արժեքավորվում է բնական գիտությունների տարբեր բնագավառներին վերաբերող մի շարք գիտական աշխատությունների ստեղծմամբ:

Հայ մեծ գիտնականի մաթեմատիկական, աստղագիտական, տոմարագիտական, աշխարհագրական, պատմագիտական և գիտության այլ բնագավառներին վերաբերող երկերից հետագայում օգտվել են բազմաթիվ հայ մտածողներ, այդ թվում Գրիգոր Մագիստրոսը, Հովհաննես Սարկավագը, Կիրակոս Գանձակեցին, Հովհաննես Երզնկացին, Հակոբ Դրիմեցին և այլք:

Միջնադարյան հայ պատմագիրներից և մատենագիրներից շատերը (Հովհաննես Դրասիանակերտցի, Սամուել Անեցի, Կիրակոս Գանձակեցի, Ստեփանոս Տարոնեցի, Միխրար Արևելցի և այլք) վկայում են այն մասին, որ Անաստաս կաթողիկոսը Շիրակացուն հանձնարարել է կազմել հայոց անշարժ տոմարը: Շիրակացին կարծ ժամանակում ավարտել է տոմարի կազմումը և հանձնել Անաստաս կաթողիկոսին: Սակայն մահվան պատճառով կաթողիկոսին չի հաջողվել անշարժ տոմարը հաստատել եպիսկոպոսական ժողովում և ընդունել այն:

Ըստ վկայությունների, Անաստաս կաթողիկոսի մահվան թվականը համարվում է 667-ը: Կարելի է ենթադրել որ այդ ժամանակ արդեն Շիրակացին հայտնի էր որպես հռչակավոր գիտնական և հանձարեղ ուսուցչապետ:

Ցավոք, մեծահանձար գիտնականը ըստ արժանվույն չի գնահատվել իր ժամանակակիցների կողմից: Ինքնակենսագրության մեջ նա դառնացած նշում է իր աշխատանքների նկատմամբ ցուցաբերած անբարյացակամ վերաբերմունքի մասին. «Ոչ ոք գտնվեց մեծարող, - գրում է նա,- և շնորհակալ իմ աշխատանքի համար» կամ «Իմ հասցեին նրանք պարսավանքի խոսքեր էին ասում» [10]:

Շիրակացու մատենագրության նկատմամբ անբարյացակամ են գտնվել նաև հետագայում: Հայտնի են փաստեր, որոնց համաձայն, Շիրակացու աշխատությունները արգելված են եղել: 11-րդ դարի մեծ գիտնական Գրիգոր Մագիստրոսը իր ժամանակակից Պետրոս կաթողիկոսին ուղարկած նամակում բողոքել է Շիրակացու աշխատությունների նկատմամբ ցուցաբերած անբարյացակամ վերաբերմունքի համար: «Սովորելով առատատուր պարզեց, կարևորը և պիտանին ձեզ թողնելով, - գրում է նա,- թույլ եմ տալիս խնդրել ձեզ, որ չդանդաղեցնեք Անանիա Շիրակացու գործերը, որոնք մեծաջան աշխատասիրությամբ, թափառումներով և դեգերումներով հավաքել է նա

բազմազան և բազմաբովանդակ մատյաններից... որը ձեզնից առաջ բողնված էր անուշադրության և գրվանի տակ էր թաքցվում... Շիրակացին՝ շնորհիվ իր իմացության, աշխատասեր մեղվի պես ժողովել է իր մեղվանցում հույների, քաղդեացիների և այլ ազգերի մատյաններից այդ ժողովուրդների բազմարվեստ գիտությունը» [11]:

Շիրակացու նկատմամբ՝ իր ժամանակակիցների կողմից անուշադիր վերաբերմունքից ելնելով՝ հետազայում ժողովուրդը ստեղծել է մի հետաքրքիր ավանդություն, ըստ որի «Շիրակացին, նկատելով ժամանակակիցների թշնամական վերաբերմունքն իր նկատմամբ, հեռանում է հայրենիքից և գնում Վենետիկ: Այնտեղ նա թագավորին սովորեցնում է ալքիմիայի միջոցով երկարից ոսկի ստանալու արվեստը: Սակայն, եթք թագավորը յուրացնում է այդ գաղտնիքը, որոշում է սպանել Շիրակացուն, որպեսզի այդ գաղտնիքը նա ոչ ոքի չհայտնի Շիրակացին խնդրում է իրեն չսպանել՝ խոստանալով գաղտնիքը ոչ ոքի չհայտնել, այլ ոսկի դրամի երեսին իր պատկերը քանդակել և դրանով ինքը բավարարված կլինի: Թագավորը համաձայնում է և կարգադրում հատուկ ոսկեդրամ կտրել Շիրակացու պատկերով՝ իբրև վարձատրություն նրա մատուցած ծառայությունների: Այդ պայմանի համաձայն, յեալդգ կոչվող ոսկեդրամի մեկ երեսին դրոշմված կնքուրով պատկերը Շիրակացուն է» [12]:

Մեկ այլ ավանդության համաձայն՝ Շիրակացին համարվում համասփյուռ բույսը հայտնաբերողը, մի բույս, որը միշնադարյան Հայաստանում եղել է իմաստության և գիտության հովանավորը: Այդ պատճառով միշնադարյան զրուցներում այս ծաղկի հետ է կապված Շիրակացու նման մեծ գիտնականի անունը: Ժողովուրդը նրան համարում է գիտության պահպանման խորիրդանիշ [13]:

Անանիա Շիրակացու մահվան տարեթվի վերաբերյալ ստույգ տվյալներ չկան: Միայն իր պատմական աշխատության վերջում հեղինակը գրում է Հայոց 134թ. (այսինքն, 685թ.) Հայաստանի, Վրաստանի ու Աղվանիքի վրա խազարների հարձակման և հայոց, վրաց ու աղվանից իշխանների սպանության մասին [14]: Կարելի է ենթադրել որ Շիրակացին մահացել է 680-ական թվականների վերջին:

Մեծահանճար գիտնականն իրենից հետո թողել է գիտության տարբեր բնագավառներին վերաբերող բազմաթիվ աշխատություններ: Դժբախտաբար, նրա գիտական ծառանգությունն ամբողջական կերպով մեզ չի հասել, և դա կարելի է հայ մատենագրության թերևս ամենացավալի կորուստը համարել:

Շիրակացուց մեզ հասել են հետևյալ աշխատությունները.

1. Ինքնակենսազրությունը
2. Թվաբանական աղյուսակները (գումարում, հանում, բազմապատկում)3.  
Վեցհազարյակը (բաժանում)
4. Խնդրագիրքը
5. Խրախճանականները
6. Տիեզերագիտությունը
7. Կենդանատեսակների մասին տեքստը
8. Աստղաբաշխության մասին տեքստը
9. Երկնային երևույթների մասին տեքստը
10. Արեգակի ընթացքը համաստեղություններով
11. Լուսնի պարբերաշրջանը
12. Լուսնի գարնանային գիշերահավասարի աղյուսակները
13. Լուսնի առանձնակ բոլորակը
14. Լուսնացույց աղյուսակները
15. Զատկի ձառը
16. Հայտնության ձառը
17. ՇԼԲ բոլորակը (532 տարիների աղյուսակը)
18. Խառնախորանը
19. Ժողովուրդների ամսանունները
20. Հին հայկական ամսանունները և ժամանունները
21. Անդրեաս Բյուզանդացու տումարի մեկնությունը
22. Աշխարհացույցը
23. Մղոնաշափքը
24. Օդաչափքը (Աստղաբաշխական երկրաչափությունը)
25. Չափերի և կշիռների մասին տեքստերը
26. Թանկարժեք քարերի մասին տեքստը
27. Ժամանակագրությունը
28. Աստվածաշնչի գլուխների դասակարգումը

Հարկ է նշել որ Շիրակացուց առաջ բնագիտական հարցերը ներկայացված են փիլիսոփայության կամ այլ գիտությունների հետ սերտորեն կապված: Շիրակացին միջնադարյան հայ մատենագրության մեջ առաջին հեղինակն էր, որ բնական գիտություններն առանձնացրեց մյուս գիտական բնագավառներից և զարգացրեց որպես ինքնուրույն գիտություններ՝ դրանով իսկ հոչակվելով իբրև բնական գիտությունների հիմնադիրը Հայաստանում:

## Գրականություն

1. Անանիա Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1944, էջ 37-40: Հ. Անասյան, Հայկական մատենագրություն, հ. Ա, էջ 731: Բ. Թումանյան, Անանիա Շիրակացի, Երևան, 1991, էջ 6: Ռ. Աբրահամյան, Բ. Թումանյան, Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Անանիա Շիրակացի, Երևան, 1958, էջ 16: Ա. Աճճան յի , Ա. Դ ածի յի, Ա. Տ ածի յի Ծ էծանակություն, 1970, թ. 27. F. Conybeare, Ananias of Shiraq (A. D. 600-650), Byzantinische Zeitschiff. Bd. VI, 1897, 572-584. I. Markwart und A. Bauer, Hippolytus Vierter Band, Leipzig, 1929, s. 393-558. Ռ. Վարդանյան, Գ. Կարախանյան, Անանիա Շիրակացին և նրա «Քննիկոնը», Աճեմյան մատենաշար հ. Ա, Երևան, 2002, էջ 37-118:
2. Մատենադարան, թիվ 4066, էջ 10ր:
3. Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 39:
4. Նույն տեղում, նույն էջում:
5. Անանիա Շիրակացի, Մատենագրություն, էջ 25:
6. Նույն տեղում, էջ 26:
7. Նույն տեղում, նույն էջում:
8. Նույն տեղում, էջ 27:
9. Նույն տեղում, նույն էջում:
10. Անանիա Շիրակացի, Մատենագրություն, էջ 28-29:
11. Գրիգոր Սահմանոսի թղթերը, Ալեքսանդրապոլ, 1910, էջ 8:
12. Ղ. Ալիշան, Հայ-Վենետ, Վենետիկ, 1896, էջ 191:
13. Ա. Մնացականյան, Հայկական գարդարվեստ, Երևան, 1955, էջ 486-488:
14. Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 399:

## Anania Shirakatsi's life and activities

**Lilit NAZARYAN**

*Yerevan Anania Shirakatsi Seminary*

Anania Shirakatsi is one of the greatest scientists who made an important contribution to the field of exact sciences in Armenia, a brilliant scientist and philosopher of the 7<sup>th</sup> century; actually the founder of exact sciences in Armenian reality.

Unfortunately, out of Shirakatsi's rich heritage only some fragments of his works in the fields of Mathematics, Cosmography, Calendarology, Metrology, which are of great value for the history of exact sciences, got to us.

There is a valuable source about Anania Shirakatsi's life and work; the author has left his autobiography. From Shirakatsi's autobiography we learn that he was born in the village Aneank (Shirakavan) at the beginning of the 7<sup>th</sup> century. He got his elementary education in the local monastery school, later being eager to improve his knowledge, he went to West Armenia. He had to travel a lot about West Armenia seeking an advanced specialist in Mathematics. He was leaving for Constantinople but on his way to Signup he learns that in Trapeze a great Greek scientist, Tyukhik lives: "a wise man, popular with the kings, an expert on Armenian Language and Literature". Shirakatsi changed his way and went to Trapeze.

Shirakatsi had been at Tyukhik's school for 8 years; he became proficient in exact science and came back to his native land with rich knowledge base. Here he opened a school and devoted himself to teaching and research. He wrote research works in Astronomy, Mathematics, Geography, Calendarology, Metrology and in other fields of science.



# Անանիա Շիրակացու բնափիլիսոփայական հայացքները

## ՍԵԿ ԱՐԵՎԱՏՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության ինստիտուտ

VII դարի ականավոր մաթեմատիկոս, աստղագետ և փիլիսոփա Անանիա Շիրակացու գիտական ժառանգությունը ուրույն տեղ է գրավում հայ միջնադարյան փիլիսոփայության պատմության մեջ: Իր աշխատություններով նա լրացրեց վաղ ավատատիրական Հայաստանի հոգևոր մշակույթի մեջ գոյություն ունեցող բացը՝ հանդես գալով որպես բնագիտության տարբեր ճյուղերի հիմնադիր և հայ փիլիսոփայության մտքի բնագիտական ուղղության ստեղծող:

Նախորդ շրջանի՝ V-VI դարերի հայ մտածողներ Եզնիկ Կողբացու, Եղիշեի, Դավիթ Անհաղթի գործերում բնագիտական խնդիրները քննարկված են համառոտ և ենթարկված են փիլիսոփայական և աստվածաբանական հայեցակարգերին: Բնական գիտությունների անջատումը փիլիսոփայությունից կապված է Անանիա Շիրակացու անվան հետ, որի գործերով դրվել են Հայաստանում մաթեմատիկայի, տիեզերագիտության, աստղաբաշխության, օդերևութաբանության, տոմարագիտության, չափագիտության հիմքերը:

Շիրակացու կարևորագույն գործերից են «Տիեզերագիտությունը», «Տոմարը», «Թվաբանությունը». Պահպանվել են չորս գործոդրությունները պարունակող թվաբանական աղյուսակները, որոնք Շիրակացու շնորհիվ փրկված աշխարհի մաթեմատիկական գրականության հնագույն տառամական ձեռնարկներն են: Բացի այդ, նա հեղինակել է մի շարք փոքրածավալ աշխատություններ՝ «Յաղագու շրջագայութեան երկնից», «Յաղագու կենդանակերպից», «Յաղագու շարժման Արեգական ըստ կենդանակերպից», «Յաղագու աստեղաբաշխութեան» և այլն: Դրանք մանրամասնություններով լրացնում են նրա հիմնական երկը՝ «Տիեզերագիտություն» արժեքավոր մենագրությունը: Հետագա դարերի հայ գիտնականների՝ Գրիգոր Մագիստրոսի, Հովհաննես Սարկավագի, Հովհաննես Երզնկացու գործունեությունն ամուր թեկերով կապված է Շիրակացու բնագիտական հայացքների հետ, որոնց համար նա անառարկելի հեղինակություն էր: Նրանց համար Շիրակացու երկերից բացի, նախնական հիմք են ծառայել նաև հին հունական և վաղ քրիստոնեական շրջանի թարգմանական գրականության

հուշարձանները՝ Բարսեղ Կեսարացու «Վեցօրեայ արարչութեան մեկնութիւնը», Կեղծ Արիստոտելի «Յաղազս աշխարհի», Եպիփան Կիպրացու, Փիլոն Սղեքսանդրացու, Գրիգոր Նյուացու, Նալեխոսի և այլոց երկերը, որոնք թարգմանվել էին V–VI դարերում և դարձել հայ գիտական գրականության անկապտելի մասը:

Իր ժամանակի համար Շիրակացին դարձավ միակ հեղինակը, որը դիմեց անտիկ շրջանի հարուստ ժառանգությանը և կարողացավ կրոնական-աստվածաբանական աշխարհայեցողության գերիշխանության պայմաններում գնահատել հելենական գիտության նվաճումները և ներմուծել հայ գիտության մեջ՝ նրա ձևավորման շրջանում։ Մակայն, որպես իր ժամանակի զավակ, Շիրակացին անկարող էր լիովին հրաժարվել եկեղեցական տեսակետներից։ Նա ձգտում էր համատեղել եկեղեցականը «հեթանոսական» գիտության հետ, ընդ որում՝ այդ «հեթանոսականի» մեջ նա կատարում է բաժանում «քարի» և «չար» գիտունների, ընդունելի «քարի» գիտնականների և «չար» մերժելի մտածողների միջև՝ դրանով իսկ ստեղծելով հարմար ձանապարհ անտիկ աշխարհի գիտության նվաճումներով քրիստոնեական նորաստեղծ գիտությունը հարստացնելու համար։

Շիրակացին պաշտպանում է աշխարհի չորս տարրերից առաջանալու հին հունական տեսությունը։ Անկախ այն բանից, որ այդ չորս տարրերը հուրը, օդը, ջուրը և հողը ստեղծվել են աստծուց, դրանից հետո նրանց զարգացումն ընթանում է բնական ձանապարհով, այդ տարրերի փոխներգործության, նրանց բնորոշ բնական յուրահատկությունների շնորհիվ։ Դրանք փոխկապակցված են և փոխներգործում են այդ ընդհանուր հատկությունների միջոցով։ Կրակին հասուկ են ջերմությունը և չորությունը, օդին՝ ջերմությունը և խոնավությունը, ջրին՝ խոնավությունը և ցրտությունը, հողին՝ ցրտությունը և չորությունը, որոնց միջոցով և ստեղծվում է իրերի ողջ աշխարհը։ Փոխներգործության ընթացքում տարրերից առաջացող իրերը ձեռք են բերում նոր հատկություններ, այսուհետև ոչնչացումը սկիզբ է տալիս նոր իրերին։ Աշխարհը հավերժ է, ասում է Շիրակացին, որովհետև «առաջացումը ոչնչացման սկիզբ է, իսկ ոչնչացումն իր հերթին առաջացման սկիզբ։ Եվ այդ անտչնանալի հակասությունից աշխարհը ձեռք է բերում տևողություն։։ Փաստորեն, մի կողմ դնելով աշխարհի վեցօրյա արարչագործության առասպելը՝ Շիրակացին անց է կացնում այն միտքը, որ աշխարհն անցել է զարգացման որոշակի ձանապարհ։ Նա գտնում է, որ երկիրը գոյացել է ջրի և փիսուն հողի խառնուրդից և պնդացել է հողմերի ձնշման տակ։ Աշխարհի կառուցվածքի բացատրության հարցում Շիրակացին հետևում է անտիկ տիեզերագետների հայացքներին՝ վճռական դեր հատկացնելով տարրերի կշիռներին։ Հուրը՝ որպես ամենաբերելի տարր, զբաղեցնում է վերին տեղը և իրենով պարփակում է ողջ աշխարհը։ Այնուհետև իերթականորեն տեղադրվել են օդը, ջուրը և հողը։ Ըստ

որում՝ հողը, որպէս ամենածանր տարր, գրավել է կենտրոնական տեղ տիեզերքում:

Իր տիեզերաբանական համակարգում Շիրակացին հետևում է ավանդական՝ անտիկ աշխարհում և քրիստոնեական տիեզերագիտության մեջ լայնորեն տարածված երկրակենտրոն տեսությանը և դրա հետ կապված նյուրական աշխարհի սահմանափակվածության մասին պատկերացումներին: «Արդարն արժանի են ծաղրի և արհամարհանքի այն մարդիկ, որոնք իրենց իմաստուն համարելով, հիմարներ դուրս եկան, այսինքն՝ նրանք, որոնք համարում են, որ երկինքն ու երկիրը չունեն ոչ սկիզբ, ոչ էլ վերջ» ասում է Շիրակացին<sup>2</sup>: Հատ նրա վերին երկինքը, որը բաղկացած է զուտ կրակից, իրենով պարփակում է բոլոր գոյերը՝ ընդգրկելով ամեն ինչ:



Երկրակենտրոն տեսությունը, իր հիմքում ունենալով աստծո գոյության՝ «առաջին շարժիչի» գաղափարը, իին հունական փիլիսոփայությունից ընդունվել էր քրիստոնեական եկեղեցու հայրերի կողմից, ավելի ստույգ՝ արիստոտելյան-պտղումետույան համակարգից որդեգրվել էր վաղ-միջնադարյան կրոնական փիլիսոփայության կողմից: Դրա ամենաարժեքավոր դրույթն այն էր, որ երկիրը գնդաձև է: Արիստոտելյան այդ գաղափարը որդեգրած էրատոսթենեսը շափեց երկրագնդի տրամագիծը: Ըստունեղով Արիստոտելի և Պտղոմեոսի երկրակենտրոն

համակարգը՝ եկեղեցու հայրերի մեծ մասը նրանից դրսք նետեց Երկրի գնդաձևության գաղափարը: Միայն քրիստոնեական առավել լրասավորյալ որոշ ներկայացրուցիչներ, ինչպես օրինակ՝ Բարսեղ Կեսարացին, Հովհաննես Ֆիլոպոնոսը և այլ վարդապետներ, պաշտպանեցին Երկրի գնդաձևության տեսությունը: Ուղղափառ հոգևորականության զգալի մասը կառչած այն տիեզերագիտական տեսությունից, որը բխում էր Աստվածաշնչի գաղափարներից:

Այն մշակեց VI դարի ալեքսանդրյան վարդապետ Կոսմաս Հնդկաչուն (Բնդիկոպիլսատը), որն իր «Քրիստոնեական տեղագրություն» աշխատության մեջ զարգացնում էր այն միտքը, որ Երկինքը նման է մի սնդուկի՝ կամարաձև կափարիչով, որի հատակին Երկիրն է: Այն տափարակ է, քառանկյունաձև է և շրերի վրա է: Երկիրը շրջապատված է օվկիանոսով, որից այն կորլ անմարդաբնակ, ամայի տարածք է: Այդ տարածքը չորս կողմից շրջապատում է բարձր պատնեշ, որի վրա կ հենվում են Երկինքը, Արևն ու Լուսինը, որոնք ընթանում են ոչ թե Երկրի, այլ մի բարձրաբերձ կոնաձև լեռնազագաթի շուրջ:

Հելենիստական շրջանի գիտության նվաճումների հետ համեմատած՝ Կոսմաս Հնդկաչուի «Քրիստոնեական տեղագրություն» մեծ նահանջ էր: Անանիա Շիրակացին հերքում է «Քրիստոնեական տեղագրության» հիմնական դրույթները և պաշտպանում հելենիստական գիտության դիրքերը: «Եթե որևէ մեկը ցանկանա, - գրում է Շիրակացին, - արտաքին փիլիսոփաներից ստանալ Երկրի դրության մասին համոզիչ օրինակ, ապա ինձ հարմար է թվում ձվի օրինակը: Այնպես, ինչպես (ձվի) մեջտեղում է գնդաձև դեղնուցը, իսկ նրա շուրջը սպիտակուցն է, իսկ կձեռքը պարփակում է ամեն ինչ նույնպես և Երկիրը գտնվում է մեջտեղում, շրջապատում է օղը, իսկ Երկինքը իրենով պարփակում է այդ բոլորը»<sup>3</sup>:

Երկրի գնդաձևության և տիեզերքի կառուցվածքի մասին Շիրակացու պատկերացումները շատ հստակ են և որոշակի: «Արդ, այն վերին Երկինքը, - ասում է նա, - որ հույսերը եթեր են անվանում, իսկ քաղեացիք՝ խիս կրակ...կամարաձև առաստաղի նման, ողորկ կղորաձև ճշգրիտ ընդգրկմամբ այն տարածվել է գնդաձև Երկրի շուրջը իր անդադար և անկասելի արագ շրջապտույտով, անստեսանելի նյութով, որը ենթակա է միայն բանական ձանաշման»<sup>4</sup>:

Երկրի ձեմի մասին հին տիեզերագիտների վեճերի հետ սերտորեն կապված էր նաև հակուսնյաների (անտիպոդների) հարցը, այսինքն՝ Երկրի հակառակ կողմում կան արդյոք մարդիկ, Երկրի ներքին մասում գրյություն ունի կյանք, թե այն ամայի է ու անմարդաբնակ: Քրիստոնեական տիեզերագիտության համաձայն, այդ հարցը կապված էր կամ Երկրի գնդաձևության ընդունման կամ Աստվածաշնչի այն դրույթի ժխտման հետ, որ Երկիրը հաստատված է շրերի վրա:


Շիրակացին, իր գիտական համոզմունքների դեմ չմեղանչելու և քրիստոնեական համոզմունքներին շրավաճանելու նպատակով, գտնում է դժվարին կացությունից դուրս գալու միջոց։ Նա գրում է, որ մի ժամանակ «ընդունում էր հակոսնյաների գոյությունը» և կարծում էր, «որ դա համապատասխանում է աստվածային խոսքին»։ Բայց տեղնուտեղը պատմում է իր երազը, որտեղ իր հարցին՝ «Գոյություն ունե՞ն այլ կենդանի էակներ երկրի ներքին մասում, թե ոչ», երիտասարդ շիկահեր տղամարդու տեսքով հանդես եկող Արեր պատասխանում է՝ «Գոյություն չունեն։ Իսկ (այնտեղ) ես լուսավորում եմ սարերը, ձորերը և ամայի քարանձավները»<sup>5</sup>։ Շիրակացին այսպիսով ընդունում է, որ Երկրի ներքին մասում կան «սարեր, ձորեր և ամայի քարանձավներ» և մերժում է հակոսնյաների գոյությունը, միայն այն պատճառով, որ դա չի համապատասխանում «աստվածային խոսքին»։

Միջնադարյան տիեզերագիտության համար գայթակրության քար էր դարձել այն հարցը, թե ինչի վրա է հենվում, ինչպես է իր ծանրությունը պահում Երկիրը։ Առավել տարածված էր այն տեսակետը, որը պաշտպանում էր Կոսմաս Հնդկացունն՝ որ երկիրը, որպես քառանկյունաձև հարթություն, հենվում է ջրերի վրա։ Շիրակացին հանդես է գալիս այդ տեսակետի դեմ։ Նա գրում է. «Ես չեմ հասկանում, եթե երկիրը հենված է ջրերի վրա, ապա ինչպես այդպիսի քանակությամբ ջրային բնության վրա շնորհմվելով պահվում է երկրի անշափելի ծանրությունը, և (զուրք) ձեռքերով չի տարածվում երկրի բոլոր կողմերում և նա չի ընկրում ջրերի մեջ»<sup>6</sup>։

Շիրակացին խելահեղ է անվանում այն հեթանոս փիլիսոփաներին (իսկ իրականում դա Կոսմաս Հնդկացուի և եկեղեցու տեսակետն է), որոնք ասում են, «որ ծովը շրջապատում է Երկիրը, և Երկիրը գտնվում է ծովի վրա, ինչպես մի կղզի, և ջուրը գտնվում է օդի վրա և շրջապատված է (քոլոր) կողմերից»։ Դա հակասում է տարրերին բնորոշ հատկություններին, նրանցից յուրաքանչյուրին բնորոշ ծանրության սկզբունքին։ Ծովերը գտնվում են երկրի վրա, և «երկրից դուրս չկա այլ ծով»։ Շիրակացին փորձում է բանական պատճառներով բացատրել Երկրի՝ տիեզերքի կենտրոնում գտնվելու վիճակը՝ մերժելով այն ջրերի վրա տեղադրումը։ Նա պնդում է, որ Երկիրն իր նման դիրքը պահպանում է երկնային գոտիների արագ շրջապատութի շնորհիվ և երկու հակընդդեմ ուժերի՝ Երկրի ծանրության և քամիների ուժերի, որոնք հավասարակշռում են միմյանց։ Երկրի ծանրությունը ձգում է նրան ներքև, իսկ հողմերի ուժը՝ վերև, և այսպես հավասարակշռված այն պահպանում է իր կայուն դիրքը տիեզերքի կենտրոնում<sup>7</sup>։

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում Շիրակացու՝ Արեի և Լուսնի խավարումների պատճառներին տված բացատրությունը։ Դրանց խավարումները, ըստ Շիրակացու, տեղի են ունենում այն ժամանակ և այն պատճառով, որ Լուսինը,

Արևը և Երկիրը հայտնվում են մի գծի վրա: Արևի խավարման ժամանակ Լուսինն է անցնում Երկրի և Արևի միջև, և Լուսինը ժամանակավորապես ծածկում է Արևի սկավառակը, իսկ եթե Երկիրը հայտնվում է Արևի և Լուսի միջև, մենք տեսնում ենք Երկրի ստվերը Լուսի վրա: Դրանով մեկ անգամ ևս համոզվում ենք, որ Երկիրը գնդաձև է, քանի որ տեսնում ենք, որ նրա ստվերը կլոր է<sup>8</sup>:



Անանիա Շիրակացին կարևոր տեղ է հատկացնում Երկու մեծ լուսատուներին, որոնց շարժման հետ են կապված Երկրի վրա կատարվող երևոյթները: Արևի՝ Երկրի շուրջ կատարվող շրջապտույտներից է կախված Երկրագնդի վրա տարվա եղանակների փոփոխությունն ու հերթագայությունը: Իր ինքնուրույն շարժումից բացի, Արևը շարժվում է նաև Երկնակամարի հետ՝ արևելքից արևմուտք և 24 ժամվա ընթացքում կատարում է մեկ շրջապտույտ: Արևն այդ ժամանակ գերում է իր լույսը, անցնելով իր ճանապարհը մեկ կիսագնդի վրայով, արտաքսելով խավարը և լուսավորելով օդը, որը և կրչվում է ցերեկ: Գիշերն առաջ է զայխ Արևի լույսի պակասությունից, որովհետև Երկիրն իր ստվերով առաջացնում է խավար<sup>9</sup>: Շիրակացին համոզված է, որ Արևն իր շափերով մի քանի անգամ գերազանցում է Երկիրը, Լուսինը և աստղերը միասին վերցրած: «Թող քեզ չխարի նրա փոքր տեսքը, և որ նա երևում է մի կանգուն շափով՝ դու մի եզրակացրու, որ այդպիսին է նրա իսկական մեծությունը»<sup>10</sup>:

Երկրորդ «մեծ» լուսատու Լուսինը նույնպես ազդում է Երկրի վրա առաջացող որոշ երևոյթների վրա: Նրանց թվին են պատկանում

տեղատվությունները և մակընթացությունները ծովերում: Դա պետք է իմանան ծովագնացները, որպեսզի այլ պատճառներ չփնտրեն այդ երևույթը բացատրելիս և հաշվի առնեն նավագնացության ընթացքում:

Ի հակադրություն տիրապետող եկեղեցական դրույթի՝ Շիրակացին համարում է, որ Լուսինը չունի սեփական լուս, որ նա իր լուսը ստանում է Արևից: Լուսինը նման է Արևի դեմ դրված հայելու և արտացոլում է նրա լուսը: Քանի որ Լուսին մակերևույթը հարթ չէ, նրանից արտացոլվող լուսը շատ ավելի թույլ է Արևի լուսից: Սակայն Արևն էլ իր լուսը և ջերմությունը ստանում է հրային գոտուց, որն իր տապը և լուսը հաղորդում է Արևին սառեցնող գոտու միջոցով: Արևն էլ ստանալով այդ, ավելի մեղմ չափերով ուղարկում է ներքնի գոտիներին, որոնց վրա են մոլորակները, որոնք էլ իրենց հերթին լուսն ու ջերմությունը հասցնում են Երկրին:

Շիրակացու «Տիեզերագիտության» մեջ բազմաթիվ էջեր նվիրված են «քաղցեական» աստեղաբանության, աստղահմայության քննադատությանը: Նա անվանում է այդ արվեստը «դատարկ քարքաջանք»: «Մեծ հիմարություն է մոլորյալ ուսուցիչների տափակ և տգետ դատարկ արվեստը: Որովհետև նրանք օժտում են (մարդկանց) քարի և չար հատկություններով ոչ թե իրենց արժանիքների համաձայն, այլ աստղերի պատահական տեղադրությամբ որևէ վայրում»<sup>11</sup>:

Անհրաժեշտ է նշել, որ աստեղաբանությունը (աստրոլոգիան) ժամանակին որոշակի դեր է խաղացել իին աստղագիտության զարգացման գործում: Երկար ժամանակ աստեղաբանության որոշ տարրեր մտնում էին իին և միջնադարյան ժողովուրդների աստղաբաշխական ուսմունքների մեջ: Մասնավորապես կենդանակերպի նշանների և մոլորակների՝ տարբեր երկրների և տարբեր ժողովուրդների վրա ունեցած ազդեցության մասին տեսությունը լայնորեն տարածված էր իին աստղաբաշխության մեջ և իր արտացոլքն էր գտել Շիրակացու փոքրածավալ աշխատություններում: Մինչդեռ նրա հիմնական գործի՝ «Տիեզերագիտության» մեջ բոլորովին բացակայում են նման դատողությունները և քննադատություն են բավական սուր կերպով:

VII դարում եկեղեցական-աստվածաբանական աշխարհայացքի գերիշխանության պայմաններում Անանիա Շիրակացին հանդես եկավ իր ժամանակի համար առաջադեմ զաղափարներով, հաստատեց անտիկ աշխարհի բնագիտական մտքի ներկայացուցիչների հետ ամուր կապերը և դրեց բնակիլիսուխայական մտքի հիմքերը տիեզերագիտության, աստղաբաշխության, մաթեմատիկայի բնագավառներին նվիրված իր աշխատություններով:

Նշելով ականավոր գիտնականի ծննդյան 1400-ամյակը, գնահատելով բնափիլիսոփայական ուղղության հիմնադրի թողած մեծ ժառանգությունն ու

Բնագիտության ասպարեզում տարբեր ճյուղեր սկզբնավորողի վաստակը՝ կարող ենք ասել, որ Անանիա Շիրակացին բացառիկ տեղ է գրավում հայ հոգևոր մշակույթի, ինչպես և համաշխարհային գիտության պատմության մեջ:

## Գրականություն

1. Անանիա Շիրակացի, Տիեզերագիտություն և տոմար. Հրատ. Ա. Արքահամյանի, Եր., 1940, էջ 31 (մեջբերումների աշխարհաբար թարգմանությունն իմն է - U.U.):
2. Նույն տեղում, էջ 5:
3. Նույն տեղում, էջ 10:
4. Անանիա Շիրակացի, Երկնքի շրջապտույտի մասին, էջ 318:Տե՛ս Անանիա Շիրակացու մատենագրությունը, հրատ. Ա. Արքահամյան, Եր., 1944:
5. Անանիա Շիրակացի, Տիեզերագիտություն, էջ 14:
6. Նույն տեղում, էջ 12:
7. Նույն տեղում, էջ 9-10:
8. Նույն տեղում, էջ 44-45:
9. Նույն տեղում, էջ 59:
10. Նույն տեղում, էջ 57:
11. Տիեզերագիտություն, էջ 27:

## Anania Shirakatsi's Natural Philosophical Views

**Sen AREVSHATYAN**  
*Institute of Philosophy, NAS RA*

A review on Anania Shirakatsi's natural philosophical views is given. He was the first to distinguish natural sciences from philosophy, establishing the basis for such sciences as mathematics, cosmography, astronomy, meteorology, chronology, and metrology. Shirakatsi's works are discussed related to these sciences.

# Անանիա Շիրակացու տիեզերագիտական և բնափիլիսոփայական հայացքները

Էդուարդ ԴԱՍԻԵԼՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ

Տիեզերաբանական և բնափիլիսոփայական գիտելիքների ձևավորումը մեծագույնս պայմանավորված էր աստղագիտության առաջացմամբ և զարգացումով:

Հայկական լեռնաշխարհի բնիկները՝ հայերը դիտարկել են աստղային երկինքը հնագույն ժամանակներից, ինչպես վկայում են տիեզերաբանական պատկերացումներ արտացոլող ժայռապատկերները<sup>1</sup> (Արարատի, Արագածի, Ուխտասարի լեռնալանջեր, Գեղամա և Վարդենիսի, Արցախի, Նախիջևանի, Գողթնի, Վանանդի, Վասպուրականի, Հայկական Տավրոսի, Կորդովի լեռներ և այլ վայրեր)<sup>2</sup> ու քարե աստղադիտարանները (Օռբաց կամ Դիբ-դիբ քարեր<sup>3</sup>,

<sup>1</sup> Հայաստանի նորքարեղարյան, պղնձի-քարեղարյան, բրոնզի ու վաղ երկաթի դարաշրջանների ժայռապատկերները բնութագրելիս անվանի հնագետ Հարություն Մարտիրոսյանը գրել է. «Գեղամա լեռների և այլ վայրերի ժայռապատկերների մարդակերպ պատկերներից շատերը ներկայացնում են սրբացված, աստվածացված նախնիներին՝ աստղային նշանների ուղեկցությամբ, քանի որ աշխարհի շատ ժողովուրդների և մանավանդ տեղաբնակ հայերի պատկերացմամբ նախնիների ուրույն աշխարհը երկինքն էր...» (Հ.Ա. Մարտիրոսյան, Պաշտամունքը, կրոնը և արվեստը նախնադարյան Հայաստանում. - տես Հայ ժողովուրդի պատմություն, հ. I, Երևան, 1971, էջ 258):

<sup>2</sup> Ա.Ա. Քալանթար, Արագածը պատմության մեջ, Երևան, 1935; Հ.Ա. Մարտիրոսյան, Հայաստանի նախնադարյան մշակույթի նոր հուշարձաններ, Պատմա-բանասիրական հանդես (այսուհետև՝ ՊԲՀ), 1969, N 3; Գ.Հ. Կարախանյան, Պ.Գ. Սաֆյան, Սյունիքի ժայռապատկերները. - Հայաստանի հնագիտական հառւշարձանները, 4, Ժայռապատկերներ, պրակ I, Երևան, 1970; С.Б. Петросян, Древнейшие петроглифы Армении. - "Промышленность, строительство и архитектура Армении", Ереван, N 9, 1987, S. Shahinyan, Petroglyphs and Ancient Symbols of the Armenian Highland, Yerevan, 2010; H. Simonyan, K.Tokhatyan. Petroglyphs of the Armenian Highland. - Archaeological Heritage of Armenia, Yerevan, 2013, pp. 25-27 և այլն:

<sup>3</sup> Է.Ս. Парсамян, Археоастрономия в Армении, - Историко-астрономические исследования. Вып. 20, Наука, М., 1988, с. 137-146, П.М. Геруни, Доисторическая каменная обсерватория в Карабахундж-Карениш, - Доклады НАН РА, 1998, N 4, с. 307-328;

Մեծամոր<sup>4)</sup>: Հնագույն ժամանակներից առասպելաբանաստեղծական ընկալումների շրջանակներում տիեզերաբանական պատկերացումների գեղարվեստական փոխակերպությունը<sup>5</sup> նպաստել է բնափիլիսոփայական մտքի ձևավորմանը և գարգացմանը:

Երկրի՝ որպես տիեզերական մարմին ուսումնասիրությունը անտիկ դարաշրջանում հանգեցրեց աստղագիտության զարգացմանը, որն առավել ցայտուն արտահայտվեց Եփոքսոս Կնիդացու (մ.թ.ա. 406-355 թթ.), Արիստոտելի (մ.թ.ա. 384-322 թթ.), Արիստարքոս Սամոսացու (մ.թ.ա. 320-250 թթ.), Արատոս Սոլացու (մ.թ.ա. 315-240 թթ.), Էրատոսթենեսի (մ.թ.ա. 276-194 թթ.), Ապողոնիոս Պերգացու (մ.թ.ա. 250-205 թթ.), Հյուպարքոսի (մ.թ.ա. 160-125 թթ.), Պլինիոս Ավագի (23-79 թթ.) և Կլավդիոս Պտղոմեոսի (մոտ 83-161 թթ.) և մյուս գիտնականների աշխատություններում:

Տիեզերքի կառուցվածքի մասին Արիստոտելի և Պտղոմեոսի տեսությունը հիմնված էր երկրակենտրոն ուսմունքի վրա, այնինչ պյութագորականների և Արիստարքոսի հին արեգակնակենտրոն պատկերացումներն ավելի մոտ էին Արեգակնային համակարգի մասին հայեցակարգին: Միևնույն ժամանակ, Արիստոտելի և Պտղոմեոսի ուսմունքի մեջ առկա էր Երկրի և տիեզերական այլ մարմինների գնդաձևության տեսությունը, որը գիտության պատմության մեջ գնահատվել է որպես տիեզերագիտության զարգացմանը նպաստած տեսական գործոն<sup>6)</sup>: Այդ տեսության շրջանակներում քննարկվում էին հետևյալ դրույթները՝ տարրերի տեսությունը, նյութական աշխարհի ամբողջականությունը, գնդաձև մարմինների բնույթը և շարժումը, Երկրի գնդաձևությունը և դրա դիրքը Տիեզերքում, հակոտնյանների գաղափարը և այլն:

---

Е.Б. Гусев, В.Г. Сурдин, Расширяя границы Вселенной: история астрономии в задачах, М., 2003, с. 93.

<sup>4</sup> Է.Վ. Խանզարյան, Վ.Հ. Մրտչյան, Է.Ս. Պարսամյան, Մեծամոր, Երևան, 1973:

<sup>5</sup> Բնության ճանաչողության սկզբնավիրման և առաջնորդացի նախնական փուլերից էր երկնային մարմինների ու երևույթների ընկալումը գեղարվեստական փոխակերպությամբ (տե՛ս Է. Դամիելյան, Է. Բարսեղյան, Տիեզերաբանական պատկերացումների գեղարվեստական փոխակերպությունը հին Հայաստանի նյութական մշակույթում. - Հայ արվեստի 4-րդ միջազգային սիմպոզիում, Զեկուցումների թեզիսներ, Երևան, 1985, էջ 7-8; Է. Դամիելյան, Բնափիլիսոփայության առասպելաբանական ակունքները. - Գիտություն և տեխնիկա, Երևան, 1987, N 5, էջ 5-7):

<sup>6</sup> Է. Դամիելյան, Армянские космографические труды VII века о строении Вселенной, Ереван, 1978, с. 33.

Հայ իրականության մեջ՝ Երկրի և տիեզերական մյուս մարմինների գնդաձևության գաղափարն արտահայտող տիեզերագիտական հայացքներն առավել ցայտուն դրսերվել են V դարում Սովուս Խորենացու և Դավիթ Անհաղթի ու VII դարում Անանիա Շիրակացու աշխատություններում:

Բնության ուսումնասիրության գործում առաջնային էր տարրերի տեսությունը: Արիստոտելը գտնում էր, որ նյութական աշխարհի հիմքում ընկած են չորս տարրեր՝ կրակ, օդ, ջուր, հող:<sup>7</sup> Անդրադառնալով իմաստափրության սահմանմանն ըստ Արիստոտելի, Դավիթ Անհաղթը նույնպես չորս տարրերն է համարել նյութական աշխարհի հիմքում, որի պատճառը գիտի բնափիլիսոփան («Ի չորից տարեցդ բաղկացեալ գոյ մարմին, գորոյ զարդառուն բնական իմաստասէրն զիտէ»):<sup>8</sup> Արիստոտելը գտնում էր, որ տարրերի հակառակ հատկությունների առկայությամբ է պայմանավորված անընդիատ առաջացումը և ոչնչացումը տիեզերքում:<sup>9</sup>

Անանիա Շիրակացին բնափիլիսոփայական տեսանկյունից նոր և կարևոր դրույթներ արձարձելով՝ հիմնվում էր Հայկական լեռնաշխարհի բնապատմական միջավայրում ձևավորված տիեզերաբանական պատկերացումների վրա, որոնք համադրելով անտիկ գիտության դրույթներին, ստեղծագործաբար մշակում և խորացնում էր<sup>10</sup>: Շիրակացին հստակ ձևակերպել է նյութական աշխարհի գոյության գաղափարը՝ պայմանավորված հակադրությունների միասնությամբ ու պայքարով՝ սահմանելով. «Լինելութիւնն իցէ սկիզբն ապականութեան և ապականութիւնն

<sup>7</sup> *Sku` Aristotle. On the Heavens (De coelo), with an English transl. by W.K. Guthrie, L.-Cambr. Mass, 1939, III, 3.*

<sup>8</sup> Դավիթ Անհաղթ, Սահմանք իմաստափրութեան: Համահավաք բննական բնագիրը, թարգմանությունը գրաքարից ուսերեն, առաջաբանը և ծանոթագրությունները Ս.Ս. Արևշատյանի, Երևան, 1960, էջ 52: Հայոց կաթողիկոս Գյուտ Ա Արահեղացին (461-478 թթ.) նյութական աշխարհի հիմքում նույնպես դիտարկում էր չորս տարրերը. «Բանս չորեքնիւթեայս աշխարհս կարէ ասել: Եւ այս վիճակ ոչ ամենեցուն է, այլ որ քաջն դեգերեցան յուսումնասիրութեանն ի թուականին, յերկրաշափականին, յաստեղաբաշխականին...» (Սովուս Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Երևան, 1983, էջ 23):

<sup>9</sup> *De coelo*, III, 2. Է.Լ. Դանիելյան, Արիստոտելի տարրերի տեսությունը և Անանիա Շիրակացու «Տիեզերագիտությունը». – ՊԲՀ, 1971, N 2, էջ 217-222:

<sup>10</sup> Կ.Ս. Տեր-Դավթյանը և Ս.Ս. Արևշատյանը նշել են, որ Անանիա Շիրակացին հիմնականում զբաղվում էր բնափիլիսոփայական հարցերով և որա շնորհիվ հայ փիլիսոփայական մտքի պատմության մեջ մտել է, որպէս բնագիտական ուղղության հիմնադիր (Անանիա Շիրակաց, Կոսմография. Перевод с древнеармянского, предисловие и комментарии К.С. Тер-Давтян и С.С. Аревшатян, Ереван, 1962, с. 10):

դարձեալ անդրէն իցէ սկիզբն է լինելութեան, զի յայսմ անվնաս հակառակութենէ՝ աշխարհ առցէ գտեւողութիւն»<sup>11</sup>:

Անտիկ և վաղ միջնադարյան գիտության հիմնական նվաճումներից էր տիեզերական մարմինների գնդաձևության գաղափարը: Հստ Դավիթ Անհաղթի, երկնային մարմինները և դրանց շարժումը ենթակա են աստղաբաշխության ուսումնասիրությանը<sup>12</sup>: Հիշատակելով գնդաձև մարմինների մասին գիտությունը, նա նկատի է ունեցել այն բնագավառը, որին մանրամասն անդրադարձել է Արքստուտելը. «Մարմինը, որը պտտվում է շրջանագծում, պետք է գնդաձև լինի»: Ուստի, «ամբողջ երկինքը և առանձին աստղերը գնդաձև են, քանի որ գունդն ամենից օգտակար ձևն է տեղում կատարվող շարժման համար»<sup>13</sup>:

Հետաքրքիր են Դավիթ Անհաղթի հաղորդած տեղեկությունները Արեգակի, Երկրի և Լուսի համեմատական չափերի մասին: Նա գրել է. «Սիաւասիկ արեգակն բազմապատիկ մեծ գոլով քան զերկիր՝ թզաշափաքար տեսանի<sup>14</sup>... արեգակն կարի յոյժ մեծ է քան զերկիր, եւ երկիրը քան զլուսին, թէպէտ և անկարծելի է, այլ սակայն ճշմարիտ գոյ»<sup>15</sup>:

<sup>11</sup> Անանիայի Շիրակունույ Մնացորդը քանից, ի լոյս ած Ք.Պատկանեան, Ս.Դետերուրգ, 1877, էջ 44: Այս սահմանումը գտնվում է նորթի ու եներգիայի պահպանության օրենքի (գիտականորեն ապացուցվել է XVIII-XX դդ.) ակունքներում (հմմտ. Ա.Գ. Աճրամյան, Գ.Բ. Պետրոսյան, Անանիա Ռիրական, Երևան, 1970, ս. 75):

<sup>12</sup> «Աստեղաբաշխութիւն ենթակայ ունի զերկնային մարմինն, իսկ կատարումն... գիտել զշարժումն նորա... Աստեղաբաշխութեան ենթակայ գոյ երկնային մարմինն, իսկ իմաստափրութեան նայն ինքն աստեղաբաշխութիւն է ենթակայ... Իսկ զասետղաբաշխականն՝ քաղրեացիք [գտին], վասն անսամպ և հանապազախնջ գոլով օրոցն՝ դիւրա կարացին ըմրոնել զշարժմունս աստեղաց... Իսկ աստեղաբաշխականին յարակայանայ զգնդականն, և զանազանին ի միմեանց, վասն զի աստեղաբաշխականն գիտութեամբ երկնային մարմնոյն շարժմամբ բաղկանայ, իսկ զնդականն՝ ամենայն զնդաձև մարմնով և նոցին պատահմամբ, քանզի ասէ զվէսպէս հետամունա զնդաձևականցն» (Դավիթ Անհաղթ, Սահմանը իմաստափրութեան, էջ 38, 94, 132, 134): Հմմտ. Գյուտ կաթողիկոսի տիեզերականության բովանդակության պատառիկը («Եւ ահ անկայ ինձ մեծ և ահազին և քարձրագոյն քան զերկինս երկնից և խորագոյնս քան զներքին կիսազունդն...», Սովուս Կաղանկատուացի, էջ 18), որը նույնապես Երկրի զնդաձևության գաղափարի վկայություն է (տե՛ս Է.Լ. Դանիելյան, Վդարի տիեզերականության մի պատառիկ. - «Լրաբեր» հաս. գիտ., Երևան, 1975, Ն 12, էջ 100-102):

<sup>13</sup> De coelo, II, 1, 4, 8, 11:

<sup>14</sup> Դավիթ Անհաղթ, Վերլուծութիւն «Ներածութեանն» Պորիիւրի, համահաւաք քննական բնագիրը, թարգմ. գրաբարից ոռու., առաջարանն ու ծան. Ս.Ս. Արևշատյանի, Երևան, 1976, էջ 38:

<sup>15</sup> Դավիթ Անհաղթ, Մեկնութիւն ի վերլուծականն Արխստուտիլի, համահաւաք քննական բնագիրը, թարգմ. գրաբարից ոռու., առաջարանն ու ծան. Ս.Ս. Արևշատյանի, Երևան,

Արիստոտելը, հիմնավորելով տիեզերական մարմինների գնդաձևության գաղափարը և, ենելով երկրակենտրոն ուսմունքից, Տիեզերքում Երկրի գրաված դիրքի մասին նշել է. «Երկիրը և երկինքը միևնույն կենտրոն ունեն, որովհետև ծանր մարմինները նույնպես շարժվում են դեպի Երկրի կենտրոնը»<sup>16</sup>:

Անանիա Շիրակացին հետևողականորեն անդրադառնալով Երկրի և տիեզերական մարմինների գնդաձևության գաղափարին<sup>17</sup>, գրել է, որ Երկիրը չորս կողմից գտնվում է երկնքի մեջտեղում, որն իր շարժման արագությամբ թռվլ չի տալիս Երկրին ներքն շարժվել<sup>18</sup>:

Երկրի գնդաձևության մասին պատկերացման ձևավորմանը որոշակիորեն նպաստել է Համաշխարհային ձվի մասին հնագույն առասպելի կառուցվածքային մեկնությունը: Որոշ հին և վաղմիջնադարյան մտածողներ տիեզերքի երկրակենտրոն կառուցվածքը և երկրի գնդաձևությունը համեմատում էին ձվի հետ: Այսպիսի պատկերացումը համահունչ էր հնդեվրոպական, եգիպտական, չինական առասպելաբանությունների՝ Համաշխարհային ձվի մասին տիեզերածնական առասպելին<sup>19</sup>: Հին հունական տիեզերաբանական պատկերացումների և աստղագիտության ակունքներն ուսումնասիրելիս, այդ առասպելը դիտարկվել է օրփեականության տեսանկյունից, որի ազդեցությունն են կրել Անարքիմանդրոսը (մ.թ.ա. 610 - 547 թթ.), Պյութագորասը (մ.թ.ա. 569 - 475 թթ.), Պարմենիդեսը (մ.թ.ա. 520 -

1967, էջ 82: Է.Լ. Դանիելյան, Կոսմографические воззрения Давида Непобедимого. - "Философия Давида Непобедимого", М., 1984, с. 78-83.

<sup>16</sup> De coelo, II, 14.

<sup>17</sup> Անանիա Շիրակացի, Տիեզերագիտութիւն և տոմար, աշխատ. Աշ. Աբրահամյանի, Երևան, 1940, էջ 9-14: E.L. Danielyan, Cosmological Ideas in Antique and Early Medieval Philosophical Views. - "Acta Classica" Univer. Scient. Debreceni, t. XXV, 1989, pp. 43-46.

<sup>18</sup> Հմմտ. Էմպերոկլեսի կարծիքը, որը բերում է Արիստոտելը. «Մյուսները համաձայն են Էմպերոկլեսի» (մ.թ.ա. 492-432 թթ.) հետ, որ երկնքի արագ շարժումն է..., որը խանգարում է Երկրի շարժմանը» (De coelo, II, 13): Տիեզերքի կենտրոնում հողմի շնորհիվ Երկրի գրաված դիրքի մասին տեսակետը մինչև Նյուտոնի տեսության ի հայտ գալը տարերայնորեն գոյություն ուներ նաև միջնադարյան գիտության մեջ և կրել է «հողմերի տեսություն» անվանումը (Բ. Թումանյան, Երկրակենտրոն և արևակենտրոն սիստեմները Հայաստանում, Երևան, 1973, էջ 63):

<sup>19</sup> В.Н. Топоров, Яйцо мировое. – см. Мифы народов мира, М., 1992 , т. 2, с. 681. Իրենց հետազոտություններում Ա.Ն. Աֆանասևը, Վ.Վ. Շկլովսին, Վ.Ն. Տոպորովը, Վ.Վ. Խվանովը և ուրիշներ աշխարհի առասպելաբանաստեղծական պատկերը վերականգնելիս, օգտագործում են Համաշխարհային ծառի և Համաշխարհային ձվի կերպարները, որոնք առկա են տարբեր առասպելաբանություններում, որպես վերին և ստորին աշխարհները միավորող ուղղահայց խորհրդանշիչներ:

շուրջ մ.թ.ա. 450 թթ.), Էմպերոկլեսը, Պլատոնը (մ.թ.ա. 428 – 347 թթ.) և Արիստոտելը<sup>20</sup>: Առասպելաբանաստեղծական խորհրդանիշ՝ Համաշխարհային ձվի կերպարը մի կողմից սկզբնադրյուր է եղել որոշ կրոնա-առասպելաբանական և բանահյուսական պատկերացումների համար, իսկ մյուս կողմից՝ կառուցվածքային մեկնաբանմամբ, իր զարգացումն է ստացել տիեզերաբանության բնագավառում: Բնափիլիստիայության պատմության մեջ Համաշխարհային ձվի առասպեկի կառուցվածքային՝ գիտական մեկնաբանությունը իր արտացոլումն է գտել Անանիա Շիրակացու երկում<sup>21</sup>: Երկրի գնդաձևության գաղափարն ապացուցելիս Շիրակացին երկրի ձեր և զբաղեցրած դիրքը տիեզերքում համեմատել է ձվի կառուցվածքի հետ. «Եւ եթէ ոք կամիցի օրինակ տեսական զարտաքնոցն լսել՝ իբր թէ զկայս երկրի նմանեցուցեալ ինձ ի դեպ թուի ասացեալն՝ իբրև ձու. որպէս նորա դեղինն ի միջին գնդաձև կառուցեալ կայ, և օդ շուրջ զնովաւ, և երկին պատ առեալ զամենայնիւ»<sup>22</sup>:

Եղանակի կանխագուշակության կապակցությամբ կարևոր է Անանիա Շիրակացու դիտարկումը՝ Խեցգետնի համաստեղության Մսուր կոչված տիրույթում գտնվող աստղերի նկարագրությունում. «Տեղի է որ կոչչ Մսուր եւս այս ժողով իմն է, որ երեւի զամպ նման, եւ լինի առ պատենիւթ Խեցգետոյն եւ. Բ աստեղը առ նովաւ՝ մի ի հարաւոյ եւ մի յարեւմտից, որ կոչեն Եշս, եւ յորժամ պարզոյ ի վեր հայիս՝ յանկարծ Մսուրն չերեւի եւ նուազ աստեղին՝ որ Էշքն կոչին՝ երեւին զյուզմունս ամպոց նշանակէ: Յորժամ Մսուրն թուի երեւի եւ աստեղքն իրերաց նման՝ անձրեւս նշանակէ»<sup>23</sup>: Հետաքրքիր է համեմատությունը Պլինիոս Ավագի «Բնական պատմություն» երկի համապատասխան հատվածի հետ. «Խեցգետնի (Cancer) համաստեղությունում երկու փոքր աստղեր են գտնվում, որոնք կոչվում են Իշուկներ (Aselli): Դրանց միջև փոքր ամպ կա, որը կոչվում է Մսուր (Praesepio): Երբ լավ եղանակին այդ ամպը չի երևում, հետևում է ուժեղ փոթորիկ, սակայն, եթե այդ երկու աստղերից հյուսիսայինը ծածկված լինի

<sup>20</sup> И.Н. Веселовский, Астрономия орфиков. – Вопросы истории естествознания и техники, N 2, 1982, с. 120-124. С.В., Житомирский, Античная астрономия и орфизм, М., 2001, с. 6-160.

<sup>21</sup> Э.Л. Даниелян, От древней мифологии к натурфилософии раннесредневековой Армении. – Тезисы докладов VI Закавказской научной конференции историков науки, Тбилиси, 1987, с. 32-33.

<sup>22</sup> Անանիա Շիրակացի, Տիեզերագիտութիւն և տումար, էջ 10:

<sup>23</sup> Տե՛ս Գ. Տեր-Մկրտչյան, Հայագիտական ուսումնասիրություններ: Գիրք Ա, Երևան, 1979, էջ 245-246:

մառախուղով, ապա հարավային քամի կլինի, իսկ եթե հարավայինը ծածկված լինի մառախուղով, ապա քամին կլինի հյուսիսից»<sup>24</sup>: Պլինիոսը հավանաբար ներկայացրել է ավելի ցամաքային կլիմա ունեցող վայրերում կատարված դիտարկումների արդյունքները: Այստեղ նրա աղյուրը կարող էին լինել բարելոնացիների կատարած դիտարկումները Միջազգետքում:

Նավարկությունների ժամանակ աստղային երկնքով կողմնորոշվելու մասին Անանիա Շիրակացին գրել է. «Որպէս Դիոդորոս Սամեացի (Սամոսացի - Է.Դ.) պատմէ զշնդկաց՝ թէ Կիմերիկոնն նաև լույսով՝ յերկիրն ունելով զՏաւոռն Միջերկնեայ եւ զՊղայիդա ընդ մէջ Կիսեայ»<sup>25</sup>:

Անանիա Շիրակացին տեղեկություններ է հաղորդում Լուսնի ազդեցությամբ մակրնքացությունների ու տեղատփությունների, ինչպէս նաև «աստղային երկնքի հետ կապված» երկրաշրժերի վերաբերյալ<sup>26</sup>: Երկրաշրժերի պատճառի մասին հաղորդման սկզբնաղյուրը կարող էր լինել Պլինիոսի երկը<sup>27</sup>, որտեղ բերվում է բարելոնացիների տեսությունը, ըստ որի Երկրի մակերևույթի վրա ձեղքվածքներն առաջանում են «աստղային ուժից», սակայն միայն այն երեք «աստղերի» (Սատուրն՝ Երևակ, Յուպիտեր՝ Լուսնիքազ և Մարս՝ Հրատ), որոնց նրանք ամպրոպների պատճառ էին համարում<sup>28</sup>: Հնում մոլորակները (Հրատ, Լուսնիքազ, Երևակ, Փայլածու՝ Մերկուրի, Արուայակ՝ Վեներա) երբեմն «աստղեր» էին կոչվում:

Հին և վաղմիջնադարյան Հայաստանի աշխարհագրության և քարտեզագրության կարևորագույն սկզբնաղյուր է «Աշխարհացոյց»-ը, որը Մովսես Խորենացու (V դ.) և նրա գործը շարունակող Անանիա Շիրակացու

<sup>24</sup> Pliny, Natural History, in ten volumes, with an English transl. by N. Rackham, London, 1950, vol. V, XVIII, LXXX. 353.

<sup>25</sup> Ա. Արքահամյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1944, էջ 307:

<sup>26</sup> Անանիա Շիրակացի, Տիեզերագիտութիւն և տոմար, էջ 14, 43:

<sup>27</sup> Է.Լ. Դանիելյան, Պլինիոս Ավագը և Անանիա Շիրակացին. - «Հելլենիստական մշակույթի պրոբլեմներ» զիտաժողովի գեկուցման թեզիսներ, Երևան, 1980, էջ 4-5:

<sup>28</sup> Pliny, Natural History, London, 1967, Vol. I, II, LXXXI, 191; XVIII, 82. XX դարի երկրորդ կեսին պարզվեց, որ Արեգակնային համակարգի կենտրոնական աստղի՝ Արեգակի վրա պարբերաբար տեղի ունեցող առավել ուժեղ բռնկումները երկրաշրժեր են առաջացնում (Г.А. Соболев, И.П. Шестопалов, Е.П. Харин, Геоэффективные солнечные вспышки и сейсмическая активность Земли. - Физика Земли. 1998, № 7. с. 85-95; ան՝ նաև С.В. Белов, И.П. Шестопалов, Е.П. Харин, О взаимосвязях эндогенной активности Земли с солнечной и геомагнитной активностью, - Доклады Академии Наук, 2009, том 428, № 1, с. 1-4 և այլն):

(VII դ.) հետազոտական աշխատանքի արգասիքն է<sup>29</sup>: «Աշխարհացոյց»-ի հիմնական մասը նվիրված է Հայաստանին<sup>30</sup>: «Աշխարհացոյց»-ի տվյալները

<sup>29</sup> «Աշխարհացոյց»-ի ձեռագրերի զգալի մասն ավանդված է Սովուս Խորենացու անունով (տե՛ս Ա.Վ. Մուշեղյան, Սովուս Խորենացու դարը, Երևան, 2007, էջ 110): «Աշխարհացոյց»-ի հնագույն ընդորինակությունները պահպանվել են, թե՛ Սովուս Խորենացու («Աշխարհացոյց»-ի բնագիր տեքստի և թարգմանությունների հրատարակությունների մատենագրությունը տես՝ Դ. Հովհաննիսյան, Սովուս Խորենացի: Սատենագրություն, Երևան, 2013, էջ 79-84) և թե՛ Անանիա Շիրակացու երկերը պարունակող ձեռագիր ժողովածուներում (տե՛ս U.S. Երեմյան. Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963, էջ 19, Ա.Գ. Աբրահամյան, «Աշխարհացոյց»-ի հեղինակի պրոբլեմը, - ՊԲՀ, 1969, № 3, էջ 227), ուստի ուսումնասիրողների մի մասը (Վիստոն Էլբայրներ, Մ. Չամչյան, Դ. Խնձրյան, Ա. Սուքրյան, Բ. Հարությունյան և ուրիշներ) «Աշխարհացոյց»-ի հեղինակ է համարել Սովուս Խորենացուն, իսկ մյուս մասը (Ք. Պատկանյան, Յ. Մարկվարտ, Թ. Հակոբյան, Ա. Աբրահամյան, Ռ. Հյուսն և ուրիշներ)՝ Անանիա Շիրակացուն: Հետազոտությունները ցույց են տալիս, որ Սովուս Խորենացին V դ. ստեղծել է «Աշխարհացոյց»-ը, որը Անանիա Շիրակացին VII դ. խմբագրել և շարունակել է (տե՛ս Է.Լ. Դանիելյան, Հայաստանի քաղաքական պատմությունը և Հայ Առաքելական Եկեղեցին (VI-VII դդ.), 2000, էջ 37, Ա.Վ. Մուշեղյան, նշվ. աշխ., էջ 111, 124):

<sup>30</sup> «Աշխարհացոյց»-ում լայնորեն օգտագործված են Մեծ Հայքի թագավորության ժամանակներից հայտնի արքունի դիվանի արխիվային փաստաթղթերը (հիմնականում աշխարհագրեր) և այլ նյութեր (Ս. Երեմյան, նշվ. աշխ., էջ 21-23), իսկ անտիկ աշխարհագրական և քարտեզագրական կարևոր սկզբնաղյուրներից է Պտղոմեոսի «Աշխարհագրության ձեռնարկ»-ը (Claudii Ptolemaei Geographia, ed. Carolus Mullerus, voluminus primi, pars secunda, Parisiis, 1901; Claudii Ptolemaei Geographiae, ed. J. Fischer, I-IV, Leyden, 1932, Է.Լ. Դանիելյան, Պտղոմեոսի ցամաքային տեսության արտացոլումը «Աշխարհացոյց»-ում. - ՊԲՀ, Երևան, 1973, N 2, էջ 179-182): Հայ Արշակունիների թագավորության անկումից (428 թ.) հետո հայ քաղաքական մտքի կենտրոնում էր՝ Մեծ Հայքի արևելյան և արևմտյան մասերի վերամիավորմամբ, թագավորության վերականգնման խնդիրը: Այդ նպատակով Հայոց պետականության պաշտպանության զաղափարակիր ազգային-ազատագրական պայքարի դեկավարները և գիտա-կրթական ոլորտի գործիչները կարևոր էին համարում Հայաստանի ամբողջական տարածքի պատմագիտական և քարտեզագրական հիմքերով ներկայացնելը, որն իրականացրին Սովուս Խորենացին՝ հայ ժողովրդի ազատագրական պայքարի (V դ. երկրորդ կես) և Անանիա Շիրակացին՝ Մեծ Հայքի միասնական տարածքի և Հայոց վետության վերականգնման ժամանակներում (VII դ. երկրորդ կես): «Աշխարհացոյց»-ում ցույց տալով Հայաստանի ամբողջական տարածքը՝ Մեծ Հայքի 15 աշխարհները (նահանգներ) և Փոքր Հայքը: «Աշխարհացոյց»-ը նաև այլ երկրներին վերաբերող աշխարհագրական և քարտեզագրական նյութեր է պարունակում, որը վկայում է, որ այն աշխարհագրական երկ լինելով, քարտեզների ժողովածու ատլաս է (Ս. Երեմյան, նշվ. աշխ., էջ 16-19):

հնարավորություն են ընձեռում Հայաստանի, ինչպես նաև այլ երկրների քարտեզների ու «Աշխարհի քարտեզի»<sup>31</sup> հետ մեկտեղ վերականգնել նաև գլոբուսը՝ քարտեզագրական մեթոդով<sup>32</sup>:

Եզնիկ Կողբացին (V դ.) և Անանիա Շիրակացին քննադատել են քաղդեական աստղագուշակությունը<sup>33</sup> և ցույց տվել աստղային երկնքի ուսումնասիրության կարևորությունը ճանապարհորդությունների և եղանակի կանխագուշակման համար: Աստղագիտության պատմության մեջ կարևորվել են Ծիր Կաթնի դիտարկումները Հայաստանում: Կարևոր են Շիրակացու հաղորդումները Կենդանակերպի<sup>34</sup>, Ծիր Կաթնի և Խեցգետնի համաստեղության մասին:

Հազարամյակների ընթացքում Ծիր Կաթնի խնդիրը գտնվում է աստղագետների ուշադրության կենտրոնում: Անանիա Շիրակացին գրել է, որ «բարի փիլիսոփաները» խոսել են այն մասին, թե Ծիր Կաթինը բազում աստղերի խիստ և աղոտ կրուտակում է. «Զկաթին ծիր... ոմանք ասացին՝ թէ ճանապարհ է դա հին արեգակնան<sup>35</sup> հետք... փիլիսոփայքն բարիք ասացին զդմանէ թէ խիստ աստեղը են բազումք, նուազք և յոյժ ընդ աղօտ երևմանէն միաւոր լոյսն տեսանի»<sup>36</sup>: Այստեղ արտացոլվել է Անաքսագորասի (մ.թ.ա.

<sup>31</sup> «Աշխարհի քարտեզը» ներկայացնում է Հին աշխարհին հայտնի «քնակեցված երկրի» («օյլումնե»՝ Արևելյան կիսագնդի հյուսիսային մասի «քարեխառն գրտում») քարտեզագրական պատկերը (Ա.Բ. Դիտմար, Ռубեկի օյկումեն, Մ., 1973, ս. 5-8, 102):

<sup>8</sup> Բացակայում է միայն Զուկը. գուցե այն առանձնացված չի եղել խորը հնադարում որպես ձուկ, այսինքն ձկանը նմանեցումը հետագայի արդյունք է: Զուկն համաստեղության արտահայտություն կարող էին լինել հայոց «մենաշնորհ» վիշապաքարերը. Սա առավել հավաստի է դարնում O. Խնկիկյանի ուսումնասիրությամբ, որտեղ նա բոլոր վիշապ-կոթողներին վերագրում է Կենդանակերպի համատեղություններ կերպավորելու գործառույթ. տե՛ս Խնկիկյան O., Ցլագլուխ կոթողներ Վարդենիսի լեռներից և «վիշապաքարերի» մեկնության հարցի շուրջ.- ԼՀԳ, 1997, №3, էջ 154, 158:


տիեզերագիտական, երկրաբանական, կենսաբանական, պատմական ու մշակութային պարբերաշրջաններ: Սակայն, յուրաքանչյուր տոմարի հիմնատար՝ առաջնային միավոր կարող էն ծառայել միայն աստղագիտական երեք ժամանակամիջոց՝ միջին արեգակնային օրը, լրտեսամիսը (29,53 օր) և արևադարձային տարին (365,24 օր), տարբեր հարակցումներով: Ցավոր, երկնային մեխանիկայի հիմքերով պայմանավորված այս միավորներն իրար բազմապատիկ չեն, որից էլ բխում է օրացույցի կառուցման բարդությունը և հազարամյակների ընթացքում ստեղծված օրացույցների բազմազանությունը:

**1. Լրտեսային դասի օրացույցում (ԼՕ)** առաջնային միավորը լրտեսամիսն է, բաղկացած 29 կամ 30 օրից, ամսվա սկիզբը նորալուսինն է: 12 լրտեսամիսը կոչում էն «տարի», որը 11 օրով կարճ է իրական՝ արևադարձային տարուց, ուստի տարեսկիզբը կամ տոները տարեցտարի շեղվում են ըստ տարեղանակների: Սա է լրտեսայինի հիմնական թերությունը: Այս դասի օրացույցները տարածված էին բրիտանական կղզիներից մինչև Չինաստան, Հա. Եվրոպայից՝ Աֆրիկա: ԼՕ ունեցել էն շումերները, հայերը, բաբելացիք, չինացիները, հին հոյներն ու հռոմեացիք, հրեաները, արաբները, հնդիկները, վրացիները, աֆղանները, և, ըստ լեզվական տվյալների՝ կելտերը, գերմանները, պլավնները, խեթերը, էտրուսկները և այլք: Հետազայում, ժողովուրդների մեծ տեղաշարժերի հետևանքով ծագում էն դրա բազմաթիվ տարբերակները, որոնցում արդեն զգալի էն փոփոխումները, բարեկալումներն ու տեղական-ազգային առանձնահատկությունները: Սրանք հանգեցրին ԼՕ-ի զարգացման հաջորդ փուլերի՝ լրտեսարեգակնայինի և լրտեսարեգակնամոլորակայինի ծննդին: ԼՕ-ի հիմքով է խալամական տոմարը. այժմ մոտ 25 պաշտոնապես մահմեդական երկրներում և այլուր, ավելի քան մեկուկես միջիարդ մահմեդականներ ԼՕ են կիրառում:

**2. Լրտեսարեգակնային դասի օրացույցում (ԼԱՕ)** առաջնային միավորները երկուսն են՝ լրտեսամիսը և արևադարձային տարին, պահպանված է ԼՕ-ի առավելությունը՝ ամսաթիվը նշում է Լրտեսի տեսքը՝ փուլը, կա նաև շաբաթ (քառորդ) հասկացությունը: Ունի մի մեծ թերություն. տարբեր է տարվա տևտղությունը, օրինակ՝ հրեականում՝ վեց տեսակ տարի կա, հունականում, չինականում և բաբելականում՝ երկու, ինչն ակնհայտորեն, հարմար չէ տնտեսական առումով: Շումերում՝ մ.թ.ա. XXIV դ. Նիպուրում՝ XXI դ., Բաբելոնում՝ XVIII դ., Ասորեստանում՝ XI դ. անցան ԼԱՕ-ի, բայց այն

դեռևս կատարյալ համակարգ չեր<sup>9</sup>: Առավել զարգացած էր մ.թ.ա. XVII դ. հյուսիսից Եգիպտոս արշաված հիքսոսների ԼԱՕ-ը, քանզի ուներ կանոնակարգված շտկումների համակարգ: Հետագայում, այսօրինակ ինքնաշխատ օրացույց ներդրվեց Զինաստանում՝ մ.թ.ա. VI դ., Հին Հունաստանում՝ VI-V դդ., Հրեաստանում՝ IV-III դդ. և Արաբիայում՝ մ.թ. VII դ.: ԼԱՕ-ը Խարայելում պաշտոնական տոմար է, մասամբ է՝ Իրանում, բնակչության մի մասի համար:

Հայերս նույնականացնելու համար կիրառել ենք լուսնային հիմքով այս երկու օրացույցները (ԼՕ և ԼԱՕ), ըստհուպ մինչև մ.թ.ա. X դ.: Դրա նյութեղեն վկայություններ են բազմաթիվ ժայռապատկերները՝ 14, 27 և 29 գծիկներով (նկ. 1-2), ծիսական խեցանոթների (III հազ.), գրտի-օրացույցների (նկ. 3-4) և Վանի թագավորության արքայական վահանների (նկ. 5), Զավախսքի Բարձրեթ գյուղում գտնված բրոնզե սկավառակի (նկ. 6) նախշազարդման օրինաչափությունները: Դիցարանական վկայություններ են հայաստական աստվածների թիվը՝ 14 (կես լուսնամիս), Մեծամորի պաշտամունքային յոթ այուները և յոթ դիտահարթակները՝ Արևի, Լուսնի և անգեն աշքով տեսանելի 5 մոլորակների դիտման համար:



Ժայռապատկերներ՝ 14 և 29 օրանոց լուսնային ամիսներ

<sup>9</sup> Աստղաբաշխ քրմերի ցուցումով արքան մերթընդմերթ հրամայում էր լրացուցիչ՝ 13-րդ ամիս մտցնել, որպեսզի գյուղատնտեսական աշխատանքների և կրոնածիսական արարողությունների ժամկետները համեմատաբար անշարժանան՝ տեղի ունենան միևնույն ամսին:



3



4

*Լճաշենի և Մեծամորի գոտի-օրացույցները*



5


6

*Վանի բազավորության արքաների վահան-օրացույցներ:*


*Բարձրերի բրոնզէ սկավառակը*

**3. Արեգակնային դասի օրացույցում (ԱՕ)** առաջնային միավորներ են օրը և արեադարձային տարին: Սրանք շատ կենսական են մարդու կյանքում, և լուսնային ամսվա համեմատ՝ ունեն առավել վճռորոշ կենսաբանական ազդեցություն: Ուստի, արեգակնային տոմարն առավել նպատակահարմար ու բնական է մարդու և հասարակության համար: Ի տրիտուր անցյալի և ավանդույթի, պահպանված է ամիսը, որը սակայն, այլևս կապ չունի լուսնի և շաբաթվա հետ՝ ոչ տևողությամբ, ոչ ել լուսնափուլին համապատասխանությամբ: Փոխարենն ունի տարեղանակ, որը դարձյալ արևապարբերական-կենսաբանական կարևոր հիմք է: Այստեղ ևս դժվարություններ կան. անհավասար տևողության ամիսներ, նահանջ և հասարակ տարի, 100 և 400 տարին մեկ՝ շտկում մեկ օրով, բայց միայն այսքանը: Վկա մեր առօրյան: Հնում ԱՕ ստեղծել են եզիպտացիներն ու հայերը, ունեցել ևս չորս ազգ՝ մարերը, պարսիկները, վրացիները, աղվանները, ժառանգել՝ դպտիները:

Հայոց երկրի ժայռապատկերներում շատ են հանդիպում 12, 30, 31 փոսիկներով կազմված ամսական և տարեկան օրացույցները (նկ. 7-10):



Ժայռապատկերներ՝ 12 ամիսներով տարի



Ժայռապատկեր՝ 31 օրանոց ամիս ժայռապատկեր՝ տարեկան օրացույց

**4. Աստղային դասի օրացույցը** գերձգրիտ է, թեպետ պահանջում է դիտողական բարդ հարմարանքներ և հմտություն: Չինաստանում Մեծ Արշ (Սայլ) և Զրինու (Թոշուն Աստղեր) համաստեղությունների դիրքերով գուշակում էին Խուանխմելի հորդացումը և կարգավորում զյուղատնտեսական աշխատանքների ժամկետները:

Հայաստանում այս դասի օրացույցի վառ դրսևորումներ կան:

**Ա)** Մոտ 4900 տարի առաջ Հայաստանի բնիկներն են աստղազարդ երկնքում ձևավորել ու անվանակոչել **համաստեղությունները**:

**Բ)** Աստղային օրացույցի գոյության ակնառու փաստեր են բացահայտվել Հայաստանի հինգ երկնադիտարաններում:

- Վարդենիսի լեռների **Սևսարի** երկնադիտարանի գլխավոր քարաբեկորի պատկերների վերլուծությունն ականավոր հնագետ Հարություն Մարտիրոսյանին հանգեցրել է եղրակացության, որ դա օրացույց է՝ իր բնորոշ թվերով՝ 4, 7, 14, 28, 30-31, 98: Զանազան համադրություններով նա ստացել է տարվա օրերի 364 թիվը<sup>10</sup>:
- Պաշտամունքային ու մետաղաձուլական խոշոր կենտրոն **Մեծամորի**

<sup>10</sup> Մարտիրոսյան Հ., Գիտությունն սկսվում է նախնադարում, Եր., 1978, էջ 192-196,  
Նույնը, Գեղամա լեռների ժայռապատկերները, Եր., 1981, էջ 49-52:

Երկնադիտարանում մ.թ.ա. III-II հազ. հետևել են հյուսիսային երկնքի պայծառագույն՝ Շնկան աստղի ծագմանը<sup>11</sup> (Սոտիս/Սիրիոսն է, որը պաշտվել ու դիտվել է նաև Եգիպտոսում):

- Սիսիանի Զորացքար հնավայրում պահպանվել են բազմաթիվ մենաքարեր, որոնց վերին մասում բացված անցքերից հետևել են երկնային լուսատուների դիրքին ու ընթացքին<sup>12</sup>: Միջօրեին դիտել են Արկտուրի անցումը զենիթով<sup>13</sup> (որը դիտվել է նաև Հին Հունաստանում<sup>14</sup> և Հռոմում):
- Գեղամա լեռների Աստղաբերդ գագաթի ստորոտի ժայռապատկերների մեծ մասն ունեն աստղագիտական ու պաշտամունքային իմաստակրություն. շատ են Արևի, Երկրագնդի ու աստղախմբերի պատկերները, օրացույցները, արևածագի ու արևամուտի կետերի դիրքերը և երկրի կողմերը նշող պատկերները: Կա Հայկ և Ցուլ համաստեղությունները մեկտեղ ցուցադրող երկու իրար մոտ գտնվող ժայռապատկեր, նաև՝ աստղագիտական գրանցումների եզակի մի աղյուսակ:
- Ուրիշա քաղաքի մոտ, տասնհազարամյա Պորտաբլուր հնավայրի սալաքարերի վրա կան կենդանիների պատկերներ: Դրանք գրեթե նույն տեսքն ունեն, ինչ կենդանակերպի և այլ համաստեղություններում արտացոլված կենդանիները երկնքում:

**Գ)** Վարդենյաց լեռնանցքի բարձրակետում (2410 մ) ձարտարապետ Սուլեյն Պետրոսյանը 1965թ. հայտնաբերել է աստղային երկնքի քարտեզներ, միջնադարյան իջևանատնից 700 մ հյուսիս: Գտնվելով «Մետաքսի Ճանապարհի» բազուկներից մեկի՝ Սևանա լճի ավազանը և Արփայի հովիտն իրար կապող, հսկայակերտ ամրոցներով պաշտպանված հնագույն քարավանային ճանապարհի եզրին, դրանք անկասկած, ունեցել են կողմնորոշիչ նշանակություն (նկ.11-13): Հարթ քարասալերի մակերեսին

<sup>11</sup> Խանզայյան Է.Վ., Մկրտչյան Կ.Հ., Պարսամյան Է.Ս., Մեծամոր, Եր., 1973, էջ 142-149:

<sup>12</sup> Պարսամյան Է.Ս., Археоастрономия в Армении.- Историко-астрономические исследования, М., 1988, №20, с. 137-146.

<sup>13</sup> Հերունի Պարիս, Սիսիանի Քարահունջը հնագույն աստղագիտարանն է.- Գարուն, 1998, №5, էջ 87-93, Գերուն, Պ.Մ. Доисторическая каменная обсерватория Каракундэк-Карениш, Доклады, 1998, №4, էջ 307-328: Եղրակացություններն արված են միմիայն աստղագիտության տվյալներով ու մեթոդներով, առանց հնագիտական պեղումներով հաստատման:

<sup>14</sup> Գեսիօդ, Полное собрание текстов, «Труды и дни», 566, 610, Москва, 2001, с. 68, 70.

փորագրված օղակախմբերի արտանկարներում հայ աստղագիտության պատմաբան Բենիկ Թումանյանը ստուգապես ճանաչել է Կենդանակերպի Կարիճ, Առյուծ և Աղեղնավոր համաստեղությունները, արված հնագույն ժամանակներում՝ հավանաբար III-II հազ.: Հիմնավորելով նրա տեսակետը տեղում արված գիշերային դիտումների ու չափումների միջոցով, համարելով, որ այս պատկերները համապատասխանում են վաղ անցյալում այդ նույն համաստեղությունների տեսքին և դիրքին՝ աստղագիտության ձգրիտ բանաձևներով գնահատել եմ այս եզակի հուշարձանի փորագրման ժամանակը՝ մ.թ.ա. XXIX և XXVI դդ. միջև, այսինքն, քարերին իրոք դրոշմված են հնագույն աստղաբարտեզներ<sup>15</sup>:



*Ժայռապատկեր՝ աստղաբարտեզ*

**2)** Աստղաբերդի ստորոտում կա աստղագիտական գրանցումների եզակի մի աղյուսակ (նկ.14), որն իրեղեն ու պատկերագրական ապացույց է ծառայում հայոց բնագիտության հիմնադիր՝ VII դ. փիլիսոփա,

<sup>15</sup> **Թոխաթյան Վ.**, Որոշ ժայռապատկերների տարիքի որոշման վորձ.- Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հանրապետական գիտ. նատաշրջանի գեկուցման հիմնադրույթներ, Եր., 1995, էջ 26-27. **Tokhatyan K.**, The Chronology of Rock-Carvings with Cosmological Meaning from the Geghamian Range.- Theses of Reports. 2<sup>nd</sup> International Congress of Rupestrian Archaeology, Valcamonica, 1997.

մաթեմատիկոս, աստղագետ և տոմարագետ Անանիա Շիրակացու խոսքի. Զգայարանք առաջնոցն սուր էին քան զայժմուց՝ զոր վկայեն բազումք. զան որոյ ոչ միայն զարեզական զնաց կարացին նկատել այլ եւ զբոլոր լուսաւորաց կարացին դրոշմել եւ ճանաչել<sup>16</sup>:

Հայոց գիտության հսկայի պահպանած այս հատվածն առանձնահատուկ նշանակություն ունի. սա աշխարհում հայտնի հնագույն գրավոր վկայությունն է ժայռապատկերների վաղեմության և հալաստիության, քանզի «դրոշմել» բառը քարի վրա փորագրել, արձանագրել, քանդակել է հուշում: «Դրօշ» արմատից, որն ունի նաև «կուռքի պատկեր, արձան» իմաստ, ծագում էն «դրօշել» (փորել քանդակել), «դրօշագործութիւն» (արձանագրութիւն), «դրօշեալ» (քանդակեալ պատկեր) բառերը: Ավելին՝ նկարադրոշմ նշանակում է «զիր, նշանագիր»<sup>17</sup>: Ստեփան Մալխասյանցն էլ ընդգծում է դրօշ և դրօշել բառերի կիրառման սրբազնական կողմը՝ քանդակուած պատկեր, արձան, յատկապէս աստուածների արձան, կուռք: Դրօշեալ զիրը նուիրականք, քանդակված մեհենական գրութիւն, եզիստական մեհենագրութիւն, հիերոգլիֆներ<sup>18</sup>:

Կարևոր է այն, որ Անանիա Շիրակացին նշում է փուլերի հերթականությունը. նկատել, դրոշմել և ճանաչել, այսինքն՝ նախ պետք էր նկատել երկնային լուսատուի շատ դանդաղ շարժումն ու տեղաշարժերը, ապա դրոշմել՝ արձանագրել քարին, կուտակել տեղեկությունները, և հետո միայն, ուսումնասիրելով դրանք՝ ճանաչել հասկանալ: Ուրեմն, Շիրակացին VII դ. արդեն քաջատեղյակ էր ու համոզված, որ հնում լուսատուների շարժումների վերաբերյալ դիտողական տվյալները գրանցվել են՝ դրոշմվել սեերվել քարերին: Այսինքն, նրա հաղորդածը նաև վկայություն է աստղագիտական ժայռապատկերների գոյության:

Ժայռապատկերը գտնվում է տեղանքում իշխող բարձունքի գագաթային մասում, ունի ավելի քան 1 մ երկարություն և ամուր սեղոված է տեղում: Ժայռապատկերն ամբողջովին դիտելի է միայն հյուսիսից, այսինքն, փորագրողը և դիտողը միաժամանակ տեսնում է թե՛ պատկերը, և թե՛ երկնքի հարավային հատվածը՝ աստղագիտական դիտումների համար լավագույն ու առավել արդյունավետ մասը: Սա աստղագիտական գրանցումների աղյուսակ է, որ նշում է որևէ երկու լուսատուի (մոլորակ, աստղ կամ, գուցե՝

<sup>16</sup> Անանիա Շիրակացի, ԾԹ, էջ 83-84: Ընդգծումը՝ Կ.Թ.:

<sup>17</sup> ԱՃԱՊՅԱՆ Հր., Հայերեն արմատական բառարան, Խո. Ա, Եր., 1971, էջ 694, 697:

<sup>18</sup> Մալխասյան Մտ., Հայերէն բացատրական բառարան, Խո. I, Եր., 1944, էջ 546-47:

համաստեղություն) տեսանելիության պայմանները մեկտեղ: Նման պատկերումը հնարավոր է դարձել համարել այդ լուսատուների հարաբերական շարժումները:



Աստղավիշովական գրանցումների առյուսակ

Լուսանկարում երևում է հորիզոնական եռագիծ (երեք գծով ձևավորված երկու երկարաձիգ շերտ), որ շարունակված է քարաբեկորի աջ նիստին<sup>19</sup>: Եռագիծը ձախից փակված է, ինչը, տրամաբանորեն, կարող է դիտումների գրանցման առյուսակի ժամանակային առանցքի հաշվանքի սկզբնակետն արտահայտել: Դա առավել հավանական է դարնում այդ մասում փորագրված պոչավոր օղակի առկայությամբ, որն ակունքի, աղբյուրի՝ սկզբի համընդունելի նշանագիրն է: Եռագիծը ձախից, չորս գծերով բաժանված է ուղղահայաց հավասար շերտերի: Սա էլ առյուսակի ժամանակային առանցքի բաժանումն է, որ կարող էր արտահայտել օր, ամիս, տարի, գուցե և՝ առավել մեծ ժամանակահատված: Նկատենք նաև, որ առկա է ձախից աջ շարժում, ուղղագծություն, ինչը համընկնում է երկնոլորտի պտույտի, այսինքն՝ աստղագարդ երկնքում լուսատուների օրական և տարեկան տեղափոխության հետ: Եվ վերջապես, ներքևում պատկերված են դիտման առարկա երկու լուսատուները՝ իրենց տեսանելի մեծությանը (պայծառությանը) համապատասխանող շափի օղակով և խորիրդանշանով:

Մեկնաբանելով այս ժայռապատկերը որպես դիտումների գրանցման առյուսակ, կարելի է եզրակացնել որ առաջին և երկրորդ

<sup>19</sup> Երկնիստ ժայռապատկերները հազվագյուտ են: Նման երևույթը վկայում է այդ ժայռապատկերի կարևորությունը, և որպես երկարատև կիրառման գործիք նախատեսված լինելը:

Ժամանակահատվածում երկու լուսատուները տեսանելի չեն եղել երրորդում՝ երկուսն էլ թույլ են երևացել չորրորդում՝ վերևինը մեծ է, պայծառ, մյուսը՝ դարձյալ չի երևացել։ Գրանցման գործընթացը հավանաբար կիսատ է մնացել, այլապես նշումները շարունակված կլինելին դեպի աջ։

Հնագույն մեր նախնին՝ իր ժամանակի աստղագետն այս եղանակով է տեղեկություններ կուտակել լուսատուների դիրքի և տեսանելիության մասին, և ապա միայն՝ եզրակացություններ արել դրանց շարժման մասին։ Ժայռապատկերման երևույթի մասին աշխարհում առաջին այս գրավոր տեղեկությունը կարող է վկայել որ Հայաստանում են հնագույն ժայռապատկերաբանության ակունքները։


Ժայռապատկերման օջախ Հայաստանում են նաև **նորօրյա** ժայռապատկերաբանության ակունքները՝ աշխարհում առաջին անգամ (1886թ.) Հայաստանի գիտական մամուլում է ժայռապատկեր հրատարակվել և իրատեսորեն մեկնաբանվել։ Աշխարհում ժայռապատկերներ հայտնաբերվել են դրանից ընդամենը յոթ տարի առաջ (1879թ.), Իսպանիայի Ալտամիրա անձավում։ Սակայն... Եվրոպայի գիտական աշխարհն ու Կաթոլիկ Եկեղեցին փութացին ներկայացնել դրանք իբրև կեղծարարություն, քանի որ դրանց ակնհայտ հնությունն ընդունելը կհակասեր կրոնական դոգմային՝ վկայելով «նախաջրեղեղյան» շրջանում արվեստի գոյությունը։

Իսկ Հայաստանում, եպիսկոպոս, հայագետ Մեսրովը Մբատյանը, Մայր Աթոռի կրօնական, բարոյական, պատմական, բանասիրական եւ ազգային «Արարատ» ամսագրում հրատարակեց Մաստարայի նորահայտ ժայռապատկերը, նախապես ծավալելով նամակագրական լայն քննարկում։ Դրա արդյունքում նա ժայռապատկեր երևույթը ողջախոհաբար որակել է որպես *մեզ ավանդված հնության նշխարներ*՝ հնագույն ժամանակներում ապրած երջանիկ նախնեաց.. զգացմանց և սրտից արտահայտություն<sup>20</sup>։

**Ե) Աստղերի ու աստղախմբերի պատկերներ** կան նաև Հայաստանի այլ հնավայրերում (Ազարակ, Լաշշեն, Արմավիր, Դվին), կենցաղի ու ուազմի պարագաների վրա, ժայռապատկերներում ու մեհենագրերում։ Հայաստանում աստղային օրացույցն առավելապես հիմնված էր Բազումք (Պլեադներ) (նկ. 15-17) և Մսուրք ակնառու աստղախմբերի, Հայկ (Օրիոն), Առյուծ, Աղեղնավոր, Կարիճ համաստեղությունների դիրքի փոփոխության

<sup>20</sup> **Մբատյանց Ս. Եպս.**, Բներաձև արձանագրութիւն.- Արարատ, 1886, №11,  
Վաղարշապատ, էջ 499-503:

դիտարկման վրա:



Բազումք աստղախումբը:  
Բազումքի ժայռապատկերներ՝ **Ազարակ-1** հնավայրում և **Լճաշենում**

**5. Լուսնարեզակնամոլորակային դասի օրացույցում** Յուլիսերի և Սատուրնի պտտման պարբերությունները (մոտ 12 և 30 տարի) համաձայնեցվում են Արևի ու Լուսի պարբերաշրջանների հետ: Մրանք տարածված են հիմնականում Արևելյան Ասիայում: Դասական օրինակը չինականն է, ըստ որի 2012-ը ջրային, սև վիշապի տարին է:

Վերջապես, հռոմեական շրջանում ձևավորվեց և ընդունելի դարձավ Հուլիոս Կեսարի պատվերով մ.թ.ա. 46թ. ալեքսանդրիացի աստղագետ Սոլիգենեսի կազմած միասնական օրացույցը՝ **Հուլյան** տոմարը, իսկ 1582-ից՝ Հոռմի Գրիգորիս XIII պապի բարեփոխած **Գրիգորյանը**: Այդուհանդեռ, որոշ երկրներ ու ժողովուրդներ պահպանել են իրենց հին, ավանդական օրացույցները:

#### IV. Հայոց Բուն Թվականը

Մ.թ.ա. 457թ. հայոց տոմարն արդեն արեզակնային էր<sup>21</sup>: Համարվում էր, որ թեև առաջիններից մեկն ենք ընդունել արեզակնային օրացույց, բայց

<sup>21</sup> **Աղյան Է.Բ.**, Ակնարկներ հայոց տոմարների պատմության, Եր., 1986, էջ 72:

այն փոխառել ենք... եզիպտացիներից<sup>22</sup>: Չափազանց կասկածելի է թվում այս փոխառյալությունը. այն էլ եզիպտացիներից, որոնց առթիվ պատմահայրը գրում է, որ նրանք տարիները լրանի ծնունդներով էին հաշվում. այլ և ոչ որպէս Եզիպտացիքն զլուսնականսն հաշուեն ծագմունս<sup>23</sup>:

Հայոց տոմարի պատմագրությունը ևս սկզբնավորել է մեծն Մովսես Խորենացին, որը հիշատակում է մ.թ.ա. II դ. Արտաշես Ա արքայի (189-160թթ.) տոմարական բարեփոխումը. *այսպիսի գիտութեանց կամ անփոյթ արարեալը, և կամ ոչ հասեալը. զշաքարթուց ասեմ և զամաց և զտարեաց բոլորմանց*<sup>24</sup>: Հավանաբար, կատարելագործվել է առավել վաղ կիրառված գրեթե երկիազարամյա Հայոց Բուն Թվականը:

Այս հնագույն օրացույցի հաշվանքի սկիզբը՝ մերօրյա Գրիգորյան տոմարով **մ.թ.ա. 2492** թվականը, մեծ հանրագիտակ Ղևոնդ Ալիշանն է պարզել<sup>25</sup>: Տոմարագիտությունից հայտնի է, որ հայոց հին շարժական տոմարով Նոր տարին՝ Նավասարդի 1-ը մ.թ. 428թ. համընկել է հոռմեական օգոստոսի 11-ին, ինչը կրկնվում է 1460 տարին մեկ: Սրանց հիմամբ Ալիշանը հետ է հաշվել 1460-ամյա «Հայկեա» երկու բոլորաշրջանի չափով (428 – 2920 = -2492, այսինքն, մ.թ.ա. 2492թ. ևս Նավասարդի 1-ը կլիներ հույսն օրացույցով օգոստոսի 11-ին): Նա եզրակացրել է, որ պետք է առանց տարակուսանքի ընդունել Հայկայ շրջանին և մեր ազգութեան սկիզբը՝ Քրիստոսէ առաջ 2492 տարին:

Ալիշանից հետո անցած հարյուրինասուն տարում կուտակված փաստերն ու արված հետազոտությունները հնարավորություն են ընձեռում Հայոց տոմարի սկիզբն անցյալի խորքը տանել առնվազն մեկ Հայկեա շրջանի չափով, այն է՝ մ.թ.ա. 3952թ.: Եզրակացության հիմքը Հայոց տարածքում հայտնաբերված աստղագիտական ժայռապատկերների, ինչն հանրահայտ երկնայիտարանների՝ **Սեծամոք** (նկ. 18-19), **Սեսար** (նկ. 20), **Ջորացքար** (նկ. 21), **Պորտաբլուր** (նկ. 22-23), Գեղամա լեռների **Աստղաբերդ** (նկ. 24),

<sup>22</sup> **Բաղայան Հ.Ս.**, Օրացույցի պատմություն, էջ 58, **Սեմյոնով Լ.**, Հայկական տոմարի միքանի հարցերի մասին. - Մատենադարանի գիտական նյութերի ժողովածու, 1941, №1, էջ 23:

<sup>23</sup> **Սովորսի Խորենացւոյ** Պատմութիւն Հայոց, աշխ. Մ. Աբեղեան և Ս. Յարութիւնեան, Տիգրիս, 1913 (Վերահրատ. Եր., 1991, լրացումները Ա.Բ. Սարգսեանի), գիրք I, Շ, էջ 13-14:

<sup>24</sup> Անդ, գիրք III, ԾԹ, էջ 188:

<sup>25</sup> **Ալիշան Ղ.**, Յուշիկը հայրենեաց հայոց, Վենետիկ, 1869, հ. Ա, էջ 95:


Արագածոտնի Ազարակ հնավայրի, Վարդենյաց լեռնանցքի փորագիր աստղաբարտեզների, Կողեսի, Տանձուտի, Լեզրի, Նեմրութի քարաշարքերի բացահայտումներն են, տումարագիտական ճշգրտումները և հնագույն աստղագիտության մի շարք այլ նվաճումներ:



18

19

Մեծամոր



20

21

Սևսար

Զորացքար



22



23

Պորտապլուր (մ.թ.ա. X-IX հազ.)



24

Արե, Լուսին, աստղեր, զիսավոր, Երկրագունդ

Լոռու Կողես գյուղից հյուսիս պահպանվել են քարե կիսաշրջաններ, որոնց քարերի քանակներն օրացուցային են՝ 7, 14 և 30 (նկ. 25):



25

Կողեսի քարե կիսաշրջանները



26

Լեզրի քարախումբը

Բասենի դաշտի **Տանձուս** (Արմտլու) գյուղից 5 կմ հարավ, ըստ ականատեսի նկարագրության (մինչև 1915թ. հայոց բռնազարյալ), եղել է մոտ 60 մ տրամագծով հսկայական բոլորաշար՝ **Շարվան քարերը**: Մետրանց ուղղաձիգ քարերով եզրագծված շրջանի կենտրոնում կար մեծ կարմիր քար<sup>26</sup>: Հայտնի չէ քարերի ճշգրիտ թիվը:

Վան քաղաքից 7 կմ հյուսիս, հնավուրց **Լեզք** գյուղի դաշտում, «Աղամանց քարեր» բլրի ստորոտում, 400 մ<sup>2</sup> տարածքում կանգնեցված է մոտ 2500 հատ սլացիկ, մետրանց քար: Քարերի միջև հեռավորությունը գրեթե նույնն է, տեղադրված են կանոնավոր՝ զուգահեռ գծերի երկայնքով: Այս «քարանտառը» հավանաբար ունի աստղագիտական-օրացուցային նշանակություն: Մոտակա դամբարաններից հայտնաբերվել է մ.թ.ա. IX-VIII դդ. խեցեղեն (նկ. 26):

Վանա լճի ավազանում, **Նեմրութ** հրաբխի հվ.-արևելյան ստորոտում (Գրգուռ լեռան, Շամիրամ և Զրիոր գյուղի մոտ) կա ուղղաձիգ քարերի խումբ: Դատվան գեղեն... դեպ ի Նեմրութ ի դաշտակողմն զնալով՝ կը տեսնես կարգ մը տնկվածի կամ կանգնվածի պես սև քարեր... տեղացիք **Բեկի ուղտեր և ուղտապաններ** կ'անվանեն զանոնը<sup>27</sup>:

Հայոց տոմարի սկիզբը մ.թ.ա 3952 թվականը համարելու օգտին է նաև հնակենդանաբանական այն իրողությունը, որ Ալիշանի հաշվարկած թվականին՝ մ.թ.ա. III հազ. կեսերին, Հայկական լեռնաշխարհում ձին արդեն ընտելացված էր, ուստի Հայկն ու Բեկը պիտի որ հեծյալ լինեին, գորքը նույնպես, այլ ոչ հետևակ ինչպես վիպասքում է: Մի հանգամանք ևս՝ Հայկն այս առասպելում նետաձիգ է, որսորդ, իսկ որսորդությունը որպես տնտեսության հիմնական կացութածե առավել վաղ անցյալում է գերադաս եղել:

Այս կրվանները թույլ են տալիս ենթադրելու, որ այդ ճակատամարտն ավելի վաղ է տեղի ունեցել, սակայն առայժմ ընդունելի է համարվում Հայկյան տոմարի ավանդական ալիշանյան՝ մ.թ.ա. 2492 թվականը: Հայ Սոաբելական Սուրբ Եկեղեցին ևս ամրագրել է Բուն հայոց թվականը, Մայր աթոռի ամենամյա օրացույցի առաջին եջում նշելով այն, ըստ որի 2012-ը Հայկյան **4504** թվականն է, իսկ Նավասարդ 1 – օգոստոսի 11-ից կսկսվի 4505-ը:

<sup>26</sup> Հակոբյան Գ.Ա., Ներքին Բասենի ազգագրությունը և բանահյուսությունը, Եր., 1974, էջ 36, 253:

<sup>27</sup> Մրուանձտեսնեց Գ., Գրոց ու Բրոց եւ Սասունցի Դափիք կամ Մհերի Դուռ, Կ.Պօլիս, 1874, էջ 47-48, Նույնը, Երկեր, հ. 1, Եր., 1978, էջ 49-50:

## V. Հայկ Նահապետ

Սովոր Խորենացու պահպանած «Հայոց մեծաց» ծննդաբանության վկայությամբ, Հայկ նահապետի փառահեղ հաղթանակից հետո *աշխարհս մեր կոչի յանուն նախնոյն մերոյ Հայկայ՝ Հայք*<sup>28</sup>: Այն նշանավորեց արդեն **հայ** անվանակիր ազգի անկախության հաստատման սկիզբը, ազգային ինքնահաստատումը, ինքնուրույն պետականության հաստատումը, որից հետո Հայկի սերունդը կոչվեց Հայկազունք, Հայկազարմբ, հայեր, իսկ նրանց երկիրը՝ Հայք, Հայոց աշխարհ, Հայոց տուն, Հայաստան: Պատմահոր վկայությունները փաստում են, որ հայոց հնագույն արքայատոհմը Հայկ նահապետի անունով կրել է Հայկազուններ անունը: Հայկազունները դարերի ընթացքում իրենց շուրջն են համախմբել Հայկական լեռնաշխարհում առաջացած քաղաքական կազմավորումները օտար նվաճողների դեմ պայքարում:

Հետագա տասնամյակների կամ դարերի ընթացքում մեր նախնիները հենց այդ դարակազմիկ և շրջադարձային իրադարձությունն են ընդունում որպես օր ու տարվա հաշվանքի սկիզբ<sup>29</sup>: Ազգային ինքնազիտակցության այդօրինակ թոհջըր հետազոյւմ է գիտակցվել, արժենորվել և իմաստավորվելով՝ համարվել նոր կյանքի, հետևաբար և նոր ժամանակաշրջանի սկիզբ:

Տոմարի ակունքները Հայկ Նահապետի հետ աղերսված լինելու մատենագիտական վկայություն է պահպանել մեծն տոմարագետ Անանիա Շիրակացին: Նա նշում է, որ հայոց ամսանունները կային մեր թվականությունից ել առաջ. *հայ ամտցդ անուանք յառաջ քան զդնել թուականին հայոց էին... յառաջ քան զմարդեղութիւն բանին Աստուծոյ անուաննեալ էին ամիսրդ այդորիկի... Զի Հայկ ուն անուն աղեղնաւոր հսկայ յազգէ Յարեթի որդուոյ Նոյի... զանուանս ուստերաց և դստերաց նորա՝ եղինի ի վերայ ամտցդ՝ վասն մեծարանց հօրն ու զաւակացն. և են այսորիկ*.

<sup>28</sup> **Սովորի Խորենացոյն** Պատմութիւն Հայոց, գիրք I, ԺԱ, էջ 37:

<sup>29</sup> Իհարկե, պետք չէ պարզաբանորեն կարծել, որ Հայկի հաղթանակի հենց «հաջորդ օրը անմիջապես ձևավորել ու ընդունել են» օրացույցը. դա բարդ ստեղծագործություն է և գործընթաց, այն կ՝ վաղնջական անցյալում: Բայց մի բան պարզ է, որ հիշարժան այդ օրվանից Հայկի տոհմը կարող էր պահել օրերի ու տարիների հաշվարկը՝ պատմության ժամանակագրումը:

*Նաւասարդի, Հոռի. Սահմի. և Մահելի. Արեգ. և Մարերի, դատերք էին Հայկին:  
Տրէ. Քաղոց. Արաց. և Հրոտից, որդիք էին Հայկին<sup>30</sup>:*

XI-XII դր. հայ մեծանուն տոմարագետ, մատենագիր, բանաստեղծ, մանկավարժ Հովհաննես Սարկավագ Իմաստասերը, «Մեկնութիւն տոմարիս հայկազնէայ» գրվածքում առավել խորն անցյալում է տեսնում հայոց ամսանունների ծագումը. որ էին յառաջ քան զՄովսէս, քանզի ասեն թէ... Հայկն առաջին Նահապետն Հայոց զամիսրդ կարգեաց և զանուանս ուստերաց և դստերաց իւրոց ամսոցդ կոչեաց<sup>31</sup>: Այսինքն, ամիսներն անվանակոչվել էին մեր թվականության սկզբից ավելի քան 20 դար առաջ:

Այս գրավոր վկայությունների համաձայն, Արևի, Լույսի, Երկնքի, ուազմի գերագույն աստված և տոմարի անվանադիր Հայկը ժամանակի աստված է: Գրեթե երկու հազարամյակ անց, զարգացած պետականության շրջանում հայոց դիցարանի գերագույն եռյակը զիշավորող՝ ժամանակի աստված Արամազդը համարվել է ժամանակի աստծո որդին, փաստորեն՝ Հայկի: Հայկագունյաց դիցարանում աստված Հայկի տիեզերական խորհրդանիշերից է Հրատ-Մարս մոլորակը, որ Հայկի նման շիկակարմիք, հուրեկ ու հրագիսակ էր:


Այս ամենն արտահայտվեց նաև ժայռապատկերներում, որոնք անցյալի իրականության ու դիցամտածողության պատկերագրական դրսետրումներ են: Ժայռապատկերներում բազմաթիվ են նետաձիգների՝ աղեղնավոր որսորդի կամ ռազմիկի միայնակ և խմբական պատկերները, թե՝ խաղաղ, և թե որսի, ռազմի կամ պարի տեսարաններում, նույնիսկ՝ վար անելիս (նկ. 27-30)<sup>32</sup>:

Բնականաբար, դժվար է որոշակիորեն ասել, թե աղեղնավորին պատկերելով ո՞ւմ ի նկատի ուներ մեր հեռավոր նախնին. իրեն՝ որսի, մարտի կամ մարզվելու պահին, թե գերբնական էակներին՝ որսի կամ ռազմի հովանավոր աստծուն: Գուցե նա իր իրական կամ առասպելական նախնին էր, կամ հենց պաշտելի Հայկ նահապե՞տը: Տեղն է նշելու, որ ըստ Սեբեոս պատմիչի՝ Բելը Հայկին որսապետի պաշտոն է առաջարկում:

<sup>30</sup> **Անանիա Շիրակացի**, էջ 76:

<sup>31</sup> **Արքահամբան, Ա.**, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, Եր., 1956, էջ 224:

<sup>32</sup> Սա հեռավոր մի արձագանք է որսորդությունից երկրագործությանն անցման երևոյթի (մասուկ Սասնա Դավիթը նետաղեղով որս էր անում կորեկի արտում), ինչպես նաև՝ գենքով իր վարուցանքն ու հացը պաշտպանելու:



*Ժայռապատկերներ*

## VI. Հայկ և Օրիոն համաստեղություն

Հերոս Հայկն աստվածացվում է և զտնում իր տեղն աստղագարդ երկնքում: Հնում մեր նախանիները, ինչպես և շատ այլ ժողովուրդներ, աստղերը նախայաց հոգիներ են համարել: Հայոց դիցաբանական պատկերացումներում նետաձիգ Հայկը տիեզերքում մարմնավորում է երկնքի ամենապայծառ՝ Հայկ աստեղատունը:

Շումերները (մ.թ.ա. XXIX-XXV դդ.) այն անվանել են *Ուրուաննա*՝ Լուս երկնքի, որը հաղթեց երկնային ցուլ Գուտաննային, ըստ Գիլգամեշ վիպասքի: Հին շումերներն այս աստղախմբում նաև ոչխար են տեսել: Հետազոյում, աքաների միջոցով Օրիոնի անունն ու լեզենդները մտել են հունական դիցաբանություն:

Հին Եգիպտոսում համաստեղությունը կոչվել է Սահու, այն ներկայացնում էր մեռնող-հառնող աստված Օսիրիսին<sup>33</sup>: Նույնացվել է նաև XXIV դ. փարավոն Ունասի հետ, որը ձամփորդում է երկնքով, որ դառնա Սահու աստղ մեռած փարավոնը նույնացվել է Օսիրիսի հետ:

33 Mackenzie, Donald A., *Triumph of the Sun God. Egyptian Myth and Legend*, 1907, p. 167-168; *The Oxford Guide: Essential Guide to Egyptian Mythology*, p. 302-307, Berkley, 2003,

Գոտու աստղերը հնագույն հնդիկները կոչել են *Rupis Sṛīkāśāṇḍa* (եռամաս նետ), որը հետո, վեդաներում (XVII-XI դդ.) վերափոխվեց, դառնալով *նակշատրա*, *Մրիզաշիրաս*, *Մրիզաշիրշա*, *Մրիզա*՝ եղերու<sup>34</sup>, իսկ առավել ուշ պատկերացվեց նաև *Վյադի*՝ որսորդ: Չինացիները գոտու երեք աստղերը կոչել են *Շեն* (երեք)՝ հսկա զինվոր կամ որսորդ, իսկ համաստեղությունը երկու կեսի բաժանելով նմանեցրել վագրի և թռչունի (XIV-XIII դդ.):

Խեթերի դիցապատումներում (XII դ.) Օրիոնն առնչվում է գեղեցիկ ու հանրաճանաչ որսորդ Աքարի հետ<sup>35</sup>: Բարելոնյան աստղացուցակում (մ.թ.ա. XII-X դդ.) համաստեղությունը կոչվել է Սիպազիաննա, որ նշանակում է Երկնային հովիլ կամ երկնոլորտի աստված Անուի ճշմարիտ հովիլ<sup>36</sup>:

Արամեացիներն (XII-IX դդ.) այն *Նեֆիլա* են կոչել, որի սերունդները աստծու որդիներից ու Երկրի դուստրերից ծնված նեֆիլիմ հսկաներն են<sup>37</sup>: Հին Կտակարանի երրայերեն գրվածքում Օրիոնն առկա է *Կեսիլ* անվանք, որ բառացի հիմար, անպատիվ, անհաստատ կամ ինքնահավան է նշանակում: Հետագայում հրեաներն այն անվանել են *Գիրրոր*՝ հսկա, պատկերացնելով Ներութին: Համաստեղության աստղերից մեկը կոչվել է Մազարոթ, Մազլաթ: Սիրիացիներն այն *Գարբարա*, արաբները՝ ալ-Ղարբար են կոչել՝ որ նույնպես հսկա է նշանակում:

Հումերոսի «Որիսական»-ում (IX դ.) այն Պոսեյդոնի որդի, բրոնզե մահակով զինված որսորդ Օրիոնի անունով է հայտնի<sup>38</sup>:

Մալյայացիներն այն *Երեք եղրայր աստղեր* են անվանել Ավատրալիայի հյուսիսի բնիկները՝ *Զուլպան*՝ կանոե, կամ պարող երիտասարդ: Հվ. Աֆրիկայում կոչվել է *Երեք արքա* կամ *Երեք քույր*: Ացտեկները գոտին անվանել են *Իրե շաղափ*, Մեքսիկայի հյուսիսի սերի

<sup>34</sup> Allen R.H., Star Names and Their Meanings, p. 315, Holay, P.V., Vedic astronomers.- Bulletin of the Astronomical Society of India, 26, 1998, p. 91-106.

<sup>35</sup> Ginsberg H. L., The North-Canaanite Myth of Anath and Aqhat, II.- Bulletin of the American Schools of Oriental Research, (1945), p. 15-23.

<sup>36</sup> Rogers J.H., Origins of the ancient constellations: I. The Mesopotamian traditions.- Journal of the British Astronomical Association, 108, 1998, p. 9-28.

<sup>37</sup> Peake's commentary on the Bible, 1962, p. 260, section 221f.

<sup>38</sup> Հումերոս, Որիսական, հին հունարենից թարգմ. Համազասպ Համբարձումյանը, Եր., 1988, երգ 5.121-124, երգ 11.567-570, էջ 76, 181: Համաստեղության նկարագիրը տե՛ս Հումերոս, Ելիական, երգ 18.485-489:

բնիկները՝ *Որտորդ*, հյուսիսամերիկյան օջիբվա կամ չիպեվա բնիկները՝ *Զմեռարեր*:

Հին իուլանդացիք գոտին կոչել են *Քառմահ*՝ Ջինված Արքա, ին սարսոնները՝ *Էրուորունգ*, *Էրիորինգ*՝ առնչվում է Ծիր Կաթնի հետ: Նախաքրիստոնեական Սկանդինավիայում կոչվել է *Կալեվայի թուր*, մինչդեռ Գրենլանդիայում այն հայտնի է լրիվ այլ՝ *փոկերի որտորդ* անունով: Ֆինների դիցաբանության մեջ Օրիոնը կոչվել է *Վայնամոյնենի վահան* կամ *մանզաղ*:

Ակնհայտ է, որ առավել հնագույն ժողովուրդներն են համաստեղությունը որտորդի, ռազմիկի նմանեցրել, համարելով որսի ու ռազմի հովանավոր աստծու մարմնավորումը երկնքում:

## VII. Հայկ և Օրիոն հերոսներ

Հայկ և Օրիոն հերոսների ծագումնաբանական ընդհանրություններին անդրադարձել է հնագետ, պատմաբան Բաբկեն Առաքելյանը<sup>39</sup>: Նա համեմատում է երկու հերոսներին. Երկուսն էլ քաջ որտորդ են, ունեն երկու շուն, մրցում են աստվածություն հետ (Արտեմիս և Անահիտ): Մահից հետո Հայկն աստվածացվում է և երկինք բարձրանում, Օրիոնը՝ Հաղես իշխում: Ի տարբերություն Մանուկ Աբեղյանի, նա գտնում է, որ Հայկի առասպելը տեղական ծագում ունի: Հայոց մեջ «հայկ»՝ հսկա է նշանակել, ըստ Ազարանգեղոսի<sup>40</sup> և Փիլոն Եբրայեցի/Ալեքսանդրիացու:

Օրիոն համաստեղության պայծառ աստուերի անունները հիմնականում արաբական ծագման են, լատինական հնչողությանը հարմարեցված<sup>41</sup>:

<sup>39</sup> **Առաքելյան Բ.Ն.**, Հայկ-Օրիոն.- Արմֆանի տեղեկագիր, 1941, №8 (13), էջ 29-36:

<sup>40</sup> ... առեալ սկայազարն հայկաբար զուր զարձանսն... տե՛ս **Ազարանգեղայ**

Պատմութիւն Հայոց, քնն. բնագիրը՝ Գ. Տեր-Մկրտչյանի և Ս. Կանայանցի, Եր., 1983, ՃԶ. 767, էջ 430:

<sup>41</sup> Պայծառագույն՝ α αստղը արաբերեն կոչվել է *Բէթելհեյզ* (հսկայի աջ ուս), β աստղը՝ *Ոիզել* (ձախ ուսք), λ աստղը՝ *Մեխսա* (գլուխ), δ և ζ աստղերը՝ *Մինթաքա* և *Ալնիտաք* (գրտի, գոտեվորել), զոտու այս երկու աստղը միացնող է աստղը՝ *Ալնիլաս* (մարզարտաթել): Աջ ծունկը նշող կաստղը կոչվել է *Սայֆ*, որ նշանակում է թուր (արաբներն այս մասում պատկերացրել են հսկայի թուրը, ինչը բացակայում է եվրոպական գծանկարներում): Չախ ուսը նշող γ աստղը լատիներեն է կոչվել՝ *Բէլասուրիքս* (ռազմուիի):

Աստվածաշնչի Հորի գրքում մի հատված կա, որ վկայում է Հայկ - Օրիոն աղերազ: Տերը, որ արար զբազմաստեղսն եւ զԳիշերավարն եւ զՍայլն եւ զշտեմարանս հարաւոյ՝<sup>42</sup>, խոսելով Հորի հետ, մարդուն ճանաչել է տալիս նրա հնարավորության սահմանները, հարցնելով Բազումք աստղախմբի և Հայկ-Օրիոն համաստեղության մեջ գտնվող մշուշոտ միզամածության մասին. Խելամո՞ւ յու իցես կարզի Բազմաստեղաց, եւ քո բացեա՞լ իցէ զպատրուակ Հայլիմ<sup>43</sup>: Եսայու մարգարեռության մեջ ևս մի անդրադարձ կա. Զի աստեղը երկնից՝ Հայկիւն հանդերձ եւ ամենայն զարդուն երկնից լոյս մի տացեն<sup>44</sup>:

Աստվածաշունչը հունարենից թարգմանելիս, V դ. հայ թարգմանիչը, հասնելով այս տողերին, առանց երկմտանքի՝ համաստեղություն Օրիոն անվան փոխարեն Հայկ է գրում: Ուրեմն դա շատ սովորական ու ակնհայտ է եղել այլապես, մի թե աստվածավախ թարգմանիչը կիանդգներ Սուրբ Գրքի որևէ բա՛ռ, այս էլ՝ անուն փոխել, եթե միանգամայն վստահ չլիներ: Իհարկե ոչ՝ «սրբազն արգելքը» թույլ չէր տաւ<sup>45</sup>:

Այս ամենը հարատևեց ժողովրդի մտածողության մեջ. Վանեցիները մինչև այսօր «կշիռ» կոչուած աստղերն անուանում են «խէքեր» (հէքեր, հայքեր, հայկեանք): Երբ «քազումք» աստղերից յետոյ հորիզոնի վերայ բարձրանում են «կշիռ» աստղերը, վանեցիքն ասում են. «խէքերն էլան», երբ մտնեն դէպի արևնուտ, ասում են. «խէքեր մոտան»: Հետն էլ վանեցիք ասում են, որ «Հայկն երեք լաճ ունէր, երեք աղջիկ, որ ասոնք են» ցոյց տալով խէքերը երկնակամար վերայ<sup>46</sup>: Հայկ կամ Խէք են կոչում վանեցիները Օրիոն համաստեղութիւնը և պատմում են, թէ Հայկ նահապէտն է աստղի

<sup>42</sup> Թվարկված են Յուլի համաստեղության Բազումք աստղախտումքը, Գիշերավար կամ Գիշերաստղ (Հայկ - Օրիոն), Մեծ Արջ համաստեղությունները և հարավային երկնքի աստղակուտակները, Տե՛ս Աստվածաշունչ Սատեան Հին եւ Նոր Կտակարանաց, Կ. Պոլիս, 1895, Հոր, Թ. 9:

<sup>43</sup> Անդ, Հոր, I. C. 31:

<sup>44</sup> Անդ, Եսայի, Ժ. 10:


<sup>45</sup> Աստվածաշնչի վերջին՝ «Հայտնության» գրքի վերջին բառերը զգուշացնում ու սպառնում են. թէ որ յաւելցէ ի սա, յաւելցէ Աստուած ի վերայ նորա զեւքն հարուածսն... Եւ եթէ որ պակասեցուսցէ ի բանից մարգարեռեան զրոյս այսմիկ, պակասեցուսցէ եւ հատցէ Աստուած զրաժին նորա ի ծառոյն կենաց: Տե՛ս Հայտնութիւն Յոհաննու, Ի. Բ. 18-19:

<sup>46</sup> Արուանեան, Հայկի որդիքը.- Լուսայ, Թիֆլիս, 1898, զիբը 2, էջ 289: Տե՛ս նաև Ղանալանյան Ա., Ավանդապատում, Եր., 1969, էջ 10:

փոխարկուած<sup>47</sup>: Հայկի գոտու աստղերն են «կշիռ» կոչվել<sup>48</sup>, իսկ Մուսալեռում՝ նաև «կանգուն». Հայկի գոտու աստղերին կանգուն ու կշիռ կասենք<sup>49</sup>, այսինքն, Հայկը նաև չափ ու կշոր աստված է համարվել:

### VIII. Հայկ – կեռխաչ

Գեղամա լեռների Աստղաբերդ գագաթի (3139 մ) լանջին կա հիասքանչ մի պատկերազույց: Մեկում աղեղնավոր որսորդը նետահարում է ցուլին, մյուսում՝ մարդու փոխարեն մարդանման կեռխաչն է (նկ. 27-28): Պետք է ենթադրել, որ աղեղնավորն ու կեռխաչը նույնական կամ համարժեք են եղել՝ նետահարող: Երկնքում ճիշտ այսպես են դասավորված Ցուլ և Հայկ (Օրիոն) համաստեղությունները (նկ. 29-31): Պատկերազույցը փորագրված է այնպես, որ լավ դիտելի է արևմտյան կողմից նայելիս, ուստի երևում է երկնքի արևելյան մասը, որտեղից ծագում են այս համաստեղությունները: Այս հանգամանքը կարող է Հայկ նահապետի և Հայկ համաստեղության պաշտամունքի պատկերագրական վկայություն լինել:




Ժայռապատկերներ

<sup>47</sup> Լալայեան Ե., Վասպուրական. Հաւատք.- Ազգագրական հանդէս, XXV, 1913, էջ 56:


<sup>48</sup> Կշիռ աստղերը պետք չեն շփոթել Վենդանակերպի Կշեռք համաստեղության հետ, որը թույլ աստղերով է կազմված և աչքի չի ընկնում երկնքում: Այն առանձնացվել է Կարիճ համաստեղությունից լոկ Կեսարի օրոք:

<sup>49</sup> Վասիլյան Վ., Առասպելներից մինչև Բյուրական, Եր., 1985, էջ 135:



33

*Օրիոն և Յուլ համաստեղությունները  
Յան Հելելիուսի ատլասում (1690թ.)*



34



35

*Հայկ համաստեղությունը*

**Հայկ - կեռխաչ** աղերսի առջիվ հիշատակելի է Սասնա դիցավեպի «Խաչ Պատերազմի»-ն: Սասնա հերոսները հոգևոր-ֆիզիկական ուժի և քաջության որոշակի աստիճանում արժան և ի գորու են դառնում կրելու արդարության ու հաղթանակի այս գրավականը՝ ժառանգության կարևորագույն տարրը, Աստվածային Կարգն ու առաքինությունը գործադրելիորեն պահպանած լինելու նշանը: Պատմահայրը հիշատակում է, որ երազում Տրդատ արքային երևում է խաչ աստեղեայ յերկնից, պարունակեալ գրով, ասէ. «Այսու յաղթեա». զոր արարեալ սիւզնոյն (իմա՝ զորանշան՝ Կ.Թ.) և յառաջարերեալ յաղթեաց պատերազմացն<sup>50</sup>:

## IX. Հայոց օրացույցի հետազա փուլերը

Մեծ Հայքի տարբեր մասերում, տարբեր ժամանակներում քանից փոխվել է օրացուցային հիմքը՝ լուսնային կամ արեգակնային, տարեսկիզբը՝ Նավասարդ-Ամանորը, օրվա սկզբը, ժամերի ու ամիսների քանակն ու

<sup>50</sup> **Սովորի Խորենացւոյ** Պատմութիւն Հայոց, Բ գիրք, 29, էջ 226:

անվանումները և այլն: Սակայն, զարգացած քաղաքակրթության տեր ժողովուրդը չէր կարող ընդհատել կամ զգալիորեն խախտել ժամանակի հաշվարկը<sup>51</sup>:

Վանի Թագավորության դարերում արեգակնային օրացույցի կիրառման գրավոր վկայություն է Մհերի Դռան սեպագիր արձանագրությունը, որի տոմարագիտական քննությամբ բացահայտվել է յուրօրինակ օրացուցա-թվաբանական հենք՝ 5, 7, 12, 360, 355 թվերով, որոնք արեգակնային օրացույցի հիմքն են<sup>52</sup>:

Վաղմիջնադարյան առաջին՝ Հայոց Մեծ Թվական կոչվող տոմարին տրված Հաբեթյան, Թորգոմյան, Ասքանազյան, Հայկազյան, Արամյան անվանումներում հնարաի շունչն է զգացվում: Այն ընդունվել է 552թ., թեպետ կիրառումն սկսվել է երկու դար անց<sup>53</sup>:

Հայոց առաջին իսկ տպագիր գրքերից մեկը վերաբերում է տոմարին՝ «Պարզատումար», 1512թ.: Դարեր շարունակ Նավասարդի 1-ն է հայոց տոնակարգում ավետել Նոր Տարվա սկիզբը: 1920թ. դեկտեմբերի 2-ին Խորհրդային Հայաստանն ընդունեց Գրիգորյան տոմարը, որով Նոր Տարին սկսվում է հունվարին:

## Վերջաբան

Համեմատենք չորս թվական.

ա) Հայկ նահապետի ու Բելի մենամարտը և օրացույցի հնարավոր ձևավորումը եղել է առնվազն **XXV** դ.,

բ) Երկնակամարի բաժանումն ըստ համաստեղությունների սկսվել է **XXX** և **XXVIII** դդ. միջև,

գ) Մեծամորի, Սևսարի, Աստղաբերդի, Ազարակի ժայռապատկեր-ները **IV-III** հազարամյակից են,

<sup>51</sup> Այն, որ գրավոր տեղեկություններ համեմատաբար քիչ ունենք մեր օրացույցի փուլերի և շարունակականության մասին, հետևանք է նախարրիստոնեական մշակույթի մեծագույն մասի կորստի, ինչպես նաև՝ քրմական գիտելիքներին տիրապետողների ներ շրջանակի:

<sup>52</sup> Հմայակյան Ս., «Մհերի դրան» արձանագրությունը և Վանի թագավորության օրացույցը. - Գարուն, 1994, №3, էջ 88-89:

<sup>53</sup> Այս տոմարով առաջմ հայտնի առաջին հիշատակումը՝ **ՄԼԲ**, փորագրված է Թալինի Մայր եկեղեցու ձախակողմյան այս արձանագրության մեջ, որ համապատասխանում է մերօրյա Գրիգորյան 783 թվականին (551+232):

դ) Վարդինյաց լեռնանցքի աստղաբարտեզները **XXIX-XXVI** դարերից են:

Հայկական օրացույցի ակունքները վաղնջական շրջանում են՝ մարդկության լայնածավալ տարածման ժամանակներում, ինչը վկայում էն պահպանված հնագիտական հուշարձանները: Դրանց բովանդակային ժառանգականությունը վկայում է Հայկական լեռնաշխարհում մշակույթի անընդմեջ զարգացումը, ինչն արդյունք է իր բնատարածքում Հայոց նախնականության: III հազարամյակի կեսերին նախորդած ժամանակներում Հայկական լեռնաշխարհը, հայոց ազգի և քաղաքակրթության բնօրրանը, Միջագետքի, Մերձավոր Արևելքի և Փոքր Ասիայի հետ՝ մարդաբանական և մշակութային ընդհանրություններով կազմել է մեկ ամբողջական տարածք, և եղել է հոգևոր ու մշակութային ալիքների տարածման կենտրոն:

Այսպիսով, թեպետ նախաբրիստոնեական շրջանից հասած մշակույթի կրողների սակավությանը, ժայռապատկերների և հնագիտական այլ հուշարձանների վերծանման խնդրում բազմակարծությանը և դրանց թվագրման մոտավորությանը, լեզվական և արտալեզվական փոփոխություններին և այլ խոչընդոտների գոյությանը, վստահորեն կարելի է պնդել, որ մեր ժողովրդի ստեղծագործության այս հանգուցային ոլորտը՝ օրացույցը ևս իր ժամանակին եղել է առաջնային և վճռորոշ ազդեցություն է գործել շրջակա երկրների ու ազգերի ժամանակաշափական համակարգերի ծագման ու զարգընթացի վրա:

Հայկական տոմարի և հնագույն աստղագիտության պատմության համակողմանի ու համապարփակ ուսումնասիրությունը արժեքավոր և անփոխարինելի ներդրում է մշակույթի ու գիտության բազմաթիվ այլ ոլորտների համաշխարհային պատմության մեջ:

## Origins Rock Art and Calendar in Armenia and Anania Shirakatsi

Karen TOKHATYAN  
*Institute of History, NAS RA*

A review on the origin of rock art and calendars in Armenia, as well as Anania Shirakatsi's views are given. Astronomy and calendar, formation of the constellations, types of calendars, the Armenian ancient calendar, Armenian Hayk/Orion constellation and corresponding mythological heroes, and further phases of the Armenian calendar are discussed.

# Շիրակացին և «Հեթանոս» գիտնականները

**Գոհար ՎԱՐԴՈՒՄՅԱՆ**  
ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ

Հին աշխարհում գիտությունը, ինչպես հայտնի է, զարգացած է եղել և աղբյուր հանդիսացել հետագա՝ միջնադարյան գիտության համար։ Անանիա Շիրակացին, ինքը 7-րդ դարի մեծ գիտնական լինելով, հասուն վերաբերմունք է ունեցել անտիկ գիտության և նրա մշակների հանդեպ։

«Ինքնակենսագրություն»-ում, որ նա գրել է արդեն որպես կայացած գիտնական, բազմից անդրադառնում է հենց կրթության և գիտության հարցերին։ Ես՝ Անանիա Շիրակացի, Անանիա գյուղից, որ (սովորելով) յուրացրի մեր՝ Հայոց ազգի դպրությունը և հմտացա աստվածաշունչ գրքերին (գիտական գրքերին.- Գ.Վ.), օրբստօրէ լուսավորում էի մտքիս աչքերը...։ Ամեն բանում լսում էի իմաստունների և իմաստության հետամուտ եղողների երանության (խոսքերը)...։ Առաջնորդվելով Սոլոմոն Իմաստունի նշանաբանով՝ Ստացիր իմաստություն և առավել պարսավիր տղիտությունը՝ իբրև խավարի ծնունդ, և ապա՝ Դու գիտությունը մերժեցիր, ես էլ քեզ կմէրժեմ, Շիրակացին փափագել է հետևել իմաստասիրությանը (Անանիա Շիրակացի, Մատենագրություն (թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Ա.Գ. Աբրահամյանի և Գ.Բ. Պետրոսյանի), Եր., 1972, էջ 25):

Իր կյանքի գերնպատակը կրթությունն ու գիտությունը համարելով, նա դեռևս վաղ տարիքից լավ ուսուցիչ է վինտրել և այդ որոնումներով հասել մինչև Պոնտոսի ափերը՝ Տրավիզոն, որտեղ գտել է հայտնի ուսուցչապետ Տյուրիկոս Բյուզանդացուն և աշակերտել նրա դպրանոցում ութ տարի։ Իմաստությամբ լի այս մարդը, որն ի թիվս բազում այլ գիտությունների, գիտակ է եղել նաև հայերեն դպրությանն ու լեզվին, ուրախությամբ կրթել է Հայոց աշխարհից իր դուռն եկած երիտասարդին։ Վերջինս էլ լիովին յուրացնելով համարողական գիտությունը՝ թվաբանությունը, որը համարել է մայր ուսմանց, ծանոթացել է նաև այլ հայտնի և զաղտնի, արտաքին (հեթանոսական) գրքերի, որոնք տակավին թարգմանված չեն եղել հայերեն (պատմական, բժշկարաններ, ժամանակագրություններ, էջ 26-27):

Առաջին անգամ փակազմում հանդիպող «հեթանոսական» բնութագրումը այնուհետ բազմից կրկնվում է Շիրակացու երկում և բավականին ընդգրկուն իմաստ ունի, հիմնականում նշանակելով «հին,

նախաքրիստոնեական»: Լինելով քրիստոնյա գիտնական, նա չէր կարող որոշակի վերաբերմունք չցուցաբերել անտիկ շրջանի հեղինակների նկատմամբ, որոնց հաճախակի հիշատակում է հատկապես իր տիեզերագիտական աշխատություններում, հորչորչելով նրանց մերթ բարի իմաստուններ, մերթ էլ՝ խելազար, ցնդարան, չար փիլիսոփաններ, ընդունելով առաջինների գիտական միտքը և մերժելով երկրորդների «կեղծ գիտությունը»:

«Հեթանոս» գիտնականներից Շիրակացին ընդունում է նրանց, ովքեր իրապես ձանացեցին միասնական աստծուն և փառավորեցին նրան խոսրով ու գործով. խոսրով՝ գովելով ամենքի ստեղծողին և գործով՝ հեռու կանգնելով այստերից և ամեն տեսակի ցանկություններից, և աշխարհիկ զրադաշտներից ազատված, չամուսնացան և վարեցին միաբանական կյանք: Նրանք իրենց որովայնը սովորեցրին պարկեշտության, որովիեւու ոչ միս էին ուսում և ոչ էլ ձուկ, և ասում էին. «Չդարձնենք մեր որովայնը այլ կենդանիների գերեզման»: Կերակրվում էին միայն բանջարեղենով և ծառերի պտուղներով, նրանք մշտապես հետևում էին բարի գործերի, զրադաշտ էին զանազան գիտությունների ուսումնասիրություններով և քարոզչությամբ (Էջ 65):

Ահա այսպիսի պատկերացում է ունեցել Շիրակացին ձշմարիտ գիտնականի վերաբերյալ, որից շատ հետազոտողներ եզրակացրել են, որ նա ինքը հոգևորական է եղել և կուսակրոն ու ճգնակյաց կյանք վարել, մեծարվել «վարդապետ» տիտղոսով: Սակայն նրա կենսագրությունն ուսումնասիրողների մեծ մասը հակված է կարծելու, որ երեւ նա հոգևորական լիներ, դա անպայման հատուկ կշեշտվեր իր իսկ կրողմից, իսկ «վարդապետ» կոչել են՝ նկատի ունենալով «ուսուցչապետ»: Հաստատապես կարելի է ասել մի բան՝ նա հավատավոր հայ քրիստոնյայի կյանք է վարել, գիտության մեջ անգամ շղավաճանելով իր դավանանքին, և նրա ծարավը գիտության ու պահանջները գիտական մտքի հանդեպ, իրավամբ, մեծ են եղել: Այնքան մեծ, որ ձշմարիտ քրիստոնյա գիտնական լինելով, քննադատաբար է վերաբերվել եկեղեցու հայրերի այն մտքերին, որոնք իրեն ոչ-գիտական են թվացել:

«Ինքնակենսագրություն»-ից արդեն իսկ ակնհայտ է, թե որքան շատ էր ուսման նրա ձգտումը, որ 11 տարի դեգերելով օտար ափերում, լավ ուսուցչապետ է որոնել՝ ուսյալ գիտուն և բարոյական բարձր հատկանիշներով օժտված: Եվ պատահական չէ, որ իր կենսագրականում զգալի տեղ է հատկացնում ուսուցչի մասին պատմելուն: Տյուքիկոսի գիտելիքների մասին հիացմունքով խոսելուց բացի, Շիրակացին նրա կենսագրությունից բերում է դրվագներ, որոնցում երևում է այդ գիտնականի

բարոյական կերպարը, որը, ակնհայտորեն, շատ կարևոր է եղել Շիրակացու համար:

Պոնտացիների երկրից՝ Տրավիզոն քաղաքից լինելով, Տյուքիկոսը երիտասարդ տարիքում ծառայել է Տիրերիանոս կայսեր գորավար Հովհանի մոտ, Հայաստանում: Այստեղ շատ տարիներ մնալով, ստվորել է հայերեն լեզուն և դպրությունը: Բայց եթք պարսկական գորքերը հարձակվում են հույների վրա, այնպես է պատահում, որ Անտիոքի մոտ տեղի ունեցած ճակատամարտում Տյուքիկոսը վիրավորվում է, իսկ նրա ողջ ունեցվածքը թշնամին ավար է վերցնում: Երկար ժամանակ գտնվելով հիվանդ վիճակում, նա կսկիծով է հիշում իր կորուստը և, Աստծուց խնդրելով վերքերի բուժում, ուխտ է անում. Եթե շնորհես ինձ երկար կյանք, այլևս անցավոր գանձ չեմ կուտակելու, այլ հետամուտ եմ լինելու գիտության գանձին, ինչպես իմաստունն է ասում. «Խրատ վերցրեք և ոչ արծաթ, [սիրեցեք] ավելի գիտություն, քան ընտիր ոսկի»: Աստծո գորությամբ ապաքինվելով, Տյուքիկոսը գնում է Երուսաղեմ, ապա, երկար դեգերումներից հետո, գալիս իր հայրենի քաղաք և օրինակելի կյանք վարում, ողջ կյանքում հետևելով աստվածաշնչյան իմաստությանը՝ գիտությունը ոսկուց գերադասելու վերաբերյալ (էջ 27-28):

Իր ուսուցի կենսագրությունը համառոտ պատմելուց հետո, Շիրակացին այսպես է գրում. Եվ ահա ես՝ նվաստու հայաստանցի, սովորեցի նրանից այս գիտությունը, որ քազավորին է ցանկալի, և քերեցի մեր երկիրը... (Էջ 28): Իրեն համեստաքար «Նվաստ» կոչելով, նա դարնացած կշտամբում է նրանց, ովքեր ուսման հակում չունեն, ասելով, թե մեր ժողովուրդը իմաստափրություն և գիտություն սիրող չէ, թե շատերը եկան իր մոտ սովորելու, բայց ուսումը կիսատ թողած՝ հեռացն, համարելով, որ ստացած գիտելիքը բավարար է: Եվ ինձնից շատ շուտ առանձնանալով, սկսեցին ուսուցանել այնպիսի բաներ, որ չգիտեին, և իրենց ներկայացնել ուսուցիչներ, որոնց հասու չին: Կեղծավորներ և սնափառներ. ուզում են գիտնականի կեցվածք ընդունել և մարդկանց կողմից ուսուցապետներ կոչվել (Էջ 28): Տիեզերագիտական իր հետագործություններում Անանիա Շիրակացին, ինչպես վերը նշվեց, հաճախ է վկայակոչում «հեթանոս» գիտնականներին, առանձին անուններ չհիշատակելով: Օրինակ, «Երկնքի մասին» բաժնում գրում է. բուն երկնքի կազմության մասին (հեթանոսական գիտնականները) բազմատեսակ բաներ են ասում, որոնց հետ համաձայնում են նաև եկեղեցական հայրերից ումանք (Էջ 70): Թե հատկապես ո՞ր անտիկ հունահոնմական և վաղ միջնադարյան հայկական հեղինակներին է ծանոթ եղել

Շիրակացին, դժվար է ասել: Կարելի է, սակայն, ենթադրել, որ բոլոր առավել հայտնիներին, քանի որ նրա աշխատություններում պարզորոշ գծագրվում է իր ժամանակի գիտության մակարդակը: Մյուս կողմից էլ օգտվելով հանդերձ իր նախորդների աշխատանքներից, Շիրակացին նրանց ասածին, եթե համաձայն է, անպայման իր նոր միտքն է ավելացնում, իսկ եթե ոչ՝ ժխտում է եղած թեզը՝ հաճախ բավականին անխնա ու խիստ, և իր ասելիքն է շարադրում: Այս առումով հետաքրքիր է «հակոտնյա ներքոյաբնակների» մասին թեզը. հեթանոս փիլիստփաներն ասում են, թե երկրի այս ու այն կողմում բնակվում են կենդանի արարածներ, և որ կան մարդիկ ու կենդանիներ երկրի ներքեւի մասում, որոնք մեզ հակոտնյաներ են, ինչպես ինձորի շուրջ բոլոր նստած ճանակերք, այնպես էլ մարդիկ են երկրի վրա: ... Եթե չլինեին մեզ հակոտնյա ներքոյաբնակները, այդ դեպքում օրվա կես ժամանակը, երբ ստվերը մեզ զիշեր է բերում, Արեգակն ո՞ւմ է տալիս իր լույսը: Անկարելի է մտածել, որ այդ ժամանակ Արեգակը պարապ ընթացքի մեջ է գտնվում (Էջ 73): Անմտություն համարելով նման մոտեցումը, Շիրակացին մեջ է բերում Հորի գրքից Տիրոջ խոսքը՝ որո՞նք են այն վայրերը, որտեղ ես զիշերը ծածկում եմ Արեգակը բոլոր արարածներից, և հարցն այդպես էլ առկախ թողնելով, ասում՝ մենք պարտավոր ենք հավատալ մեր ուսուցչին և նրա նման աստվածային մարդկանց և ոչ հեթանոս փիլիստփաներին, հոգու խորքում, սակայն, հավատալով ընդիմուտունների՝ հակոտնյաների գոյությանը (Էջ 74-75):

«Ծովի մասին» բաժինը սկսվում է հետևյալ բառերով. *Խելազար հեթանոս փիլիստփաները ասում են, թե այն շրջապատում է երկիրը. երկիրը ծովի մեջ ընկած է որպես կղզի, իսկ շուրջը հենվում է օդի վրա չորս կողմից* (Էջ 75): Ահա այսպես իմաստ է գիտնականը վերաբերվում որոշ գիտնականների տեսությանը Երկրագնդի՝ անկենդան ծովերով շրջապատված լինելու մասին:

Առավել անխնա է մեծ տիեզերագետը հեթանոս գիտնականների հանդեպ «Երկնային լուսատունների մասին» բաժնում, որտեղ ուղղակի շախչախում է քաղդեացիներին՝ իին (բարելույան) աստղագուշակներին: Շիրակացին գրում է. *Քաղդեացիները լուսատունների և համաստեղությունների վրա նայելով որպես արարիչների, նրանց աստվածներ համարեցին: Եվ բախտ ու ճակատագիր բաժանելով, նրանց ծնունդների տնօրինություն շնորհեցին՝ ոմանց տալով բախտավորություն, ոմանց, դրան հակառակ՝ տապով թշվառություն, նույնպես և այլ բաներ՝ յուրաքանչյուրին ըստ կարգի, որ պետք չէ մեզ միառնի թվարկել* (Էջ 79): Աստղագուշակությունը անհեթեթություն համարելով հանդերձ, նա մեջ է

բերում կենդանակերպի նշաններին վերագրվող բնութագրերը՝ Խոյի նշանից մինչև Զկներ, այնուհետև բերում է նաև երկնային լուսատուների և մոլորակների ազդեցության բնութագրերը՝ մարդկանց ճակատագրերի ու բնավորության վրա:

Աստղաբաշխությունը դիտելով որպես կեղծ գիտություն, Շիրակացին կտրականաս մերժում է այն, կշտամբելով քաղդեացի աստղաբաշխների սնուտիապաշտական «ցնդաբանությունները»: *Աստղաբաշխության արվեստը հանդես եկավ քաղդեացիների մոտ, իսկ աստղաբաշխությունից էլ առաջացավ դյուրանքի մոլությունը* (Էջ 82): Երկնային ու երկրային ամենայն բան Աստծոն արարչագործության արդյունք համարելով, Շիրակացին կտրականապես մերժում է աստղահմաների արվեստը, որոնք, իբր, ըստ տարածված կարծիքի, կարող են կախարդական վիկությամբ լուսինն իշեցնել երկնքից: Ավելին, նա համոզված է, որ քաղդեացիք մեղանչում են և պատժապարտ են ոչ միայն անմտությունների պատճառով, այլև նրանց համար, ովքեր մոլորվելով կհետեւն նրանց (Էջ 82-84): Աստղերի, Արեի, Լուսնի և, առհասարակ, երկնային լուսատուների վերաբերյալ նրա համար ընդունելի են ոչ թե գուշակություններն ու կախարդանքները, այլ միմիայն գիտական բացատրությունները, որոնք և ինքը շարադրում են:

Հատկապես արժեքավոր են նրա մտքերը Ծիր Կաթինի մասին: *Այն, ինչ Ծիր Կաթին անվանեցին, այնպիսին չէ, ինչպես չար փիլիստիաները բազմաթիվ զրույցներով առասպելարանում են: Այսպէս, ումանք նրա մասին ասում են, որ, իբր թե այն ճանապարհ է, իին Արեկալի հետք: Իսկ մյուսները, որոնք սրանցից ավելի տգետ են, ասում են թե Պերսեֆոնիայի առագաստն է, որին արքենացիները սպիտակ սուզ են անվանում: Ուրիշները ասում են, թե իբր Հերակեսը Գերոնի նախիրն այդ շավլով է քշել: Այդ նույն ուսմունքին հետևողներից ումանք էլ ասում են, թե այդ Արամազդի կնոջ՝ Հերայի ստիճնքից թափված կաթն է: Դարձյալ հայոց նախնիներից ումանք ասում են, թե Վահագնը՝ հայերի նախնին, սի խիստ ձմռան ժամանակ գողացել է ասորեստանցիների նախնու՝ Բարշամի, դարմանը, որին մենք ավանդաբար հարդագրողի հետք ենք անվանում* (Էջ 95): Այս բոլոր առասպելական պատումները «չար փիլիստիաների» հնարած զրույցներ համարելով, կոչ է անում չհավատալ դրանց, այլ վստահել գիտական մտքին՝ բարի փիլիստիաների կողմից արտահայտված: Դեն նետեցեք այդ ամենը, ո՞վ աստվածասեր մարդիկ, և այդպիսի բաների վրա ուշ մի դրեք, քանի որ բարի փիլիստիաները դրա մասին ասացին, որ դրանք կուտակված բազմաթիվ մեծ ու փոքր աստղեր են, որոնք աղոտ երևալու հետևանքով միավորված լույսով

են երևում (Եջ 96): Բնականաբար, սա Ծիր Կաթինի սպառիչ գիտական պարզաբանումը չէ, բայց որ գիտական է, այլ ոչ առասպելական՝ անժխտելի:

Շիրակացին, անշուշտ, նույնպես անսխալական չէր: Հայտնի է, օրինակ, որ նա երկրակենտրոն ուսմունքի հետևորդ է եղել պատկերացնելով, որ Արևն է պտտվում Երկրագնդի շուրջը: Բայց դա ոչ այնքան նրա սխալ պատկերացումն էր, որքան հետևանքն այն ժամանակ արևակենտրոն տեսակետի դեռևս ամրապնդված չինելու հանգամանքի: Բնականաբար, Տիեզերքի վերաբերյալ մարդկության պատկերացումները դարերի ընթացքում են ձևավորվել և, իհարկե, հաճախ սխալից դեպի ճիշտը գնալով: Արդեն իսկ նվաճում էր այն, որ VII դարի գիտնականը տեղյակ է եղել Երկրի գնդաձևության, նրա պտտվելու, բնույթյան զանազան երևույթների մասին, որոնց բավականին ճիշտ բացատրություններ է տալիս, կամ գոնե փորձում է տալ՝ այն ժամանակվա գիտության շրջանակներում: Եվ եթե պետք է լինում, քննադատաբար է մոտենում նաև եկեղեցու որոշ հայրերի սխալ տեսակետներին, օրինակ, եթե նրանցից ումանք կարծում են, թե Լուսինը ոչ թե Արեի լույսով է լուսավորվում, այլ սեփական լույս ունի (Եջ 97): Հարցը բազմակողմանի քննության առնելով, եզրափակում է՝ Բայց ես հավանություն եմ տալիս այն բազմաթիվ գիտնականների կարծիքին, որոնք գտնում են, որ Լուսինն իր լույսը ստանում է Արեգակից (Եջ 98):

Հույժ կարևոր է նաև Շիրակացու այն միտքը, թե՝ Արեգակն իր լույսն ու շերմությունը ստանում է արփուց, դարձյալ վկայակոչելով բարի փիլիսոփաներին և հոգնոր հայրերին (որոնք, ի դեպ, նույնպես միակարծիք չեն այս հարցում): Այսինքն, անկախ նրանից, թե ով է գիտական մտքի հեղինակը՝ իին հեթանոս գիտնականները թե քրիստոնյա հայրերը, Շիրակացին կողմնակից է գիտական բացատրությանը, որին ինքը հասնում է իրեն հայտնի բոլոր տեսակետները քննության առնելուց հետո միայն:

Տիեզերագիտական աշխատության վերջերում ինքը նույնպես անդրադառնում է Կենդանակերպի նշաններին ու տալիս դրանց մանրամասն նկարագիրը, անդրադարձ է կատարում նաև աստղաբաշխությանը, շանալով հարցերին տալ գիտական բացատրություն: Իսկ ամենավերջին մասում, վերնագրված «Այն մասին, թե ինչպես է Արիստոտելն ապացուցում, որ տարերքի շարժումն Աստված է», Շիրակացին ներկայացնում է իր հավատամքը՝ եթե կա անհողողող և վնասի ու ազդեցության չենթարկվող ... մի ուժ՝ որ իր մեջ այդ գորությունն է կրում, ապա նա է Աստվածը՝ ամեն ինչի Արարիչն ու շարժողը (Եջ 125):

Արարչի, մարդու և վերջինիս կողմից աշխարհընկալման փոխապակցվածության վերաբերյալ Շիրակացու բազմաթիվ խորհրդածություններից է հետևյալ հատվածը, որում ի հայտ է գալիս նաև բնության երևոյթների հանդեպ նրա սքանչանքը. Երկնքի և երկրի ստեղծագործության սկզբից և անձրևների սկսելու ժամանակից, գոյություն ուներ այս նշանակը, որի շնորհիվ մարդիկ իմացան ինչպես հորդ անձրևների առաջացման, այնպես և նրանց դադարելու մասին: Այդ նույն ժամանակ [Քարձրյալը] սահմանեց արհավիրքներ հորդ անձրևների միջոցով, որով դատապարտեց (մարդկանց) առաջին դարաշրջանում: Եվ նա ուխտ դրեց արդարի [Նոյի] հետ, որ բարկության նման հեղեղ չի լինելու երկրի վրա: Բայց սովորական անձրևները, որ լինում էին մեծ ջրհեղեղից առաջ, ինչպես և ծիածանի հանդես գալը, որ գոյություն ուներ ջրհեղեղից առաջ, շարունակվեց ջրհեղեղից հետո ևս, այսինքն՝ անձրևները և շողերը, որոնցից կազմված է ծիածանի կամարը իր բազմաթիվ գույներով: Եվ մարդիկ, դիտելով այն, հույսով են լցվում դեպի առաջին կատարյալ ստեղծագործությունը (Էջ 92):

Մեծագույն հարգանքով ու ակնածանքով վերաբերվելով անցյալի իմաստուններին, Շիրակացին անհրաժեշտ է համարում նրանց ժառանգությունը ճանաչելն ու, դրանից օգտվելով, նոր քարեր ավելացնելը աշխարհանաչողության երկնասալաց կառուցին, որպեսզի գիտության ծառը մշտադար ու կանաչ լինի ու հասուն պտուղներ տա. Նախկին ժամանակներում իմաստուն մարդիկ մանուկ հասակից իրեն կյանքը նվիրել են երկնային երևոյթների ուսումնասիրությանը և խորացել են իմաստափրական գիտության էության մեջ, հասկացել են ամեն ինչ և մտքով վեր խոյացել երկնաձեմ բարձրությամբ, նրանք պսակներ, կալվածներ և շնորհակալություններ են ստացել մեծամեծ թագավորներից: Իսկ եկեղեցու ուսուցիչները, որոնք իրենց կյանքը նվիրել են ուսումնասիրության՝ անցնելով ամեն կարգի ճգնությունների սահմանից, պահել են աստվածային հավատքը և խորամուխ եղել գիտության մեջ: Եվ քանի որ Սուլր գրի մեջ արձանագրված օրէնքները հակառակ չեն բնական գիտության, և նրանց մեջ գոյություն ունի միասնություն, առաջին իմաստասերները մեզ համար դաստիարակ են հանդիսանում: Նրանց ասածերը քննության առնելով, տեսնում ենք նրանց ճշմարտությունը: Եվ մեր նախկին հոգևոր հայրերը վերցրին նրանց ճշմարտացի խոսքերը, որպեսզի իրենց երկու կողմերով՝ արմատով ու ծայրի պտուղներով՝ պահելով մեզ աստվածային հավատքի մեջ, լցվելով ծայրի պտուղներով և հաստատուն մնալով արմատին, միշտ կանաչ և պտղաբեր պահենք գիտությունը (Էջ 90):

Սա է մեծ գիտնականի աշխարհը՝ պատկերացում Արարչի մասին, որ ստեղծել է ամենայն ինչ և զիտություն, որ կոչված է ճանաչելու և մեկնելու Արարչի ստեղծածը, հենվելով թե՝ անցյալի գիտնականների ուսումնասիրությունների վրա, թե ստեղծելով նոր գիտական միտք՝ նոր ժամանակների պահանջներին համապատասխան։ Այսպիսով, չմերժելով հեթանոս անցյալի գիտական ժառանգությունը և ընդունելով նրանում ամբարված բարիքը, Շիրակացու ջանքերն ուղղված են եղել նաև ապագայի գիտության առաջընթացն ապահովելուն, ինչը վկայում է նրա՝ ժամանակի առջև իր պատասխանատվությունը զգացող մեծագույն մտավորական լինելը։

## **Anania Shirakatsi and “Pagan” Scientists**

**Gohar VARDUMYAN**

*Institute of History, NAS RA*

Anania Shirakatsi's approach to the views of "Pagan" scientists is discussed. He had special attitude to ancient science and its representatives. In his various works he criticizes their wrong views. Shirakatsi was especially good in distinguishing the correct and erroneous points of view by different scientists and he could chose the right approach and add his own one.

# Կրոնապատմական ենթատեքստերը

## Անանիա Շիրակացու աշխատություններում

**Նորա ԵՐԶՆՎՅԱՆ**  
**ԵՊՀ Ռումանագերմանական բանասիրության ֆակուլտետ**

**Ամփոփագիր:** Սույն աշխատանքը իր բնույթով նորամուտ է և արդիական, քանի որ 7-րդ դարի թվաբան, աշխարհագրագետ, բնական գիտությունների ոլորտում թերևս միջնադարյան ամենաականավոր ներկայացուցյան՝ Անանիա Շիրակացուն, ընդունված է ընկալել գրությունիշական գիտությունների շրջանակում և նրա աշխատությունները ընդունված է քննել սոսկ այդ տեսանկյունից: Սակայն հռովածը ուղեցույց է հանդիսանում ընթերցողի ուշադրությունը կենտրոնացնել ոչ միայն իր աշխատությունների բնագիտական ուղղվածության, այլև ենթատեքստային պատմակրոնական դիտարկումների վրա: Անանիա Շիրակացու գրառումներն մի շարք ճշտումներ են մտցում Հայաստանում տեղի ունեցած պատմական իրողությունների վերաբերյալ, դա ինքնին հետաքրքրական է Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերությունները լուսաբանելու տեսանկյունից:

Իր աշխատությունների պատմական շերտերի էականությունն ապացուցելու համար բավական է միայն նշել որ Շիրակացին իր "Խնդրագրքում" նշել է մի քանի օրինակ, որոնք հետազայում Մանանդյանը կարևոր է համարել օգտագործել՝ վաղ ֆեոդալիզմի շրջանում ստրկատիրական կացութաձևի առկայությունը ապացուցելու համար, ինչը պատմական նշանակալի փաստ է:

**Հանգուցային բառեր.** միջնադար, գիտություն, ճշտումներ պատմական իրողությունների վերաբերյալ, կրոնակղերական մտածելակերպ, անհիմն մեղադրանքներ, գիտական արդիական լուծումներ

Շիրակացին 7-րդ դարի հայ մատենագիր է, ըստ Էռլիյան բնական գիտությունների ոլորտում նա է համարվում առաջին ականավոր ներկայացուցիչը: Շիրակացու մասին առկա են կենսագրական փաստեր, քանի որ նա հայ հեղինակներից միակն է, ով գրել և մեզ է թողել իր ինքնակենսագրականը՝ «Վասն որպիսութեան կենաց իւրոյ», որից և նրա

կյանքի և գործունեության մասին տեղեկություններ ենք քաղում: Շիրակացին ծնվել է Այրարատ աշխարհի, Շիրակ գավառի՝ Շիրակավան կամ Անանիա գյուղում 605-610-ականներին:<sup>1</sup>

Շիրակացին հանդիպում է սառն ընդունելության, որի առթիվ սրտնեղած գրում է, որ Տյուքիկոսի մոտ ուսանեց մի զիտություն, որ օգտակար է և ձեռնտու ողջ աշխարհին, սակայն ոչ ոք շնորհակալ չգտնվեց և նրա աշխատությունը չմեծարվեց: Մեկ այլ տեղ դարձյալ դառնացած գանգատվում է, որ «ծույլերը, ձանձրացողները, սնափառները և տգետները» իրեն անվանարկում են և բամբասում: Շիրակացին այն ապարախտ հեղինակներից մեկն էր, ով ըստ արժանվույն չէր գնահատվում: Եղել է ժամանակ, երբ Շիրակացին անիրավացիորեն մեղադրվել է պաշտոնական գաղափարախոսությանը հակընդդեմ և խորթ ստեղծագործություններ գրելու մեջ:

Չնայած բոլոր այս մեղադրանքներին Շիրակացին շարունակում է իր զիտակրթական գործունեությունը, հաղթահարելով բոլոր դժվարությունները նա ձեռնամուխ է լինում դպրոցների բացելու գործին. որտեղ դասավանդում էր հենց ինքը: Շուտով այս դպրոցների համբավը տարածվում է ամենուրեք, և իր անձներ գործունեության համար Շիրակացին արժանանում է «Մեծահանձար ուսուցապետ» մականվանը: 7-րդ դարի 40-70-ական թվականներին Շիրակացին գրում է մեծարժեք աշխատություններ տումարի, թվաբանության, աստղաբաշխության, աշխարհագրության, օդերևութաբանության և այլ զիտությունների մասին, սակայն դրանով չսահմանափակվելով, իր աշխատություններում խորապես անդրադարձնում է փիլիսոփայությանն ու երաժշտությանը վերաբերող մի շարք հարցերի:

Շիրակացոց մեջ հասած ավելի քան 15 աշխատությունները բոլորն ել ակնառու են իրենց բարձր զիտական խորաթափանցությամբ և ինքնատիպությամբ, որոնք արժեքավոր ներդրում են զիտությունների պատմության մեջ ընդհանրապես, և ժամանակին ունեցել են լայն կիրառություն: Շիրակացին իր ուսումնասիրությունները գրելիս օգտվել է նաև օտար աղբյուրներից, որոնց հանդեպ ցուցաբերել է ինքնուրույն, քննադատական մոտեցում: Շիրակացին չի սահմանափակվել միայն ճշգրիտ զիտությունների շրջանակներով, նա գրել է նաև պատմագիտական բնույթի մի ստեղծագործություն, որը ժամանակագրական սկզբունքով ընդգրկում է Հայաստանի պատմությունը հնագույն ժամանակներից մինչև 685 թվականը:

<sup>1</sup> Ս.Մելիք-Բախչյան, Հայոց պատմության աղբյուրագիտություն, Երևան, 1989թ., էջ 131:

Հենց այն հանգամանքը, որ Անանիա Շիրակացին իր պատմությունը գրել է ժամանակագրության ձևով. փաստում է, որ նա հետևելով Մովսես Խորենացուն պատմության մեջ Էական տեղ է հատկացնում ժամանակագրությանը: Իսկ նրա այդ պատմագիտական աշխատությունը մեծ կարևոր ճշտումներ է մտցնում հայ ժողովրդի պատմական իրադարձությունների թվագրման մեջ:<sup>2</sup> Նաև հնարավոր է, որ Շիրակացու աշխատություններից ոչ անմիջական արտագրությամբ, բայց ուղիղ հետևողական գրվել են մի շարք «նոր» աշխատություններ, օրինակ ըստ պրոֆեսոր Գարեգին Պետրոսյանի, Անանիա Շիրակացու և թվաբան ու երկրաչափ Նիկողայոս Զմյուռնացի Ռաբդայի, այլ կերպ՝ Նիկողայոս Արտավագրի, աշխատությունների միջև կա որոշակի նմանություն:<sup>3</sup> Նիկողայոս Արտավագրի աշխատությունները հայտնաբերվել են Փարիզի ազգային գրադարանում, հունարեն մի ձեռագրում, ըստ Գ. Պետրոսյանի հոդվածագիր Արտավագրը հայ է:<sup>4</sup> Հատ Հակոբ Մանանյանի, ով խորապես ուսումնասիրել է Շիրակացու աշխատությունները, իր երկերի Զ հատորում արծածել է Շիրակացու աշխատություններում նրա կիրառած չափման միավորների իրական չափերը և դրանց մանրակրկիտ վերլուծությունը համեմատել Դեկուլեմանշի կիրառած չափման միավորների հետ, և հետո եկել հետևողական, որ հնարավոր է չափական այդ միանգամյան նոր սիստեմները իրականում փիլիտերյան հին սիստեմի նմանողությամբ են ստեղծվել:<sup>5</sup>

Անանիա Շիրակացու գրառումներով մի շարք ճշտումներ են մտցում նաև Հայաստանում տեղի ունեցած պատմական իրողությունների վերաբերյալ: Ինչպես արձանագրում է Լեռն, Ա. Շիրակացին իր թվաբանական խնդիրներից մեկում նկարագրում է պարթևական ծագում ունեցող Կամսարական իշխանների մի որս: Այս պարզ նկարագրության մեջ ի հայտ է գալիս որոշակի պատմական միջավայր: Նա պատմում է որսի էռությունը և ամենին այլ խնդիր հետապնդելով, նույնիսկ որոշակի թվեր է արձանագրում այդ դեպքի վերաբերյալ:<sup>6</sup>

<sup>2</sup> Ս. Մելիք-Բախչյան, նշվ. Աշխատ., էջ 138

<sup>3</sup> Գ. Պետրոսյան, Մաթեմատիկան Հայաստանում հին և միջին դարերում. Երևան 1959թ. էջ 176-178

<sup>4</sup> Ս. Առաքելյան, Հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման պատմություն, հատոր 3-րդ., Երևան 1975թ. , էջ 125, 133

<sup>5</sup> Հ. Մանանյան, Երկեր, հատոր Զ, Էջմիածին. 1985թ., էջ 310

<sup>6</sup> Լեռ, Երկերի ժողովածու, 3-րդ հատոր, Երևան 1966թ., էջ 264:

Հովսեփ Օրբելին դարձյալ խորությամբ ուսումնասիրել է Անանիա Շիրակացու աշխատությունները և անդրադարձել Շիրակացու թվաբանական լավագույն ձեռնարկին՝ «Խնդրագրքին»: Զեռնարկի առաջարանի բացակայությունը թույլ է տվել հիմնվել միայն աշխատության այս կամ այն իրողության վերլուծության վրա: Ինչպես օրինակ Շիրակացու աշխատություններն ուսումնասիրող Գ. Տեր-Մկրտչյանի հետ համակարծիք լինելով՝ ենթադրել, որ «Խնդրագրքի» պատվիրատուններն են Կամսարական նախարարական տան ներկայացուցիչները, քանի որ «Խնդիրներից վեցը գրվել են Կամսարականների վերաբերյալ, իսկ մնացածում իրադարձությունները դարձյալ պտտվում են Կամսարականների շուրջը»:<sup>7</sup> Օրբելին համաձայնել է այս կարծիքին և իր կազմած թեմատիկ ցանկում խնդիրներից տարանջատել և ի մի է հավաքել այդ խնդիրներում հիշատակվող Կամսարականների անունները: Հետո առաջ է գալիս ևս մի խնդիր. ինքնակա են, արդյոք, Շիրակացու խնդիրները, թե կա հավանականություն, որ դրանք թարգմանություններ են: Պարզ է, որ բնական գիտությունների մի շարք հարցեր առանձին անհատների տեղադրությունների արգասիքներ չեն, այլ ստեղծվել են տասնյակ դարերի և տասնյակ սերունդների կողմից: Ուսումնասիրելով Շիրակացու աշխատությունները պարզ է դառնում, որ թեման մեծամասամբ վերցված է Անանիայի շրջապատի կենցաղային իրականությունից, գործողության վայրը գերազանցապես նրա հայրենի գավառը՝ Շիրակն է, իսկ գործող անձիք՝ տեղի իշխանները: Իսկ եթե դիտարկենք «Խնդրագիրքը», ապա ըստ Օրբելու հունարենից փոխառություն է համարվում երեք խնդիր, մեկը ենթադրաբար Շիրակացին գրի է առել իր ուսուցիչ՝ Տուքիկոսի տեղեկության հիման վրա, իսկ մնացալ քսանը հեղինակի կազմածն են՝ տեղական նյութերի հիման վրա: Իր ուսումնասիրության մեջ Օրբելին հատուկ ուշադրություն է դարձրել Շիրակացու «Խնդրագրքում» առկա պատմական մի շարք իրադարձությունների վրա, որոնք նշանակալի են Հայաստանի սոցիալական, տնտեսական, քաղաքական պատմության համար: Եթե օրինակ վերցնենք «Խնդրագրքի» 21-րդ խնդիրը, այստեղ նա արձարձում է Ներսեհ Կամսարականի գերեվարության պատմական անցքը և մանրամասն շարադրում է ժամանակի այդ դեպքին առնչվող իրավիճակը: Այս խնդրի լուծումից երևում է, որ Ներսեհ Կամսարականի վերցրած գերիների թիվը կազմել է 2240, որոնցից 1120-ին նա նվիրել է Պարսից թագավոր Պերողին,

<sup>7</sup> Գ. Տեր-Մկրտչյան, Անանիա Շիրակացի, էջ 16-17

160նն իր որդուն, 120-ը՝ դարպետին, , 60-ը՝ իր եղբայր Հրահատին, 80-ը՝ հայ ազատներին, 40-ը՝ եկեղեցիներին, 30-ը՝ մյուս եղբորը՝ Սահակին և իր մոտ մնացել են ընդամենը 570 գերի: «Խնդրագրքի» համար կյութ ծառայած այս իրադրությունն ինքնին հետաքրքրական է Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերությունները լուսաբանելու տեսանկյունից: Իսկ այս օրինակի կարևորությունը փաստելու համար, թերևս նշեմ, որ Հակոբ Մանանդյանը իր «Ֆեոդալիզմը հին Հայաստանում» աշխատության մեջ կարևոր է համարել օգտագործել այս փաստը՝ վաղ ֆեոդալիզմի շրջանում ստրկատիրական կացութաձևի առկայությունը ապացուցելու համար:<sup>8</sup> Այս կերպ Մանանդյանը Շիրակացու հիշատակման անմիջական միջնորդությամբ հետևություն է արել, որ վաղ ֆեոդալիզմի շրջանում դեռևս ստրկատիրական տնտեսություններ ունեին ոչ միայն իշխաններն ու բարձրաստիճան զինվորականներն, այլև՝ եկեղեցիները, որոնց և գերիներ է նվիրել Ներսեհ Կամսարականը: «Խնդրագրում» հիշվում են նաև իրադարձություններ, որոնք կապված են հայ ժողովրդի մղած ազատագրական պատերազմների հետ՝ ընդում Սասանյան Պարսկաստանի:<sup>9</sup> Շիրակացին իր խնդիրներից մեկում մատնացուց է անում Զորակ Կամսարականի քաջազործությունը, ով սպանել էր պարսիկ մարզպան Սուրեն Վշասպին: Շիրակացու տեղեկություններից երևում է, որ Զորակ Կամսարականը զիսավորել է հայկական գորագնդերից մեկը, հաղթանակ տարել՝ պարսկական գորքերից կոտորելով 17602 հոգի: Ուշագրավ է նաև այն, որ այդ տեղեկությունն իրեն հայտնել է հայր՝ Հովհաննեսը. «Այսպես լուսա ի հօրէ իմսէ», - գրում է նա:<sup>10</sup>

Երբեմն նկատելի է Շիրակացու, զգուշությամբ, նույնիսկ Աստվածաշնչին հակադրվելու միտումները, ինչը ճիշտ չի ըմբռնվել ժամանակակիցների կողմից և Շիրակացուն ճիշտ քրիստոնեական ուղղուց շեղվելու մեջ մեղադրելու առիթ է հանդիսացել:

Միջնադարում Անանիա Շիրակացին գիտության խավար միշավայրում առաջ քաշեց բնական երևույթներին տրվող մի շարք գիտական հիմնավորումներ: Իր փիլիսոփայական մտորումներով ու ասույթներով Հովհաննես Սարկավագը (1045-1129թթ.) հետևել է Անանիա Շիրակացուն, առաջ է քաշել այն միտքը, թե գիտության հիմքը փորձն է, որովհետև փորձը կասկածանքի ենթակա չէ ու հաստատուն է, որ գիտության մեջ պետք է

<sup>8</sup> Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, Երևան. 1932թ., էջ 236

<sup>9</sup> Հայագիտական հետազոտություններ, պրակ Ա, Երևան 1974թ. էջ 20-29

<sup>10</sup> Անանիա Շիրակացու մատենագրությունը, Երևան 1994թ., էջ 230

դեկավարվել ոչ միայն կրոնա-եկեղեցական դոգմաներով, այլև արտաքին, այսինքն հունական, կամ այլ աշխարհիկ գիտության տվյալներով:<sup>11</sup>

Այդ ժամանակաշրջանում նունիսկ բնական երևոյթներին տրվում էին այլաբանական մեկնություններ, երբեմն հեքիաթային, հրաշապատում բացատրություններ: Այդ ամենին վերջ դրեց Շիրակացին, երբ միանգամայն ձշգրիտ գիտական ձկուն մտքով սահմանազատեց ու նկարագրեց օրինակ գիշեր և ցերեկ, արև ու լուսին, և առհասարակ՝ մշուշ, ամպրոպ, կայծակ, որոտ, անձրև, ձյուն, կարկուտ և փոթորիկ բնական երևոյթները, որոնց նախկինում վերագրվում էին խիստ գերբնական ուժերի լծակներ, ինչպես նշում է ինքը Շիրակացին, օրինակ փոթորկի մասին, որի վերաբերյալ հստակ արտահայտվում է իբրև բնության երևոյթի՝ մեջ բերելով մի վարկած, թե այդ երևոյթը մարդկանց մեջ բնութագրվում է իբրև վիշապ քաղելու գործընթաց<sup>12</sup>, որն ինչպես հայտնի է հին հայկական վիշապական բանահյուսության մեջ տարածված մոտիվ է, ինչն էլ Շիրակացին համարում է ցնդաբանություն: Կամ օրինակ Շիրակացին մերժելով Ծիր կաթինի մասին եղած առասպելները, հերքում է դրանք և տալիս գիտական միանգամայն ձշգրիտ բացատրություն, որ Ծիր կաթինը «հեռավոր խիտ աստղերի բազմություն է, խիստ աղոտ լույսով, դրա համար էլ նրա լուսար թույլ և միաձույլ է երևում»:<sup>13</sup> Մեծ գիտնականից հազար տարի հետո միայն, 17-րդ դարում, Գալիլեյը, այն էլ հեռադիտակի օգնությամբ հաստատեց Շիրակացու եզրակացությունը:

Շիրակացու աշխատությունները ենթարկվել են անդամահատության, բնագրերը ցրված են տարբեր ձեռագրերում, դրանք առանձնահատուկ ուսումնասիրությունից զերծ են մնացել, բացի այդ հայագիտության մեջ ակներև անտարբերությունը նկատվում է նաև այն պատճառով, որ դրանք վերաբերում էին բնական, ձշգրիտ գիտություններին, իսկ վերջիններիս զարգացման ցածր մակարդակը ժամանակին չի խրախուսել այդ բնագավառների լայնածավալ ուսումնասիրումը:

<sup>11</sup> Ս. Պողոսյան, Հայաստանը զարգացած ֆեոդալիզմի շրջանում, պրակ 4, Երևան 1958թ. էջ 316

<sup>12</sup> Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հատոր 1, էջ 813

<sup>13</sup> Ս. Մելիք-Բախշյան, նշվ. աշխատ. էջ 134

## Գրականության ցանկ

- Մելիք-Բախչյան Ս., Հայոց պատմության աղբյուրագիտություն, Եր., 1989թ., էջ 131-138
- Պետրոսյան Գ., Մաթեմատիկան Հայաստանում հին և միջին դարերում. Երևան 1959թ., էջ 176-178
- Առաքելյան Ա., Հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման պատմություն, հասոր 3-րդ, Երևան 1975թ. էջ 125, 133
- Մանանյան Հ., Երկեր, հասոր Զ, Էջմիածին. 1985թ., էջ 310
- Լեռ, Երկերի ժողովածու, 3-րդ հասոր, Երևան 1966թ., էջ 264:
- Տեր-Մկրտչյան Գ., Անանիա Շիրակացի, էջ 16-17
- Մանանյան Հ., Ֆեոդալիզմը հին Հայաստանում, Երևան. 1932թ., էջ 236
- Հայագիտական հետազոտություններ, պրակ Ա, Երևան 1974թ. էջ 20-29
- Անանիա Շիրակացու մատենագրությունը, Երևան 1994թ., էջ 230
- Պողոսյան Ս., Հայաստանը զարգացած ֆեոդալիզմի շրջանում, պր. 4, Եր. 1958թ., էջ 316
- Հայ ժողովրդի պատմության քեսառոմատիա, հասոր 1, էջ 813

## Religious-Historical Sublayers in Anania Shirakatsi's Works

Nora YERZNKYAN

YSU Faculty of Romance and Germanic Philology

**Keywords:** The Middle Ages, science, determining the historical realities, religious thinking, baseless accusations, modern scientific solutions.

This work is forward-looking with its content, because 7th century mathematician, geographer and one of the most important representatives of natural sciences in the Middle Ages Anania Shirakatsi is mostly recognized in the frames of above-mentioned sciences and his works are mainly studied under this angle. However this article is a sort of guide to focus reader's attention not only on his works about natural sciences, but also on his religious and historical observations. Some parts of his works give clear description about some historical events in Armenia which is very important in highlighting social and economic relations. In order to prove the importance of his works, it is enough to mention that Shirakatsi in his "Khndragirq" (book of tasks) gave several examples which was later used to prove the existence of vassal living in the early feudal stages, which is an important historical fact.

# Անանիա Շիրակացի երաժիշտը

## Տաքիկ ՇԱԽԿՈՒԼՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտ,

Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիա

Ինչպես հայտնի է, միջնադարյան մեծ գործիչները չեն սահմանափակվել գործունեության մեկ որոշակի ոլորտով: Միննույն անհատը կարող էր ներկայացնել տարաբնույթ բնագավառներ՝ միաժամանակ ընդգրկելով բնագիտական և հումանիտար գիտություններ: Դա վերաբերում է ինչպես հայկական մշակույթին, այնպես էլ՝ այլ ազգերի: Միջնադարյան մտածողներից շատերը հայտնի են նաև որպես երաժշտության բնագավառի ներկայացուցիչներ՝ շարականագիրներ, երաժշտության տեսաբաններ, պատմաբաններ ու գեղագիտական տարաբնույթ մտքերի կրողներ: Այս երևույթը տարօրինակ կարող է թվալ այսօրվա մտածողության ոփրոքերից, երբ մասնագիտություն հասկացողությունն ունի որոշակի կողմնորոշում և, անգամ ավելին, կարևորվում է որևէ մասնագիտության ավելի նեղ առումով մասնագիտացումը: Սակայն մյուս կողմից՝ բնական է այն իրողությունը, որ տարբեր ոլորտների խորապես տիրապետող անհատը կարող է ել ավելի լուրջ և բնորոշ արդյունքներ արձանագրել՝ բնագավառներից յուրաքանչյուրի առանձնահատկությունները, նրանցից քաղված գիտելիքներն ու հմտությունները միմյանց համարելու, համատեղ կիրառելու արդյունքում:

Ինքնին հետաքրքիր է այն փաստը, որ միջնադարյան Հայաստանում երաժշտությունը կվարդիվիումի գիտությունների բաղկացուցիչ մաս էր կազմում՝ թվաբանության, երկրաչափության և աստղաբաշխության հետ միասին, ի հակադրություն տրիվիումի գիտությունների, որտեղ ընդգրկվում էին քերականությունը, հուետորությունն ու տրամաբանությունը (կամ դիալեկտիկան): Միջնադարում ընդունված այս ստորաբաժանումն առաջարկել է Դավիթ Անհաղթը՝ հիմնվելով Պյութագորասի և Բուցիոսի տեսական հետազոտությունների վրա<sup>1</sup>:

<sup>1</sup> Տես՝ Bower M. Calvin, *The Transmission of Ancient Music Theory into the Middle Ages*, The Cambridge History of Western Music Theory, Cambridge University press, 2002, pp. 141-142. Հայ իրականության մեջ այդ երևույթի մասին գրում է Վ. Չալոյանը. Վահագին, Բուցիոսի Փուլուսի մասին, 1946, էջ 146.

Անանիա Շիրակացին առավելապես հայտնի է որպես հայ իրականության մեջ ճշգրիտ գիտությունների հիմնադիր, ապա նաև՝ փիլիսոփա, մատենագիր, տումարագետ, մանկավարժ: Այս ամենի հետ մեկտեղ նա եղել է երաժիշտ ու երաժշտագետ և առանցքային դեր ունի հայ երաժշտության պատմության մեջ: Թերևս սա այն դեպքն է, եթե բնական գիտություններին ու, մասնավորապես, թվարանությանը տիրապետելու հանգամանքն ուղղակիորեն նպաստել է երաժշտության մեջ առանձնակի կարևոր բնագավառի՝ լարվածքի և ակուստիկայի ուսումնասիրումը որակական այլ մակարդակի հասցնելուն:

Հայ երաժշտությունը զարգացման բարձր մակարդակ է ունեցել դեռևս նախաքրիստոնեական ժամանակներում<sup>2</sup>: Թեև այս ժամանակաշրջանին պատկանող կենդանի երաժշտական նյութ մատչելի չէ, սակայն գիտնականները մի շարք կողմանակի ճանապարհներով ապացուցում են այդ իրողությունը, մասնավորապես՝ շեշտելով Աստվածաշնչի հայերեն թարգմանության մեջ երաժշտական գործիքների հայերեն անվանումները, առասպելական հիմք ունեցող երգվող պատմությունների գոյությունը, որոնցից օգտվել են անգամ հայ պատմիչները, ինչպես նաև պեղումներից հայտնաբերված գոտածոնները և այլն:

Քրիստոնեության ընդունումից և գրերի գյուտից հետո՝ արդեն իսկ գոյություն ունեցող հիմքի վրա սկսել է ձևավորվել հայ հոգևոր երաժշտությունը, որը հետևողականորեն զարգացրել են հայ եկեղեցու հայրերը և որը զարգացման մոտավորապես հազարամյա ուղի է անցել: Հայ հոգևոր երաժշտության ֆունկցիոնալ նշանակությունն ու գեղարվեստական արժեքն այնքան մեծ է, որ նրա կիրառումը երբեք չի դադարել, և այն գործածվում է նաև մեր օրերում՝ թե՝ եկեղեցական - ծիսական միջավայրում, թե՝ համերգային շրջանակներում:

Ավանդաբար համարվում է, որ հայ հոգևոր երաժշտությունը 5-րդ դարում սկզբնավորել են կաթողիկոս Սահակ Պարթևը և հայոց գրերի գյուտարար Մեսրոպ Մաշտոցը: Նրանք ստեղծել են առաջին շարականները՝ համաձայն ավանդաբար հայ երաժշտության մեջ կենցաղավարող ձայնեղանակային մտածողության: Նրանք ել համարվում են հայ ավանդական երաժշտության առաջին տեսաբանները:

<sup>2</sup> Այս առնչությամբ հական ապացույցներ են բերում Ք. Քուշարյովը, Ն. Թահմիզյանը: Տես՝ **Կոմիարչ X.**, *Вопросы истории и теории армянской монодической музыки*, Ленинград, Государственное музыкальное изд., 1958, с. 9-76. **Տամազյան Н.**, *Теория музыки в древней Армении*, Ереван, изд. АН Армянской ССР, 1977, с. 18-57.

Հայ հոգևոր երաժշտությունն իր էությամբ մոնողիկ է, այսինքն՝ միաձայն և միաձայնության մեջ ինքնաբավարար<sup>3</sup>: Նրա առանձնահատկություններից է այն հանգամանքը, որ կրում է հավասարազոր արժեքային նշանակությամբ օժտված երկու բաղադրիչներ՝ երաժշտությունը և բանաստեղությունը, ուստի այն երաժշտա - բանաստեղծական արվեստ է:

Սահակ Պարթևից և Մեսրոպ Մաշտոցից հետո շարականագրությունը շարունակել են նրանց աշակերտները և հետևորդները, այդ թվում՝ պատմահայր Մովսես Խորենացին, կաթողիկոսներ Հովնան Մանդակունին, Գյուտ Արահեղացին: 6-7 դարերում հոգևոր երաժշտության ծաղկումը շարունակվեց՝ կատարելազործման և հարստացման որոշակի միտումով: Այդ շրջանի շարականագիրների մեջ, ի թիվս Կոմիտաս Աղցեցի կաթողիկոսի, Սահակ Զորափորեցու, Բարսեղ Ճոնի, կարևորվում է նաև Անանիա Շիրակացու անունը:

Շիրակի դպրեվանքը, որի ներկայացուցիչն է Անանիա Շիրակացին, հայ իրականության մեջ մեկն էր վարդապետանոցների մի ամբողջ շարքից: 7-րդ դարում գործում էին Սյունյաց վարդապետանոցը, Արշարունյաց կամ Երասխանարի, Այրիվանքի կամ Գեղարդավանքի դպրոցները և այլն: Նրանցից յուրաքանչյուրի դերը մեծ էր շարականագիրների գործունեությանը խթանելու առումով: Այս շրջանում այնքան մեծ թվով շարականներ են ստեղծվել և շրջանառվել, որ դեռևս 7-8 դարերում անհրաժեշտություն է առաջացել դրանք կանոնակարգելու և դրանցից որոշակի երգեցողություններ ընտրելու համար: Արդյունքում ավելի ուշ ստեղծել են շարականների կանոնակարգված ժողովածուն՝ Շարակնոցը, որի մեջ իր ավանդն ունի Անանիա Շիրակացին:

Յուրաքանչյուր շարականագիր ստեղծել է եկեղեցու որոշակի տոնին, քրիստոնեական անհատին կամ եկեղեցական որոշակի իրողությանը նվիրված շարականներ, օրինակ՝ ապաշխարության (Մեսրոպ Մաշտոց), Ծննդյան (Մովսես Խորենացի), խաչի և եկեղեցու (Սահակ Զորափորեցի) և այլն: Ինչ վերաբերում է Անանիա Շիրակացուն, ապա նա հայտնի է որպես U. Հարության ծեսի շարականների մեծ մասի<sup>4</sup>, ինչպես նաև Վարդավառի<sup>5</sup> ու

<sup>3</sup> Կոմիարք X., նշվ. աշխ., էջ 3:

<sup>4</sup> Թահմիզյան Ն., Անանիա Շիրակացին և Հարության հարցնակարգերը, Էջմիածին, 1984, թիվ 5:

<sup>5</sup> Վարդավառը Ս. Զատիկի 14-րդ կիրակի օրը նշվող տոնն է, որը համարվում է Քրիստոսի այլակերպման օր՝ ըստ քրիստոնեական այն իրադարձության, երբ Քրիստոս Խաբոր լեռան վրա երևացել է իր աշակերտներին:

Հոգեգալստյան<sup>6</sup> առաջին օրերի կանոնների երգերի հեղինակ: Կանոնը ութ երգից բաղկացած շարք է՝ նվիրված միևնույն տոռնին, անհատին կամ իրադարձությանը: Անանիա Շիրակացու երաժշտա - բանաստեղծական ժառանգության մինչև այժմ հայտնի ժառանգության մեջ ընդգրկվում են 186 երգ Հարության հարցնակարգերից և 21 երգ Հոգեգալստյան և Վարդավառի կանոններից: Այսինքն, համարվում է, որ նա հեղինակ է Շարակնոցի շուրջ 200 երգի<sup>7</sup>:

Բազմազան են Անանիա Շիրակացու շարականների տեսքները՝ կառուցվածքային առումով և շարադրանքի բովանդակային տեսակետից: Նա հեղինակ է թե՝ արձակ, թե՝ չափածո, թե՝ «հայկական» չափ համարվող սկզբունքով գրված բանաստեղծական տեքստերի:

Հայ ավանդական երգեցողությունն ունի ծանր և չափավոր տիպի մեղեղիներ, հաճախ նաև միևնույն երգի թե՝ մեկ, թե՝ մյուս տարբերակների դրսորում, ինչը համարվում է երաժշտա - բանաստեղծական ժանրի զարգացման բարձր մակարդակի վկայություն: Անանիա Շիրակացին ևս հեղինակ է այդպիսի զույգ տարբերակներով շարականների:

Անանիա Շիրակացու շարականները, ինչպես նաև միջնադարյան հայ երաժշտության ամբողջ կանոնացված (այսինքն՝ եկեղեցու կողմից հաստատագրված) ժառանգությունը, ամփոփված են հայկական խազագրությամբ գրառված ձեռագրերում: Հայկական խազային նոտագրությունը հայ երաժշտության թերևս ամենից հանելուկային խնդիրներից է: Այն գործածվել է մոտավորապես 8-16-րդ դարերում: Այնուհետև՝ 17-18 դարերում, շարունակել են արտագրել խազային նոտագրությամբ գրառված ձեռագրերը, սակայն այդ շրջանում խազերն աստիճանաբար գործածությունից դուրս են եկել և մոռացվել<sup>8</sup>: Վերջին անհատը, որը երկարատև աշխատանքի արդյունքում կարողացել է վերականգնել խազերը կարդալու սկզբունքը, Կոմիտասն է: Ցավոք, Կոմիտասի գիտական և կոմպոզիտորական կորած համարվող ժառանգության մի մասն էլ խազերի ուսումնասիրությանը նվիրված աշխատությունն է: Մեզ նրա հետազոտությունների փոքր մասն է միայն

<sup>6</sup> Հոգեգալուստը առաքյաների վրա Ս. Հոգու իշնելու հիշատակության տոնն է, որը տեղի է ունեցել Ս. Հարության հիսուներորդ օրը:

<sup>7</sup> Թահմիզյան Ն., Անանիա Շիրակացին և Հարության ԱՉ - ԴԿ ութ հարցնակարգերը, Էջմիածին, 1984 Ե, էջ 27:

<sup>8</sup> Տես՝ Աքայան Ռ., Հայկական խազային նոտագրությունը, Երևան, Հայկական ՍՍՈ ԳԱ հրատ., 1959:

հասել, որը բավարար չէ խազային նոտագրությունը վերծանելու և կարդալու համար<sup>9</sup>:

19-րդ դարի սկզբում, երք արդեն, փաստորեն, խազային նոտագրությունից օգտվելն անհնար էր դարձել, և հայ եկեղեցական երգեցողությունն ավանդվում ու պահպանվում էր բանավոր կերպով փոխանցելու ճանապարհով, Կոստանդնուպոլսում Համբարձում Լիմոնճան անունով տիրացուն ստեղծեց հայկական նոր նոտագրություն՝ հիմնվելով խազային գրության նշանների վրա<sup>10</sup>: Այդ աշխատանքը խիստ արդյունավետ եղավ՝ տվյալ ժամանակաշրջանի առումով, քանի որ նրանով գրի առնվեցին, ուստի և կորստից փրկվեցին հայկական ավանդական երգեցողությունները, այդ թվում՝ Պատարագի երգեցողությունները, Շարակնոցը, Ժամագիրը: Այսինքն, ներկայում կիրառելի են Անանիա Շիրակացու շարականների այն գրառումները, որոնք իրականացվել են 19-րդ դարում՝ հայկական նոր նոտագրությամբ:

Հարց է առաջանում, թե որքանով նույնական են պահպանվել պատմության մի զգալի ընթացքում բանավոր ավանդված երգերը<sup>11</sup>: Այս առնշուրթյամբ մասնագետները կարծում են, որ թեև երգերը ժամանակի ընթացքում փոփոխություններ պիտի կրած լինեն, սակայն, ընդհանուր առմամբ, դրանց նույնականությունը հավաստի կարելի է համարել թեկուզ այն պատճառով, որ շարականագիրներից յուրաքանչյուրի թողած ժառանգությունն օժտված է որոշակի ոճական դրսնորումներով:

<sup>9</sup> Մեզ հասած նյութերի մեջ են «Հայ յեկեղեցական յերաժշտություն» և «Շարականի խազերի նշանակությունը» հոդվածները: Տես՝ **Կոմիտաս**, Հոդվածներ յեկեղեցում նաև **Վարդապետ**, Ուսումնասիրութիւններ եւ յօդուածներ, Գիրք F, Երևեւան, Սարգիս Խաչենց-Փրինթինֆո հրատ, 2007, «Le systeme des signes de prosodie de l'église Armenienne», «Հայ եկեղեցոյ առողջանութեան նշաններուն սիստեմը», էջ 131-149, «Le signes se la prosodie», «Առողջանութեան նշաններ», էջ 150-181, «Խազաբանությին», էջ 321-461:

<sup>10</sup> Հայ մշակույթի այս գործիչին կարևորել է նաև Կոմիտասը: Տես, օրինակ, «Հայոց յեկեղեցական յերաժշտությունը ԺԹ դարում» հոդվածը. Կոմիտաս, Հոդվածներ յեկեղեցում նաև Կոմիտասիրություններ, էջ 126-136:

<sup>11</sup> Հարցադրումը մասնավորապես Անանիա Շիրակացու առնշուրթյամբ քննարկել է Ն. Թահմիզյանը: Տես՝ **Թահմիզյան Ն.**, Գրիգոր Նարեկացին և հայ երաժշտությունը V-XV դդ., Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1985, էջ 167:

Անանիա Շիրակացու՝ երաժշտագիտական կարևոր ձեռքբերումն է ակուստիկայի (հնչականության) ուսումնասիրությունը: Իհարկե, զարմանալի չէ, որ բնագետ, բազմաթիվ հայտնագործությունների հեղինակ Անանիա Շիրակացին ուսումնասիրել է ակուստիկա երևույթը: Այդ ուղղությամբ կատարած նրա աշխատանքը հետազոտել է երաժշտագետ Ն. Թահմիզյանը, որը նպատակայնորեն Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանի Անանիա Շիրակացուն առնչվող ձեռագրերում փնտրել է երաժշտագիտությանը վերաբերող նյութեր և, փաստորեն, չի սխալվել<sup>12</sup>: Ն. Թահմիզյանը գտել է հետևյալ աղյուսակը:

### Աղյուսակ 1

Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է	Ը	Թ	Ժ
Բ	Դ	Զ	Ե	Ժ	Ճ	ԾԴ	ԾԶ	ԾԸ	Ի
Գ	Զ	Թ	ԺԲ	ԺԵ	ԺԸ	ԻԱ	ԻԴ	ԻԷ	Լ
Դ	Լ	ԺԲ	ԺԶ	Ի	ԻԴ	ԻԸ	ԼԲ	ԼԶ	Խ
Ե	Ժ	ԺԵ	Ի	ԻԵ	Լ	ԼԵ	Խ	ԽԵ	Ծ
Զ	ԺԲ	ԺԸ	ԻԴ	Լ	ԼԶ	ԽԲ	ԽԸ	ԾԴ	Կ
Է	ԺԴ	ԻԱ	ԻԸ	ԼԵ	ԽԲ	ԽԺ	ԾԶ	ԿԳ	Հ
Ը	ԺԶ	ԻԴ	ԼԲ	Խ	ԽԸ	ԾԸ	ԿԴ	ՀԲ	Զ
Թ	ԺԸ	ԻԷ	ԼԶ	ԽԵ	ԾԴ	ԿԳ	ՀԲ	ԶԱ	Ղ
Ժ	Ի	Լ	Խ	Ծ	Կ	Հ	Զ	Ղ	Ճ

Հին Հունաստանում, մասնավորապես Ալեքսանդրիայի դպրոցում, փիլիսոփաներն ունեցել են նման աղյուսակ, որը մեկնաբանվում է, մի կողմից, որպես բազմապատկման աղյուսակ, մյուս կողմից՝ որպես հնչյունային հարաբերությունների որոշակի համակարգ: Հայտնի է, որ դեռևս Պյութագորասն է նկարագրել բնական հնչյունաշարի հիմքերը: Նա նկատել է, որ հնչող լարը կիսելու հետևանքով առաջանում է այդ հնչյունի օկտավա վեր

<sup>12</sup> Տես՝ Թահմիզյան Ն., Մի էջ հայկական վաղ միջնադարյան երաժշտական տեսությունից, Բանքեր Մատենադարանի, 1960, թիվ 5, Երևան, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրատ., էջ 43-76:

տարբերակը: Նույն սկզբունքով նա լարը երեք հավասար մասի բաժանելով ստացել է կվինտա ինտերվալը (գումարված օկտավային), իսկ չորս մասի բաժանելով՝ կվարտա ինտերվալը: Պյութագորասի այս հայտնագործությունը, որն, ի դեպ, համարվում է, որ մասամբ հայտնի է եղել անգամ բարելացիներին, հսկայական նորարարություն է եղել երաժշտության տեսության բնագավառում: Առհասարակ, Հին Հունաստանի փիլիսոփաները և մաթեմատիկոսները երաժշտությունն ընկալել են որպես առաջին հերթին մաթեմատիկական և աստղագիտական երևույթ: Ոչ միայն համեմատել են երաժշտությունն ու թվաբանությունը, այլև ուղղակիորեն նույնացրել են այդ երկու տարբեր բնագավառների մի շարք երևույթներ<sup>13</sup>:

Բերված աղյուսակում դրսւորվում է երաժշտության բնական հնյունաշարը՝ լարը մասերի առանձնացնելու ձանապարհով (1/2, 1/3, 1/4, 1/5, 1/6...): Ժամանակակից ընկալմամբ՝ խոսքը վերաբերում է օբերտոնային համակարգին: Եթե Ալեքսանդրիայի փիլիսոփաները բնական հնյունաշարի թվային դրսւորումները վերարտադրել են հունական տառերով, ապա Անանիա Շիրակացին այդ նույնն իրականացրել է հայկական անվանումներով, ինչպես ընդունված է եղել անցյալում:


Հակիրճ արտահայտման համար կներկայացնենք Պյութագորասի առաջարկած աղյուսակը՝ բարկացած չորս թվերից՝ 1, 2, 3, 4, որոնք միասին ստեղծում են այսպես կոչված տեսրակտուսը:

## Աղյուսակ 2

1	2	3	4
2	4	6	8
3	6	9	12
4	8	12	16

Բերված աղյուսակի հնյունային արտահայտությունը հետևյալն է.

<sup>13</sup> Mathiesen Thomas J., *Greek Music Theory*, The Cambridge History of Western Music Theory, Cambridge University press, 2002, pp. 109-135.



Թվային աղյուսակի միջոցով բնական՝ օրերտոնային հնչունաշարի արտահայտման այս ձևն իսկապէս հետաքրքիր և զարմանալի է:

Ն. Թահիմիզյանը, ուսումնասիրելով երաժշտության բնական հնչունաշարի թվային հարաբերությունները, գալիս է այն համոզման, որ Անանիա Շիրակացին տեսել է հայ երաժշտության հիմքերում այդպիսի հարաբերակցության հնարավորությունը, այդ իսկ պատճառով հունական տեսությունը ներմուծել է հայկական գիտական մտքի մեջ<sup>14</sup>:

Անանիա Շիրակացու աղյուսակը (աղյուսակ 1) և երաժշտության բնական ակուստիկական հատկությունների ուսումնասիրումը վկայում են հայ երաժշտագիտության համար առանձնակի կարևոր հարցի մասին, այն է՝ դեռևս 7-րդ դարում հայ երաժշտության զարգացման բարձր մակարդակն անհրաժեշտություն է առաջ բերել ուսումնասիրելով երաժշտության մեջ այնպիսի բարդ երևոյթների եռթյունը, ինչպիսիք են ինտոնացիաների և հնչունաշարերի ծագման աղբյուրը: Անգամ ժամանակակից համաշխարհային երաժշտագիտությանը ո՞չ միշտ մատչելի թվացող այդ երևոյթներին հայ միջնադարյան իրականության մեջ գիտությունն անդրադարձել է:

Անանիա Շիրակացու կատարած աշխատանքը թե՛ երաժշտաբանաստեղծական արվեստի ստեղծման ու թե՛ երաժշտության տեսության հարցերի ուսումնասիրման առումով անկյունաքարային դեր ունի հայ երաժշտության պատմության մեջ: Այսպես, նրա մասնակցությամբ զարգացում ապրած ուրույն տեսակի շարականները հանգեցրել են տաղային արվեստի ծաղկմանը հայկական միջնադարում: Նրա մշակույթը պարաբ

<sup>14</sup> Տես նշված հոդվածը. «Մի էջ հայկական վաղ միջնադարյան երաժշտական տեսությունից»:

հող է դարձել շարականագրության ասպարեզում, և նրա անմիջական մասնակցությամբ իրագործվել է այն ձանապարհը, որը պիտի տաներ դեպի Գրիգոր Նարեկացու երաժշտա-բանաստեղծական արվեստի ծաղկուն և համաշխարհային երաժշտության մակարդակով աննախադեպ դրսերումները, ինչպես նաև կաթողիկոս Ներսես Շնորհալու արվեստը, որը հայ երաժշտությունն այլ հունի ու մակարդակի մեջ է դրել: Եթե անգամ մի կողմ թողնենք Անանիա Շիրակացու թողած ազդեցությունները հայ հոգևոր երաժշտության հետագա ծաղկման ուղու վրա, ապա նրա վարպետորեն և կշռադատված շարադրված ստեղծագործություններն ինքնին բավարար են նրան հայ երաժշտական մշակույթի կարևոր ներկայացուցիչներից մեկը համարելու համար:

## Anania Shirakatsi Musician

**Tatevik SHAKHKULYAN**

*Institute of Art, NAS RA,  
Yerevan State Conservatory after Komitas*


Anania Shirakatsi's musical works are described and discussed. Though his main works and activities were in the area of exact sciences, but he was also a musician and he has a crucial role in the history of the Armenian music. Anania Shirakatsi's main domain was the religious music, particularly he wrote a number of so-called "Sharakans". He has also studies acoustics.

# Շիրակացու անվան խառնարան Լուսնի վրա

Գոհար ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Բյուրականի աստղադիտարան

Հայ մեծ մտածող Անանիա Շիրակացու անունով են կոչվում ոչ միայն Երևանում գտնվող համալսարաններից մեկն ու համանուն ձեմարանը, այլև Լուսնի վրա գտնվող մի մեծ խառնարան: Ինչպէ՞ս այդ խառնարանը կոչվեց Շիրակացու անունով:



1609-1610 թթ. Գալիլեո Գալիլեյը կառուցեց իր առաջին աստղադիտակը և ուղղեց այն երկնքին, ինչի շնորհիվ կատարեց մի շարք հայտնագործություններ, որոնց թվում էին նաև Լուսնի մակերևույթի անհարթությունները: Նա նկատեց, որ Լուսնի մակերևույթը բաղկացած է լեռնաշղթաներ, ծովեր, խառնարաններ հիշեցնող գոյացություններից: Ստեղծվեցին Լուսնի խառնարանների առաջացումը բացատրող տարբեր տեսություններ, սակայն լավագույն բացատրությունը, որը ներկայում է ընդունվում է, այն է, որ Լուսնի մակերևույթի գրեթե բոլոր նման գոյացությունները երկնաքարային կամ աստղակերպային «ոմբակոծությունների» հետևանք են: Այս երկնային մարմինները, շարժվելով միջմոլորակային տարածությունում, երբեմն բախվում են Լուսնին՝ առաջացնելով ամենատարբեր մեծության և խորության գոյացություններ: Լուսինը չունի մթնոլորտ, որը կպաշտպաներ իր մակերևույթն երկնային մարմինների «ոմբակոծություններից» (դրանցից շատերը կայրվեին մթնոլորտում և չեն հասնի Լուսնի մակերևույթ), այս պատճառով դրա

մակերևույթը ծածկված է միջինավոր նման գոյացություններով, որոնք այսօր կոչվում են խառնարաններ: Լուսնի մակերևույթի այլ գոյացություններն այսօր պայմանականորեն կոչվում են լեռնաշղթաներ, օվկիանոս, ծովեր և այլն:

Լուսնի խառնարաններն ունեն մինչև մի քանի կիլոմետր խորություն և տարբեր տրամագծեր. դրանցից ամենամեծն ունի 360կմ տրամագիծ, իսկ ամենափոքրերը մանրադիտակային չափերի են: Այս գոյացություններից շատերը կրում են հայտնի մարդկանց անուններ, ինչպես օրինակ՝ Գալիլեյի, Ժյուլ Վեռնի, Հովհան Կեսարի, Բենջամին Ֆրանկլինի, Մենդելեևի, Պլանկի, Այնշտայնի, Դանթեյի, Լեռնարդո Դա Վինչիի անուններով խառնարանները: Լուսնի մակերևույթի գոյացություններն անվանակոչելու իրավունք ունի միայն Միջազգային աստղագիտական միությունը (ՍԱՄ), որին էլ Վիկտոր Շամբարձումյանը դիմել էր պաշտոնական նամակով՝ առաջարկելով Լուսնի խառնարաններից մեկն անվանակոչել 7-րդ դարի հայ մեծ մտածող Անանիա Շիրակացու անունով: ՄԱՄ-ն ընդունել էր Վ. Շամբարձումյանի առաջարկը և Լուսնի՝ Երկրի նկատմամբ հակառակ կողմում գտնվող (լուսնային կոռոդինատներով՝  $12^{\circ}6'S$  և  $128^{\circ}36'E$ ) խառնարաններից մեկը, որն ունի 51կմ տրամագիծ, անվանակոչել Շիրակացու անունով: Շիրակացի խառնարանը համեմատաբար երիտասարդ է և չի հասցրել ենթարկվել զգալի քայլայման: Նկարի երկու մեծ խառնարանները Շիրակացի (վերևի ձախ կողմում) և Դոբրովոլսկի (ներքևի աջ կողմում) խառնարաններն են: Ընդհանուր առմամբ Լուսնի վրա ՄԱՄ-ի կողմից անվանակոչված 1550-ից ավելի խառնարաններ կան, որոնցից երկուար կրում են հայկական անուններ. Շիրակացի խառնարանից բացի ևս մեկ այլ խառնարան կոչվել է կենսաքիմիկոս, ՀԽՍՀ ԳԱԱ ակադեմիկոս Նորայր Սիսակյանի անունով:

Ներկայումս քարտեզագրված են ինչպես Լուսնի, այնպես էլ Մարսի, Մերկուրիի և Վեներայի մակերևույթները:

## Shirakatsi Crater on the Moon

Gohar HARUTYUNYAN

*Byurakan Astrophysical Observatory, NAS RA*

One of the Moon's craters is named after Anania Shirakatsi. It was named due to Viktor Ambartsumian's application to the International Astronomical Union. The crater has 51km diameter and is coupled with the neighboring crater Dobrovolski.

# Անանիա Շիրակացու համացանցային կայքէջը

Արեգ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ, Գոռ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Բյուրականի աստղադիտարան

Անանիա Շիրակացին միշին դարերի ամենաականավոր գիտնականներից մեկն է և թերևս մեր խոշորագույն գիտնականը: Լինելով փիլիսոփա, մաթեմատիկոս, տիեզերաբան, աշխարհագրագետ, տոմարագետ՝ նա Հայաստանում հիմնադրեց ճշգրիտ և բնական գիտությունները: Ունենալով իր դարաշրջանի համար առաջադեմ աստղագիտական հայացքներ և թողնելով հարուստ աստղագիտական ժառանգություն՝ Շիրակացին իրավացիորեն համարվում է աստղագիտության հիմնադիրը Հայաստանում: Նրա թողած գիտական ժառանգությունը զգալի ազդեցություն է ունեցել Հայաստանի բնական գիտությունների հետագա զարգացման վրա:

ՑՈՒՆԵՍԿՕ-ն Անանիա Շիրակացու 1400-ամյակը ներառել է 2012թ. կարևորագույն տարեդարձների իր ցանկում: ՀՀ Կառավարությունը ստեղծել էր Անանիա Շիրակացու 1400-ամյակի կառավարական հոբելյանական հանձնաժողով, որը ներառում էր ներկայացուցիչներ պետական կազմակերպություններից և գիտահետազոտական ինստիտուտներից: Ներգրավված էին մի քանի նախարարություններ, ինստիտուտներ և կազմակերպություններ՝ ՀՀ Մշակույթի նախարարությունը, ՀՀ Գիտության և կրթության նախարարությունը, ՀՀ Արտաքին գործերի նախարարությունը, ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիան (ՀՀ ԳԱԱ), ՀՀ ԳԱԱ Բյուրականի աստղադիտարանը, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտը, ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտը, Մատենադարանը (ին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ- թանգարանը), Երևանի պետական համալսարանը (ԵՊՀ), Հայաստանի պետական մանկավարժական համալսարանը (ՀՊՄՀ) և Անանիա Շիրակացու անվան ճեմարանը:

Սակայն մինչև վերջերս համացանցում Անանիա Շիրակացու մասին միայն կցկուուր տեղեկություններ կարեի էր հայթայթել: Նրա 1400-ամյա հոբելյանի կապակցությամբ ստեղծվեց անզլերեն և հայերեն գործող համացանցային ընդարձակ կայքէջ՝ [http://www.aras.am/Shirakatsi/index\\_arm.html](http://www.aras.am/Shirakatsi/index_arm.html), որտեղ առավել լիարժեք տեղեկություններ են տրված Շիրակացու կյանքի և գործունեության, հետազոտությունների բնագավառների, աշխատությունների, նրան նվիրված

գրականության և այլնի մասին: Կայքէջում հավաքված են և ապագայում ավելացվելու են Շիրակացուն առնչվող զանազան տեղեկություններ և նյութեր, տրված են արտաքին հղումներ Շիրակացու անվան Լուսնի խառնարանի, համալսարանի, Ճեմարանի, մեդալի, հուշադրամի և այլ կայքէջերին: Առանձին էջ նվիրված է Հայաստանի պատմա-աստղագիտական ժառանգությանը, որտեղ ներկայացված են տեղեկություններ հնագույն աստղադիտարանների, աստղագիտական բնույթի ժայռապատկերների, հնագույն օրացույցի, միջնադարյան աստղագիտական քարտեզների, հայ միջնադարյան աստղագետների և այլնի մասին: Բերված է միջազգային կազմակերպությունների ցանկը, որոնք առնչվում են պատմա-աստղագիտական հարցերին և աստղագիտական ժառանգությանը:



### *Անանիա Շիրակացու կայքէջը հայերեն և անգլերեն լեզուներով*

Գլխավոր էջից բացի, Անանիա Շիրակացու կայքէջը բաղկացած է հետևյալ բաժիններից.

**Անանիա Շիրակացու կենսագրությունը ՀԱՀ կայքէջում:** ՀԱՀ կայքէջում դեռևս 2009թ.՝ Միջազգային աստղագիտական տարվա կապակցությամբ, տեղադրվել էին հայ մեծանուն աստղագետների կենսագրականները՝ հայերեն և անգլերեն լեզուներով: Նրանց շարքում է Անանիա Շիրակացին:

**Անանիա Շիրակացու կենսագրությունը հանրագիտարաններում:** Այս բաժնում բերված են մի շարք հանրագիտարանների Շիրակացուն նվիրված հոդվածների թվայնացված տարբերակները՝ բոլորին հասանելի դարձնելու նպատակով, այդ թվում Հայկական հանրագիտարանը, Հայկական համառոտ


հանրագիտարանը, Հայկական սովետական հանրագիտարանը,  
«Աստղագետներ» կենսագրական տեղեկագիրը:

**Անանիա Շիրակացի, միջնադարի մեծ գիտնականը:** Այս քածնում տեղ է գտել Շիրակացուն նվիրված գրքի հեղինակ Լիլիթ Նազարյանի հոդվածը, որն ըստ էռության այդ գրքի ընդարձակ ամփոփագիրն է:

Անանիա Շիրակացուն վերաբերող համացանցային կայքերը:  
Բերված են համացանցային կայքերի հղումներ, այդ թվում Շիրակացու  
մասին Վիքիպեդիայի հոդվածը և այլ հոդվածներ:

**Անանիա Շիրակացու հետազոտությունների բնագավառները:** Այստեղ թվարկված են հետևյալ բնագավառները՝ աստղագիտություն և տիեզերագիտություն, աստվածաբանություն, աշխարհագրություն և երկրաբանություն, երաժշտագիտություն, կենսաբանություն, մաթեմատիկա, փիլիսոփայություն, օդերևութաբանություն, օրացույց և տոմարագիտություն։ Բոլոր այս բնագավառներում Շիրակացին լուրջ ներդրում է ունեցել։

**Անանիա Շիրակացու աշխատությունները:** Ըստհանուր առմամբ բերված է պահպանված 29 աշխատությունների ցանկը: Դրանց թվում են Խնքնակենսագրությունը, թվաբանական աղյուսակները և խնդրագիրը, խրախճանականները, կենդանաբանական, աստղաբաշխական, տիեզերագիտական, տումարագիտական, երկրաչափական աշխատանքները, ժողովուրդների ամսանունները, իին հայկական ամսանունները և ժամանունները, Աշխարհացույցը, չափերի և կշիռների մասին տեքստերը, թանկարժեք քարերի մասին տեքստը, Ժամանակագրությունը և Աստվածաշնչի գլուխների դասակարգումը:



Անանիա Շիրակացու աշխատությունների և նրա վերաբերյալ գործերի էջերը

**Անանիա Շիրակացու վերաբերյալ գրքերը:** Բերված է Անանիա Շիրակացու վերաբերյալ մեր կողմից կազմված 43 կարևորագույն աշխատությունների ցանկը: Դրանք 1877-2013 թթ. հրատարակված հայերեն, ռուսերեն և գերմաներեն լեզուներով գրքեր են, ինչպես կենսագրական, այնպես էլ Շիրակացու առանձին աշխատություններին կամ հետազոտությունների բնագավառներին նվիրված վերլուծություններ:

**Անանիա Շիրակացու 1400-ամյակին նվիրված միջոցառումները:** Բերված է նշված միջոցառումների ցանկը, այդ թվում՝ «Աստղագիտական ժառանգությունը ազգային մշակույթում» թեմայով Միջազգային պատմա-աստղագիտական գիտաժողովը, երիտասարդ աստղագետների համար միջազգային ամառային դպրոցը (4BISS), Հայաստանի պատմա-աստղագիտական ժառանգության ուսումնափորձությունը և համակարգումը, Անանիա Շիրակացու գրքերի հրատարակումը, ՀՀ ԳՍԱ «Գիտության աշխարհում» ամսագրի 2012թ. 3-րդ համարի նվիրումը Անանիա Շիրակացուն, Անանիա Շիրակացի թվային տվյալների շտեմարանի և համացանցային կայքիէջի ստեղծումը, հանդիպումներ դպրոցներում ու համալսարաններում, հեռուստատեսային և ռադիո հաղորդումներ, տպագիր և էլեկտրոնային հրապարակումներ զանգվածային լրատվամիջոցներում և այլն:

**Լուսնի «Շիրակացի» խառնարանը:** Բերված է Լուսնի «Շիրակացի» խառնարանին նվիրված համացանցային կայքէջի հղումը (ավելի մանրամասն տես սույն ժողովածուի Գոհար Հարությունյանի հոդվածը):

**«Անանիա Շիրակացի» շքանշանը, հուշադրամը և նամականիշը:** Բերված են «Անանիա Շիրակացի» շքանշանի, հուշադրամի և նամականիշի համացանցային կայքէջի հղումները: Մասնավորապես «Անանիա Շիրակացի» նամականիշը թողարկվել է նրա 1400-ամյակի կապակցությամբ:

**Հայկական պատմա-աստղագիտությունը:** Բերված է Հայկական պատմա-աստղագիտությանը նվիրված ՀԱՀ համացանցային կայքէջը, որը տեղեկատուի ձևով ներկայացնում է զանազան ոլորտների հիմնական աստղագիտական արժեքները: Այն բաժանված է 3 հիմնական մասերի՝ հնագույն աստղագիտություն, միջնադարյան աստղագիտություն և ժամանակակից աստղագիտություն:

**Աստղագիտության և համաշխարհային ժառանգությանն առնչվող միջազգային կազմակերպությունները:** Թվարկված են ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Աստղագիտությունը և համաշխարհային ժառանգությունը» նախագիծը, ՄԱՄ-ի թիվ 41 հանձնաժողովի «Աստղագիտությունը և համաշխարհային ժառանգությունը» աշխատանքային խումբը, Հուշարձանների և տեսարժան վայրերի միջազգային խորհուրդը (ICOMOS), Աստղագիտությունը մշակույթում եվրոպական ընկերությունը (Société Européenne pour l’Astronomie dans la Culture – SEAC), «Աստղալույս» նախաձեռնությունը: Տրված են դրանց համացանցային կայքերի հղումները:

Անանիա Շիրակացու համացանցային կայքը կարևոր դեր է խաղում նրա կյանքի և գործունեության ամփոփ ներկայացման համար:

## Anania Shirakatsi's Webpage

**Areg MICKAELIAN, Gor MIKAYELYAN**  
*Byurakan Astrophysical Observatory, NAS RA*

Anania Shirakatsi webpage is presented and described. It is created on the occasion of his 1400<sup>th</sup> anniversary. The webpage contains following menus: Anania Shirakatsi's biography at ArAS website, his biography in different encyclopedia, an article by Lilit Nazaryan, Internet weblinks related to Anania Shirakatsi, areas of research, list of his works, books about Anania Shirakatsi (most important 43 ones), events connected to his 1400<sup>th</sup> anniversary, “Shirakatsi” crater on the Moon, Shirakatsi order, memorial coin and stamp, Anania Shirakatsi college, Armenian archaeoastronomy, international organizations related to Astronomy and World Heritage. Anania Shirakatsi's webpage plays an important role in the overall presentation of his life and activities.

## **Անանիա Շիրակացու աշխատությունները**

1. Ինքնակենսագրություն
2. Թվաբանական աղյուսակներ (գումարում, հանում, բազմապատկում, «Յաղագս համարողութեան»)
3. Վեցհազարյակ (բաժանում) («Յաղագս վեցհազարեկի»)
4. Խնդրագիրք
5. Խրախճանականներ («Խրախճանականք»)
6. Տիեզերագիտություն
7. Կենդանատեսակների մասին տեքստ
8. Աստղաբաշխության մասին տեքստ
9. Երկնային երևույթների մասին տեքստ («Յաղագս շրջագայութեան երկնից», «Յաղագս շաղկապութեան արեգական եւ լուսնի»)
10. Արեգակի ընթացքը համաստեղություններով
11. Լուսնի պարբերաշրջանը
12. Լուսնի գարնանային գիշերահավասարի աղյուսակներ
13. Լուսնի առանձնակ բոլորակ
14. Լուսնացույց աղյուսակներ
15. Զատկի ձառ
16. Հայտնության ձառ («Ի յայտնութիւն Տեառն եւ Փրկչին մերոյ»)
17. ՇԼԲ բոլորակ (532 տարիների աղյուսակ)
18. Խառնախորան
19. Ժողովուրդների ամսանունները
20. Հին հայկական ամսանունները և ժամանունները
21. Անդրեաս Բյուզանդացու տոմարի մեկնությունը
22. Աշխարհացույց
23. Մղոնաշափք
24. Օդաշափք (Աստղաբաշխական երկրաշափություն)
25. Չափերի և կշիռների մասին տեքստեր («Յաղագս յափոց, չափուց եւ պատարաց», «Յաղագս կշռոյ, կշռոց եւ կշռորուաց»)
26. Թանկարժեք քարերի մասին տեքստ
27. Ժամանակագրություն
28. Աստվածաշնչի գլուխների դասակարգումը

## **Anania Shirakatsi's works**

1. Autobiography
2. Arithmetic tables (addition, subtraction, multiplication)
3. Six-thousand-table (division)
4. Problem-book
5. “Khrakhtchanakanner”
6. Space science
7. Text about animal types
8. Text on astronomy
9. Text on heavenly phenomena
10. Sun’s motion through constellations
11. Moon’s cycle
12. Moon’s vernal equinoctial tables
13. Moon’s special rotund
14. Moon-showing tables
15. Easter speech
16. Revelation speech
17. 532 years table
18. “Kharnakhoran”
19. Peoples’ months names
20. Armenian ancient months and hours names
21. Interpretation of Andreas Byzantine’s chronology
22. Geography
23. Miles sizes
24. Air sizes (Astronomical Geometry)
26. Texts on sizes and weights
27. Text on precious stones
28. Chronicle
29. The Classification of Bible chapters

### **3. Ժամանակակից աստղագիտություն**

**Արեգ Սիքայելյան – Հանրամատչելի աստղագիտությունն աշխարհում և Հայաստանում**

**Մարիետա Գյուղադյան – Հայաստանի դպրոցականները միջազգային օլիմպիադաներում**

**Ավետիք Գրիգորյան – «Դարերի խորքից դեպի Տիեզերք» գիտահանրամատչելի գիրքը**

**Արեգ Սիքայելյան – Հայ աստղագիտության նվաճումները և Հայկական աստղագիտական ընկերության ներկայիս գործունեությունը**



### **3. Modern Astronomy**

**Areg Mickaelian – Popular Astronomy in the World and in Armenia**

**Marietta Gyulzadyan – Armenian Pupils in the International Olympiads**

**Avetik Grigoryan – “From the Deep of Ages to the Universe” Popular Science Book**


**Areg Mickaelian – Achievements of the Armenian Astronomy and the Present Activities of the Armenian Astronomical Society**

# Հանրամատչելի աստղագիտությունն աշխարհում և Հայաստանում

## Արեգ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Բյուրականի աստղադիտարան

Ü<sup>3</sup> Ē<sup>3</sup> å<sup>3</sup>ī ñ<sup>3</sup> eī í »é ī Y<sup>3</sup> .. T̄ÇYáE»íí áñÇáóÙÝ»ñç Üç ³ Ùµáðç Íñ<sup>3</sup>. Çñ,  
áñäÝü T<sup>3</sup> ñáø »Ý Y»ñíí ³ Ù<sup>3</sup> óí »é ³ é<sup>3</sup> YÓÇÝ T<sup>3</sup> Ù áðO»íó»é Ñ»Ýó ² ÍáðÙµç  
13 eÄÝA<sup>3</sup> öçÝ:

◦ Ḧáō ἕ »āī ἕ́ύμ» ḥçý ṫéí ἕř Ç ýáñ ἕ́úµç ñ́ 3 ú́ 3 . ḥáðúá, áñç ñ́ 3 ú́ 3 ñ́ ù́ ½ ḫ́ 3 -  
ñáð »Ý 1çú» É 6-9 1 3 ἕ 3 ñ́ 3 ýý» ñç ñ» í 3 ûñùñí áð 3 β 3 ḫ́ »ñí Ý» ñ: ðáðéáí »Ýú, áñ 1 3  
íéçýç ýáñ 3 ýó ñ́ 3 ú́ 3 ñ́ 3 úý µ 3 003 ᵇç x 3 ý 3 á 3 ññá, áñá í 3 ýáðú ÷ 1 »áç · çí áðúj 3 ý  
í 3 x 3 ñ:

## **Teaching of Astronomy in Armenian Extracurricular Clubs**

Avetik GRIGORYAN

*Cosmic Club of the Technical Creative Republican Centre of  
RA Ministry of Education and Science*

A review of astronomy teaching in extracurricular clubs of Armenia is given. The author has created "Cosmic Club" in 1988 and since then teaches astronomy, aeronautics, and aviation. The pupils have participated in various events and contests, including international astronomical Olympiads and have won a number of prizes. Further successes and professional career of the pupils are described.

**Հայկական աստղագիտական ընկերության  
գործունեությունը և  
հայ աստղագիտության ներկայիս նվաճումները**

**Արեգ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

*ՀՀ ԳԱԱ Բյուրականի աստղադիտարան,  
Հայկական աստղագիտական ընկերություն*

Հայկական աստղագիտությունը, ինչպես և ողջ հայ գիտությունը, Խորհրդային Միության փլրազումից և նորանկախ Հայաստանի ստեղծումից հետո (1991թ.) ծանր ժամանակաշրջան ապրեց: Գիտական աշխատանքը ՀՀ ԳԱԱ Բյուրականի աստղադիտարանում (ԲԱ) առավել դժվարացավ ականավոր գիտնական Վիկտոր Համբարձումյանի մահվանից հետո (1996թ.), ով շուրջ 5 տասնամյակների ընթացքում մեր գիտական դեկավարն ու գաղափարական ոգեշնչողն էր: 1990-ականներին աստղադիտարանից հեռացան նաև մի շարք այլ ակտիվ գիտնականներ: Դադարեցվեց ինչպես գիտության բավարար չափով ֆինանսավորումը, այնպես էլ առավել ևս նոր աստղադիտակների կառուցումը, գիտական սարքավորումների արդիականացումը, ԲԱ աշխատակիցների կանոնավոր գործուղումները և այլն: Սակայն դրականն այն էր, որ արդեն չկային արտասահմանյան կապերի և համագործակցության վրա նախկին սահմանափակումները, և հայ աստղագիտության միջազգային ինտեգրման համար պարզապես ժամանակ էր պետք: Իսկ ավելի կարևոր էր մի խումբ նվիրյալների կողմից բյուրականյան գիտության պահպանումը՝ ի հիշատակ նրա ստեղծողի, և նոր ակտիվ գործունեությունը՝ մասնավորապես նաև Հայկական աստղագիտական ընկերության հիմնադրումը և բազմակողմանի գործունեության ծավալումը:



Հայկական աստղագիտական ընկերությունը (ՀԱԸ) փաստացի ստեղծվել է 1999թ. հունիսի 22-ին, երբ հավաքվեց հայ աստղագետների տվյալների առաջին շտեմարանը, որոշում կայացվեց ստեղծել ընկերություն, մշակվեց կանոնադրությունը, և կայացավ ՀԱԸ հիմնադիր ժողովը: Ճիշտ է, ընկերությունը ՀՀ Արդարադատության նախարարության կողմից պաշտոնապես գրանցվել է 2001թ. օգոստոսի 29-ին: Այնուամենայնիվ, մինչ այդ էլ քայլեր ձեռնարկվեցին աստղագետներին անդամագրելու, ՀԱԸ առաջիկա գործունեությունը նախանշելու և կազմակերպելու ուղղությամբ: Առաջին քայլերն էին Եվրոպական աստղագիտական ընկերության (ԵԱԸ) մեջ անդամագրվելը (2001թ.), ՀԱԸ համացանցային կայք-էջի ստեղծումը, Էլեկտրոնային տեղեկագրերի պատրաստումը և տարածումը և տարեկան համաժողովների հիմնադրումը (քոլորն էլ՝ 2002թ.): Այդ տարիներից ի վեր, հայկական աստղագիտության մեջ տեղի ունեցած համարյա քոլոր իրադարձությունները մեծ չափով կապված են հենց ՀԱԸ հետ, ընդ որում 2000-ականներին իր ակտիվությամբ հայկական աստղագիտությունը հասել և որոշ առումներով գերազանցել է նախկին հաջորդությունները (միջազգային նախագծեր և համագործակցություն, միջազգային կառույցներին անդամակցություն, դրամաշնորհներ և մրցանակներ, գործուղումներ և արտասահմանյան գիտնականների այցելություն, կազմակերպվող գիտաժողովներ և ամառային դպրոցներ, աստղագիտական կրթություն, աստղագիտության հանրայնացում և այլն): Նշենք դրանցից առավել կարևորները, որոնք հատկապես կապված են ՀԱԸ գործունեության հետ:

**ՀԱԸ անդամություն:**Ի տարբերություն մի շարք այլ երկրների աստղագիտական ընկերությունների, ՀԱԸ բացառապես պրոֆեսիոնալ աստղագետների կազմակերպություն է, սակայն նպատակներից մեկն է նաև սերտ կապեր ստեղծել արտասահմանցի հայագի աստղագետների հետ՝ նրանց հրավիրելով անդամագրվել և համագործակցել Հայաստանի աստղագետների հետ: ՀԱԸ հիմնադիր անդամներն էին ԲԱ 16 աստղագետ: Ներկայում ՀԱԸ ունի 21 երկրների 38 ինստիտուտ ներկայացնող 95 անդամ, այդ թվում. Հայաստանից՝ 57 (ԲԱ՝ 40, ԵՊՀ՝ 8 և այլ), ԱՄՆ՝ 10, Ֆրանսիա՝ 4, Մեքսիկա և Ռուսաստան՝ 3-ական, Գերմանիա և Իսպանիա՝ 2-ական, Բուլղարիա, Իռլանդիա, Իտալիա, Կանադա, Հունաստան, Հունգարիա, Հնդկաստան, Հոլլանդիա, Հորդանան, Մեծ Բրիտանիա, Շվեյցարիա, Ռումինիա, Չիլի և Ուկրաինա 1-ական: Անդամներից 16-ը հիմնադիր են, 12-ը՝ երիտասարդ: Յուրաքանչյուր անդամի համար ստեղծվում է նրա վերաբերյալ հիմնական տեղեկատվությունը պարունակող անհատական կայք-էջ, ինչը

հայ աստղագետների համար առաջին անգամ էր արվում: ՀԱՀ-ն ունի 3 համանախազահ՝ Երվանդ Թերզյան, Հայկ Հարությունյան և Արեգ Միքայելյան, փոխնախազահ՝ Տիգրան Մաղաքյան, գիտական քարտուղար՝ Ելենա Նիկողոսյան, գանձապահ՝ Մարիետա Գյուղադյան:

**ՀԱՀ Էլեկտրոնային տեղեկագրեր:** ՀԱՀ 2002 թվից պատրաստում և տարածում է պարբերական Էլեկտրոնային տեղեկագրեր (ArAS Newsletters, ArASNews)՝ սկզբում տարեկան 4-ական համար, իսկ 2009-ից՝ տարեկան 8-ական համար (1.5 ամիս պարբերականությամբ): Ընդհանուր առմամբ 2014թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ պատրաստվել և տարածվել է 73 համար: ՀԱՀ տեղեկագրի խմբագիրներն են եղել Տիգրան Մաղաքյանը (2002-2004, #1-12), Լուսինե Սարգսյանը (2005, #13-16), Լիլիթ Հովհաննիսյանը (2006-2007, #17-24) և Արեգ Միքայելյանը (2008-ից, #25-ից): Ընդհանուր առմամբ բոլոր ArASNews-երում արդեն տպագրվել է 528 հոդված, ընդամենը 697 էջ ծավալով: Սա աննախադեպ է հայկական աստղագիտության պատմության մեջ: Նախկինում ԲԱ իրադարձությունների մասին գրվում էր «Բյուրականի աստղադիտարանի հաղորդումներում», ամեն տարվա վերջում, մի քանի էջի սահմաններում միայն: ՀԱՀ տեղեկագրերում տեղ են գտնում նորություններ, հայտարարություններ, հոդվածներ հայկական աստղագիտության և ԲԱ, ՀԱՀ նոր անդամների, միջազգային և տեղական գիտաժողովների, ամառային դպրոցների և դրանցում հայ աստղագետների մասնակցության, Հայաստանում աստղագիտական կրթության, Հայաստանի պատմա-աստղագիտության մասին, հոբելյաններ, գիտական, գիտա-հանրամատչելի և տեղեկատվական նյութեր և այլն: Ստեղծվել է նաև ArASNews հոդվածների տեղեկատու ցանկ, որի միջոցով հեշտությամբ կարելի է գտնել որևէ թեմային վերաբերող բոլոր հոդվածները:

**ՀԱՀ համացանցային կայք-էջ:** ՀԱՀ համացանցային կայք-էջը ստեղծվել է 2002թ. փետրվարին՝ սկզբում ՀԱՀ մասին անհրաժեշտ տեղեկատվություն տալու նպատակով, այդ թվում՝ ՀԱՀ նպատակները և գործունեության ձևերը, ՀԱՀ անդամների ցուցակը, համաժողովները և այլ միջոցառումները և այլն: 2009-ի սկզբին, Միջազգային աստղագիտական տարվա (UUS-2009) կապակցությամբ, ՀԱՀ էջը հիմնովին հարստացվեց և նորացվեց՝ դարնալով հայ աստղագիտության մասին լիակատար տեղեկատվություն պարունակող շտեմարան: Այստեղ առկա է տեղեկատվություն ԲԱ պատմության, նվաճումների, ընթացիկ ծրագրերի և միջազգային համագործակցության, ստացված դրամաշնորհների մասին, տեղադրվել են 2000-ից սկսած բոլոր տպագրված աշխատանքները, առանձին

Էջերով բոլոր գիտածողովները, նոր բաժիններ են բացվել աստղագիտության հետ առնչվող Հայաստանի այլ գիտական հաստատությունների, ականավոր 18 հայ աստղագէտների, հայ աստղագէտների տվյալների շտեմարանի (աշխարհի 257 հայ աստղագէտ), աստղագիտական կրթության, սիրողական աստղագիտության, պատմա-աստղագիտության և այլնի համար։ Առանց չափազանցության, տեղեկատվական առումով ՀԱՀ համացանցային կայք-էջը Հայաստանի բոլոր գիտական կազմակերպությունների մեջ ամենահարուստն է։ Կայք-էջի խմբագիրն է Գոռ Միքայելյանը։


The Armenian Astronomical Society (ArAS) is a Non-Governmental Organization (NGO) that works on the development of astronomy in Armenia, promotion of collaboration between the Armenian and foreign astronomical institutions, strengthening contacts and collaboration between the Armenian and other astronomical societies, and the promotion of the Armenian culture and science. ArAS was created in 2009 and officially registered in 2011. It is one of the affiliated Societies of LAS. ArAS has some 90 members from Armenia and a number of other countries and thus it can be considered as an astronomical organization. The main activities of ArAS are: providing detailed information on Armenian Observatory, Armenian and world astronomy through its website, "Astrophysics News", "Astronomy News", "Meetings", "Publications", "Astronomy Books", "Astronomy Schools", "Astronomy Schools for Young Astronomers", creation and maintenance of a Database of Armenian Astronomers and Catalogue of Astronomical Events, educational activities, and current work of ArAS Administration. One of the most important ArAS activities was the organization of the European Annual Astronomical Meeting (EANAM-2012), the largest scientific event held in Armenia. ArAS develops scientific journals in Armenia through its regular press releases.

**Միջազգային համագործակցություն:** ԲԱ նախկինում էլ ակտիվ էր միջազգային համագործակցությունների հարցում, ինչը բացառապես Համբարձումյանի շնորհիվ էր, քանի որ խորհրդային ժամանակաշրջանում այնքան էլ ակտիվ չէին միջազգային կապերը, հատկապես՝ կապիտալիստական երկրների հետ: ԲԱ մի շարք համագործակցությունների ծրագրեր ուներ սոցիալիստական երկրների հետ, իսկ մյուս երկրներ մեր գիտնականները մեկնում էին ժամանակ առ ժամանակ, առավել ևս փոքրաթիվ էին այդ երկրների գիտնականների այցելությունները: Սակայն գիտությունը, մասնավորապես՝ աստղագիտությունը, գլխավորապես կենտրոնացած էր հենց զարգացած կապիտալիստական երկրներում՝ ԱՄՆ,

Ճապոնիա, Մեծ Բրիտանիա, Գերմանիա, Ֆրանսիա, Իտալիա, Հոլանդիա, Կանադա, Ավստրալիա և այլն: Դա ավելի ակնհայտ դարձավ տեխնիկայի զարգացմանը զուգընթաց՝ 1970-ական թթ. սկսած: Հայաստանի անկախացումից հետո, առաջին լուրջ քայլը հայ-ֆրանսիական համագործակցության ստեղծումն էր 1993-ին, որի մեջ մեծ դեր խաղացին ինչպես ՀՀ-ում Ֆրանսիայի դեսպան տիկին դ'Արտինզը, այնպես էլ Փարիզի աստղաֆիզիկայի ինստիտուտի (IAP) աշխատակից Դանիել Կունտը և ԲԱ աշխատակից Արտաշե Պետրովյանը: Ստեղծվեց երկարատև ծրագիր՝ PICS, այնուհետև՝ Jumelage և նորից PICS, ընդհանուր առմամբ 13 տարի շարունակ 1994-2009 թթ. ընթացքում, որի շրջանակներում իրականացվում էին փոխադարձ այցելություններ, հայ երիտասարդ աստղագետների վերապատրաստում, ԲԱ 2.6մ աստղադիտակի արդիականացում, համատեղ կոլլոբիումներ և իհարկե՝ համատեղ գիտական ծրագրեր և համատեղ հրապարակումներ: Նման ծրագիր նախաձեռնելու փորձ է արվել նաև իտալացիների և գերմանացիների հետ, և վերջին 15 տարում այդ կապերն այնքան ակտիվ են, որ ՀԱՀ համացանցային կայք-էջում ստեղծվել են հայ-ֆրանսիական, հայ-իտալական և հայ-գերմանական համագործակցությունների առանձին բաժիններ: Բավական ակտիվ են կապերը նաև ամերիկացի աստղագետների, մասնավորապես Կոռոնելի համալսարանի, Տիեզերական աստղադիտակի գիտական ինստիտուտի (STScI), Կալիֆոռնիայի տեխնոլոգիական ինստիտուտի (Caltech) և Հավայան կղզիների աստղագիտության ինստիտուտի հետ: Շարունակվում են հայ-վրացական և հայ-ռուսական (հատկապես Ռուսաստանի Հատուկ աստղադիտարանի՝ CAO-ի, հետ) համագործակցությունները:

**Հայկական վիրտուալ աստղադիտարան (ՀՎԱ):** Վիրտուալ աստղադիտարանները ստեղծվել են մի շարք երկրներում օգտագործելով իրենց տվյալների շտեմարանները և ժամանակակից դիտողական նյութը՝ որպես փոխգործարկվող տվյալների արխիվների հավաքածուներ և ծրագրային ապահովում, գիտական մի նոր միջավայր ստեղծելու համար, որտեղ կարելի է համալիր հետազոտական ծրագրեր իրականացնել: Այդ ազգային նախագծերը միավորելու համար 2002-ին ստեղծվել է Վիրտուալ աստղադիտարանների միջազգային այանսը (International Virtual Observatory Alliance, IVOA): ՀՎԱ-ն ստեղծվել և ԻՎՕԱ-ին է միացել 2005թ.: ՀՎԱ հիմնադիրը և ղեկավարն է Արեգ Միքայելյանը, ով նաև հանդիսանում է ԻՎՕԱ Գործադիր կոմիտեի անդամ: 2008-ից համագործակցություն է սկսվել ԲԱ (ՀՎԱ) և ՀՀ ԳԱԱ Բնֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների

ինստիտուտի միջև, որի շրջանակներում իրականացվել են աստղագիտական համատեղ հաշվողական ծրագրեր: ՀՎԱ տեխնիկական դեկավարն է Հրաշյա Ասցատրյանը, իսկ ՀՎԱ ծրագրերի զարգացման արդյունքում այդ ինստիտուտի ասպիրանտ Արամ Կնյազյանը պաշտպանել է թեկնածուական թեզ: ՀՎԱ-ն համագործակցում է նաև Եվրոպական ՎԱ և Ֆրանսիայի ՎԱ հետ: Մասնավորապես, իրականացվել է Մարգարյանի շրջահայության (DFBS) և մի շարք այլ աստղագիտական թիթեղների թվայնացումը, ֆրանսիացիների հետ համատեղ DFBS-ում կատարվում են աստղակերպերի որոնումներ:



**Միջազգային կառույցներին անդամակցություն:** Հայաստանը Միջազգային աստղագիտական միության (ՄԱՄ, IAU) 73 անդամ-երկրներից մեկն է, ինչպես նաև ՀԱՀ ճանաչված է ՄԱՄ-ի կողմից: Հայկ Հարությունյանը և Արեգ Միքայելյանը ՄԱՄ-ի հանձնաժողովների անդամ են հանդիսանում: Ինչպես նշվեց, ՀԱՀ ԵԱՀ 25 անդամ-ընկերություններից մեկն է, ընդ որում իր ակտիվությամբ զիջում է միայն Եվրոպայի ամենահզոր երկրներին՝ Մեծ Բրիտանիա, Գերմանիա, Ֆրանսիա, Իտալիա և այլն: ՀԱՀ նաև Եվրասիական աստղագիտական ընկերության (ԵԱԱԸ, EAAS) պաշտոնական ներկայացուցիչն է Հայաստանում: Արեգ Միքայելյանն այդ կազմակերպության Գործադիր խորհրդի անդամ է, Տիգրան Մադարյանը՝ ԵԱԱԸ գիտատեխնիկական հանձնաժողովի անդամ: ՀՀ Կրթության և գիտության նախարարության հետ մեկտեղ, ՀԱՀ նաև Միջազգային աստղագիտական օլիմպիադաների (ՄԱՕ, IAO) պաշտոնական ներկայացուցիչներից մեկն է Հայաստանում: Հայաստանն անդամագրվել է Գալիլեյան ուսուցիչների վերապատրաստման միջազգային ծրագրին (Galileo Teachers Training Program, GTTP), որի պաշտոնական ներկայացուցիչներն են Արեգ Միքայելյանը և Մարիետտա Գյուլզադյանը: 2013 թվին ԲԱ դարձավ Համաշխարհային տվյալների համակարգի (World Data System, WDS), իսկ Հայաստանը՝ ՄԱԿ-ի Տիեզերքի խաղաղ օգտագործողների հանձնաժողովի

(UN COPUOS) անդամ, որի արդյունքում ստեղծվեց նաև Հայկական տիեզերական գործակալություն: Կարևոր իրադարձություն էր 2011-ին Մարգարյանի շրջահայության և դրա թվայնացված տարբերակի (DFBS) գրանցումը ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Աշխարհի հիշողություն» (Memory of the World, MOW) միջազգային գրանցամատյանում, որտեղ Հայաստանից այժմ ընդգրկված են միայն Մատենադարանը և ԲԱ: Հայաստանն անդամակցում է Հարավ-արևելյան Եվրոպայի աստղագիտական ենթատարածաշրջանային հանձնաժողովին (SREAC), Ուկրատիվիստական աստղաֆիզիկայի միջազգային կենտրոնին (ICRANet), Տիեզերական հետազոտությունների հանձնաժողովին (COSPAR), IVOA-ին, Մոլորակային տվյալների միջազգային այլանսին (International Planetary Data Alliance, IPDA) և մի շարք այլ կազմակերպություններին: Այս ամենը տեղի է ունեցել հիմնականում 2000-ականներին:

**Դրամաշնորհներ:** Վերջին տարիներին ԲԱ մի շարք աստղագետներ բավական ակտիվ են տեղական և հատկապես միջազգային դրամաշնորհների հարցում, և չնայած պետական ցածր ֆինանսավորմանը, կարողանում են ապահովել իրենց և իրենց գիտական խմբերի գործունեությունը: 1990-ական և 2000-ական թթ. կտրվածքով առանձնակի կարելի է նշել Տիգրան Մարգարյանին, Արեգ Միքայելյանին և Արտաշես Պետրոսյանին, որոնցից յուրաքանչյուրն արժանացել է շուրջ մեկ տասնյակ դրամաշնորհի: Ստացվել են եվրոպական INTAS, ամերիկյան CRDF և NFSAT, Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի (ՄԳՏԿ, ISTC) և մի շարք այլ դրամաշնորհներ, որոնցից յուրաքանչյուրի գումարը կազմել է 20-65 հազարական ԱՄՆ դոլար: Հայ աստղագետները շահել են ամերիկյան, գերմանական, ֆրանսիական, իտալական և այլ ազգային դրամաշնորհներ, որի արդյունքում 1-6 ամսվա աշխատանքի են մեկնել համապատասխան երկրներ: 2000-ին հիմնադրվեց ամերիկահայերի Հայկական ազգային գիտա-կրթական հիմնադրամը (ՀԱԳԿ, ANSEF), որի շրջանակներում տարեկան 5000 ԱՄՆ դոլար կազմող 25-30 դրամաշնորհներ են հատկացվում ՀՀ գիտնականներին, այդ թվում և աստղագետներին: ՀԱԳԿ ստեղծման և զարգացման մեջ մեծ ներդրում ունի ՀԱՀ համանախազահ Երվանդ Թերզյանը: 21 հայ աստղագետ 2001-2014 թթ. ընթացքում շահել է 38 ՀԱԳԿ դրամաշնորհ, այսինքն աստղագետները միջինում տարեկան շահում են 2.7 ՀԱԳԿ դրամաշնորհ:

**Մրցանակներ:** Վիկտոր Համբարձումյանի անվան միջազգային մրցանակի հիմնադրումը ՀՀ նախագահի կողմից 2009թ. խոշոր իրադարձություն էր մեր երկրի համար, քանի որ դրանով Հայաստանը ցույց է

տալիս իր վերաբերմունքը մեր մեծ գիտնականի և ընդհանրապես հայ աստղագիտության նկատմամբ: Մրցանակը կազմում է 500000 ԱՄՆ դոլար և հանձնվում է յուրաքանչյուր գրող տարի՝ սկսած 2010-ից: Ճիշտ է, մրցանակը միջազգային է, հայ աստղագետները նույն մրցակցային պայմաններում են, և հաղթելու հավանականությունն այնքան էլ մեծ չէ, սակայն արտասահմանյան գիտնականների կողմից հայկական գիտական մրցանակի նվաճումը նույնպես մեծ պատիվ է բերում մեր երկրին և այն ճանաչելի դարձնում աշխարհի գիտական քարտեզի վրա: Ավելին, արդեն կայացած մրցանակաբաշխություններում (2010, 2012, 2014 թթ.) 8 հաղթողների թվում են երկու հայազգի աստղագետ՝ Գարիկ Իսրայելյանը (2010թ. հաղթող խմբի երեք անդամներից մեկը) և Ֆելիքս Սհարոնյանը (2014թ. երկու հաղթողներից մեկը): 2009թ. ՍԱՏ-2009-ի առթիվ ՀԱՀ հայտարարեց մրցանակներ աստղագիտության մեջ լավագույն դիտողական, վիճակագրական և տեսական արդյունքների, աստղագիտության մեջ մեծ ներդրման և լավագույն կին աստղագետի համար՝ համապատասխանաբար հայ մեծ աստղագետներ Բենիամին Մարգարյանի, Մարատ Առաքելյանի, Գուրգեն Սահակյանի, Լյուտվիկ Միրզոյանի և Փարիս Փիշմիշի անվան մրցանակներ: Արդյունքում հանձնվեցին միայն Լյուտվիկ Միրզոյանի (Ելմա Պարսամյանին) և Փարիս Փիշմիշի (Ելենա Նիկողոսյանին) անվան մրցանակները: 2004-ին ՀԱՀ հիմնադրեց տարեկան մրցանակ երիտասարդ աստղագետների համար (մինչև 35 տարեկան), որը հովանավորեց ՀԱՀ համանախազահ պրոֆ. Երվանդ Թերզյանը: 2009-ից այն կոչվում է Երվանդ Թերզյանի մրցանակ: Ներկայումս այն կազմում է 500 ԱՄՆ դոլար, որը հանձնվում է ՀԱՀ վկայագրի հետ մեկտեղ: Որոշ տարիներին մրցանակը կիսվել է 2 հոգու միջև, և ընդհանուր առմամբ այս տարիների ընթացքում ՀԱՀ մրցանակին արժանացել է 11 երիտասարդ, ընդ որում Լուսինե Սարգսյանը, Փառանձեմ Սինամյանը և Վարդան Աղիբեկյանը՝ երկուական անգամ: ՀԱՀ 2009-ին և 2011-ին (Օքսիորդի հայկական գիտական ընկերության հետ համատեղ) 6 մրցանակ է սահմանել նաև լավագույն աստղագիտական հրապարակումների համար:

**Գիտաժողովներ:** ՀԱՀ 2002 թվից սկսած կանոնավոր կերպով անցկացնում է տարեկան համաժողովներ, սակայն դրանցից մի քանիսը նույնացվել են այլ գիտաժողովների ու միջոցառումների հետ, որտեղ ՀԱՀ հանդես է եկել որպես համակազմակերպիչ: Մասնավորապես, 2007թ. Երևանում տեղի ունեցավ ԵԱՀ հերթական համագումարը, որը հենց իր անվանումով (Joint European and National Astronomical Meeting, JENAM) նշանակում է ԵԱՀ և ազգային աստղագիտական ընկերության (ՀԱՀ 6-րդ)

համատեղ համագումար: Սա Հայաստանում երբևէ տեղի ունեցած ամենախոշոր գիտական միջոցառումն էր թե՛ իր նշանակությամբ, թե՛ ներկայացված երկրների և մասնակիցների քանակով: ՀԱՀ 2-րդ, 5-րդ, 7-րդ և 11-րդ համաժողովները համընկել են համապատասխանաբար հայ-վրացական կողոքվիումի և Լյուդվիկ Միքոնյանի 80-ամյակին (2003թ.), ԲԱ 60-ամյակին (2006թ.), Վիկտոր Համբարձումյանի 100-ամյակին (2008թ.) և Անանիա Շիրակացու 1400-ամյակին (2012թ.) նվիրված գիտաժողովների հետ: Եվս մեկ ՀԱՀ համաժողով՝ 8-րդը, աննախադեպ էր իր թեմատիկայով: Այն հրավիրվեց ՄԱՏ-2009 կազմակցությամբ, և բացի աստղաֆիզիկական հարցերից առաջին անգամ քննարկվեցին աստղակենսաբանական, պատմա-աստղագիտական, աստղագիտական կրթության, սիրողական աստղագիտության, գիտական տուրիզմի և աստղագիտությանը հարակից այլ թեմաներ: Սակայն JENAM-2007-ից հետո կարևորագույն միջոցառումներն են եղել ՄԱՍ պաշտոնական գիտաժողովները, որոնց կազմակերպումը ցանկացած երկրին կարող է պատիվ բերել: Բավական է նշել, որ ԲԱ ծաղկուն տարիներին (մինչև 1991թ.) Հայաստանում նման գիտաժողովներ է հաջողվել անցկացնել 3 անգամ (1966, 1986, 1989 թթ.), իսկ դրանից հետո ընդամենը 23 տարում՝ ևս 3 անգամ (1998, 2001, 2013 թթ.), ընդ որում դրանցից վերջինն ամենամեծն էր ներկայացված երկրների և մասնակիցների քանակով:

**IAU Symposium #304**

*Multiwavelength AGN Surveys and Studies*

7-11 OCTOBER 2013, BYURAKAN, ARMENIA

Dedicated to B.E. Markarian's 100th anniversary

**Scientific Topics**

- Historical surveys
- AGN from IR/submm surveys
- AGN from radio/mm surveys
- AGN from X-ray/gamma-ray surveys
- Multiwavelength AGN surveys
- Unification and other models of AGN
- AGN feedback in galaxies and clusters
- Binary AGN and merging SMBH
- Physics between AGN and microquasars
- Study of unique AGN and AGN variability
- Future large projects
- The phenomena of activity

**Organizers and Sponsors**

- International Astronomical Union (IAU)
- State Committee for Science (SCS) of Armenia
- Armenian National Academy of Sciences (NAS RA)
- Byurakan Astrophysical Observatory (BAO)
- Armenian Astronomical Society (AAS)

**Scientific Organizing Committee (SOC)**

- Felix Abaronian (Ireland, Co-chair)
- Roger Standford (USA)
- George Djorgovski (USA)
- Malcolm Longair (UK)
- Laura Maraschi (Italy)
- Enrico Massaro (Italy)
- Argy Mikaelian (Armenia, Co-chair)
- Felix Mirabel (France/Argentina)
- Ray Norris (Australia)
- Paolo Padovani (Germany)
- Bradley Peterson (USA)
- Elaine Sadler (Australia)
- David Sanders (USA, Co-chair)
- Hélène Sol (France)
- Tadayuki Takahashi (Japan)
- Verenik Terzian (USA)
- Megan Urry (USA)
- Lutz Wisotzki (Germany)

**Contacts**

Address: Byurakan Astrophysical Observatory (BAO), Byurakan 0273, Aragatsotn province, Armenia  
Phone: +374-10-525385, +374-91-195914 (Argy Mikaelian), E-mail: [argm@sci.am](mailto:argm@sci.am), URL: <http://www.304.ias.sci.am/>

Պակաս կարևոր չեն նաև հայ-վրացական համատեղ կոլոքվիումների շարքի վերականգնումը, հայ-ֆրանսիական համատեղ կոլոքվիումները (1995 և 2009 թթ.), ԱՊՀ երկրների երիտասարդ աստղագետների կոնֆերանսը (2011թ.) և այլն: Եսս մի քանի փոքր չափերի միջոցառումներ (մեկօրյա կոնֆերանսներ կամ սեմինարներ) ՀԱՀ նվիրել է հայ նշանավոր աստղագետների հոբելյաններին:

**Ամառային դպրոցներ:** ՀԱՀ ԲՍ հետ համատեղ սկսել է երկու տեսակի երիտասարդական ուսումնական միջոցառումների շարք՝ Բյուրականյան ամառային դպրոցներ ԵՊՀ ուսանողների համար (Byurakan Summer Schools, BSS) և Բյուրականյան միջազգային ամառային դպրոցներ (Byurakan International Summer Schools, BISS): Նշենք, որ նախկինում միայն մեկ անգամ է հաջողվել անցկացնել միջազգային ամառային դպրոց (1987թ.): BSS առաջին փորձն արվել էր 1995-ին, երբ աստղագիտական օլիմպիադայի եզրափակիչ փուլին հրավիրվեցին նաև ԵՊՀ ուսանողներ և օլիմպիադայից բացի անցկացվեցին մի շարք դասախոսություններ և պարապմունքներ: Հաջորդ նման դպրոցները կազմակերպվել են 2005, 2009 և 2013 թթ.: BISS շարքի նախաձեռնումը մեծ իրադարձություն էր, քանի որ տարբեր երկրներից հրավիրվում են բազմաթիվ ուսանողներ և որպես դասախոս՝ մի շարք ականավոր գիտնականներ, մեր բոլոր երիտասարդները հնարավորություն են ունենում ներկա գտնվել այդ միջազգային դպրոցներին, լսել բարձրակարգ դասախոսություններ և մասնակցել գործնական պարապմունքներին, շփվել ծանթառություններ ստեղծել և այլն: Առաջմ հաջողվել է կազմակերպել 4 այդպիսի դպրոց 2006, 2008, 2010 և 2012 թթ., ընդ որում 2010-ին դա արվեց ՄԱՍ-ի հետ համատեղ և նաև ՄԱՍ-ի Երիտասարդ աստղագետների միջազգային դպրոցն էր (ISYA-2010): Ընդանուր առմամբ BISS-երին մասնակցել է 22 երկրի 142 ուսանող, այդ թվում 55-ը՝ Հայաստանից, 11 երկրի 40 դասախոս, այդ թվում 9-ը՝ Հայաստանից: Դասախոսների թվում են եղել այնպիսի նշանավոր գիտնականներ, ինչպիսիք են ՄԱՍ պրեզիդենտ Ռոբերտ Ուիլյամսը (ԱՄՆ), Վիկտոր Համբարձումյանի անվ. միջազգային մրցանակի դափնեկիրներ Գարիկ Խորայելյանը (Խապանիա), Յան Էյնաստոն (Էստոնիա) և Իգոր Նովիկովը (Ռուսաստան), պրոֆեսորներ Զայանթ Նարիկարը (Հնդկաստան), Երվանդ Թերզյանը և Դանիել Վիդմանը (ԱՄՆ), Դանիել Կունտը և Միշել Դենեֆելը (Ֆրանսիա), Դիտեր Էնգելսը և Լուտց Վիսոցկին (Գերմանիա), Մասիմ Տուրատոն (Իտալիա): Այս դպրոցների կազմակերպման շնորհիվ ՀԱՀ կայք-էջում աշխարհում առաջին անգամ բացվել է միջազգային աստղագիտական դպրոցների տեղեկատու այցուսակ,

որտեղ աստղագիտ-ուսանողները կարող են գտնել իրենց համապատասխան դպրոցներ:



**Աստղագիտական օլիմպիադաներ:** 1999-ից անցկացվում են կանոնավոր հանրապետական աստղագիտական օլիմպիադաներ: Հայաստանում վերջին տարիներին 2 անգամ անցկացվել է նաև ԱՊՀ երկրների օլիմպիադա: Միջազգային աստղագիտական օլիմպիադաներ անցկացվում են 1995-ից: Հայ պատանիները գերազանց են հանդես գալիս այդ օլիմպիադաներում և ընդհանուր առմամբ արժանացել են 8 ոսկե, 5 արծաթե և 19 բրոնզե մեդալների: Առավել հաջող ելույթ են ունեցել Ժիրայր Ավետիսյանը և Մկրտիչ Սողոմոնյանը՝ 1-ական ոսկե, 1-ական արծաթե և 1-ական բրոնզե մեդալ, Տիգրան Շահվերդյանը և Արսեն Վասիլյանը՝ 1-ական արծաթե և 1-ական բրոնզե, Վարդգես Մամբրեյանը՝ 3 բրոնզե, Վիրաբ Գևորգյանը՝ 2 բրոնզե մեդալ: Ոսկե մեդալ են նվաճել Տիգրան Նազարյանը, Հայկ Սարիբեկյանը, Հայկ Տեփանյանը, Հայկ Հակոբյանը, Լևոն Ստեփանյանը և Գևորգ Մարտիրոսյանը, ինչպես նաև հայազգի Իգոր Չիլինգարյանը Մուսկվայից: ՀԱՀ համացնցային կայք-էջում ստեղծվել է օլիմպիադաներին նվիրված բաժին, որտեղ նշված են միջազգային օլիմպիադաների բոլոր հայ մասնակիցները և նրանց հաջողությունները: Հայ օլիմպիականներին է նվիրված Ռոբերտ Սարգսյանի «Վիկտոր Համբարձումյանի հետնորդները» գիրքը: Վերջերս որոշ երկրներ նախաձեռնել են մեկ այլ՝ Աստղագիտության և աստղաֆիզիկայի միջազգային օլիմպիադա (IOAA), որին Հայաստանը մասնակցել է միայն 2013-2014թթ.: 2014թ. հայ պատանիները նվաճեցին 2 արծաթե և 2 բրոնզե մեդալ: Իրենց մեդալների պաշարն ավելացրին Գևորգ Մարտիրոսյանը (արծաթ), Արսեն Վասիլյանը (արծաթ) և Վարդգես Մամբրեյանը (բրոնզ): Հայ պատանիների հաջողությունների մեջ հատկապես

մեծ դեր են ունեցել Ավետիք Գրիգորյանը, Արմեն Օսկանյանը, Մարիետտա Գյուլզադյանը, Աշոտ Հակոբյանը, Սերգեյ Ներսիսյանը, Արարատ Եղիկյանը, Տիգրան Նազարյանը և այլոք:

**Աստղագիտական կրթության այլ հարցեր:** ՀԱՀ հնարավորինս փորձում է նպաստել Հայաստանում աստղագիտական կրթության հարցերին: Ամառային դպրոցները և օլիմպիադաները նույնպես այդ ոլորտից են: Գործունեության այլ ձևերից են նախ և առաջ ՀԱՀ համացանցային կայքում զանազան տեղեկատվության տեղադրումը, DVD խտասկավառակների պատրաստումը (վերջին տարիներին թողարկվել են «Աստղագիտություն դպրոցների համար» և «Աստղագիտություն ուսանողների համար» խտասկավառակները, որտեղ հավաքված են համապատասխան աստղագիտական դասագրքեր, խնդրագրքեր, բառարաններ, հանրագիտարաններ, հոդվածներ, գեկուցումներ, նկարներ, տեսանյութեր, ծրագրեր) և այլն: ՀԱՀ համանախազահ Երվանդ Թերզյանի և ամերիկահայ միքանի այլ հովանափորների կողմից ֆինանսավորվեց ՀԱՀ աստղագիտական դպրոցական դասախոսությունների ծրագիրը, որն իրականացվեց ՀՀ և Արցախի Կրթության և գիտության նախարարությունների հետ համատեղ՝ համապատասխանաբար ՀՀ և Արցախի դպրոցներում: Դասախոսները պրոֆեսիոնալ աստղագիտներ են, և դպրոցականների համար նրանց այցելությունները վառ տպավորություն թողեցին: Դպրոցներին տրվեցին նաև աստղագիտական նյութեր, կապ ստեղծվեց շնորհալի երեխաների հետ: 2012թ. հոկտեմբեր-նոյեմբերին աստղագետներն այցելեցին Երևանի 20 և մարզերի 10 (ամեն մարզում՝ մեկական) դպրոցներ, որոնք ընտրվել են ՀՀ Կրթության և գիտության նախարարության կողմից: Իսկ 2013թ. մայիսին նման ծրագիր իրականացվեց Ստեփանակերտի և Շուշիի դպրոցներում և Արցախի պետական համալսարանում:

**Պատմա-աստղագիտություն:** Հայաստանը հարուստ է պատմա-աստղագիտական ժառանգությամբ, սակայն բացի առանձին աշխատանքներից, այն լիարժեք չի ուսումնասիրվել: Արժե նշել ժայռապատկերները (աստղագիտական բովանդակության բազմաթիվ քարագրություններ), հնագույն աստղադիտարանների ավերակները (հատկապես հայտնի են նրանցից երկուսը՝ Քարահունջն ու Մեծամորը, այդ թվում Քարահունջը Սքոունիենջի հայկական նմանակն է և նույնիսկ ավելի հին է համարվում), հայկական հնագույն օրացույցը, մ.թ.ա. 11-ի հազարամյակներից ի վեր հայերեն լեզվում օգտագործվող աստղագիտական եզրույթները և անվանումները, միջին դարերից մնացած աստղագիտական

տվյալներ պարունակող Մատենադարանում և այլ վայրերում գտնվող ձեռագրերը և աստղայից երկնքի քարտեզները, միջնադարի մեծ գիտնական Անանիա Շիրակացու աստղագիտական ժառանգությունը և այլն: Այս ամենը համակարգելու համար ՀԱՀ համացանցային կայք-էջում բացվել է համապատասխան բաժին: Պատմա-աստղագիտական հարցերին ներկայումս մեծ նշանակություն է տրվում, մասնավորապես դրանք այնպիսի միջազգային կազմակերպությունների ուշադրության կենտրոնում են, ինչպիսիք են ՅՈՒՆԵՍԿՕ-ն («Աստղագիտությունը և համաշխարհային ժառանգությունը» նախագիծը), ՄԱՄ-ը (թիվ 41 հանձնաժողովի «Աստղագիտությունը և համաշխարհային ժառանգությունը» աշխատանքային խումբ), Հուշարձանների և տեսարժան վայրերի միջազգային խորհությունը (ICOMOS), «Աստղագիտությունը մշակույթում» եվրոպական ընկերությունը (Société Européenne pour l'Astronomie dans la Culture, SEAC), «Աստղալույս» նախաձեռնությունը (Starlight): ՄԱՏ-2009-ի կազմակցությամբ ՀԱՀ համաժողովում կազմակերպվեց պատմա-աստղագիտական հարցերին նվիրված նատաշրջան, 2011-ին՝ Անանիա Շիրակացուն նվիրված մեկօրյա սեմինար, իսկ 2012-ին՝ Շիրակացու 1400-ամյա հոբելյանի տոնակատարության նախաձեռնումն ու իրականացումը մի շարք այլ կազմակերպությունների հետ համատեղ (ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից Անանիա Շիրակացու 1400-ամյակի ներառումը 2012թ. կարևորագույն տարեդարձների ցանկում, ՀՀ Կառավարության կողմից Անանիա Շիրակացու 1400-ամյակի կառավարական հոբելյանական հանձնաժողովի ստեղծումը, պատմա-աստղագիտական գիտաժողով, ամառային դպրոց, համացանցային կայք-էջի ստեղծում, գրքի հրատարակում, ՀՀ ԳԱԱ «Գիտության աշխարհում» ամսագրի 2012թ. 3-րդ համարի նվիրումը Անանիա Շիրակացուն և այլն):

**Աստղագիտության հանրայնացում:** ՄԱՄ-ի առաջարկով ՅՈՒՆԵՍԿՕ-ն 2009 թվականը Գալիլեո Գալիլեյի կողմից առաջին աստղագիտակի ստեղծման 400-ամյակի առթիվ հայտարարել էր Միջազգային աստղագիտական տարի (ՄԱՏ-2009), և աշխարհի շուրջ 150 երկրներում ստեղծվել էին նախաձեռնող խմբեր, որոնք իրականացնում էին բազմաթիվ միջոցառումներ՝ աստղագիտության զարգացմանը և տարածմանը նպաստելու համար: Հայաստանը նույնպես ակտիվորեն մասնակցեց ՄԱՏ-2009-ին: ՀԱՀ կարևորում է սիրողական աստղագիտության զարգացումը: Հայաստանում գործում է Ռուբեն Բունիաթյանի կողմից ստեղծված «Գուլբայր Զոն» կազմակերպությունը, որի ջանքերի շնորհիվ սեպտեմբերի 18-ը (Վիկտոր Համբարձումյանի ծննդյան օրը) Հայաստանում

Ճանաչվեց աստղագիտության օր: ՀԱՀ իր համցանցային կայք-էջում ստեղծել է սիրողական աստղագիտության բաժին, ինչպես նաև ֆեյրության խումբ, որտեղ կարող են գրանցվել բոլոր սիրող աստղագետները: 2010թ. դեկտեմբերին գիտական, հաստկապես՝ աստղագիտական, լրագրությանը զարկ տալու նպատակով ստեղծվեց Հայաստանի գիտական լրագրողների խումբը, որի մեջ մտնում է 100-ից ավելի լրագրող: ՀԱՀ կողմից պարբերաբար պատրաստվում և տարածվում են մամուլի հաղորդագրություններ, կազմակերպվում են մամուլի ասուլիսներ, հարցազրույցներ, գիտական լրագրության սեմինարներ: Մամուլի հաղորդագրությունները պարունակում են աստղագիտական նորություններ, ԲԱ և ՀԱՀ կողմից կազմակերպվող միջոցառումներ և ԲԱ տեղի ունեցած իրադարձություններ, տեղի ունեցած և սպասվող երկնային երևույթներ, ինչպես նաև գիտնականների տարեղարձներ, հայկական և միջազգային գիտական այլ նորություններ: Աստղագետներն ավելի հաճախակի են գրում գիտա-հանրամատչելի հոդվածներ, մասնավորապես ՀՀ ԳԱԱ «Գիտության աշխարհում» հանդեսում: Տարբեր կազմակերպություններում աստղագետներն անցկացնում են հանրային դասախոսություններ: ՀԱՀ պատրաստել և թողարկել է մի շարք հրատարակչական նյութեր և աստղագիտական հուշանվերներ: ՀԱՀ համացանցային կայք-էջում ստեղծվել է «Աստղագիտակ» առցանց աստղագիտական ամսագիրը, որտեղ հայերեն լեզվով բազմաթիվ նյութեր են տեղադրված աստղագիտությամբ հետաքրքրվողների համար: 2012-ից բացվել է «Աստղագիտական իրադարձությունների օրացույց» էջը. վերջին երկուար դրված են հենց գլխավոր էջում:

**ՀԱՀ հետազա ծրագրեր:** ՍԱՍ-ը 2009թ. Բրազիլիայում կայացած իր Գլխավոր ասամբլեայում հայտարարեց 2011-2020թթ. աստղագիտության զարգացման ռազմավարական ծրագրի մասին, որի շրջանակներում ստեղծվելու կը ՍԱՍ համաշխարհային կենտրոն և 8 տարածաշրջանային կենտրոններ: Հայաստանը հայտ է ներկայացրել Մերձավոր Արևելքի տարածաշրջանում այդպիսի կենտրոնի դեռ ստանձնելու համար: Հայաստանը որպես ՍԱՍ տարածաշրջանային կենտրոն կարող է համակարգել Հայաստանում և հարևան երկրներում աստղագիտության զարգացումը պրոֆեսիոնալ սիրողական և հանրային մակարդակներում, ինչպես նաև աստղագիտական կրթությունը, ինչը մենք բազմիցս ապացուցել ենք իրականացված ծրագրերով: ՀԱՀ ակտիվ մասնակցություն ունի այս գործում: Առաջիկա ծրագրերից է ՀԱՀ գիտական բաժանմունքների ստեղծումը: Հնարավոր են հետևյալ 15 բաժանմունքները՝ Արեգակ,

արտարեգակնային մոլորակներ, աստղեր, միզամածություններ, գալակտիկաներ, տիեզերաբանություն, տեսական աստղաֆիզիկա, բարձր էներգիաների աստղաֆիզիկա, ԵԿ աստղագիտություն, ռադիո աստղագիտություն, տվյալների շտեմարաններ և ՎԱ-ներ, աստղագիտական սարքավորում, պատմա-աստղագիտություն և աստղագիտության պատմություն, աստղագիտական կրթություն, հանրամատչելի և սիրողական աստղագիտություն: ՀԱՀ առաջարկել է նաև ստեղծել աստղագիտության հայկական միջազգային ակադեմիա, որում կրնդգրկվեն առավել ակտիվ հայ աստղագետները և որն իր հեղինակությամբ կարող է նպաստել հայկական աստղագիտության հետագա զարգացմանը և հաջողություններին: Նախատեսվում է հրապարակել DVD խտավակառակ «Հայկական աստղագիտության հանրագիտարան»: Ավելի լուրջ ուշադրություն պետք է դարձվի «Աստղագիտությունը և համաշխարհային ժառանգությունը» ծրագրին: Մասնավորապես, նախատեսվում է Հայաստանում իրականացնել պատմա-աստղագիտության և աստղագիտության պատմության գլոբալ ծրագիր, ինչպես նաև Հայաստանում աստղագիտական կրթության գլոբալ ծրագիր: Դեռևս թերի վիճակում է սիրողական աստղագիտությունը. անհրաժեշտ են սիրողական աստղագիտակներ, դիտողական ծրագրեր, սիրող աստղագետների հավաքներ, կրթական ծրագրեր, աստղագիտության ավելի լայն հանրայնացում: ՀԱՀ համացանցային կայք-էջում նախատեսվում է ստեղծել նոր բաժիններ, մասնավորապես «Պատուհան դեպի Տիեզերք» (Portal To The Universe, PTTU) և այլ կայք-էջերի հայերեն կրկնօրինակները:

## Achievements of the Armenian Astronomy and the Present Activities of the Armenian Astronomical Society

**Areg MICKAELIAN**

*Byurakan Astrophysical Observatory, NAS RA*

A report is given on the achievements of the Armenian astronomy during the last years and on the present activities of the Armenian Astronomical Society (ArAS). ArAS membership, ArAS electronic newsletters (ArASNews), ArAS webpage, international collaboration, Armenian Virtual Observatory (ArVO), membership in international organizations, grants, prizes, meetings, summer schools, astronomical Olympiads, other matters related to astronomical education, archaeoastronomy, astronomy outreach and ArAS further projects are discussed.

# Հավելված

## Անանիա Շիրակացու վերաբերյալ գրականություն

- 1.Պատկանեան Ք., Անանիա Շիրակունույ մնացորդք բանից, Ս. Պետերբուրգ, 1877
- 2.Տեր-Մրտչյան Գ., Անանիա Շիրակացի, Վաղարշապատ, 1896
3. Conybeare F., Ananias of Shiraq (A.D. 600-650), Byzantinische Zeitschiff. Bd. VI, 1897
- 4.Ֆեհրաթյան Պ., Անանիա Շիրակացու անտիպ էջերեն, Հայես Ամսօրեայ, 1908
5. Вопросы и решения вардапета Анания Ширакаци, армянского математика VII века. Пер. И. А. Орбели, СПБ, 1918
- 6.Քասունի Ե., Անանիա Շիրակացի մեծ դաստիարակը, Հայաստանի կոչչնակ, 1937
- 7.Տիեզերագիտութիւն և տոմար, աշխատասիր. Ս. Աբրահամյանի, Երևան, 1940
- 8.Հայրապետյան Ս., Անանիա Շիրակացու կյանքն ու գործունեությունը, Մատենադարանի «Գիտական նյութերի ժողովածու», թիվ 1, Երևան, 1941
- 9.Աբրահամյան Ս.Գ. Անանիա Շիրակացու մատենագրությունը. ուսումնասիրություն, Ե., 1944
- 10.Աբեղյան Մ., Անանիա Շիրակացի (Հայոց հին գրականության պատմություն, գիրք Ա, Երևան, 1944)
- 11.Աբրահամյան Ս., Շիրակացու աշխատությունների հարազատության հարցի շուրջը, (Տեղեկագիր ՀՀ ԳԱԱ հաս. գիտ., 1947, թիվ 6)
- 12.Աճառյան Հ., Հայկականք, Շիրակացու ամսանունները (Տեղեկագիր ՀՀ ԳԱԱ հաս. գիտ., 1950, թիվ 12)
- 13.Սեմյոնով Լ., Անանիա Շիրակացին որպես աստղաբաշխ, «Էջմիածին», 1953, թիվ 7-8
- 14.Առաքելյան Ա., Անանիա Շիրակացի, Երևան, 1955
- 15.Աբրահամյան Ս., Յոթերորդ դարի հայ գիտնական Անանիա Շիրակացի (Յոթ դասախոսություններ), Անթիլաս, 1955, էջ 38-58
- 16.Հակոբյան Թ., Հայկական լեռնաշխարհի բնույթյունը ըստ Անանիա Շիրակացու «Աշխարհացույցի» (Երևանի պետական համալսարանի

գիտական աշխատություններ, հ. 58, աշխարհագրական գիտ. սերիա, 1956)

17. Абрамян Р., Туманян Б., Об астрономических работах Анания Ширакаци (Историко-астрономические исследования, вып. II, М., 1956, с. 239-346)
18. Чалоян В., Естественно-научные воззрения Анания Ширакаци («Византийский временник», т. XII, М., 1957)
19. Աբրահամյան Ռ., Թումանյան Բ., Հակոբյան Թ., Մելիք-Բախչյան Ստ., Անանիա Շիրակացի, Երևան, 1958
20. Պետրոսյան Գ., Մաթեմատիկան Հայաստանում հին և միջին դարերում, Ե. 1959
21. Անապյան Հ.Ս., Հայկական մատենագիտություն, հատոր 1, Երևան, 1959, էջ 731-774
22. Առաքելյան Ա., Անանիա Շիրակացի (Հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման պատմություն, հ. 1, Երևան, 1959)
23. Խոլոպյան Գ., Անանիա Շիրակացու բնափիլիսոփայական հայացքները, պատմա-բանասիրական հանդես, 1959, թիվ 2-3
24. Чалоян В., История армянской философии (древний и средневековый период), Е. 1959
25. Աբրահամյան Ա., Շիրակացու աստղագիտական նորահայտ աղյուսակները (Բնագիտության և տեխնիկայի պատմությունից, 1960, թիվ 1)
26. Մալխասյանց Ստ., Անանիա Շիրակացի, (Մատենագրական դիտողություններ, 1961)
27. Լուսնի պարբերաշրջանները, աշխատասիր. Ա. Աբրահամյանի, Երևան, 1962
28. Космография, пер. с древнеарм., предис. и комент. К.С. Тер-Давтяна и С.С. Аревшатяна, Ереван, 1962
29. Тер-Давтян К., Аревшатян С., Анания Ширакаци и его космографические труды – Анания Ширакаци. Космография. Ереван, 1962
30. Թումանյան Բ., Հայ աստղագիտության պատմություն, Երևան, 1964
31. Խոլոպյան Գ.Տ., Անանիա Շիրակացու աշխարհայացքը, Երևան, 1964
32. Petri W., Ananija Schirakazi – Ejn Armenischer Kosmograph des 7. Jahrhunderds, Zeitschrift der Deutschen Morgenlandischen Gesellschaft, B. 114, München, 1964
33. Абрамян А., Петросян Г., Анания Ширакаци, Ереван, 1970

34. Մաթևոսյան Ա., Անանիա Շիրակացու «Քննիկոնը», Լրաբեր հաս. գիտ., 1974, թիվ 7
35. Աբրահամյան Ա.Գ., Պետրոսյան Գ.Բ., Անանիա Շիրակացի, Սատենազիտություն, Երևան: «Սովետական Գրող» հրատարակչություն, 1979
36. Տեր-Մկրտչյան Գ., Անանիա Շիրակացի: Հայագիտական ուսումնասիրություններ, գիրք Ա, Երևան, 1979
37. Թահիմիզյան Ն., Անանիա Շիրակացին և Հարության ութ հարցնակարգեր, «Էջմիածին», № 5, 1984
38. Թումանյան Բ.Ե., Անանիա Շիրակացի, Երևան, 1991
39. Բրուտեան Գ.Հ., Անանիա Շիրակացու «Խառնախորանը», Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1998
40. Խաչարեան Լ., Հայագիր դպրութեան ճշգրիտ գիտությունների հայր Անանիա Շիրակացին և իր մաթեմատիկական-թվաբանական դասագիրքը, Հանդէս Ամսօրեայ, 1998, ՃԺԲ տարի, թիւ 1-12
41. Միրումյան Կ., Անանիա Շիրակացի, Երևան, 1998
42. Վարդանյան Ռ., Կարախանյան Գ., Անանիա Շիրակացին և նրա «Քննիկոնը», Աճեմյան մատենաշար, հ. Ա, Երևան, 2002
43. Նազարյան Լ., Անանիա Շիրակացի, միջնադարի մեծ մտածողն ու գիտնականը, Երևան, «Զանգակ-97», 2006թ., 190 էջ, Անանիա Շիրակացու անվ. ճեմարանի հրատ., 2013թ., 242 էջ

**Ապրիլ**

**2013**

**April**



Անանիա ՇԻՐԱԿԱՑԻ (1812-1885): Հայ մեջնադարի խորհրդական գրունական փիլիսոփա, մաթեմատիկոս, տիեզերագիտ, տոմարագիտ, ծագող գիտությունների (այս բնույթ և առ ասուղահամուրական) հիմնադիր և աշխատառության կերպության հիմքի և բարձրագույն տրամադրության համար պատճենահանդիսական դպրոց: Պաշտպանելու է Երևան պետրոսական վարչությունը, առաջարկել է Եղեգնության գործադրությունը և գործադրությունը և լուսնի ժամանելու մասին ասացնական պատճենահանդիսական արդյունաբերությունը, աստղագիտական դասագրքը, համասներգությունները և ասուղի հայերն առաջն անվաճմանները:



Երկ/Mon	Երր/Tue	Չրե/Wed	Գին/Thu	Ուրի/Fri	Ծրբ/Sat	Կիր/Sun
1	2	3	4	5	6	7
8	9	10	11	12	13	14
15	16	17	18	19	20	21
22	23	24	25	26	27	28
29	30					

Ապրիլին ծնվել են հայ աստղագետներ Մամիկոն Մնացականյանը (1942), Դամիկ Քալուբյունյանը (1951), Ալեքսանդր Լագարյանը (1962), Տիգրան Խանճառյանը (1975) և Միհրան Վարդյանյանը (1985):

3 ապրիլի

10 ապրիլի

18 ապրիլի

25 ապրիլի

«Հայ աստղագետներ» 2013թ. օրացույցի Անանիա Շիրակացի էջը

## **Appendix**

### ***Literature about Anania Shirakatsi***

1. Patkanean Q., “Anania Shirakunoy mnacordq banic”, S. Petersburg, 1877 (in Armenian)
2. Ter-Mkrtyan G., Anania Shirakatsi, Vagharshapat, 1896 (in Armenian)
3. Conybeare F., Ananias of Shiraq (A.D. 600-650), Byzantinische Zeitschiff. Bd. VI, 1897 (in German)
4. Fehratyan P., Some of Anania Shirakatsi’s unpublished works, “Handes Amsoreay”, 1908 (in Armenian)
5. Problems and solutions of vardapet Anania Shirakatsi, Armenian mathematician of VII century, transl. Orbely I.A., Petrograd, 1918 (in Russian)
6. Kasuni Ye., Anania Shirakaci great teacher, “Hayastani kochnak”, 1937 (in Armenian)
7. Space Science and Chronology, by A. Abrahamyan, Yerevan, 1940 (in Armenian)
8. Hayrapetian S., Anania Shirakatsi’s life and activity, “Collection of scientific materials” of Matenadaran, No. 1, Yerevan, 1941 (in Armenian)
9. Abrahamyan A.G., Anania Shirakatsi’s bibliography. a study, Yerevan, 1944 (in Armenian)
10. Abeghian M., Anania Shirakatsi (History of Armenian old literature, book A, Yerevan, 1944) (in Armenian)
11. Abrahamyan A., On the matter of Shirakatsi’s works belonging, Bulletin NAS RA Soc. Sci., 1947, No. 6 (in Armenian)
12. Acharyan H., Haykakanq, Shirakatsi’s month names, Bulletin NAS RA Soc. Sci., 1950, No. 12 (in Armenian)
13. Semyonov L., Anania Shirakatsi as an astronomer, “Ejmiatzin”, 1953, No. 7-8 (in Armenian)
14. Arakelyan A., Anania Shirakatsi, Yerevan, 1955 (in Armenian)
15. Abrahamyan A., Armenian scientist of seventh century Anania Shirakatsi (Seven lectures), Antilas, 1955, p.38-58 (in Armenian)
16. Hakobyan T., Nature of Armenian Highland according to Anania Shirakatsi’s “Ashkharhacuyc” (Scientific works of Yerevan State University, No. 58, geographical sci. ser., 1956) (in Armenian)
17. Abrahamyan R., Tumanian B.E., About Anania Shirakatsi’s astronomical works (Historic-Astronomical investigations, II issue, M., 1956, p. 239-346) (in Russian)
18. Chaloyan V., Natural-Scientific views of Anania Shirakatsi (“Vizantiyskiy vremennik”, v. XII, M., 1957) (in Russian)

19. Abrahamyan R., Tumanian B.E., Hakobyan T., Melik-Bakhshyan St., Anania Shirakatsi, Yerevan, 1958 (in Armenian)
20. Petrosyan G., Mathematics in Armenia in ancient and middle ages, Yerevan, 1959 (in Armenian)
21. Anasyan H.S., Armenian bibliography, Vol. 1, Yerevan, 1959, p. 731-774 (in Armenian)
22. Arakelyan A., Anania Shirakatsi, (History of development of Armenian intellectual culture, No. 1, Yerevan, 1959) (in Armenian)
23. Khrlopyan G., Anania Shirakatsi's natural-philosophical visions, historical-philological journal, 1959, No. 2-3 (in Armenian)
24. Chaloyan V., History of Armenian philosophy (ancient and medieval period), Yerevan, 1959 (in Russian)
25. Abrahamyan A., Shirakatsi's new astronomical tables (From the history of Natural Sciences and Technology, 1960, No. 1) (in Armenian)
26. Malkhasyanc St., Anania Shirakatsi, (Bibliographic comments, 1961) (in Armenian)
27. Lunar cycles, by A. Abrahamyan, Yerevan, 1962 (in Armenian)
28. Cosmography, trans. from Ancient Armenian, preface and comments by K.S. Ter-Davtyan and S.S. Arevshatyan, Yerevan, 1962 (in Russian)
29. Ter-Davtyan K., Arevshatyan S., Anania Shirakatsi and his cosmographical works-Anania Shirakatsi. Cosmography. Yerevan, 1962 (in Russian)
30. Tumanian B., History of Armenian astronomy, Yerevan, 1964 (in Armenian)
31. Khrlopyan G.T., Anania Shirakatsi's world vision, Yerevan, 1964 (in Armenian)
32. Petri W., Anania Shirakatsi – an Armenian Cosmographer of the 7th century, Journal of the German Eastern Society, Vol. 114, Munich, 1964 (in German)
33. Abrahamyan A., Petrosyan G., Anania Shirakatsi, Yerevan, 1970 (in Russian)
34. Matevosyan A., Anania Shirakatsi's "Knnykon", Social Sciences News, 1974, No 7 (in Armenian)
35. Abrahamyan A.G., Petrosyan G.B., Anania Shirakatsi, Bibliography, Yerevan: "Sovetakan Grogh" publ. house, 1979 (in Armenian)
36. Ter-Mkrtyan G., Anania Shirakatsi. Armenological studies, book A, Yerevan, 1979 (in Armenian)
37. Tahmizyan N., Anania Shirakatsi and eight grades of Resurrection, "Echmiatzin", No. 5, 1984 (in Armenian)
38. Tumanian B.E., Anania Shirakatsi, Yerevan, 1991 (in Armenian)
39. Brutian G.H., Anania Shirakatsi's "Kharnakhoran", Echmiatzin, 1998 (in Armenian)
40. Khacherean L., Father of exact sciences in Armenian teaching Anania Shirakatsi and mathematical-arithmetical textbook, "Handes Amsoreay", 1998, 112 year, No. 1-12 (in Armenian)

41. Mirumyan K., Anania Shirakatsi, Yerevan 1998 (in Armenian)
42. Vardanyan R., Karakhanyan G., Anania Shirakatsi and his “Knnyon”, Achemyan book series, Vol. 1, Yerevan, 2002 (in Armenian)
43. Nazaryan L.S., Anania Shirakatsi: the great thinker and scientist of middle ages, Yerevan, “Zangak-97”, 2006, 190p., “Yerevan Anania Shirakatsi college” educational complex publ. house, 2013, 242p. (in Armenian)



## Հեղինակացույց

## Author Index

Սեն Արևշատյան	68	Sen Arevshatyan	68
Մարիետտա Գյուլզադյան	185	Eduard Danielyan	76
Ավետիք Գրիգորյան	190	Julieta Eynatyan	98
Էղուարդ Դանիելյան	76	Sona Farmanyan	36
Նորա Երզնկյան	142	Avetik Grigoryan	190
Զուլիետա Էյնաթյան	98	Marietta Gyulzadyan	185
Կարեն Թոխարյան	107	Gohar Harutyunyan	158
Գոհար Հարությունյան	158	Haik Harutyunian	23, 87
Հայկ Հարությունյան	23, 87	Areg Mickaelian	36, 44, 87
Արեգ Միքայելյան	36, 44, 87		160, 168, 198
	160, 168, 198	Gor Mikayelyan	160
Գոն Միքայելյան	160	Lilit Nazaryan	58
Լիլիթ Նազարյան	58	Elma Parsamian	12
Տաթևիկ Շահկուլյան	149	Tatevik Shakhkulyan	149
Էլմա Պարսամյան	12	Ani Ter-Gulanyan	29
Գոհար Վարդումյան	134	Karen Tokhatyan	107
Անի Տեր-Գոնլանյան	29	Gohar Vardumyan	134
Սոնա Ֆարմանյան	36	Nora Yerznkyan	142

**Աստղագիտական ժառանգությունն ազգային մշակույթում**  
պատմա-աստղագիտական գիտաժողով՝ նվիրված Անանիա Շիրակացու  
ծննդյան 1400-ամյակին և Հայկական աստղագիտական ընկերության XI  
տարեկան համաժողով

**25-26 սեպտեմբերի 2012թ., Բյուրականի աստղադիտարան**

**Խմբագիրներ՝ Հ. Ս. Հարությունյան, Ա. Մ. Միքայելյան, Է. Ս. Պարսամյան**

Երևան, ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» հրատարակչություն, 2014թ., 220 էջ:

© ՀՀ ԳԱԱ Բյուրականի աստղադիտարան 2014

© Հայկական աստղագիտական ընկերություն 2014

## **Astronomical Heritage in the National Culture**

Archaeoastronomical Meeting Dedicated to Anania Shirakatsi's 1400<sup>th</sup> Birthday  
Anniversary and XI Annual Meeting of the Armenian Astronomical Society  
*25-26 September 2012, Byurakan, Astrophysical Observatory, Armenia*

**Editors:** H.A. Harutyunian, A.M. Mickaelian, E.S. Parsamian

Yerevan, NAS RA “GITUTYUN” Publishing House, 2014, 220 p.

© Byurakan Astrophysical Observatory 2014

© Armenian Astronomical Society 2014